ԱՇՈՏ ԲԱՅԱՂՅԱՆ

# ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ 2006

ԱՇՈՏ ԲԱՅԱՂՅԱՆ

# ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ 2006

*Հրատարակման է երկայացրել Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնը*

Տպագրվում է ՀԳԱ-ի գիտական խորհրդի որոշմամբ

Մասնագիտական խմբագիր՝ տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բ. Բոստանջյան
Գրախոս՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Արշակյան
Խմբագիր՝ բ.գ.թ. Ա.Հ. Ջաքարյան

Բ - 260 Բայադյան Աշոտ Հակոբի, տ.գ.դ., պրոֆեսոր
Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը, Եր. Ասողիկ,-2006, 298 էջ:

Մենագրության մեջ առաջին անգամ ամբողջական տեսքով վերլուծվում և գնահատվում են ՀՀ-ում ձեռնարկությունների (տնտեսավարող սուբյեկտների) ֆինանսական դրությունը, լուսաբանվում են մեթոդաբանական հիմնահարցեր՝ կապված ֆինանսական հաշվետվությունների փոխկապվածության, հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների վերլուծության, ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության (վճարունակության), ինչպես նաև սնանկացման ու ռիսկի գնահատման հետ:

Այն նախատեսվում է տնտեսավարող սուբյեկտների համապատասխան մասնագետների, աուդիտորական կազմակերպությունների, ուսանողների և դրանով հետաքրքրվողների համար:

Բ 0605010204 / 0136 (01)-2006 2006 ԳՄԴ 65.9(2Հ) 26

ISBN 99930 - 74 - 53 – 5

## Բովանդակություն

Նախաբան ..... 6

Գլուխ 1
Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը

1.1. Ֆինանսական վերլուծության դերը տնտեսավարման պայմաններում ..... 11
1.2. Ֆինանսական վերլուծության տեղեկատվության հիմնական աղբյուրները ..... 14
1.2.1. Հաշվապահական հաշվեկշռի էությունը և բովանդակությունը ..... 15
1.2.2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության էությունը ... 24
1.2.3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության էությունը ..... 26
1.2.4. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության էությունը ..... 30
1.2.5. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների էությունը ..... 34
1.3. Ֆինանսական վերլուծության իրականացման նախապայմանները.. 43
1.4. Ֆինանսական ցուցանիշների ձևավորման համակարգը և դրանց օգտագործումը ֆինանսական վերլուծությունում ..... 47

Գլուխ 2
Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության ընդհանուր գնահատումը

2.1. Հաշվապահական հաշվեկշռի վերլուծությունը ..... 55
2.1.1. Համախմբված հաշվապահական հաշվեկշռի ընդհանուր վերլուծությունը ..... 55
2.1.2. Հաշվապահական հաշվեկշռի հորիզոնական և ուղղահայաց վերլուծությունները ..... 61
2.1.3. Հաշվապահական հաշվեկշռի համեմատական վերլուծությունը ... 66
2.2. Ընթացիկ ակտիվների էությունը, դրանց պահանջի և օգտագործման արդյունավետության հաշվարկման մեթոդիկան .... 69
2.2.1. Տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ ակտիվները և դրանց հատկանիշները ..... 69

2.2.2. Ընթացիկ ակտիվների կազմավորման աղբյուրները և նորմավորվող ընթացիկ ակտիվների պահանջի հաշվարկման մեթոդիկան ..... 72
2.2.3. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության և օգտագործման արդյունավետության հաշվարկման մեթոդիկան ..... 80

Գլուխ 3
Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը

3.1. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների ձևավորման և բաշխման մոդելը ..... 86
3.2. Շահույթի ցուցանիշների մակարդակի, դինամիկայի և կառուցվածքի վերլուծությունը ..... 92
3.3. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի գործոնային վերլուծությունը ..... 96
3.4. Շահույթի օգտագործման վերլուծությունը ..... 113
3.5. Շահութաբերության ցուցանիշների համակարգը և հաշվարկման մեթոդները ..... 116
3.6. Շահութաբերության ցուցանիշների գործոնային վերլուծությունը ... 125

Գլուխ 4
Ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության գնահատման ցուցանիշներն ու դրանց հաշվարկման մեթոդիկան

4.1. Ֆինանսական կայունության գնահատումը ..... 134
4.1.1. Ֆինանսական կայունության էությունն ու նշանակությունը ..... 134
4.1.2. Ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշները ..... 137
4.1.3. Ֆինանսական կայունության գնահատման հարաբերական ցուցանիշները ..... 141
4.1.4. Սեփական կապիտալի արդյունավետության ցուցանիշների համակարգը ..... 147
4.2. Գործարար ակտիվության գնահատումը ..... 152
4.2.1. Գործարար ակտիվության էությունը ..... 152



4.2.2. Գործարար ակտիվության գնահատման ցուցանիշների համակարգը ..... 154
4.2.3. Տնտեսական կայուն աճի վերլուծությունը ..... 161
4.3. Իրացվելիության գնահատումը ..... 169
4.3.1. Հասկացություն իրացվելիության մասին ..... 169
4.3.2. Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիությունը ..... 171
4.3.3. Իրացվելության գնահատման ցուցանիշները ..... 174

Գլուխ 5
Տնտեսավարող սուբյեկտների սնանկացումը և ռիսկերի գնահատման մեթոդիկան

5.1. Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման էությունը ..... 181
5.1.1. Սնանկացման պատճառները և ազդող գործոնները ..... 181
5.1.2. Անվճարունակության գնահատումը ..... 186
5.1.3. Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման կանխատեսման մեթոդները ..... 189
5.1.4. Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական առողջացման ուղիները ..... 194
5.1.4.1. Ֆինանսական պլանի կազմման համառոտ նկարագիրը ..... 201
5.2. Ռիսկի գնահատումը ..... 209
5.2.1. Ռիսկի տեսակները և դրանց վերլուծության ընդհանուր սկզբունքները ..... 209
5.2.2. Ռիսկի կառավարման գործընթացի փուլերը ..... 215
5.2.3. Ռիսկի վերլուծության մեթոդները ..... 218
5.2.4. Ներդրումային ռիսկի արդյունավետության գնահատումը ..... 223
5.2.5. Ռիսկի նվազեցման եղանակները և ուղիները ..... 229

Հավելվածներ ..... 234

Հասկացությունների բառարան ուղեցույց ..... 260

Օգտագործված գրականության ցանկ ..... 292

## Նախաբան

Հայտնի է, որ նախկին Խորհրդային Միության տարածքում, այդ թվում նաև Հայաստանում, գործում էին շուկայական հարաբերություններին ոչ հատուկ բազմաբնույթ ձեռնարկություններ, որոնք իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում էին պլանային և ղեկավարման կենտրոնացված սկզբունքով: Սակայն խորհրդային հանրապետությունների անկախացումից հետո արդեն ի հայտ եկած շուկայական հարաբերությունները վերաիմաստավորեցին այդ ձեռնարկությունների գործունեության զարգացման նոր ուղիները, որոնց իրականացման համար դրանք դեռևս պատրաստ չէին, ուստի պահանջվեց բավականաչափ երկար անցումային շրջան:

Ներկայումս, գնահատելով Հայաստանի Հանրապետության տնտեսությունում տիրող իրավիճակը, մեր կարծիքով, կարելի է ընդգծել երկու կարևոր պահ: Մի կողմից, հանրապետությունը վերապրում է մի շրջան, որում դեռևս առկա է արտադրության կազմակերպման բազմաբնույթ ինտեգրացիոն կապերի խզվածությունը, տեխնիկայի և նյութական այլ միջոցների, ինչպես նաև եղած սուղ հնարավորությունների անբավարար օգտագործումը, մյուս կողմից էլ՝ շարունակվում են կազմավորվել տնտեսավարման նոր ձևեր և դրանց հիման վրա նաև ձեռնարկություններ (այսուհետև տնտեսավարող սուբյեկտներ՝ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, փոքր ու միջին ձեռնարկություններ, ֆերմերային տնտեսություններ և նմանատիպ այլ կազմակերպություններ), վերափոխվում են արտադրության կազմակերպման նկատմամբ եղած ավանդական մոտեցումները, յուրացվում են շուկայական հարաբերություններին ներհատուկ արտադրատնտեսական զարգացման նոր ուղիները և մի շարք այլ ցանկալի ու անցանկալի մոտեցումները:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ստացավ ինքնուրույն իրականացնելու իր արտաքին ու ներքին տնտեսական քաղաքականությունը, որի հիմքում դրված է սեփական շահերի պաշտպանությունը, սակայն երկրում իրականացվող արմատական վերափոխումներն այնքան ընդգրկուն էին և միաժամանակ չնախատեսված, որ անխուսափելի էր վատ հետևանքներից զերծ մնալը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ անցումային փուլում գտնվող երկրները նոր տնտեսավարման զարգացման և դրա կայացման ճանապարհին առաջացած դժվարությունները կարող են հաղթահարել միայն խելամիտ ռազմավարական նպատակային ծրագիր ունենալու դեպքում:



Այդ նպատակով պետք է մշակվի և կիրառվի այնպիսի տնտեսական քաղաքականություն, որի ճիշտ իրականացման դեպքում աստիճանաբար կկարգավորվի հանրապետության ամբողջ տնտեսության կայուն վիճակը: Վերջինիս առումով անչափ կարևոր է տնտեսավարող սուբյեկտների չընդհատվող արտադրական գործունեության ապահովումը:

Տնտեսավարման նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունում սկսեցին ձևավորվել ու դեռևս ձևավորման փուլում են գտնվում տարբեր տեսակի բաժնետիրական ընկերություններ, փոքր և միջին չափի տնտեսավարող սուբյեկտներ, ֆերմերային տնտեսություններ, որոնց գործունեությունը պետք է ընթանա տնտեսական զարգացման ժամանակակից կանոնակարգով: Հետևաբար, խիստ անհրաժեշտ է ֆինանսական վերլուծության իրականացումը այդ սուբյեկտների գործունեության բոլոր բնագավառներում, հատկապես ֆինանսական մենեջմենթի և աուդիտի համակարգում: Գործնականում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների տվյալներից օգտվողները այս կամ այն չափով օգտագործում են ֆինանսական վերլուծության մեթոդները՝ համապատասխան որոշումներ կայացնելու համար: Դա առավել կարևոր է այժմ, երբ պահանջվում է էլ ավելի խթանել ձեռնարկատիրական գործունեությունը:

Ներկայացվող աշխատության մեջ միջազգային հաշվապահական հաշվառման նոր չափանիշների փաթեթի տվյալների հիման վրա փորձ է արվում գնահատել տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական դրությունը՝ հիմք ընդունելով արտասահմանյան և հայրենական փորձը:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման մեթոդաբանությունը մշակելիս խորապես ուսումնասիրել ենք մեր հանրապետության և արտերկրի մի շարք տնտեսագետ-գիտնականների մեթոդական աշխատանքները, ուսումնական ձեռնարկները և գիտական հոդվածները: Իրենց աշխատանքներում այդ հարցին են անդրադարձել տնտեսագիտության դոկտորներ՝ Բ.Հ. Եղիազարյանը, Գ.Ե. Կիրակոսյանը, Հ.Բ. Ղուշչյանը, Յու.Մ. Սուվարյանը, Ա.Զ. Սարգսյանը, Է.Հ. Օրդյանը, Վ.Բ. Բոստանջյանը, Ա.Վ. Դարբինյանը, Ա.Հ. Արշակյանը, Ա.Խ. Մարկոսյանը և ուրիշներ, իսկ արտերկրի գիտնականներից՝ Ի.Տ. Բալաբանովը, Վ.Գ. Բելիպեցկին, Ս.Ի. Բերլինը, Ա.Ա. Բերնստայնը, Յու.Վ. Բոգատինը, Վ.Մ. Գրանատուրովը, Ս. Դեվիդը, Ն.Ե. Զիմինը, Վ.Վ. Կաչալինը, Ա.Ի. Կովալյովը, Ա.Բ. Կրուտիկը, Օ.Ի. Լավրուշինը, Մ.Լ. Լիշանսկին, Ն.Պ. Լյուբուշինը, Է.Ա. Մարկարյանը, Թ. Ռիչարդը, Ե.Ս. Ստոյանովան, Կ.Կ. Սիոնը, Ա.Ա. Թոմսոնը, Է.Պ. Ռուտկինը, Լ.Պ. Խարչենկոն, Վ.Ե. Չերկասովը, Ա.Պ. Շերե-

մետը և ուրիշներ:

Մենագրությունը, որը վերաբերում է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման մեթոդաբանությանը, բաղկացած է հինգ գլուխներից, ֆինանսական հաշվետվություններին վերաբերվող հավելվածներից, ինչպես նաև հասկացությունների բառարան-ուղեցույցից:

Առաջին գլխում հիմնավորվում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը: Մեծ տեղ է հատկացվում տնտեսավարման նոր պայմաններում ֆինանսական վերլուծության դերին, տեղեկատվության հիմնական աղբյուրներին՝ հաշվապահական հաշվեկշռին, ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի հաշվետվություններին, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների էությանը, ինչպես նաև ֆինանսական վերլուծության իրականացման նախապայմաններին և ֆինանսական ցուցանիշների ձևավորման համակարգին ու դրանց օգտագործմանը: Պայմանական տնտեսավարող սուբյեկտի գործունեության տվյալների հիման վրա ներկայացված են ֆինանսական հաշվետվությունների տվյալների փոխկապակցությունները:

Երկրորդ գլուխը նվիրված է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության ընդհանուր գնահատմանը: Ըստ համապատասխան տվյալների, կատարված են համախմբված հաշվապահական հաշվեկշռի ընդհանուր, հորիզոնական, ուղղահայաց և համեմատական վերլուծություններ, ինչպես նաև լուսաբանված են ընթացիկ ակտիվների էության, դրանց պահանջի և օգտագործման արդյունավետության հաշվարկման մեթոդիկային վերաբերող հարցեր:

Երրորդ գլուխը վերաբերում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությանը: Լուսաբանված են ֆինանսական արդյունքների ձևավորման և բաշխման մոդելը, շահույթի ցուցանիշների մակարդակը, կառուցվածքն ու դինամիկան, իրացման արդյունքում ստացված շահույթի գործոնային վերլուծությունը, շահութաբերության ցուցանիշների համակարգը, դրանց հաշվարկման մեթոդներն ու գործոնային վերլուծությունը:

Չորրորդ գլխում տրված են ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության գնահատման ցուցանիշներն ու դրանց հաշվարկման մեթոդիկան: Առանձին ենթահարցերով ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության էությունը, դրանց գնահատման բացարձակ ու հարաբերական ցուցանիշները, սեփական կապիտալի արդյունավետության ցուցանիշների համակարգը, տնտեսական կայուն աճի վերլուծությունը և հաշվապահական հաշվեկշռի իրացվելիությունը:

Հինգերորդ գլուխն ամբողջովին նվիրված է տնտեսավարող սուբյեկտների սնանկացմանը և ռիսկի գնահատման մեթոդիկային, մանրամասն խոսվում է սնանկացման պատճառների և ազդող գործոնների, անվճարունակության գնահատման, սնանկացման կանխատեսման մեթոդների, ֆինանսական առողջացման ուղիների, ֆինանսական պլանի կազմման համառոտ նկարագրի, ռիսկի տեսակների և դրանց վերլուծության ընդհանուր սկզբունքների, ռիսկի կառավարման գործընթացի փուլերի և վերլուծության մեթոդների, ներդրումային ռիսկի արդյունավետության գնահատման և ռիսկի նվազեցման եղանակների ու ուղիների մասին:

Ամփոփելով ասենք, որ ֆինանսական վերլուծություն իրականացնող յուրաքանչյուր ոք, օգտագործելով աշխատանքում բերված նյութերը, կարող է հստակ պատկերացում կազմել ֆինանսական հաշվետվությունների փոխկապակցությունների մասին և դրանց ու բերված բանաձևերի հիման վրա գնահատել տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական վիճակը, միաժամանակ հանգել համապատասխան եզրակացությունների՝ շահույթի ստացման, վնասի պատճառման ու շահութաբերության մակարդակների բարձրացման վերաբերյալ, օբյեկտիվորեն գնահատել իրենց ֆինանսական կայուն վիճակը, գործարար ակտիվությունը և վճարունակությունը, ինչպես նաև կողմնորոշվել, թե երբ ինքը կհայտնվի սնանկացման վիճակում, դրանից խուսափելու ինչ միջոցներ կան և, թե ռիսկային ինչպիսի աստիճանի վրա կարող է իրականացնել իր ներդրումային քաղաքականությունը:

Մշակված մոտեցումները օգտակար են ինչպես տնտեսավարող սուբյեկտների, աուդիտորական առանձին կազմակերպությունների, այնպես էլ ուսանողների և այդ հիմնախնդրով հետաքրքրվողների համար:

# Գլուխ 1

# Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը

## 1.1. Ֆինանսական վերլուծության դերը տնտեսավարման պայմաններում

Տնտեսավարման բարեփոխումների յուրաքանչյուր ժամանակաշրջանում կարևոր նշանակություն ունի հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի հրատապ հարցերի վրա, ինչպիսիք են մրցակցային կոշտ պայքարը, նոր տեխնոլոգիայով հագեցվածությունը, տնտեսական տեղեկատվության մշակման ավտոմատացումը, հարկային օրենսդրությունում անընդհատ կատարվող փոփոխություններին համընթաց աշխատանքների կազմակերպումը, դրամի արժեզրկման (ինֆլյացիայի) պայմաններում արժույթի ու տոկոսադրույքների փոփոխությունը և այլն: Այդպիսի պայմաններում ամեն մի տնտեսավարող սուբյեկտի առջև դրվում են բազմաթիվ հարցեր, այդ թվում՝

- ինչպիսին պետք է լինի ժամանակակից տնտեսության ռազմավարությունը (ստրատեգիան) և տակտիկան,
- արդյունավետ ինչպիսի ուղիներով կազմակերպել ֆինանսական գործունեությունը տնտեսության հետագա բարգավաճման համար,
- ինչպես բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը,
- ինչ մեթոդով որոշել տնտեսության ֆինանսական դրության կայունությունն ապահովող տնտեսական գործունեության գնահատման ցուցանիշների համակարգը:

Վերոնշյալ հարցերին լիարժեք պատասխանելու համար անհրաժեշտ է կատարել ֆինանսական մանրամասն վերլուծություն, որը հնարավորություն կտա էլ ավելի արդյունավետ բաշխել նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները: Հայտնի է, որ յուրաքանչյուր ռեսուրս սահմանափակ է, և առավելագույն արդյունքի կարելի է հասնել ոչ միայն դրանց ծավալների կարգավորման, այլ նաև տարբեր ռեսուրսների օպտիմալ հարաբերակցության ճանապարհով: Բայց միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ բոլոր տեսակի ռեսուրսներից առաջնային նշանակություն ունեն ֆինանսական ռեսուրսները, քանի որ դրանք գործունեության որոշակի ժամկետում փոխակերպվում են այլ տեսակի ռե-

սուրսի:

Ֆինանսական դրությունը մի ընդհանրացված հասկացություն է, որը բնութագրվում է փոխկապակցված ցուցանիշների համակարգով, այդ թվում՝ ֆինանսական կայունությունը, գործարար ակտիվությունը, վճարունակությունը, վարկունակությունը, պարտավորությունների կատարումը պետության և տնտեսավարող այլ սուբյեկտների առջև:

Միաժամանակ, ապրանքանյութական արժեքների և աշխատանքային ռեսուրսների յուրաքանչյուր շարժ ուղեկցվում է դրամական միջոցների կազմավորմամբ ու դրանց ծախսմամբ, իսկ դա նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրությունը բնութագրում է նրա գործունեության բոլոր կողմերը:

Հետևաբար, ելնելով տնտեսավարման նոր հարաբերություններից, տնտեսական գործունեության ֆինանսական վերլուծությունը, որպես յուրահատուկ բնագավառ, նույնպես ենթակա է որոշակի փոփոխություններ: Այսպես, քանի որ հաշվապահական հաշվառումը միջազգային չափանիշներին համապատասխան բաժանվում է ֆինանսական և կառավարչական հաշվառման, ուստի փոխվում է նաև տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության բնույթը: Ըստ այդմ էլ տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության վերլուծությունը պետք է իրականացվի արտաքին և ներքին տեղեկատվության աղբյուրների[1] հիման վրա (գծապատկեր 1.1.1):




Գծ. 1.1.1. Տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության վերլուծությունը

Քանի որ ֆինանսական դրությունը գնահատվում է ամենից առաջ հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, ապա այդպիսի վերլուծությունը կարելի է անվանել արտաքին: Վերջինիս իրականացման ամենահիմնական խնդիրներն են համարվում տնտեսավարող սուբյեկտների՝

1. ֆինանսական արդյունքների գնահատումը,
2. գործարար ակտիվության գնահատումը,
3. ֆինանսական կայունության գնահատումը,
4. հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը,
5. դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի վիճակի և դինամիկայի հետազոտումը,
6. ներդրված կապիտալի արդյունավետության վերլուծությունը,
7. գույքի վիճակի գնահատումը և այլն:

Ներքին ֆինանսական վերլուծությունը հնարավորություն է տալիս ավելի խոր ուսումնասիրելու տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրության, ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների և այլ ներդրումների), ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների), իրացման ծավալի, ինքնարժեքի և շահույթի ցուցանիշների փոխկապակցության առանձին կողմերը: Դրա համար, որպես տեղեկատվության աղբյուր, լրացուցիչ պետք է օգտագործվի ֆինանսական հաշվառման տվյալները: Ներքին ֆինանսական վերլուծությունն իրականացվելու է տնտեսավարող սուբյեկտի կառավարման բոլոր մակարդակներով՝ հաշվապահության, ֆինանսական ու տնտեսագիտական այլ ծառայությունների գործին քաջատեղյակ մասնագետների միջոցով: Նրանցից յուրաքանչյուրը, իր մասնագիտական իմացությանը համապատասխան, նպաստելու է աշխատանքի արդյունավետ կատարմանը: Այսպես, օրինակ, ֆինանսների գծով ղեկավարը (մասնագետը) պարտավոր է իմանալ իր ֆիրմայի (տնտեսության) գործունեության իրական գնահատականը և նրա ֆինանսական վիճակը, իսկ շուկայավարության (մարկեթինգի) ծառայության գծով ղեկավարը՝ շուկայում իր արտադրանքի իրացման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, կառավարչական վերլուծությունը կարող է լինել միայն ներքին, որն օգտագործում է տնտեսական տեղեկատվությունն ամբողջական տեսքով: Այն ունի օպերատիվ բնույթ և լիովին ենթակա է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամքին: Միայն այդպիսի վերլուծությունը հնարավորություն կընձեռի իրապես գնահատելու տնտեսավարող սուբյեկտի գործունեության վիճակը, հետազոտելու ոչ միայն թողարկված և իրացված արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը, այլ նաև առանձին արտադրատեսակների ինքնարժեքը, առևտրային և կառավարման ծախսերի կազմը: Դա թույլ կտա ավելի մանրամասն ուսումնասիրել գործարարության (բիզնես) պլանի առանձին բաժինների գծով

[1] Артеменко В.Г., Беллендир М.В. Финансовый анализ (учебное пособие). М., 1997, с. 4.

պատասխանատու անձանց բնութագիրը:

Միաժամանակ, կառավարչական վերլուծության տվյալները կարևոր դեր են խաղալու տնտեսավարող սուբյեկտների մրցակցային քաղաքականության իրականացման հարցերը մշակելիս, դրանք հետագայում օգտագործվելու են արտադրության արդյունավետ կազմակերպման և ներդրվող տեխնոլոգիաների կատարելագործման նպատակով, որն էլ իր հերթին հիմք կհանդիսանա առավելագույն շահույթի ստացման մեխանիզմի կարգավորման համար:

Ֆինանսական և կառավարչական վերլուծության ավելի ընդհանրացված համեմատական բնութագիրը ներկայացնենք ստորև.

| Համեմատման սուբյեկտներ | Ֆինանսական վերլուծություն | Կառավարչական վերլուծություն |
|---|---|---|
| 1.տեղեկատվության օգտագործողներ | ներքին, հարակից, շահագրգիռ | տնտեսավարող սուբյեկտների և նրա ստորաբաժանումների ղեկավարներ |
| 2.վերլուծության օբյեկտներ | տնտեսավարող սուբյեկտը որպես ամբողջություն | տնտեսավարող սուբյեկտը որպես ամբողջություն և նրա տարբեր կողմերը |
| 3.տեղեկատվության աղբյուրներ | հաշվապահական հաշվետվությունների ձևեր | համալիր տնտեսական տեղեկատվություն |
| 4.ցուցանիշների հաշվարկման համար չափի միավորներ | դրամական ձևեր | բոլոր ուղղությունները և դրամական միավորները |
| 5.վերլուծության ժամանակաշրջան | հաշվետվությունների կազմումը (եռամսյակ, տարի) | անհրաժեշտ չափով և ներքին կարգավորման համար |
| 6.տեղեկատվության արդյունքների մատչելիություն | հասկանալի է բոլորի համար | գաղտնիության ապահովում |

## 1.2. Ֆինանսական վերլուծության տեղեկատվության հիմնական աղբյուրները

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության իրականացման համար տեղեկատվության ամենահիմնական աղբյուրը հաշվապահական հաշվետվությունների ձևերն են, որոնցում արտացոլված են այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են գույքին և ֆինանսական դրությանը, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներին: Հաշվապահական հաշվետվությունները պետք է կազմված լինեն այնքան հասկանալի և ըմբռնելի, որ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ կարողանա հեշտությամբ օգտվել դրանցում գրանցված տվյալներից:



Նոր տնտեսավարման պայմաններում բարեփոխումներ կատարվեցին նաև մեր հանրապետությունում իրականացվող հաշվապահական հաշվառման բնագավառում: Մշակվեցին հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներ[1] (ՀՀՀՀՍ), որոնք հիմք են հանդիսանալու կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը կազմելու համար, այդ թվում՝

«Հաշվապահական հաշվեկշիռ» (ձև N⁰1),

«Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն» (ձև N⁰2),

«Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն» (ձև N⁰3),

«Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» (ձև N⁰4),

«Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթություններ» (ձև N⁰5):

Վերոնշյալ հաշվետվությունների եռամսյակային և տարեկան կտրվածքով ձևերի լրացման հրահանգը հաստատվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1998 թ. նոյեմբերի 28-ի թիվ 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների համար:

Հաշվառման միջազգային համակարգին անցնելը բավականին փոփոխություններ է առաջ բերել ֆինանսական հաշվետվությունների բոլոր ձևերում: Այսպես, հաշվապահական հաշվեկշռում ներառված են 5 բաժիններ. I. ոչ ընթացիկ ակտիվներ, II. ընթացիկ ակտիվներ, III. սեփական կապիտալ, IV. ոչ ընթացիկ պարտավորություններ, V. ընթացիկ պարտավորություններ: Նշված բաժիններից առաջին երկուսը արտացոլված են հաշվեկշռի ակտիվում, մնացած երեքը՝ պասիվում: Դրանց մասին ավելի հանգամանալից պատկերացում ունենալու համար՝ բնութագրենք առանձին-առանձին:

### 1.2.1. Հաշվապահական հաշվեկշռի էությունը և բովանդակությունը

Հաշվապահական հաշվեկշիռը երկու մասից կազմված մի աղյուսակ է, որի առաջին մասը ցույց է տալիս տնտեսավարող սուբյեկտների՝ բաժնետիրական ընկերությունների, փոքր և միջին ձեռնարկությունների, ֆերմերային տնտեսությունների և այլ կազմակերպությունների տնտեսական միջոցները (ակտիվ), իսկ երկրորդ մասը՝ այդ միջոցների կազմավորման

[1] Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ, Երևան, 1999:

աղբյուրները (պասիվ): Հաշվեկշիռը կազմվում է արժեքային տեսքով (դրամով կամ արտարժույթով) և ակտիվի ու պասիվի ընդհանուր հանրագումարները պարտադիր իրար հավասար լինելու սկզբունքով, քանի որ տվյալ տնտեսավարող սուբյեկտը պետք է իր տրամադրության տակ ունենա կազմավորման աղբյուրների գումարին համապատասխան տնտեսական միջոցներ:

Հաշվեկշռի յուրաքանչյուր տողի գծով լրացվում է երկու սյունակ. առաջին սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի (տարի) սկզբի դրությամբ նախորդ տարվա փաստացի ֆինանսական վիճակը (նախնական հաշվեկշիռ), իսկ երկրորդ սյունակում՝ ֆինանսական վիճակը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (վերջնական հաշվեկշիռ): Տնտեսավարող սուբյեկտի հաշվեկշիռը հիմնականում կազմվում է հաշվապահական հաշվառման գլխավոր գրքի տվյալների հիման վրա: Մինչև դրա կազմումը, խիստ անհրաժեշտ է տնտեսական գործառնություններին մասնակցած սինթետիկ (հաշվեկշռային) հաշիվների գծով համեմատություն կատարել տարվա վերջի դրությամբ մնացորդային գումարների և շրջանառության տեղեկագրի տվյալների հետ: Դրա համար նախօրոք պետք է կատարվեն ավարտված բոլոր գործառնությունների գծով հաշվապահական գրանցումները, փակվեն գործառնական բոլոր հաշիվները, բացահայտվեն ֆինանսական արդյունքներն ու ձևակերպվեն հարկերի գծով հասանելիք գումարները:

Հաշվեկշռի էությունը և բովանդակությունն (հավելված 1) ավելի պարզ պատկերացնելու համար այն ներկայացնենք ըստ բաժինների և դրանցում ներառված հոդվածների՝ հաշվի առնելով նաև «ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին» համապատասխան հաշվային պլանը:

I. Ոչ ընթացիկ ակտիվների կազմում ներառվում են՝

1. Ոչ ընթացիկ նյութական ակտիվները, այդ թվում՝

ա) շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ և դրանց մաշվածություն (շենքեր, կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, արտադրական ու տնտեսական գույք և գործիքներ, բազմամյա տնկարկներ, բանող և մթերատու անասուններ, այլ հիմնական միջոցներ),

բ) շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ (շահագործման չհանձնված հիմնական միջոցներ, ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ և դրանց մաշվածություն, շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներ),

գ) հողամասեր, բնական ռեսուրսներ և դրանց սպառում,

դ) անավարտ, ոչ ընթացիկ նյութական ակտիվներ (կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ, տեղակայման ենթակա սարքավորումներ, հետագա կապիտալացվող ծախսումներ),



ե) ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ և դրանց մաշվածություն,

զ) ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստներ:

2. Ոչ նյութական ակտիվները, այդ թվում՝

ա) ոչ նյութական ակտիվներ [կազմակերպչական ծախսեր, լիցենզիաներ, ֆիրմայի գին (գուդվիլ), արտոնագրեր, ապրանքային նշաններ, ծրագրային ապահովում, հողի և բնական ռեսուրսների օգտագործման իրավունք, այլ ոչ նյութական ակտիվներ] և դրանց ամորտիզացիա,

բ) զարգացման անավարտ ծախսումներ,

գ) ակտիվ ճանաչված զարգացման ծախսումներ և դրանց ամորտիզացիա,

դ) ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստներ:

3. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները, այդ թվում՝

ա) ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված (փոխհամաձայնեցված գործունեություն իրականացնող) կողմերի կանոնադրական կապիտալում (ոչ ընթացիկ ներդրումներ դուստր ընկերություններում, միավորված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում),

բ) այլ ոչ ընթացիկ ներդրումներ [ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կողմերի կանոնադրական կապիտալում և պարտքային արժեթղթերում, ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված (փոխհամաձայնեցված) կողմերի պարտքային արժեթղթերում],

գ) ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռքբերման արժեքի և անվանական կամ մարման արժեքի դրական տարբերություն (հավելավճար կամ շահույթ), բացասական տարբերություն (զեղչ կամ վնաս),

դ) ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազում,

ե) երկարաժամկետ դեբիտորական պարտք՝ ֆինանսական վարձակալության գծով,

զ) չվաստակած ֆինանսական եկամուտ:

4. Այլ ոչ ընթացիկ ակտիվները, այդ թվում՝

ա) ոչ ընթացիկ ակտիվներ՝ հետաձգված ծախսումների և հարկերի գծով,

բ) կանխավճարներ՝ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար:

II. Ընթացիկ ակտիվների կազմում ներառվում են՝

1. Պաշարները, այդ թվում՝

ա) նյութեր (հումք և նյութեր, գնովի կիսապատրաստուկներ և դետալներ, վառելիք, տարա և տարանյութեր, պահեստամասեր, շինանյութեր,

գյուղատնտեսական նշանակության հյութեր, վերամշակման հանձնված հյութեր և այլն),

բ) աճեցվող և բտվող կենդանիներ,

գ) արագամաշ առարկաներ (արագամաշ առարկաներ պահեստում, ժամանակավոր ոչ տիտղոսային կառույցներ),

դ) անավարտ արտադրություն (արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների և օժանդակ արտադրության գծով),

ե) արտադրանք (պատրաստի արտադրանք, սեփական արտադրության կիսապատրաստուկներ, կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված արտադրանք, առաքված արտադրանք),

զ) ապրանքներ (ապրանքներ պահեստում և մանրածախ առևտրում, տարա և տարանյութեր, կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված ապրանքներ, առաքված ապրանքներ),

է) ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն (առևտրային հավելագին, ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ),

ը) պաշարների արժեքի նվազում:

2. Գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերը, այդ թվում՝

ա) առևտրական դեբիտորական պարտքեր՝ չկապակցված կողմերի գծով (երկրի ներսից և արտերկրից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտք),

բ) առևտրական դեբիտորական պարտք՝ կապակցված կողմերի գծով (ընթացիկ դեբիտորական պարտք դուստր ընկերությունների, միավորված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների գծով),

գ) առևտրական դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ,

դ) տրված ընթացիկ կանխավճարներ (երկրի ներսում և արտերկիր տրված կանխավճարներ),

ե) ընթացիկ դեբիտորական պարտք՝ բյուջեի գծով (շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և այլ վճարների գծով),

զ) հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր (փոխհատուցման ենթակա ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ),

է) ընթացիկ դեբիտորական պարտք՝ պարտադիր սոցիալական ապահովագրության և ապահովության գծով (սոցիալական ապահովագրության վճարների և նպաստների գծով),

ը) ընթացիկ դեբիտորական պարտք (աշխատանքի դիմաց վճարման, առհաշիվ տրված գումարների և այլ գործառնությունների գծով),



թ) ընթացիկ դեբիտորական պարտք՝ հաշվեգրված եկամուտների գծով (ընթացիկ դեբիտորական պարտք՝ վարձակալության, ստացվելիք շահաբաժինների, հաշվարկված տոկոսների և այլ եկամուտների գծով),

ժ) այլ ընթացիկ դեբիտորական պարտք (ընթացիկ դեբիտորական պարտք՝ բողոքարկումների և ապահովագրության գծով, երկարաժամկետ դեբիտորական պարտքի կարճաժամկետ մաս՝ ֆինանսական վարձակալության գծով, ընթացիկ դեբիտորական պարտք՝ այլ գործառնությունների գծով):

3. Ընթացիկ ֆինանսական ներդրումները, այդ թվում՝

ա) ընթացիկ ֆինանսական ներդրումներ (ընթացիկ ներդրումներ չկապակցված և կապակցված կողմերի կանոնադրական կապիտալում, ընթացիկ ներդրումներ չկապակցված և կապակցված կողմերի պարտքային արժեթղթերում),

բ) ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռքբերման արժեքի և անվանական կամ մարման արժեքի դրական տարբերությունը (հավելավճար կամ եկամուտ), բացասական տարբերությունը (զեղչ կամ վնաս),

գ) ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեքի նվազում:

4. Դրամական միջոցները, այդ թվում՝

ա) դրամարկղ (ազգային արժույթի և արտարժույթի դրամարկղ՝ սառեցված գումարներ դրամարկղում),

բ) հաշվարկային հաշիվ (հաշվարկային հաշիվ և սառեցված գումարներ հաշվարկային հաշվում),

գ) արտարժութային հաշիվ (արտարժութային հաշիվ երկրի ներսում և արտերկրում, սառեցված գումարներ արտարժութային հաշվում),

դ) այլ հաշիվներ բանկերում (ակրեդիտիվներ, չեկային գրքույկներ),

ե) դրամական միջոցներ ճանապարհին,

զ) դրամական փաստաթղթեր:

5. Այլ ընթացիկ ակտիվները, այդ թվում՝

ա) ընթացիկ ակտիվներ՝ հետաձգված ծախսումների գծով,

բ) ընթացիկ ակտիվներ՝ հետաձգված հարկերի գծով:

III. Սեփական կապիտալի կազմում ներառվում են՝

1. Կանոնադրական (բաժնեհավաք) և լրացուցիչ կապիտալը, այդ թվում՝

ա) կանոնադրական կապիտալ (հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր, բաժնեմասեր և փայաբաժիններ),

բ) չվճարված կապիտալ,

գ) հետ գնված կապիտալ (հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր, բաժնեմասեր և փայաբաժիններ),

դ) լրացուցիչ կապիտալ:

2. Վերագնահատումից տարբերությունները, այդ թվում՝

ա) ակտիվների վերագնահատումից առաջացած արժեքի աճ (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ոչ ընթացիկ ու ընթացիկ ֆինանսական ներդրումների վերագնահատումից առաջացած արժեքի աճ),

բ) չիրացված վնասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից:

3. Ֆինանսական արդյունքը, այդ թվում՝

ա) ֆինանսական արդյունք (շահույթ և վնաս),

բ) չբաշխված շահույթ (չծածկված վնաս), որից՝ նախորդ տարիների ֆինանսական արդյունքների ճշգրտում, նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս): Սեփական կապիտալի կազմում առանձին տողով արտացոլվում է «Կուտակված շահույթ» հոդվածը, ըստ որի ցույց է տրվում նախորդ տարիների չօգտագործված և հաշվետու տարվա զուտ շահույթի (վնասի) մեծությունը,

գ) հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս),

դ) կանխավճարներ՝ շահաբաժինների գծով:

4. Պահուստները, այդ թվում՝ պարտադիր ձևավորվող պահուստներ: Ըստ «Պահուստներ» հոդվածի ցույց է տրվում օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմնադիր փաստաթղթերով ձևավորված պահուստների գումարը:

IV. Ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում ներառվում են՝

1. Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունները, այդ թվում՝

ա) երկարաժամկետ բանկային վարկեր (ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ բանկային վարկեր),

բ) երկարաժամկետ փոխառություններ (երկարաժամկետ փոխառություններ կապակցված կողմերից, տրված երկարաժամկետ մուրհակներ, տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսեր, այլ երկարաժամկետ փոխառություններ),

գ) երկարաժամկետ պարտավորություններ՝ ֆինանսական վարձակալության գծով,

դ) ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսեր:

2. Այլ ոչ ընթացիկ պարտավորությունները, այդ թվում՝

ա) հետաձգված եկամուտներ (ակտիվներին վերաբերող դրամաշնորհներ, բացասական գուդվիլ),

բ) ոչ ընթացիկ պարտավորություններ՝ հետաձգված հարկերի գծով:

V. Ընթացիկ պարտավորությունների կազմում ներառվում են՝

1. Ընթացիկ ֆինանսական պարտավորությունները, այդ թվում՝



ա) կարճաժամկետ բանկային վարկեր (ազգային արժույթով և արտարժույթով կարճաժամկետ բանկային վարկեր, ազգային արժույթով և արտարժույթով ժամկետանց կարճաժամկետ բանկային վարկեր),

բ) երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մաս (ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մաս, ազգային արժույթով և արտարժույթով ժամկետանց երկարաժամկետ բանկային վարկեր),

գ) կարճաժամկետ փոխառություններ (կապակցված և չկապակցված կողմերից),

դ) երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս (կապակցված կողմերից երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս, տրված երկարաժամկետ մուրհակների կարճաժամկետ մաս, տեղաբաշխված երկարաժամկետ պարտատոմսերի կարճաժամկետ մաս, այլ երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս):

2. Գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքերը, այդ թվում՝

ա) առևտրային կրեդիտորական պարտքեր չկապակցված կողմերին (երկրի ներսում և արտերկրում վճարվելիք),

բ) առևտրային կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերին (դուստր ընկերություններին, միավորված կազմակերպություններին և համատեղ ձեռնարկումներին),

գ) ստացված ընթացիկ կանխավճարներ (երկրի ներսից և արտերկրից),

դ) կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին (շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, акцիզային հարկի, գույքահարկի, հողի հարկի, մաքսատուրքի, հաստատագրված վճարների և այլ պարտադիր վճարների գծով),

ե) կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության և ապահովության գծով (սոցիալական ապահովագրության վճարների և այլ նպաստների գծով),

զ) կարճաժամկետ կրեդիտորական պարտք արտաբյուջետային վճարումների գծով,

է) պարտավորություններ աննձնակազմին՝ աշխատանքի վարձատրության գծով (ավանդագրված աշխատավարձի և աշխատանքի վարձատրության գծով),

ը) պարտավորություններ աննձնակազմին՝ այլ գործառնությունների գծով (պարտավորություններ առհաշիվ գումարների և աննձնակազմին՝ այլ գործառնությունների գծով),

թ) կարճաժամկետ կրեդիտորական պարտք հիմնադիրներին (մասնակիցներին),

ժ) կարճաժամկետ պարտավորություններ հաշվեգրված տոկոսների գծով (երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերի, երկարաժամկետ և կարճաժամկետ փոխառությունների գծով տոկոսներ),

ի) այլ կարճաժամկետ պարտավորություններ (կարճաժամկետ պարտավորություններ գործառնական վարձակալության և ապահովագրության գծով, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների կարճաժամկետ մաս):

3. Այլ ընթացիկ պարտավորությունները (նպատակային ֆինանսավորում և մուտքեր, հետաձգված ընթացիկ պարտավորություններ հարկերի գծով, գալիք ժամանակաշրջանի ծախսերի և վճարումների պահուստ):

Հաշվապահական հաշվեկշռի կազմման գործում իրենց կարևոր տեղն ունեն եկամուտների կազմավորման և կատարվող ծախսերի ուղղությունները:

Եկամուտների թվին դասվում են՝

1. Գործառնական գործունեությունից եկամուտներ, այդ թվում՝

ա) արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ (արտադրանքի և ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարումից ու ծառայությունների մատուցումից հասույթ),

բ) վաճառված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձում և գների իջեցում,

գ) գործառնական այլ եկամուտներ (ընթացիկ այլ ակտիվների վաճառքից, գործառնական վարձակալությունից, տույժերից ու տուգանքներից, դուրս գրված դեբիտորական պարտքերի մարումից, կրեդիտորական պարտքերի դուրս գրումից, նյութական վնասի փոխհատուցումից, պաշարների արժեքի փոփոխությունից, ընթացիկ ֆինանսական ներդրումների և ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկման վերագնահատումից եկամուտներ):

2. Ոչ գործառնական գործունեությունից եկամուտներ, այդ թվում՝

ա) հիմնական միջոցների վաճառքից (օտարումից) եկամուտներ,

բ) ֆինանսական ներդրումների վաճառքից (օտարումից) եկամուտներ,

գ) ոչ ընթացիկ այլ ակտիվների վաճառքից (օտարումից) եկամուտներ,

դ) գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից (օտարումից) եկամուտներ,

ե) փոխարժեքային տարբերություններից եկամուտ,



զ) անհատույց ստացված ակտիվներից եկամուտ,

է) ֆինանսական ներդրումներից եկամուտներ (շահաբաժիններ, տոկոսներ, ֆինանսական ներդրումներից այլ եկամուտներ),

ը) կապակցված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս,

թ) ֆինանսական վարձակալությունից եկամուտ:

3. Արտասովոր (աննախադեպ) եկամուտներ (տարերային աղետների, քաղաքական ցնցումների և արտակարգ այլ իրադարձությունների արդյունքում առաջացած կորուստների համար ստացված եկամուտներ):

4. Նախորդ տարիների եկամուտներ, այդ թվում՝ հաշվետու տարում հայտնաբերված՝ նախորդ տարիների գործառնական գործունեությունից եկամուտներ:

Ծախսերի կազմում ներառվում են՝

1. Գործառնական գործունեության ծախսերը, այդ թվում՝

ա) իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը (վաճառված արտադրանքի և ապրանքների, կատարված աշխատանքների ու մատուցված ծառայությունների ինքնարժեքը),

բ) իրացման (առևտրային) ծախսեր (աշխատանքի դիմաց վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ, հիմնական միջոցների մաշվածություն և դրանց նորոգման ու սպասարկման ծախսեր, պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տեսակավորման և տարայի ծախսեր, արտադրանքի, ապրանքների պահպանության ու դրանց իրացման տրանսպորտային ծախսեր, կոմիսիոն վճարներ, մարկեթինգի, գովազդի և ապահովագրական ծախսեր),

գ) վարչական և ընդհանուր այլ ծախսեր (աշխատանքի դիմաց վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ, հիմնական միջոցների մաշվածություն և դրանց նորոգման ու սպասարկման ծախսեր, հիմնական միջոցների գործառնական վարձակալության ծախսեր, ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա, գործուղման, ներկայացուցչական, գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցության ու ապահովագրության ծախսեր, աուդիտի ու խորհրդատվական և բանկային ծառայությունների ծախսեր, երաշխիքային սպասարկման և վերանորոգման ծախսեր, առևտրային դեբիտորական պարտքերի կորուստների, չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր),

դ) գործառնական այլ ծախսեր (շարունակվող գործունեության գծով ընթացիկ այլ ակտիվների վաճառքից ծախսեր, գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածություն, տույժերից ու տուգանքներից ծախսեր, դեբիտորական պարտքերի կորուստների և

դուրս գրված կրեդիտորական պարտքերի մարման գծով ծախսեր, արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, պաշարների արժեքի նվազումից ծախս, ընթացիկ ֆինանսական ներդրումների վերագնահատումից ծախս, ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից կորուստներ և դրանց վերագնահատումից ծախս, հետազոտության և զարգացման ծախսեր, արտադրական ծախսումների սովորական մակարդակը գերազանցող ծախսեր, խոտանված արտադրանքի հետ կապված և ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսեր, դատական ծախսեր):

2. Ոչ գործառնական գործունեության ծախսերը, այդ թվում՝

ա) հիմնական միջոցների վաճառքի (օտարման) ծախսեր,

բ) ֆինանսական ներդրումների վաճառքի (օտարման) ծախսեր,

գ) ոչ ընթացիկ այլ ակտիվների վաճառքի (օտարման) ծախսեր,

դ) գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքի (օտարման) ծախսեր (հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և պաշարների վաճառքի ծախսեր),

ե) փոխարժեքային տարբերություններից ծախսեր,

զ) վարկերի և փոխառությունների հետ կապված ծախսեր՝ տոկոսների տեսքով,

է) կապակցված կազմակերպությունների վնասի բաժնեմասը,

ը) ֆինանսական վարձակալության ծախսեր:

3. Արտասովոր (աննախադեպ) ծախսեր (տարերային աղետների, քաղաքական ցնցումների և արտակարգ այլ իրադարձությունների արդյունքում առաջացած կորուստների դիմաց պատճառված վնասներ):

4. Նախորդ տարիների ծախսեր, այդ թվում՝ հաշվետու տարում հայտնաբերված՝ նախորդ տարիների գործառնական գործունեությունից ծախս:

5. Շահութահարկի գծով ծախս:

### 1.2.2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության էությունը

Տնտեսավարող սուբյեկտների «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը» (ձև N$^{0}$2) ներառում է եկամուտների և ծախսումների հետ կապված տվյալները, որոնք ներկայացվում են նախորդ և հաշվետու տարիների (ժամանակաշրջանների) սկզբի դրությամբ (հավելված 2):

Երբ տնտեսավարող սուբյեկտը կազմում է միջանկյալ ժամանակաշրջանի (եռամսյակ, կիսամյակ և ինն ամիս) ֆինանսական հաշվետվություններ, ապա նախորդ և հաշվետու ժամանակաշրջանների տվյալները լրացվում են աճողական կարգով: Հաշվետվության նախավերջին և վերջին սյունակներում լրացվում են համապատասխանաբար նախորդ և հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի տվյալները: Օրինակ՝ եռամսյակային հաշվետվություններ ներկայացնելիս այդ սյունակներում լրացվում են 1-ին եռամսյակի հաշվետվությունում՝ այդ նույն եռամսյակի, կիսամյակի հաշվետվությունում՝ 2-րդ եռամսյակի, ինն ամսվա հաշվետվությունում՝ 3-րդ եռամսյակի, իսկ տարեկան հաշվետվությունում՝ 4-րդ եռամսյակի տվյալները:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ելակետային տվյալների հիման վրա հաշվարկվում են՝

1. Համախառն շահույթը կամ վնասը (տող 030 = տող 010 – տող 020),

2. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը կամ վնասը (տող 060 = տող 030 – տող 040 – տող 050),

3. Գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը (տող 090 = տող 060 + տող 070 – տող 080),

4. Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը (տող 120),

5. Սովորական գործունեությունից շահույթը կամ վնասը (տող 130 = տող 090 – տող 100 ± տող 110 ± տող120),

6. Արտասովոր դեպքերից շահույթը կամ վնասը (տող 140),

7. Զուտ շահույթը կամ վնասը (մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը՝ տող 150 = տող130 ± տող 140),

8. Զուտ շահույթը կամ վնասը (հարկումից հետո՝ տող 170 = տող150 – տող 160):

Վերոնշյալներից համախառն շահույթը կամ վնասը՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից զուտ հասույթի՝ առանց անուղղակի հարկերի (ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ) և դրանց հետ կապված ծախսերի (ինքնարժեքի) միջև եղած տարբերությունն է: Երբ հասույթի գումարի չափը գերազանցում է ծախսերին, արդյունքում ստացվում է համախառն շահույթ, իսկ հակառակ դեպքում՝ վնաս: Վերջինիս գումարը հաշվետվությունում ցույց է տրվում փակագծերի մեջ:

Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը կամ վնասը՝ համախառն շահույթի (վնասի) և իրացման (առևտրային) ծախսերի, վարչական և ընդհանուր այլ ծախսերի

(արտադրական գործընթացի հետ կապ չունեցող) միջև եղած տարբերությունն է:

Գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի (վնասի), գործառնական այլ եկամուտների գումարի և գործառնական այլ ծախսերի տարբերությունն է:

- Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը արդյունք է տարբեր տեսակի գործարքներից ստացվող եկամուտների և պատճառվող ծախսերի միջև եղած տարբերության:

Սովորական գործունեությունից շահույթը կամ վնասը գործառնական գործունեությունից շահույթի (վնասի), ֆինանսական ծախսերի (ֆինանսական վարձակալության և վարկերի ու փոխառությունների հետ կապված ծախսեր), կապակցված կազմակերպությունների շահույթի (վնասի) և այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթի (վնասի) հանրագումարն է:

Զուտ շահույթը կամ վնասը (մինչև շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը) սովորական գործունեությունից շահույթի (վնասի) և արտասովոր դեպքերից շահույթի (վնասի) հանրագումարն է: Վերջինս արտասովոր դեպքերի և իրադարձությունների հետևանքով առաջացած շահույթի կամ պատճառված վնասի գումարն է:

Զուտ շահույթը կամ վնասը (հարկումից հետո) մինչև շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը զուտ շահույթի (վնասի) և շահութահարկի գծով ծախսի տարբերությունն է:

Անհրաժեշտ է նշել, որ «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության» 180 (մեկ բաժնետոմսին ընկնող շահույթը) և 190 (մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթը) ծածկագրերով տողերը պարտադիր լրացնում են բաժնետիրական այն ընկերությունները, որոնց բաժնետոմսերն ազատ շրջանառվում են: Իսկ բաժնետիրական այն ընկերությունները, որոնց բաժնետոմսերն ազատ չեն շրջանառվում, կարող են դրանք լրացնել իրենց հայեցողությամբ:

### 1.2.3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության էությունը

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը (ձև N°3) ունի աղյուսակի տեսք (հավելված 3) և բաղկացած է երկու բաժնից: 1-ին բաժնում ցույց են տրվում սեփական կապիտալին վերաբերվող նախորդ տարվա (ժամանակաշրջանի), իսկ 2-րդ բաժնում՝ հաշվետու



տարվա (ժամանակաշրջանի) տվյալները:

Հաշվետվությունում ըստ տողերի և սյունակների ցույց են տրվում սեփական կապիտալի կազմը և դրա շարժը բնութագրող ցուցանիշները, այդ թվում՝ ըստ սյունակների (1-ին և 2-րդ բաժիններ)՝

1. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը,
2. Չվճարված կապիտալը,
3. Հետ գնված կապիտալը,
4. Լրացուցիչ կապիտալը (էմիսիոն եկամուտ),
5. Ակտիվների վերագնահատումից տարբերությունները,
6. Չիրացված վնասները ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից,
7. Կուտակված շահույթը (վնասը),
8. Պահուստները,
9. Կանխավճարները շահաբաժինների գծով:

Ըստ տողերի (1-ին և 2-րդ բաժիններ)՝

1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը,
2. Վերահաշվարկված մնացորդը,
3. Կանոնադրական կապիտալի ձևավորումը,
4. Բաժնետոմսերի (բաժնեմասերի) թողարկումը և թողարկված բաժնետոմսերի դիմաց վճարումը,
5. Բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետգնումը,
6. Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) վաճառքը, մարումը,
7. Թողարկված, բայց չվճարված բաժնետոմսերի (բաժնեմասերի) մարումը,
8. Կանոնադրական կապիտալի ավելացումը սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին,
9. Կանոնադրական կապիտալի նվազեցումը չծածկված վնասի ծածկման նպատակով,
10. Ակտիվների վերագնահատումից աճը (նվազումը),
11. Ակտիվների վերագնահատումից աճի վերագրումը չբաշխված շահույթին,
12. Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների փոփոխությունը,
13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթը (վնասը),
14. Չբաշխված շահույթից հատկացումներ պահուստներին կամ չծածկված վնասի ծածկում պահուստների հաշվին,
15. Շահաբաժինների գծով տրված կանխավճարները,

16. Շահաբաժինների հայտարարումը և կանխավճարների մարումը,

17. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացումը (նվազեցումը),

Ըստ տողերի տրվում է նաև սեփական կապիտալի տարրերի մնացորդը ս.թ. դեկտեմբերի 31-ի և որևիցե ժամանակաշրջանի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) սկզբի դրությամբ:

Միաժամանակ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության, կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարը այդ կապիտալի սկզբնական մնացորդի և չվճարված ու հետ գնված կապիտալների գումարների տարբերությունն է, այսինքն՝ սյունակ 6 = սյ.3 – սյ.4 – սյ.5: Իր հերթին սեփական կապիտալի մնացորդը իրենից ներկայացնում է կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարի, լրացուցիչ կապիտալի, ակտիվների վերագնահատումից տարբերությունների, կուտակված շահույթի (վնասի), պահուստների հանրագումարի և ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների, շահաբաժինների գծով կանխավճարների գումարների տարբերությունը: Համառոտակի այն կլինի հավասար՝ սյունակ 13 = սյ.6 + սյ.7 + սյ. 8 + սյ.10 + սյ.11 – (սյ.9 + սյ .12):

Համառոտակի բնութագրենք սեփական կապիտալում ներառված ցուցանիշները, այդ թվում՝

- *Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի* ձևավորման կարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով: Կանոնադրական կապիտալի գումարի չափը հայտարարվում է այն հիմնադրելիս և ամրագրվում կանոնադրության մեջ: Կանոնադրական կապիտալը ձևավորվում է բաժնետերերի ներդրումներից և նրա գումարը հավասար է բաժնետերերի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի անվանական արժեքների գումարին: Կանոնադրական կապիտալի գումարի չափը ձևավորվում է շահագործման մեջ գտնվող և չգտնվող հիմնական միջոցներով, բնական ռեսուրսներով, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներով, ոչ նյութական ակտիվներով, նյութերով, արագամաշ առարկաներով, ապրանքներով, հողամասերով և այլ նյութական ակտիվներով:

- *Չվճարված կապիտալը* կանոնադրական կապիտալում ներդրումների գծով հիմնադիրների (մասնակիցների) պարտքի, ինչպես նաև բաժնետիրական ընկերությունների թողարկած, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի արտացոլումն է:

- *Հետ գնված կապիտալով* բնորոշվում են բաժնետերերից (մասնակիցներից) հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայաբաժինների) արժեքը:



- *Լրացուցիչ կապիտալը* արդյունք է տեղաբաշխված և հետ գնված բաժնետոմսերի վաճառքի ու դրանց անվանական արժեքի տարբերության: Եթե այդ տարբերությունը դրական է, ապա լրացուցիչ կապիտալը կարող է հանդես գալ որպես կանոնադրական կապիտալի գումարի չափի ավելացման աղբյուր:

- *Ակտիվների վերագնահատումից տարբերությունները* արդյունք են ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումների, ընթացիկ ֆինանսական ներդրումների) վերագնահատումից առաջացած արժեքի աճի և ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների: Հաշվապահական հաշվառման մեջ ակտիվների վերագնահատումից առաջացած տարբերությունները նկարագրված են ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ», ՀՀՀՀՍ 25 «Ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտներում[1]:

- *Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների* գումարն արդյունք է «Բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների դեբետային և կրեդիտային մնացորդների տարբերության: Այն բացասական լինելու դեպքում ցույց է տրվում փակագծում:

- *Պահուստներն* արդյունք են տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող զուտ շահույթից մասհանումների, որի գումարի չափը սահմանվում է կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս: Պահուստային կապիտալն օգտագործվում է պատճառված կորուստները ծածկելու, ինչպես նաև ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը ետ գնելու համար: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

- *Կանխավճար շահաբաժինների գծով* գումարը արդյունք է զուտ շահույթից (հարկումից հետո) ըստ յուրաքանչյուր բաժնետոմսի տրամադրման: Շահաբաժնի ձևով չվճարված կամ այլ եղանակով չօգտագործված շահույթը տեղաբաշխվում է տնտեսավարող սուբյեկտի (ընկերության) հայեցողությամբ:

Որպես կարևորագույն ցուցանիշ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության 020 տողի 10-րդ սյունակում ցույց է տրվում հաշվետու տարում (ժամանակաշրջանում) հայտնաբերված նախորդ տարիներին վերաբերող էական սխալների ուղղման հետևանքով կուտակված շահույթի (վնասի) կամ չբաշխված շահույթի (չծածկված

[1] ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներ, Երևան, 1999, էջ. 261, 466:

վնասի) սկզբնական մնացորդի ճշգրտման գումարը: Եթե ճշգրտման արդյունքում պետք է նվազեցվի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը (ավելացվի չծածկված վնասի սկզբնական մնացորդը), ապա ճշգրտման գումարը ցույց է տրվում փակագծերում: Սեփական կապիտալի հետ առնչվող բոլոր տեսակի վնասները հաշվետվությունում ցույց են տրվում փակագծերում և դրանց բացարձակ մեծությունը հանվում է հաշվարկվող հանրագումարից:

### 1.2.4. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության էությունը

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը (ձև №4), որը նույնպես ունի աղյուսակի տեսք (հավելված 4), ներառում է հաշվետու տարում (ժամանակաշրջանում) տնտեսավարող սուբյեկտի դրամարկղում և նրան սպասարկող բանկային հաշիվներում գործառնական, ներդրումային, ֆինանսական գործունեությունից (ներառյալ նաև արտասովոր դեպքերից) Հայաստանի Հանրապետության արժույթի (դրամի) և արտարժույթի մուտքերն ու ելքերը, հաշվետու տարվա սկզբի և այդ նույն տարվա (ժամանակաշրջանի) վերջին՝ մնացորդները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքային տարբերությունների հետևանքով դրամական միջոցների աճը կամ նվազումը:

Արտարժույթով դրամական միջոցները, ինչպես նաև դրանց համարժեքները հաշվետվությունում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Ընդ որում, հաշվետու տարվա դրամական միջոցների սկզբի մնացորդները ցույց են տրվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով: Տարվա ընթացքում արտարժույթով դրամական միջոցների հոսքերը ցույց են տրվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա սահմանված հաշվարկային փոխարժեքով: Միաժամանակ, արտարժույթով դրամական միջոցների, ինչպես նաև դրանց համարժեքների տարեվերջի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդները ցույց են տրվում հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում տվյալներն արտացոլվում են նախորդ և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) սկզբի ու վերջի դրությամբ, որտեղ միաժամանակ ցույց են տրվում դրամական միջոցների մուտքերն ու ելքերը դրամարկղում՝ բանկային հաշիվներից և դրամարկղից՝ բանկային հաշիվներում: Հաշվետվությունում ներառվող ցուցանիշների թվին են դասվում՝

1. *Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը,*
2. *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքերը,* այդ թվում՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) դիմաց, ընթացիկ այլ ակտիվների (հումքի, նյութերի, արագամաշ առարկաների և պաշարների այլ տեսակների) վաճառքի դիմաց, վարձավճարներից և ռոյալթիներից, գործառնական այլ գործունեությունից (դրամական միջոցների համարժեքներ հանդիսացող ներդրումներից ստացված տոկոսները, տույժերը, տուգանքները, դուրս գրված դեբիտորական պարտքերի մարումը, նյութական վնասի փոխհատուցումը և անհատույց ստացված դրամական միջոցները) և արտասովոր դեպքերից,
3. *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքերը,* այդ թվում՝ նյութերի, ապրանքների ձեռք բերման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց, աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումները (վճարված աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, եկամտահարկը, ալիմենտը), սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով վճարումները, բյուջեին վճարումները (տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկերի, տուրքերի, դրանց դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների և բյուջե գանձվող այլ վճարումների գծով վճարված դրամական միջոցները), գործառնական այլ գործունեության նպատակով վճարումները (անհատույց տրված, գործուղման, պայմանագրային պարտավորությունների խախտման համար տույժերի և տուգանքների, դուրս գրված կրեդիտորական պարտքերի մարման և գործառնական այլ նպատակով վճարված դրամական միջոցները) և արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները,
4. *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքերը,* այդ թվում՝ հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից, այլ կազմակերպության սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների վաճառքից (այլ կազմակերպությունների սեփական կապիտալի միջոցների՝ բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի, ինչպես նաև համատեղ ձեռնարկումներում մասնակցության վաճառքից ստացված դրամական միջոցները), այլ կազմակերպության արժեթղթերի վաճառքից և դրանց մարումից, տրամադրված փոխատվությունների վերադարձումից, շահաբաժինների և տոկոսների ստացումից, ներդրումային այլ գործունեությունից մուտքերը (ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն պայմանագրերից, ինչպես նաև ներդրումային այլ գործունեությունից ստացված դրամական միջոցները), արտասովոր դեպքերից,

5. *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքերը*, այդ թվում՝ հիմնական միջոցների, ոչ նյութական և ոչ ընթացիկ ակտիվների համար, այլ կազմակերպության սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների և պարտքային արժեթղթերի ձեռք բերման համար, փոխատվությունների տրամադրումից, ներդրումային այլ գործունեության նպատակով, արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները,

6. *Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքերը*, այդ թվում՝ սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների թողարկումից և վերավաճառքից (կազմակերպության կողմից թողարկված կամ հետ գնված բաժնետոմսերի վաճառքից կամ վերավաճառքից ստացված դրամական միջոցները), ստացված վարկերից և փոխառություններից, պարտքային արժեթղթերի թողարկումից, ֆինանսական այլ գործունեությունից և արտասովոր դեպքերից մուտքերը,

7. *Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքերը*, այդ թվում՝ սեփական կապիտալի միջոցների հետ գնումից (կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսերի հետ գնման դիմաց վճարված դրամական միջոցները), ստացված վարկերի և փոխառությունների մարումից, պարտքային արժեթղթերի մարումից վճարված շահաբաժինները, վճարված տոկոսները, ֆինանսական այլ գործունեության նպատակով և արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները:

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա հաշվարկվում են՝

- գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը (տող 170), որը հավասար է ընդամենը գործառնական գործունեությունից մուտքագրված (տող 070) և ելքագրված (տող 160) գումարների տարբերությանը,
- ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը (տող 340), որը հավասար է ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքագրված (տող 260) և ելքագրված (տող 330) գումարների տարբերությանը,
- ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը (տող 490), որը հավասար է ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքագրված (տող 400) և ելքագրված (տող 480) գումարների տարբերությանը,
- ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքերը՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունից հավասար է 170, 340, 490 տողերի հանրագումարին:

Հաշվետվությունում ներառված աստղանիշով (սույն տողերում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր) ցուցանիշներից՝

ա) «Արտարժույթի փոխարժեքային դրական և բացասական տարբերություն» տողերում (510 և 520) ցույց են տրվում տնտեսավարող սուբյեկտի (կազմակերպության) դրամարկղում և բանկային հաշիվներում արտարժույթի վերագնահատումից առաջացած փոխարժեքային դրական ու բացասական տարբերությունները: Վերջիններիս հիման վրա էլ հաշվարկվում է արտարժույթի փոխարժեքային զուտ տարբերությունը, ընդ որում, եթե զուտ տարբերությունը բացասական մեծություն է, ապա այն ցույց է տրվում փակագծերի մեջ (տող 530),

բ) «Դրամական միջոցների համարժեքների ձեռքբերումը դրամական միջոցներով» տողում (540) ցույց են տրվում դրամական միջոցների համարժեքների ձեռք բերման դիմաց վճարված դրամական միջոցները,

գ) «Դրամական միջոցների համարժեքների մարումը դրամական միջոցներով» տողում (550) ցույց են տրվում դրամական միջոցների համարժեքների մարումից ստացված դրամական միջոցները,

դ) «Մուտքագրվել է դրամարկղ բանկից» տողում (560) ցույց է տրվում բանկային հաշիվներից (ՀՀ դրամով և արտարժույթով) դրամարկղ մուտքագրված դրամական միջոցները,

ե) «Հանձնվել է բանկ դրամարկղից» տողում (570) ցույց են տրվում դրամարկղից (ՀՀ դրամը և արտարժույթը) բանկային հաշիվներ մուտքագրված դրամական միջոցները,

զ) «Մուտքագրվել է ոչ կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից» տողում (580) ցույց է տրվում բանկային հաշիվներում ոչ կանխիկ դրամի մուտքագրումն արտարժույթի փոխանակումից,

է) «Մուտքագրվել է կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից» տողում (590) ցույց է տրվում արտարժույթի փոխանակումից դրամարկղ մուտքագրված կանխիկ դրամը,

ը) «Ելքագրվել է ոչ կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից» տողում (600) ցույց է տրվում ձեռք բերված արտարժույթի դիմաց բանկային հաշիվներից ելքագրված ոչ կանխիկ դրամը,

թ) «Ելքագրվել է կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից» տողում (610) ցույց է տրվում ձեռք բերված արտարժույթի դիմաց դրամարկղից ելքագրված կանխիկ դրամը:

Միաժամանակ ցույց են տրվում (տող 620) տնտեսավարող սուբյեկտի դրամարկղում և նրա բանկային հաշիվներում դրամական միջոցների մնացորդները հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրվա դրությամբ, որը հավասար է 010 (դրամական միջոցների տարեսկզբի

մնացորդ), 500, 530, 540, 550, 560, 570, 580, 590, 600, 610 տողերի գումարներին:

### 1.2.5. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների էությունը

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններից[1] ֆինանսատնտեսական վերլուծության առումով իրենց կարևոր տեղն ունեն՝

1. Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրությունները, այդ թվում՝

ա) Ոչ ընթացիկ ակտիվներից.

- հիմնական միջոցները (հավելված 5), որում ըստ տողերի տրվում են շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների (շենքեր, կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, արտադրական և տնտեսական գույք, գործիքներ, բազմամյա տնկարկներ, բանող և մթերատու անասուններ, այլ հիմնական միջոցներ) հաշվեկշռային (մնացորդային) արժեքը, դրանց սկզբնական արժեքները, կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները,
- շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների (շահագործման չհանձնված և ժամանակավորապես շահագործումից հանված) հաշվեկշռային (մնացորդային) արժեքները, դրանց սկզբնական արժեքները, կուտակված մաշվածությունը, արժեզրկումից կուտակված կորուստները, ինչպես նաև շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցները,
- հողամասերը ըստ հաշվեկշռային (մնացորդային) արժեքի, դրանց սկզբնական արժեքի և արժեզրկումից կուտակված կորուստների:

Ըստ սյունակների վերոնշյալ ցուցանիշներից տրվում է ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության դրույքը, այդ ակտիվների նախորդ տարվա վերջի և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդները, ինչպես նաև այդ ակտիվների ավելացումները և նվազեցումները, այդ թվում՝ վերագնահատումից:

Ըստ առանձին ցուցանիշների՝ 100 տողում ցույց է տրվում ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը, որը հավասար է 010, 020, 030, 040, 050, 060, 070, 080, 090 տողերում արտացոլված գումարներին:

101 տողում ցույց է տրվում շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեքը, որը հավասար է 011 տողից ներառյալ 091 տողերում արտացոլված գումարներին:

102 տողում ցույց է տրվում շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը, որը հավասար է 012, 022, 032, 042, 052, 062, 072, 082, 092 տողերում արտացոլված գումարներին:

103 տողում ցույց է տրվում շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեզրկումից կուտակված կորուստները, որը հավասար է 013, 023, 033, 043, 053, 063, 073, 083 և 093 տողերում արտացոլված գումարներին:

Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը (տող 100) որոշվում է որպես դրանց սկզբնական արժեքի (տող 101) և կուտակված մաշվածության (տող 102) ու արժեզրկումից կուտակված կորուստների (տող 103) հանրագումարի տարբերություն՝ տող 100 = տող 101 – (տող 102 + տող 103):

140 տողում ցույց է տրվում ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը, որը հավասար է 110 (շահագործման չհանձնված հիմնական միջոցներ), 120 (ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ) և 130 (շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներ) տողերում արտացոլված գումարներին:

141 տողում ցույց է տրվում ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը, որը հավասար է 110, 121 (ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների արժեքը) և 130 տողերում արտացոլված գումարներին:

142 տողում ցույց է տրվում ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը, որը հավասար է 122 տողում գրանցված գումարին:

143 տողում ցույց է տրվում ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների արժեզրկումից կուտակված կորուստների մեծությունը, որը հավասար է 123 տողում գրանցված գումարին:

Հողամասերի հաշվեկշռային արժեքը (տող 150) որոշվում է որպես դրա սկզբնական արժեքի (տող 151) և արժեզրկումից կուտակված կորուստների (տող 152) տարբերություն, այսինքն՝ տող 150 = տող 151 – տող 152:

160 տողում ցույց է տրվում ընդամենը հիմնական միջոցները, որի

[1] ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 20 (40), 30 դեկտեմբերի 1999, էջ. 67:

4-րդ և 9-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն «Հաշվապահական հաշվեկշիռ» (ձև №1) 010 տողի համապատասխան աբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

բ) Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները (հավելված 6), որում հանդես են գալիս շենքերի, մեքենաների և սարքավորումների, տրանսպորտային միջոցների, այլ հիմնական միջոցների մնացորդային գումարները նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ: Այդ միջոցներն ըստ տողերի ներկայացվում են հաշվեկշռային արժեքով, դրանց սկզբնական արժեքով, կուտակված մաշվածությամբ և արժեզրկումից կուտակված կորուստներով:

Ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը (տող 210) որոշվում է որպես դրա սկզբնական արժեքի (տող 211) և կուտակված մաշվածության (տող 212) ու արժեզրկումից կուտակված կորուստների (տող 213) հանրագումարի տարբերություն, այսինքն՝ տող 210 = տող 211 – (տող 212 + տող 213):

210 տողում ցույց է տրվում ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը, որը հավասար է 170, 180, 190 և 200 տողերում արտացոլված գումարներին:

211 տողում ցույց է տրվում ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների սկզբնական արժեքը, որը հավասար է 171, 181, 191 և 201 տողերում արտացոլված գումարներին:

212 տողում ցույց է տրվում ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը, որը հավասար է 172, 182, 192 և 202 տողերում արտացոլված գումարներին:

213 տողում ցույց է տրվում ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արժեզրկումից կուտակված կորուստները, որը հավասար է 173, 183, 193 և 203 տողերում արտացոլված գումարներին:

210 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի (հավելված 1) 020 տողի համապատասխան աբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

գ) Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվները (հավելված 7), որում ըստ տողերի ցույց են տրվում կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները (տող 220), տեղակայման ենթակա սարքավորումները (տող 230) և հիմնական միջոցների վրա հետագա կապիտալացվող ծախսումները (տող 240), իսկ ըստ սյունակների տրվում են այդ նույն ոչ ընթացիկ նյութական ակտիվների նախորդ տարվա և հաշվետու տարվա



(ժամանակաշրջանի) վերջի մնացորդները, ինչպես նաև դրանց ավելացումներն ու նվազեցումները հաշվետու ժամանակաշրջանում:

250 տողում ցույց է տրվում ընդամենը անավարտ ոչ ընթացիկ ակտիվների գումարը, որը հավասար է 220, 230 և 240 տողերում արտացոլված գումարներին և այդ տողի 3-րդ և 6-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի 030 տողի համապատասխան աբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

դ) Գուդվիլը (հավելված 8), որտեղ ըստ տողերի ցույց է տրվում գուդվիլի հաշվեկշռային արժեքը (տող 260), դրա սկզբնական արժեքը (տող 261), կուտակված ամորտիզացիան (տող 262) և արժեզրկումից կուտակված կորուստները (տող 263), իսկ սյունակներում տրվում է ամորտիզացիայի ժամանակաշրջանը, նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները, հաշվետու ժամանակաշրջանում ավելացումները, այդ թվում՝ լրացուցիչ ճանաչված գուդվիլը և ակտիվների ու պարտավորությունների արժեքի ճշգրտումից աճը, ինչպես նաև նվազեցումները, այդ թվում՝ ապաճանաչված գուդվիլը և ակտիվների ու պարտավորությունների արժեքի ճշգրտումից նվազումը:

Գուդվիլի հաշվեկշռային արժեքը (տող 260) որոշվում է որպես դրա սկզբնական արժեքի և կուտակված ամորտիզացիայի ու արժեզրկումից կուտակված կորուստների հանրագումարի տարբերություն, այսինքն՝ տող 260 = տող 261 – (տող 262 + տող 263):

ե) Բացասական գուդվիլը (հավելված 9), որտեղ ըստ տողերի ցույց է տրվում այդ գուդվիլի հաշվեկշռային արժեքը (տող 270), դրա սկզբնական արժեքը (տող 271) և ամորտիզացված կամ եկամուտ ճանաչված բացասական գուդվիլը (տող 272), իսկ սյունակներում՝ ամորտիզացիայի (եկամուտ ճանաչելու) ժամանակաշրջանը, մնացած ցուցանիշների հաջորդականությունը նույնն է, ինչ որ հավելված 8-ում գուդվիլի վերաբերյալ է:

Բացասական գուդվիլի հաշվեկշռային արժեքը (տող 270) որոշվում է որպես արժեքի և եկամուտ ճանաչված բացասական գուդվիլի տարբերություն, այսինքն՝ տող 270 = տող 271 – տող 272:

Հավելված 9-ի 270 տողի 4-րդ և 11-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի 050 տողի համապատասխան աբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

զ) Ակտիվ ճանաչված զարգացման ծախսումները (հավելված 10), որտեղ ըստ տողերի ցույց է տրվում ակտիվ ճանաչված զարգացման ծախսումների հաշվեկշռային արժեքը (տող 280), դրա սկզբնական արժեքը (տող 281), կուտակված ամորտիզացիան (տող 282) և արժեզրկումից կու-

տակված կորուստները (տող 283), իսկ սյունակներում՝ ամորտիզացիայի դրույքը, նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները, հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ ճանաչված և վերականգնված ավելացումները, ինչպես նաև որպես ծախս ճանաչված, այլ ակտիվների հաշվեկշռային արժեքում ներառված ու օտարված (դուրս գրված) նվազեցումները: Երբ ավելացումը վերաբերում է այն ակտիվ ճանաչված զարգացման ծախսումներին, որոնք 4-րդ սյունակում (նախորդ տարվա վերջի մնացորդը) չունեն մնացորդներ (հաշվեկշռից դուրս են գրված), ապա լրացվում են 280, 281 և 282 տողերը: Երբ ավելացումը կատարվում է արժեզրկումից կուտակված կորուստների վերականգնումից, ապա լրացվում են 280, 282 և 283 տողերը, ընդ որում՝ 283 տողի գումարը ցույց է տրվում փակագծերում:

Ակտիվ ճանաչված զարգացման ծախսումների հաշվեկշռային արժեքը (տող 280) որոշվում է որպես դրա արժեքի և կուտակված ամորտիզացիայի ու արժեզրկումից կուտակված կորուստների հանրագումարի տարբերություն, այսինքն՝ տող 280 = տող 281 – (տող 282 + տող 283):

է) Այլ ոչ նյութական ակտիվները (հավելված 11), որտեղ ըստ տողերի ցույց են տրվում կազմակերպչական ծախսերը (տող 290), լիցենզիաները (տող 300), արտոնագրերը (տող 310), ապրանքային նշանները (տող 320), ծրագրային ապահովումը (տող 330), հողի և բնական ռեսուրսների օգտագործման իրավունքը (տող 340), այլ ոչ նյութական ակտիվները (տող 350) և ընդամենը այլ ոչ նյութական ակտիվները (տող 360) իրենց հաշվեկշռային արժեքով, սկզբնական արժեքով, կուտակված ամորտիզացիայով և արժեզրկումից կուտակված կորուստներով, իսկ ըստ սյունակների տրվում է ամորտիզացիայի դրույքը, նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները, ինչպես նաև այլ ոչ նյութական ակտիվների ավելացումներն ու նվազեցումները:

Այլ ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը (տող 360) որոշվում է որպես դրանց սկզբնական արժեքի և կուտակված ամորտիզացիայի ու արժեզրկումից կուտակված կորուստների հանրագումարի տարբերություն, այսինքն՝ տող 360 = տող 361 – (տող 362 + տող 363):

Հավելված 8-ի 260 տողի, հավելված 10-ի 280 տողի և հավելված 11-ի 360 տողի 4-րդ սյունակների գումարների հանրագումարը պետք է համապատասխանի հաշվապահական հաշվեկշռի 040 տողի 3-րդ սյունակի գումարին, իսկ նույն հավելվածների 260 տողի 11-րդ, 280 տողի 10-րդ և 360 տողի 7-րդ սյունակների գումարների հանրագումարը պետք է համապատասխանի հաշվեկշռի 040 տողի 4-րդ սյունակի գումարին:



ը) «Բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառված ոչ ընթացիկ ներդրումները (հավելված 12), որտեղ ըստ տողերի ցույց են տրվում՝ ոչ ընթացիկ ներդրումները դուստր ընկերություններում (տող 370), ոչ ընթացիկ ներդրումներն ասոցիացված (բաժնետիրացված) կազմակերպություններում (տող 380), ոչ ընթացիկ ներդրումները համատեղ ձեռնարկումներում (տող 390), ինչպես նաև ընդամենը ոչ ընթացիկ ներդրումները (տող 400), իսկ սյունակներում արտացոլվում են ոչ ընթացիկ ներդրումների նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները:

Հավելված 12-ի 400 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի 060 տողի համապատասխանաբար 3-րդ և 4-րդ գումարներին:

թ) Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունները (հավելված 13), որտեղ ըստ տողերի ցույց են տրվում՝ երկարաժամկետ բանկային վարկերը (տող 410), երկարաժամկետ փոխառությունները (տող 420), ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները (տող 430), իսկ սյունակներում տրվում են ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները:

Հավելված 13-ի 410 և 420 տողերի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի 360 տողի համապատասխանաբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին, իսկ 430 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները՝ 370 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

ժ) Ընթացիկ ֆինանսական պարտավորությունները (հավելված 14), որտեղ ըստ տողերի ցույց են տրվում կարճաժամկետ բանկային վարկերը (տող 440), կարճաժամկետ փոխառությունները (տող 450), երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասը (տող 460), երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասը (տող 470) և ընդամենը ընթացիկ ֆինանսական պարտավորությունները (տող 480), իսկ սյունակներում՝ այդ պարտավորությունների նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները:

Հավելված 14-ի 440 և 450 տողերի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի 410 տողի համապատասխանաբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին, իսկ 460 և 470 տողերի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները՝ 420 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

ի) Պետական բյուջեին կարճաժամկետ կրեդիտորական պարտքերը

(հավելված 15), որտեղ ցույց են տրվում շահութահարկը (տող 490), եկամտահարկը (տող 500), ավելացված արժեքի հարկը (տող 510), ակցիզային հարկը (տող 520), գույքահարկը (տող 530), հողի հարկը (տող 540), մաքսատուրքը (տող 550), հաստատագրված վճարները (տող 560), այլ պարտադիր վճարները (տող 570), տույժերը (տող 580) և տուգանքները (տող 590), իսկ սյունակներում տրվում են այդ պարտքերի նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդները:

Հավելված 15-ի 600 տողի (ընդամենը բյուջեին կարճաժամկետ կրեդիտորական պարտքերը) 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվեկշռի 460 տողի համապատասխանաբար 3-րդ և 4-րդ սյունակների գումարներին:

2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրությունները, այդ թվում՝

ա) Գործառնական այլ գործունեությունից եկամուտները և ծախսերը (հավելված 16): Դրանց թվին են դասվում, ըստ տողերի՝ ընթացիկ այլ ակտիվների (շարունակվող գործունեության) վաճառքից կամ օտարումից (տող 760), գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից (տող 770), տույժերից և տուգանքներից (տող 780), դուրս գրված դեբիտորական պարտքերից և դրանց մարումից (տող 790), դուրս գրված կրեդիտորական պարտքերից և դրանց մարումից (տող 800), արժեքների պակասորդներից, փչացումից, կորուստներից և դրանց փոխհատուցումից (տող 810), պաշարների արժեքի փոփոխությունից (տող 820), ընթացիկ ֆինանսական ներդրումների վերագնահատումից (տող 830), ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից և արժեզրկման վերականգնումից (տող 840), ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից (տող 850), հետազոտության և զարգացման ծախսերից (տող 860), արտադրական ծախսումների նորմալ մակարդակը գերազանցող ծախսերից (տող 870), խոտանված արտադրանքի հետ կապված ծախսերից (տող 880), դատական ծախսերից (տող 890), ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսերից (տող 900), հիմնական միջոցների լուծարման ծախսերից (տող 910), այլ եկամուտներից և ծախսերից (տող 920), ինչպես նաև ընդամենը գործառնական այլ գործունեությունից եկամուտները և ծախսերը (տող 930): Վերջինիս հանրագումարը հավասար է վերոնշյալ տողերում գրանցված գումարներին: Նշված ցուցանիշները տրվում են նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) առումով:

Հավելված 16-ում սյունակներ 5-ի և 8-ի արդյունքները համապատասխանաբար հավասար են 3-րդ ու 4-րդ և 6-րդ ու 7-րդ սյունակների գումարների տարբերությանը:



բ) Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտները և ծախսերը (հավելված 17): Դրանց թվին են դասվում, ըստ տողերի՝ հիմնական միջոցների վաճառքից կամ օտարումից (տող 940), ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումների վաճառքից կամ օտարումից (տող 950), ընթացիկ ֆինանսական ներդրումների վաճառքից կամ օտարումից (տող 960), ոչ ընթացիկ այլ ակտիվների վաճառքից կամ օտարումից (տող 970), գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից կամ օտարումից (տող 980), փոխարժեքային տարբերություններից (տող 990), շնորհի (գրաված) և անհատույց ստացված ակտիվներից (տող 1000), ֆինանսական ներդրումներից (տող 1010), ֆինանսական վարձակալությունից (տող 1020), ոչ գործառնական այլ գործունեությունից (տող 1030), ինչպես նաև ընդամենը այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտները և ծախսերը (տող 1040): Վերջինիս հանրագումարը հավասար է վերոնշյալ տողերում գրանցված գումարներին: Նշված ցուցանիշները տրվում են նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) առումով:

Հավելված 17-ում սյունակներ 5-ի և 8-ի արդյունքները համապատասխանաբար հավասար են 3-րդ ու 4-րդ և 6-րդ ու 7-րդ սյունակների գումարների տարբերությանը:

գ) Արտասովոր դեպքերից շահույթը կամ վնասը (հավելված 18), որի 1050, 1060, 1070 տողերում (վերջիններիս ցուցանիշների անվանումները լրացվում են տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ ելնելով արտասովոր դեպքի բնույթից) ցույց է տրվում արտասովոր դեպքերից ստացվող շահույթը կամ պատճառված վնասը ըստ նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի): 1080 տողում ցույց է տրվում վերոնշյալ տողերում գրանցված գումարների հանրագումարը:

Հավելված 18-ում սյունակներ 5-ի և 8-ի արդյունքները համապատասխանաբար հավասար են 3-րդ ու 4-րդ և 6-րդ ու 7-րդ սյունակների գումարների տարբերությանը:

դ) Էական սխալից արդյունքը (հավելված 19), որի 1090, 1100, 1110, 1120 տողերում (վերջիններիս ցուցանիշների անվանումները լրացվում են տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ ելնելով էական սխալի բնույթից և գումարից) ցույց է տրվում էական սխալի արդյունքը ըստ նախորդ տարվա և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի), այդ թվում՝ 3-րդ սյունակում «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն» (հավելված №2), այն տողը, որում ներառված է էական սխալը: 1130 տողում ցույց է

տրվում վերոնշյալ տողերում գրանցված գումարների հանրագումարը:

Հավելված 19-ում սյունակներ 6-ի և 9-ի արդյունքները համապատասխանաբար հավասար են 4-րդ ու 5-րդ և 7-րդ ու 8-րդ սյունակների գումարների տարբերությանը:

***Արտահաշվեկշռային հաշիվները*** (հավելված 20) հանդես են գալիս հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրությունների տեսքով և էությունը կայանում է նրանում, որ ամեն մի տնտեսավարող սուբյեկտ, սեփական (մշտապես ամրացված) և ներգրավված (փոխառու) կապիտալից բացի, իր տրամադրության տակ կարող է ունենալ նաև ուրիշներին պատկանող, բայց ժամանակավոր օգտագործման կամ պահպանման նպատակով իր մոտ գտնվող նյութական միջոցներ: Օրինակ, շատ տնտեսավարող սուբյեկտներ և կազմակերպություններ, իրենց սեփական շենքերից բացի, օգտագործում են նաև վարձակալած շենքեր: Ճիշտ չի լինի այդ շենքերը հաշվառել և հաշվեկշռում արտացոլել սեփական շենքերի հետ համատեղ, որովհետև նրանք արդեն հաշվառվում և արտացոլվում են այն կազմակերպությունների հաշվեկշիռներում, որոնց նրանք պատկանում են: Բայց մյուս կողմից՝ վարձակալների մոտ դրանք չեն կարող բոլորովին դուրս թողնվել հաշվառումից, որովհետև նրանց պահպանման և ճիշտ օգտագործման համար պատասխանատվություն են կրում վարձակալները: Ելնելով այդ դրությունից, վարձակալված հիմնական միջոցները հաշվառվում են հատկապես այդ նպատակի համար նախատեսված ***վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ*** արտահաշվեկշռային հաշվում (տող 610):

Այս կարգով են հաշվառվում նաև ուրիշ տնտեսավարող սուբյեկտներին, կազմակերպություններին պատկանող, բայց ինչ-ինչ պատճառներով տվյալ կազմակերպություններում ի պահ ընդունված ապրանքանյութական արժեքները մինչև նրանց հետ ուղարկելը կամ ի սեփականություն ընդունելը: Արդարև, այդպիսի արժեքները նույնպես ճիշտ չի լինի հաշվառել սեփական ապրանքանյութական արժեքների հետ միասին, բայց, մյուս կողմից, ճիշտ չի լինի նաև բոլորովին դուրս թողնել հաշվառումից և վերահսկողությունից, ուստի հաշվառվում են հատկապես այդ նպատակի համար նախատեսված ***վերամշակման ընդունված նյութեր, պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ և տեղակայման ընդունված սարքավորումներ*** արտահաշվեկշռային հաշիվներում:

Այս հաշիվներում օգտագործվում են նաև ***խիստ հաշվառման բլանկները*** աշխատանքային գրքույկները, ավտոուղեգրերը, մթերման ապրանքների ընդունման անդորրագրերի գրքույկները հաշվառելու համար:



Մատնանշված բլանկները պայմանական գնահատությամբ գրանցվում են այս հաշվի դեբետում, և նրանց մուտքի ու ելքի գործառնությունները ձևակերպվում են դրամական միջոցների մուտքի ու ելքի գործառնությունների նման:

Անալիտիկ հաշվառման մեջ վերը նշված նյութական արժեքները կամ խիստ հաշվառման բլանկները արտացոլվում են ըստ նրանց առանձին տեսակների և պահպանման տեղերի:

Արտահաշվեկշռային հաշիվներում են հաշվառվում և արտացոլվում նաև ***պարտավորությունների և ստացվելիք վճարումների ապահովումը, ստանձնած պարտավորությունների և վճարումների ապահովումը, շահագործման մեջ գտնվող արագամաշ առարկաները, դուրս գրված դեբիտորական և կրեդիտորական պարտքերը*** և այլն:

Արտահաշվեկշռային հաշիվները հաշվեկշռում չեն արտացոլվում, այլ ցույց են տրվում հաշվեկշռի հանրագումարից հետո, որի համար և նրանք ստացել են այդ անվանումը:

Արտահաշվեկշռային հաշիվներով տարվող հաշվապահական ընթացիկ հաշվառման մեջ կիրառվում է ոչ թե կրկնակի գրանցման, այլ պարզ գրանցման եղանակը, այսինքն՝ գործառնություններն այդ հաշիվներում գրանցվում են միայն մեկ տեղ՝ համապատասխան հաշվի կամ դեբետում, կամ կրեդիտում:

## 1.3. Ֆինանսական վերլուծության իրականացման նախապայմանները

Տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության վերջնական արդյունքները հետաքրքրություն են ներկայացնում տարբեր տեսակի մասնագետ վերլուծողների (անալիտիկների), այդ թվում՝ կառավարման անձնակազմի, ֆինանսական մարմինների ներկայացուցիչների, հարկային տեսուչների, բանկային համակարգի հիմնարկների վարկատուների (պարտատերերի) և այլնի համար: Նշված գործունեության արդյունքների գնահատումը որպես կանոն իրականացվում է ֆինանսական վերլուծության շրջանակներում և այդպիսի վերլուծության տեղեկատվության հիմնական աղբյուրը (բազան) տնտեսավարող սուբյեկտների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերն են: Դրանք թեև բավականին պարզեցվել ու հստակեցվել են, իսկ ցուցանիշների թվաքանակը՝ կրճատվել և միասնական է դարձել բոլոր տեսակի ձեռնարկությունների, կազմակերպությունների համար, սակայն, մեր կարծիքով, այդ պարզեցումներն այնքան էլ

դյուրին չեն վերլուծություն կատարելու համար:

Շուկայական տնտեսավարման պայմաններում ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների կազմումը Հայաստանի Հանրապետությունում 1992 թ. արդեն մոտեցել է միջազգային չափանիշներին, որին լիարժեք անցնելու համար բազմաբնույթ աշխատանքներ են տարվում (դասընթացների կազմակերպում, արտերկրների պրակտիկ աշխատանքների ներդրում և այլն): Ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշռի վերլուծությունն արդյունավետ կատարելու համար յուրաքանչյուր մասնագետ պետք է ունենա հստակ և լիարժեք գիտելիքներ: Մասնագետը պետք է ապահովի հետևյալ պահանջները՝

1. տնտեսագիտական հարցերի իմացություն և դրանցում հստակ կողմնորոշում: Եթե նա գաղափար չունի տնտեսավարող սուբյեկտների մասնագիտացման, տնտեսական կապերում դրանց գրաված տեղի, արտադրական կարողության և այլ ոլորտների մասին, ապա նրա կողմից հաշվեկշռի վերլուծություն կատարելն անիմաստ է և անարդյունք:

2. Անհրաժեշտ չափով տեղյակ լինի ֆինանսական հաշվետվությունների առանձին հոդվածների միջև եղած փոխադարձ կապերի մասին:

3. Հստակորեն փոխկապակցի իր առջև դրված նպատակներն ու խնդիրները:

4. Ճիշտ կողմնորոշվի ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր հոդվածին համապատասխան գրված թվերի ճշտության մեջ:

5. Պահպանի հաշվարկների կատարման հաջորդականությունը:

6. Քաջատեղյակ լինի տրամաբանական և տեղեկատվական փոխադարձ կապերին:

Ֆինանսական հաշվետվությունների ձևերը ներառում են ինչպես տրամաբանական, այնպես էլ տեղեկատվական փոխադարձ կապեր:

Տրամաբանական փոխկապակցության իմաստն այն է, որ հաշվետվությունների ձևերը, դրանց բաժիններն ու հոդվածները փոխադարձ իրար լրացնում են: Այս առումով անհրաժեշտ է նշել երեք հիմնական սկզբունք.

1. ֆինանսական հաշվետվությունները տրամաբանորեն կազմմելու համար անհրաժեշտ է տալ պարզաբանում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական կարողությունների և դրանց արդյունավետ օգտագործման վերաբերյալ: Հաշվետվությունների ձևերը բնորոշում են տնտեսավարող սուբյեկտների ստատիկ (կայուն) ու դինամիկ (շարժուն) վիճակները, և դրանցից որևէ մեկի բացակայությունը հնարավորություն չի տալիս լրիվ պատկերացում կազմել ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:



2. Չնայած ֆինանսական ամփոփ հաշվետվությունների հոդվածներն առավել ընդհանրացված բնույթ ունեն, բայց դրանք ավելի մանրամասն տրվում են նշված հաշվետվություններին կից հավելվածների տեսքով ծանոթագրություններում (հիմնական միջոցները, ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվները, գուդվիլը, ակտիվ ճանաչված զարգացման ծախսումները, ընթացիկ և ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունները և այլն):

3. Հաշվետվություններում արտացոլված կարևորագույն ցուցանիշների (իրացումից հասույթ, շահույթ, ինքնարժեք, սեփական կապիտալ, ոչ ընթացիկ ու ընթացիկ պարտավորություններ և այլն) գծով կատարվում են վերլուծություններ՝ դրանց շարժի (դինամիկայի) և ազդող գործոնների հաշվով:

Տրամաբանական կապերը լրացվում են տեղեկատվական ստուգիչ փոխկապակցություններով, որոնք արտահայտվում են ուղղակի և անուղղակի ձևերով: Ուղղակի ստուգիչ փոխկապակցությունը նշանակում է, որ մեկ կամ ավելի ցուցանիշներ միաժամանակ արտացոլվում են մի քանի հաշվետվությունների ձևերում: Անուղղակի ստուգիչ փոխկապակցությունը նշանակում է, որ մի քանի ցուցանիշներ տարբեր հաշվետվությունների ձևերում իրար հետ կապվում են ոչ բարդ թվաբանական հաշվարկներով: Օրինակ՝ հիմնական միջոցները, որոնց հետ կապված գումարները տըրված են հաշվապահական հաշվեկշռում (ձև №1), արդեն դրան կից ծանոթագրություններում (ձև №5) տրվում են առանձին տեսակներով, արժեքներով և շարժի փոփոխություններով:

Վերլուծության առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հաշվեկշռում և դրան կից ծանոթագրություններում արտացոլված հոդվածների փոխկապակցությունները: Վերջիններիս էությունն ավելի պարզ պատկերացնելու համար համառոտ ներկայացնենք հաշվապահական հաշվեկշիռը (հավելված 1), որը որպես ֆինանսական հաշվետվության ձև բնութագրում է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական միջոցները երկու տեսանկյունով՝ ըստ կազմի ու տեղաբաշխման (ակտիվ) և ըստ կազմավորման աղբյուրների ծագման (պասիվ): Այդ իսկ պատճառով էլ ակտիվի և պասիվի հոդվածներում գործում են փոխկապակցություններ, որոնք տնտեսական գործունեության ուղղությունից կախված (սեփական աշխատանքի կորուստ, շուկայական հարաբերություններ և այլն)՝ անընդհատ կարող են որոշակի փոփոխությունների ենթարկվել:

Հաշվապահական հաշվեկշռի առանձին բաժինների և հոդվածների գծով գործող ամենահիմնական փոխկապակցություններից են՝

1. Հաշվեկշռի ակտիվի երկու բաժինների ընդհանուր հանրագումարը՝ Ա (I + II), պետք է հավասար լինի պասիվի երեք բաժինների հանրագումարին՝ Պ (III + IV + V): Այսինքն՝

$$Ա (I + II) = Պ (III + IV + V): \quad (1.3.1)$$

Ըստ հավելված 1-ում բերված հաշվեկշռի տվյալների, այն հավասար է (հազ. դրամ).

- նախորդ տարվա համար՝
  106400 + 235561 = 177778 + 45129 + 119054
  341961 = 341961
- հաշվետու տարվա համար՝
  135416 + 356082 = 254426 + 86049 + 151023
  491498 = 491498

Այստեղից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտը պետք է տընտեսական առկա միջոցներին համապատասխան ունենա դրանց կազմավորման ֆինանսավորման աղբյուրներ:

2. Սեփական միջոցների աղբյուրները կամ սեփական կապիտալը՝ Պ (III), գերազանցում է ակտիվի ոչ ընթացիկ ակտիվներին՝ Ա (I): Այսինքն՝

$$Պ (III) > Ա (I): \quad (1.3.2)$$

Ըստ հաշվեկշռի տվյալների (հավելված 1-ի) պարզաբանում կատարենք.

- նախորդ տարվա համար (հազ. դրամ)՝
  177778 > 106400
- հաշվետու տարվա համար (հազ. դրամ)՝
  254426 > 135416

Ակնհայտ է, որ երկու տարվա համար էլ պայմանը նույնն է:

Հետևություն. տնտեսավարող սուբյեկտն իր տրամադրության տակ պետք է ունենա այնքան սեփական կապիտալ, որպեսզի դրա մեծ մասն օգտագործի ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների, երկարաժամկետ ֆինանսական ներդրումների և այլն) ձեռքբերման կամ դրանց գծով կատարված ծախսածածկման համար, իսկ մյուս մասը՝ ընթացիկ ակտիվների (նյութերի, ապրանքների, վառելիքի և այլն) ձեռքբերման կամ ծախսածածկման համար:

3. Ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) հանրագումարը (պաշարները, դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և այլն)՝



Ա (II), գերազանցելու է փոխառու կապիտալ համարվող ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունների (երկարաժամկետ և կարճաժամկետ բանկային վարկեր ու փոխառություններ, կրեդիտորական պարտքեր և այլն) հանրագումարին՝ Պ (IV + V): Այսինքն՝

$$Ա (II) > Պ (IV + V): \quad (1.3.3)$$

Ըստ հավելված 1-ում բերված հաշվեկշռի տվյալների, այդ պայմանը կլինի (հազ. դրամ).

- նախորդ տարվա համար՝
  235561 – (45129 + 119054) = 0
  235561 – 164183 = 0
  235561 > 164183
- հաշվետու տարվա համար՝
  356561 – (86049 + 151023) = 0
  356561 – 237072 = 0
  265561 > 237072

Սա նշանակում է, որ նորմալ գործող տնտեսավարող սուբյեկտը պետք է իր տրամադրության տակ ունենա այնքան ընթացիկ ակտիվներ, որոնց հաշվին ոչ միայն ժամանակին վճարի փոխառու կապիտալի գումարները, այլ նաև կարողանա լրացուցիչ ձեռք բերել նոր ընթացիկ ակտիվներ՝ ընդլայնված վերարտադրության գործընթացը կազմակերպելու համար:

## 1.4. Ֆինանսական ցուցանիշների ձևավորման համակարգը և դրանց օգտագործումը ֆինանսական վերլուծությունում

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության պլանավորման, կառավարման և գնահատման կարևորագույն միջոցները ֆինանսատնտեսական ցուցանիշներն են: Վերջիններիս համակարգը ձևավորվում է՝ ելնելով տվյալ տնտեսավարող սուբյեկտի արտադրական գործունեության ուղղվածությունից և կազմակերպատեխնիկական բնույթից: Իսկ թե ինչ տեսքով է ձևավորվում տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշների համակարգը[1] շուկայական հարաբերությունների պայմաններում, ներկայացնենք ստորև (գծապատկեր 1.4.1).

[1] Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа (учебное пособие). М., 1999, с. 15.




Գծ. 1.4.1. Տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշների ձևավորումը շուկայական պայմաններում

Գծապատկերում բերված տառային նշանակումների իմաստներն են՝

Ա - ամորտիզացիա,

$А_{անծ.}$ - արտադրական անձնակազմ,

$А_{արտ.}$ - աշխատանքի արտադրողականություն $\left(\frac{ԻՀ}{А_{անծ.}}\right)$,

$А_{ինք.}$ - արտադրանքի ինքնարժեք,

$А_{վարծ.}$ - անձնակազմի աշխատանքի վարձատրություն,

ԸԱ - ընթացիկ ակտիվներ (շրջանառու միջոցներ),

$(ԸԱ)_{կ.ա.}$ - ընթացիկ ակտիվների կազմավորման աղբյուրներ,



ԻՀ - արտադրանք (իրացումից հասույթ),

ԻԾ - իրացումից շահույթ,

$(ՀՄ)_{ի}$ - հիմնական միջոցների հատույց $\left(\frac{ԻՀ}{ՀՄ(ՈԸԱ)}\right)$,

ՆԾ - նյութական ծախսեր,

$Ն_{ի}$ - նյութահատույց $\left(\frac{ԻՀ}{ՆԾ}\right)$,

ՈԸԱ - ոչ ընթացիկ ակտիվներ (հիմնական միջոցներ և այլ ներդրումներ):

Գծապատկերը բաղկացած է 11 խումբ ֆինանսական ցուցանիշներից, որոնց հիմքում հիմնականում ընկած է արտադրության կազմակերպական և նյութատեխնիկական հագեցվածության մակարդակը, այդ թվում՝ արտադրվող արտադրանքի և օգտագործվող տեխնիկայի որակը, տեխնոլոգիական գործընթացների առաջադիմական կամ ժամանակակից լինելը, աշխատանքի տեխնիկական զինվածությունը, արտադրության ռիթմիկությունն ու արտադրական փուլի (ցիկլի) տևողությունը, արտադրության կազմակերպման ու կառավարման մակարդակը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ֆինանսական ցուցանիշների մակարդակի վրա նշանակալի ազդեցություն են ունենում բնական պայմանները, հատկապես գյուղատնտեսության և արդյունահանող արդյունաբերության ոլորտում:

Ֆինանսական ցուցանիշները բնորոշում են ոչ միայն արտադրության տեխնիկական, կազմակերպական և բնական պայմանները, այլ նաև աշխատանքային կոլեկտիվի սոցիալական կենսապայմանները, տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական պայմանները՝ կապված ապրանքանյութական արժեքների առք ու վաճառքի հետ: Վերը նշվածներն առաջին հերթին պայմանավորված են արտադրական ռեսուրսների (աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկաներ, կենդանի աշխատանք) օգտագործման աստիճանով: Արտադրական ռեսուրսների օգտագործման ինտենսիվությունը դրսևորվում է այնպիսի ընդհանրացնող հարաբերական ցուցանիշներով, ինչպիսիք են՝ հիմնական արտադրական միջոցների հատույցը, նյութահատույցը, աշխատանքի արտադրողականությունը:

Արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունն իր հերթին բնորոշվում է երեք խումբ ցուցանիշներով, այդ թվում՝

1. արտադրվող և իրացվող արտադրանքի որակը և ծավալը (իրացումից հասույթ),

2. արտադրության գործընթացում օգտագործված նյութական և աշխատանքային ծախսումները կամ այլ կերպ՝ արտադրանքի ինքնարժեքը,

3. ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) և ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) կազմավորման համար օգտագործված սեփական և փոխառու կապիտալները կամ ընդհանուր կապիտալը:

Արտադրանքի ծավալի (իրացումից հասույթի) և ինքնարժեքի ցուցանիշների համադրման հիման վրա բնորոշվում են շահույթի և արտադրանքի շահութաբերության, ինչպես նաև արտադրանքի միավորի վրա կատարված ծախսումների մեծությունները: Իսկ արտադրանքի ծավալի (հասույթի) և արտադրության գործընթացում օգտագործված ընդհանուր կապիտալի (հիմնական միջոցների, այլ ոչ ընթացիկ ակտիվների, ընթացիկ ակտիվների) կամ սեփական ու փոխառու կապիտալների գումարի համադրմամբ որոշվում են ընդհանուր կապիտալի շրջանառելիության գործակիցները, այսինքն՝ ներդրված կապիտալի միավորի հաշվով արտադրված արտադրանքի ծավալը կամ իրացումից հասույթի չափը և հակառակը՝ արտադրանքի (իրացումից հասույթի) միավորի հաշվով օգտագործված կապիտալի գումարի չափը:

Հաշվարկային նշված ցուցանիշներից բացի իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում տնտեսավարող սուբյեկտի ողջ գործունեությունը բնութագրող շահութաբերության այն մակարդակը, որի հաշվարկման ընթացքում համարիչում կարող է արտացոլվել ոչ միայն արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից հասույթը, այլ նաև ֆինանսական արդյունքներից յուրաքանչյուրը (համախառն շահույթը, իրացումից շահույթը, զուտ շահույթը մինչև հարկումը և հարկումից հետո):

Տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրությունը և վճարունակությունը կախված է հաշվապահական հաշվեկշռում ներառված տնտեսական միջոցների (ակտիվ) և դրանց կազմավորման աղբյուրների (պասիվ) առանձին բաժինների գումարների բացարձակ և հարաբերական համադրումների արդյունքներից: Տնտեսավարող սուբյեկտի համար հաշվարկվող ֆինանսատնտեսական բոլոր ցուցանիշները փոխկապակցված են, և դրանցից յուրաքանչյուրը համարվում է ելակետային մեծություն հաջորդ ցուցանիշի հաշվարկման համար: Միաժամանակ, եթե այդ ցուցանիշներից որևէ մեկը համարվի արդյունքային ցուցանիշ, ապա մնացած ցուցանիշները կարող են հանդես գալ որպես ազդող գործոններ: Ասվածն ավելի պարզ պատկերացնելու համար՝ ներկայացնենք գծապատկերով (1.4.2):






Գծ. 1.4.2. Տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության ազդող գործոնների համակարգ

Գծապատկերում ազդող գործոնները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ներքին և արտաքին: Իրենց հերթին (տնտեսավարող սուբյեկտի գործունեությունից կախված) ներքին գործոնները լինում են հիմնական և ոչ հիմնական: Ներքին հիմնական են համարվում այն գործոնները, որոնք ընդգրկված են տնտեսավարող սուբյեկտի արտադրական (աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկաներ, կենդանի և առարկայացած աշխատանք) և ոչ արտադրական (մատակարարման, վաճառահանման, կոլեկտիվի սոցիալական զարգացման, բնապահպանման գործունեության) ոլորտներում:

Ներքին ոչ հիմնական գործոնները չնայած բնութագրում են արտադրական կոլեկտիվի աշխատանքը, բայց անմիջականորեն կապված չեն ուսումնասիրվող ցուցանիշների էության հետ: Այդ ցուցանիշների թվին են դասվում՝ արտադրանքի կազմում կառուցվածքային տեղաշարժերը, տնտեսական և տեխնոլոգիական կարգապահությունների խախտումները:

Արտաքին գործոնները կախված չեն տնտեսավարող սուբյեկտի արտադրական գործունեությունից, բայց քանակապես բնորոշում են արտադրության կազմակերպատեխնիկական մակարդակը՝ կապված արտադրական ու ֆինանսական ռեսուրսների օգտագործման աստիճանի հետ: Արտաքին գործոնները հիմնականում առնչվում են ֆինանսատնտեսական կապերի և սոցիալական ու բնական պայմանների հետ, քանի որ այդ գործոններով է պայմանավորված տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող արտաքին տնտեսական ու ֆինանսական կապերը, կոլեկտիվի սոցիալական զարգացման պլանավորումն ու կանխատեսումը:

Տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության վերլուծության համար ազդող գործոնների համակարգումն ըստ առանձին խմբերի կայանում է նրանում, որ դրանց միջոցով հնարավորություն է տրվում բացահայտելու թաքնված ներքին պահուստները (ռեզերվները), որոնք հետագայում նպաստելու են արտադրության արդյունավետության բարձրացմանը: Դրանում հատկապես իր ուրույն տեղն է զբաղեցնում տնտեսամաթեմատիկական մոդելավորումը, որն իրականացվում է հաջորդական փուլերով՝

- առանձնացվում են առանձին կամ խումբ ազդող գործոններ,
- ուսումնասիրվում և գնահատվում են դրանցից յուրաքանչյուրի դրական կամ բացասական ազդեցության կողմերը՝ վիճակագրական մեթոդներով,
- կատարվում է ըստ արդյունքային ցուցանիշի գործոնային վերլուծություն՝ մաթեմատիկական ծրագրավորման կամ բազմագործոն-կոռելյացիոն մեթոդներով:



Անհրաժեշտ է նշել, որ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ուղղվածությունից և տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրների տեսանկյունից տարբերվում են արտաքին և ներարտադրական պահուստները: Արտաքին պահուստները համապետական, ճյուղային և տարածքային (մարզային, համայնքային) պահուստներն են: Այդպիսի օրինակ կարող են ծառայել դրանց կողմից տրամադրվող այն կապիտալ ներդրումները, որոնք, ներդրվելով տնտեսավարող սուբյեկտներում, կարող են ապահովել տնտեսական բարձր արդյունավետություն և գիտատեխնիկական առաջընթացի արագ տեմպեր:

Չնայած արտաքին պահուստների օգտագործման կարևորությանը, տնտեսավարող սուբյեկտների համար էլ ավելի մեծ նշանակություն ունեն ներարտադրական պահուստները՝ կապված արտադրական և ֆինանսական ռեսուրսների հետ: Դրանց օգտագործումը կարող է իրականացվել երկու ուղիով՝ էքստենսիվ և ինտենսիվ: Էքստենսիվ ուղու դեպքում արտադրության գործընթացում ներառվում են լրացուցիչ արտադրական և ֆինանսական ռեսուրսներ, ինտենսիվ ուղու դեպքում անհրաժեշտ է, որպեսզի եղած ռեսուրսներն օգտագործվեն նպատակային ու արդյունավետ, այսինքն՝ սպասվելիք ֆինանսական արդյունքներն ունենան ավելի արագ աճման տեմպեր, քան կատարվող ծախսերը: Ինտենսիվ զարգացման հիմնական նախապայմանը գիտատեխնիկական առաջընթացի ապահովումն է: Ասվածն ավելի պարզ պատկերացնելու համար՝ ներկայացնենք գծապատկերով (1.4.3):

Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ ինքն է որոշում, թե տվյալ իրավիճակում ինչ ճանապարհով և ինչպես պետք է կարգավորի իր տնտեսական գործունեությունը: Դրան հասնելու համար կազմվում են կազմակերպատեխնիկական և ֆինանսական միջոցառումների պլաններ՝ եղած կամ դրսից ներգրավվող ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նպատակով: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտը պետք է կարողանա կազմակերպել ֆինանսատնտեսական այնպիսի վերլուծական աշխատանքներ, որպեսզի կարճատև ժամանակահատվածում բարելավի իր ֆինանսական դրությունը:

Ամփոփելով ֆինանսական վերլուծության անհրաժեշտության մասին վերոշարադրյալը, կարելի է ասել, որ այն յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի հնարավորություն կտա հստակ պատկերացում կազմել ֆինանսական հաշվետվությունների փոխկապակցությունների վերաբերյալ և դրանց հիման վրա գնահատել տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական վիճակը:

Գծ. 1.4.3. Տնտեսավարող սուբյեկտի արտադրության ինտենսիվ և էքստենսիվ գործոնների դասակարգումը



# Գլուխ 2

# Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության ընդհանուր գնահատումը

## 2.1. Հաշվապահական հաշվեկշռի վերլուծությունը

### 2.1.1. Համախմբված հաշվապահական հաշվեկշռի ընդհանուր վերլուծությունը

Բոլոր տեսակի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական հաշվետվություններից հաշվապահական հաշվեկշիռն այն կարևորագույն ամփոփ փաստաթուղթն է, որը հնարավորություն է տալիս գնահատելու հաշվետու ժամանակաշրջանում դրանց ֆինանսատնտեսական գործունեությունը: Հաշվապահական հաշվեկշռի հանրագումարն է, որ արտահայտում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ գտնվող տնտեսական միջոցների և դրանց կազմավորման աղբյուրների արժեքը:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրությունը վերլուծելիս անհրաժեշտ է իրարից տարբերել երկու տեսակի հաշվապահական հաշվեկշիռ.

1. ոչ մաքուր (բրուտո) – հաշվապահական հաշվեկշիռ, որտեղ առանձին հոդվածներով արտահայտվում են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, փոքրարժեք և արագամաշ առարկաների հաշվեկշռային, մաշվածության և մնացորդային արժեքները, հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների շահույթն ու վնասը,

2. մաքուր (նետտո) – հաշվապահական հաշվեկշիռ, որտեղ վերը նշված հոդվածներից միայն հաշվեկշռային արժեքներն են գրանցվում, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի կուտակված (չբաշխված) շահույթը կամ վնասը, իսկ, օրինակ, մաշվածության գումարները արտացոլվում են այդ հաշվեկշռին կից ծանոթագրություններում:

Հաշվապահական հաշվեկշիռների այս անվանումները[1] դեռևս 20-րդ դարի սկզբներին առանձնացրել է գերմանացի տեսաբան-գիտնական Է.Շմալենբախը, ապա ռուս նշանավոր տեսաբան-հաշվապահ Ն.Ա. Բլատովը: Նրանց կարծիքով, վերոհիշյալ հասկացություններն ունեն ոչ թե բացարձակ, այլ հարաբերական նշանակություն: Չնայած տարբեր երկրներում գործնականում դրանք երկուսն էլ օգտագործվում են հաշվեկշռի

[1] Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс. М., 1998, с. 184.

առկա հոդվածների էությունից կախված, բայց հարցն անընդհատ քննարկվել է, և համապատասխան մասնագետներ եկել են այն հետևության, որ ամենաճիշտը մաքուր հաշվեկշռի օգտագործումն է: Հայաստանի Հանրապետությունում ևս 1998 թվականից գործում է **հաշվապահական** հաշվառման չափանիշներին համապատասխան մաքուր հաշվեկշիռը[1]: Հատկապես այդ հաշվեկշռի հիման վրա է տնտեսավարող սուբյեկտի կողմից կազմվում **համախմբված** (խտացված) հաշվեկշիռ, որն իրականացվում է **տնտեսական բովանդակությամբ միանման (համասեռ) հոդվածները** միավորելով առանձին խմբերում: Այսինքն՝ դրանով կրճատվում է հաշվեկշռի հոդվածների թիվը, մեծանում է նրա հասկանալի լինելը, իսկ վերլուծությունը կատարվում է ավելի պարզ: Այսպիսի հաշվեկշիռը հնարավորություն է տալիս համեմատելի դարձնել հայրենական և արտերկրների տնտեսավարող սուբյեկտների **հաշվապահական հաշվեկշիռները**:

Տնտեսավարող սուբյեկտի **ֆինանսական դրության ընդհանուր** գնահատման համար անհրաժեշտ է նախ ուշադրություն դարձնել այդ համախմբված հաշվեկշռում ընդհանուր ձևով հանդես եկած այն հոդվածների վրա, որոնց ներսում ներառված են այնպիսի ենթահոդվածներ, որոնք իրենց էությամբ վճռորոշ են **ֆինանսատնտեսական** վիճակի բնորոշման համար: Այդպիսի հոդվածները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի, որոնք՝

1. բնորոշում են հաշվետու ժամանակաշրջանում տնտեսավարող սուբյեկտների անբավարար աշխատանքների հետևանքով առաջացած ֆինանսական վատթարագույն վիճակը,

2. բնորոշում են տնտեսավարող սուբյեկտի աշխատանքներում տեղ գտած որոշակի թերությունները կամ բացթողումները, որոնք կարելի է բացահայտել վերլուծական (անալիտիկ) հաշվառման տվյալներով:

Առաջին խմբին վերագրվում են պատճառված վնասները, ժամանակին չմարված վարկերն ու փոխառությունները: Այսպես, վնասները, որոնք որոշվում են տնտեսավարող սուբյեկտների եկամուտների և ծախսերի գումարների տարբերությամբ, իրենց արտացոլումն են գտնում «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում» (հավելված 2): Պարզելու համար՝ տնտեսավարող սուբյեկտը շահույթով է աշխատել, թե վնասով, կատարվում է մանրամասն վերլուծություն՝ հաշվապահական հաշվառման տվյալներով: Այսպես, ընթացիկ պարտավորություններում ընդ-

[1] «Հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների մասին» ՀՀ կառավարության թիվ 740 որոշում, 26 նոյեմբեր, 1998 թ. (ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր, N 13, 1999, էջ 3):



գրկված «Առևտրական կրեդիտորական պարտքեր» հոդվածը ներառում է հաշվարկային փաստաթղթերով ժամանակին չվճարված մատակարարների պարտքը, որը վկայում է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ծանր վիճակում գտնվելու փաստը: Նման ձևով գնահատվում են նաև ժամանակին չվճարված կարճաժամկետ և երկարաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները, որոնք նույնպես բնորոշում են տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ծանր վիճակը:

Երկրորդ խմբին են վերաբերվում այն **հոդվածները**, որոնք անմիջականորեն արտահայտված են հաշվեկշռում, բայց հանդես են գալիս թաքնված (ոչ բացահայտ) տեսքով: Դրանց են վերագրվում, օրինակ, «Առևտրական դեբիտորական պարտքեր» հոդվածում տնտեսավարող սուբյեկտի արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գծով կատարված հաշվարկները, որոնք կարող են արտահայտել ժամկետանց դեբիտորական պարտքերը (օրինակ, հաշվարկային փաստաթղթերով հանձնվել են աշխատանքներ և բարձվել ապրանքներ, բայց դրանք դեռևս չեն ձևակերպվել սպասարկող բանկում, այսինքն՝ գանձում տեղի չի ունեցել, որի պատճառով էլ անցել է վճարման ժամկետը):

Համախմբված հաշվապահական հաշվեկշիռը կարելի է կազմել տարբեր եղանակներով՝ ելնելով դրանում ներառված բաժինների առանձնահատկություններից: Ներկայացնենք դրանցից ամենատարածվածներից մեկը (աղյուսակ 2.1.1)՝ հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվեկշռի 2-րդ բաժնի գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերը նախորդ տարվա նկատմամբ ունեցել են նվազման միտում 182741 հազ. դրամով (21154 – 203895): Դա տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար դրական երևույթ է, քանի որ այդ գումարները, հիմնականում գտնվելով նրա տրամադրության տակ, ստեղծում են տնտեսական նոր արդյունքներ: Կարևոր է նաև հաշվեկշռի ընդհանուր արժեքի համեմատությունը հաշվետու ժամանակաշրջանի (տարվա) վերջի և սկզբի դրությամբ: Դրանով կարող ենք գաղափար կազմել տնտեսական միջոցների և դրանց կազմավորման աղ-

Աղյուսակ 2.1.1

Համախմբված հաշվապահական հաշվեկշիռ

Հազ. դրամ

| Ակտիվ | Նախորդ տարի | Հաշվետու տարի | Պասիվ | Նախորդ տարի | Հաշվետու տարի |
|---|---|---|---|---|---|
| 1.ոչ ընթացիկ ակտիվներ | | | 3.սեփական կապիտալ | | |
| 1.1.ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 94572 | 117814 | 3.1.կանոնադրական կապիտալ | 155000 | 155000 |
| 1.2.ոչ նյութական ակտիվներ | 76 | 94 | 3.2.լրացուցիչ կապիտալ | · | — |
| 1.3.ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 10752 | 15508 | 3.3.վերագնահատումից տարբերություններ | — | — |
| 1.4.այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 1000 | 2000 | 3.4.կուտակված շահույթ | 20130 | 86248 |
| | | | 3.5.պահուստներ | 2648 | 13178 |
| | | | 3.6.կանխավճարներ շահաբաժինների գծով | | |
| ընդամենը ըստ 1-ին բաժնի | 106400 | 135416 | ընդամենը ըստ 3-րդ բաժնի | 177778 | 254426 |
| 2.ընթացիկ ակտիվներ | | | 4.ոչ ընթացիկ պարտավորություններ | | |
| 2.1.պաշարներ | 26665 | 329758 | 4.1.ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 45129 | 86049 |
| 2.2.գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր | 203895 | 21154 | 4.2.այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | — | — |
| 2.3.ընթացիկ ֆինանսական ներդրումներ | — | — | ընդամենը ըստ 4-րդ բաժնի | 45129 | 86049 |
| 2.4.դրամական միջոցներ | 4838 | 3047 | 5.ընթացիկ պարտավորություններ | | |
| 2.5.այլ ընթացիկ ակտիվներ | 163 | 2123 | 5.1.ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 23316 | 24721 |
| ընդամենը ըստ 2-րդ բաժնի | 235561 | 356082 | 5.2.գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր | 79162 | 101177 |
| | | | 5.3.այլ ընթացիկ պարտավորություններ | 16576 | 25125 |
| | | | ընդամենը ըստ 5-րդ բաժնի | 119054 | 151023 |
| հաշվեկշիռ (1+2) | 341961 | 491498 | հաշվեկշիռ (3+4+5) | 341961 | 491498 |



բյուրների ավելացման կամ նվազեցման մասին: Եթե տնտեսական միջոցներն ավելացել են, կնշանակի, որ տվյալ տնտեսավարող սուբյեկտն արդեն ապահովված է արտադրական հզորություններով (հիմնական միջոցներ, տեղակայման սարքավորումներ, ոչ նյութական ակտիվներ և այլ ոչ ընթացիկ ակտիվներ), ինչպես նաև ընթացիկ ակտիվներով, ուստի դրանց համապատասխան էլ կավելանա սեփական կապիտալի մեծությունը: Այստեղից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտը տվյալ իրավիճակում տնտեսապես գնահատվում է դրականորեն: Հաշվեկշռի ակտիվի (ընդհանուր կապիտալի) արժեքի նվազումը, ընդհակառակը, տնտեսավարող սուբյեկտի համար բացասական արդյունք է համարվում, քանի որ նրա կողմից իրականացվող արտադրատնտեսական գործունեությունը կրճատվում է (ընկնում է արտադրված արտադրանքի նկատմամբ պահանջարկը, սահմանված չափով պակասում է արտադրական պաշարների քանակը՝ լիարժեք արտադրական գործունեություն իրականացնելու համար, ավելանում է կրեդիտորական պարտքերի գումարի չափը և այլն):

Նպատակահարմար է նաև տվյալ տնտեսավարող սուբյեկտի՝ հաշվետու ժամանակաշրջանում կազմած համախմբված հաշվեկշռի տվյալները համեմատել նախորդ մի քանի տարիների և համանման այլ տնտեսավարող սուբյեկտների հաշվեկշիռների հետ: Դա կօգնի պարզել տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության դրական և բացասական կողմերը, դրանից անել համապատասխան հետևություններ կամ եզրահանգումներ:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության դինամիկայի գնահատման համար անհրաժեշտ է համադրել հաշվեկշռի հանրագումարի փոփոխությունը տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների [արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթը, համախառն շահույթը, իրացումից շահույթը, հիմնական գործունեությունից շահույթը, զուտ շահույթը] փոփոխությունների հետ: Դրա համար հաշվարկենք հաշվեկշռի ընդհանուր արժեքի (կապիտալի) և իրացումից զուտ հասույթի աճի (նվազման) գործակիցները:

Հաշվեկշռի ընդհանուր արժեքի աճի (նվազման) գործակիցը՝ $Գ_{ՀԱՍՈՒՅԹ(Ն)}$, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{ՀԱՍՈՒՅԹ(Ն)} = \frac{\overline{Հ_1} - \overline{Հ_0}}{\overline{Հ_0}}, \qquad (2.1.1.1)$$

որտեղ՝ $\overline{Հ}_1$ և $\overline{Հ}_0$-ն՝ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում հաշվեկշռի ընդհանուր արժեքի միջին մեծություններն են, որոնք ուսումնասիրվող տնտեսության համար համապատասխանաբար կազմել են 416730 և 319055 հազ. դրամ:

Տեղադրելով այդ տվյալները (2.1.1.1) բանաձևի մեջ կստանանք՝

$$Գ_{Հաս(ն)} = \frac{416730 - 319055}{319055} = 0,306 \text{ կամ } 30,6\ \%:$$

Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի աճի (նվազման) գործակիցը՝ $Գ_{ԻՁՀ(ն)}$, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{ԻՁՀ(ն)} = \frac{(ԻՁՀ)_1 - (ԻՁՀ)_0}{(ԻՁՀ)_0}, \qquad (2.1.1.2)$$

որտեղ՝ $(ԻՁՀ)_1$ և $(ԻՁՀ)_0$-ն՝ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում իրացումից զուտ հասույթի գումարներն են:

«Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունից» (հավելված 2) տեղադրելով տվյալները, կստանանք՝

$$Գ_{ԻՁՀ(ն)} = \frac{794709 - 517481}{517481} = 0,536 \text{ կամ } 53,6\%:$$

Հաշվարկներից պարզվում է, որ նախորդ տարվա համեմատ հաշվետու տարում հաշվեկշռի ընդհանուր արժեքը 23%-ով ավելի արագ է աճել, քան իրացումից զուտ հասույթը (53,6 – 30,6):

Նման ձևով կարող ենք հաշվարկել նաև համախառն շահույթի, իրացումից շահույթի և զուտ շահույթի աճի (նվազման) գործակիցներն ու համեմատել հաշվեկշռի ընդհանուր արժեքի աճի (նվազման) գործակցի հետ:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման վերլուծության փորձը ցույց է տալիս, որ եթե իրացումից զուտ հասույթի (իրացումից շահույթի, համախառն շահույթի, հիմնական գործունեության շահույթի, զուտ շահույթի) աճի տեմպերը հաշվեկշռի ընդհանուր արժեքի համեմատ ավելի դանդաղ են ընթանում (ինչպես բերված օրինակի դեպքում է), նշանակում է տնտեսավարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող տնտեսական միջոցներն արդյունավետ չեն օգտագործվում: Հակառակ դեպքում, կնշանակի, որ այդ միջոցներն արդյունավետ են օգտագործվում, և որ այդ տնտեսական միջոցի մեկ միավորին ավելի շատ իրացումից զուտ հասույթ (շահույթ) է ընկնում:



Քանի որ հաշվեկշռի ընդհանուր արժեքը դրանում ներառված տարբեր հոդվածներին համապատասխանող արժեքների արդյունք է, ուստի կարևոր է այդ համախմբված հաշվեկշիռը վերլուծել ըստ առանձին հոդվածների: Դա իրականացվում է հորիզոնական (ըստ դինամիկայի) և ուղղահայաց (ըստ կառուցվածքի) վերլուծությունների օգնությամբ:

## 2.1.2. Հաշվապահական հաշվեկշռի հորիզոնական և ուղղահայաց վերլուծությունները

Ինչպես ասվեց, տնտեսավարող սուբյեկտների տրամադրության տակ գտնվող տնտեսական միջոցների և դրանց կազմավորման աղբյուրների դինամիկայի հաշվարկն ու վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու ամենաընդհանուր հետևություններ դրանց ֆինանսատնտեսական դրության մասին: Դրա համար կազմվում են հատուկ աղյուսակներ, որոնց հիման վրա կատարվում են հաշվեկշռի հորիզոնական և ուղղահայաց վերլուծություններ[1]: Այսպես, հորիզոնական վերլուծությունն իրականացվում է մեկ կամ մի քանի աղյուսակներ կազմելով, որոնցում բացարձակ հաշվեկշռային ցուցանիշները լրացվում են հարաբերական աճման (նվազման) տեմպերով: Սովորաբար հորիզոնական վերլուծությունը կատարվում է բազիսային եղանակով, այսինքն՝ նախորդ տարիներից (եռամսյակներից) առաջինը վերցվում է որպես բազիս (հիմք), որի նկատմամբ էլ ըստ հաշվեկշռի առանձին տողերի կատարվում են հարաբերական մեծության հաշվարկներ: Այս մեթոդով հաշվարկները հնարավորություն են տալիս ոչ միայն վերլուծել առանձին հաշվեկշռային հոդվածների փոփոխությունները, այլ նաև մեկնաբանել և կանխատեսել դրանց նշանակությունը:

Օգտագործելով հավելված 1-ում եղած տվյալները, հաշվեկշռի հորիզոնական վերլուծության համար կազմենք աղյուսակ (2.1.2.1):

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ հաշվեկշռի ընդհանուր արժեքը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 143,7% կամ ավելացել է 43,7%-ով, և հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 491498 հազ. դրամ: Չնայած հաշվեկշռի ակտիվի և պասիվի հանրագումարներն իրար հավասար են, այնուամենայնիվ, ըստ բաժինների աճման (նվազման) միտումն ունեցել է հետևյալ պատկերը. 1-ին բաժնի (ոչ ընթացիկ ակտիվներ) ավելացումը տեղի է ունեցել 27,3%-ի չափով (127,3 – 100,0), իսկ միայն ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների գծով՝ 44,2%-ով, այսինքն՝

[1] Маркарьян Э.А., Герасименко Г.П. Финансовый анализ. М., 1997, с. 74.

Աղյուսակ 2.1.2.1

Հաշվեկշռի հորիզոնական վերլուծությունը

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարի | | Հաշվետու տարի | |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | % | հազ. դրամ | % |
| Ակտիվ | | | | |
| 1. ոչ ընթացիկ ակտիվներ | | | | |
| 1.1. ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 94572 | 100,0 | 117814 | 124,6 |
| 1.2. ոչ նյութական ակտիվներ | 76 | 100,0 | 94 | 123,7 |
| 1.3. ոչ նյութական ֆինանսական ակտիվներ | 10752 | 100,0 | 15508 | 144,2 |
| 1.4. այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 1000 | 100,0 | 2000 | 200.0 |
| ընդամենը ըստ 1-ին բաժնի | 106400 | 100,0 | 135416 | 127,3 |
| 2. ընթացիկ ակտիվներ | | | | |
| 2.1. պաշարներ | 26665 | 100,0 | 329758 | X12,4 |
| 2.2. գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր | 203895 | 100,0 | 21154 | 10,4 |
| 2.3. ընթացիկ ֆինանսական ներդրումներ | - | - | - | - |
| 2.4. դրամական միջոցներ | 4838 | 100,0 | 3047 | 63,0 |
| 2.5. այլ ընթացիկ ակտիվներ | 163 | 100,0 | 2123 | X13,0 |
| ընդամենը ըստ 2-րդ բաժնի | 235561 | 100,0 | 356082 | 151,2 |
| հաշվեկշիռ | 341961 | 100,0 | 491498 | 143,7 |
| Պասիվ | | | | |
| 3. սեփական կապիտալ | | | | |
| 3.1. կանոնադրական կապիտալ | 155000 | 100,0 | 155000 | 100,0 |
| 3.2. լրացուցիչ կապիտալ | - | - | - | - |
| 3.3. վերագնահատումից տարբերություններ | - | - | - | - |
| 3.4. կուտակված շահույթ | 20130 | 100,0 | 86048 | 427,5 |
| 3.5. կանխավճարներ շահաբաժինների գծով | - | - | - | - |
| 3.6. պահուստներ | 2648 | 100,0 | 13178 | 497,7 |
| ընդամենը ըստ 3-րդ բաժնի | 177778 | 100,0 | 254426 | 143,1 |
| 4.ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| 4.1. ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 45129 | 100,0 | 86049 | 190,7 |
| 4.2. այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | - | - | - | - |
| ընդամենը ըստ 4-րդ բաժնի | 45129 | 100,0 | 86049 | 190,7 |
| 5. ընթացիկ պարտավորություններ | | | | |
| 5.1. ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 23316 | 100,0 | 24721 | 106,0 |
| 5.2. գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր | 79162 | 100,0 | 101177 | 127,8 |
| 5.3. այլ ընթացիկ պարտավորություններ | 16576 | 100,0 | 25125 | 151,6 |
| ընդամենը ըստ 5-րդ բաժնի | 119054 | 100,0 | 151023 | 126,9 |
| հաշվեկշիռ | 341961 | 100,0 | 491498 | 143,7 |

ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներն ավելացել և կազմել են 15508 հազ. դրամ՝ նախորդ տարվա 10752 հազ. դրամի փոխարեն: Այդ նույն բաժնում ոչ ընթացիկ նյութական ակտիվները



(հիմնական միջոցները) և ոչ նյութական ակտիվները նույնպես ունեցել են աճման միտում՝ համապատասխանաբար 24,6%-ով (124,6 – 100,0) և 23,7%-ով (123,7 – 100,0):

2-րդ բաժնի (ընթացիկ ակտիվներ) գծով նախորդ տարվա նկատմամբ նույնպես տեղի է ունեցել ավելացում՝ 51,2%-ով (151,2 – 100,0): Դա հիմնականում կատարվել է գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերի (առևտրական դեբիտորական պարտքեր, տրված ընթացիկ կանխավճարներ, ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով և այլն) գծով՝ 10,4%-ով (110,4 – 100,0), և պաշարների գծով՝ 12,4 անգամ:

3-րդ բաժինը, որը համարվում է պասիվի ամենակարևոր մասը, ավելացել է 43,1%-ով (143,1 – 100,0): Դա հիմնականում տեղի է ունեցել կուտակված շահույթի (չբաշխված շահույթ) հաշվին՝ 327,5%-ով (427,5 – 100,0), կամ այն բացարձակ արժեքով կազմել է 86048 հազ. դրամ՝ նախորդ տարվա 20130 հազ. դրամի փոխարեն: Եթե չբաշխված շահույթից շահաբաժիններ վճարվեին կամ արտադրության զարգացման ուղղությամբ օգտագործվեին, ապա, հասկանալի է, որ հաշվետու տարվա չբաշխված շահույթի գումարի չափը կնվազեր:

4-րդ բաժնի (ոչ ընթացիկ պարտավորություններ) գծով ավելացումը տեղի է ունեցել 90,7%-ի չափով (190,7 – 100,0), այսինքն՝ երկարաժամկետ բանկային վարկերը, փոխառությունները և ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները կազմել են 86049 հազ. դրամ՝ նախորդ տարվա 45129 հազ. դրամի փոխարեն: Սա դրական երևույթ չէ. ավելացումը արդյունավետ է այն դեպքում, երբ դրանք օգտագործվեն խիստ նպատակային ձևով:

Վերջին՝ 5-րդ բաժնի (ընթացիկ պարտավորություններ) գծով ավելացումը կազմել է 26,9% (126,9 – 100,0): Դա հիմնականում տեղի է ունեցել ընթացիկ ֆինանսական պարտավորությունների (կարճաժամկետ բանկային վարկեր, փոխառություններ և այդ վարկերի, փոխառությունների կարճաժամկետ մաս և այլն) գծով՝ 6,0%-ով (106,0 – 100,0): Տնտեսագիտական մեկնաբանությունը նույնն է, ինչ ոչ ընթացիկ պարտավորությունների դեպքում էր: Այս բաժնում գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքերի (առևտրական կրեդիտորական պարտքեր, ստացված ընթացիկ կանխավճարներ, կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին, պարտավորություններ աշխատավարձի, սոցիալական ապահովագրության գծով և այլն) գծով նույնպես տեղի է ունեցել ավելացում՝ 27,8%-ով (127,8 – 100,0), որը դրական երևույթ չէ:

Հորիզոնական վերլուծությունը հնարավորություն է տալիս իրականացնելու գալիք ժամանակաշրջանների համար կանխատեսումներ:

Հորիզոնական վերլուծությունից բացի, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման համար, ինչպես ասվեց, մեծ նշանակություն ունի նաև հաշվեկշռի ակտիվի և պասիվի ուղղահայաց (կառուցվածքային) վերլուծությունը:

Ուղղահայաց վերլուծության նպատակն է հաշվարկել հաշվեկշռի հանրագումարի նկատմամբ առանձին հոդվածների տեսակարար կշիռը (հարաբերակցությունը)՝ տոկոսներով արտահայտված: Այս վերլուծության ընթացքում հատկապես կարևոր նշանակություն ունի պարզել, թե յուրաքանչյուր բաժին քանի տոկոսով է ներառված հաշվեկշռի հանրագումարում:

Եթե վերլուծության ընթացքում պարզվում է, որ հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) տեսակարար կշիռներն ավելանում են նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ, ապա կարելի է հանգել հետևյալ եզրահանգումներին՝

- եթե այդ ավելացմանը համընթաց մեծացել է նաև իրացումից ստացվող զուտ հասույթի չափը, ապա կնշանակի, որ դրանք կնպաստեն ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագացմանը, որով էլ կբարելավվի տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրությունը,
- եթե ընթացիկ ակտիվների իրացվելիության գործակիցն (ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունը) ընդունում է սահմանված նորմայից մեծ արժեք (>3-ից), կնշանակի, որ այդ տնտեսավարող սուբյեկտն իր ենթակայության տակ ունի արտադրական և շրջանառության ոլորտին չմասնակցող ազատ սեփական ընթացիկ ակտիվներ (պաշարներ պահեստում, դրամական միջոցներ դրամարկղում և բանկային հաշիվներում, այլ կազմակերպություններից ստացվող դեբիտորական պարտքեր), որոնք եկամուտ չեն բերում,
- ընթացիկ ակտիվների ավելացումը կբերի արտադրական բազայի աստիճանաբար քայքայման, որն իր հերթին կնպաստի ֆինանսական դրության վատթարացմանը:

Հաշվեկշռի ուղղահայաց վերլուծության համար կազմենք աղյուսակ (2.1.2.2): Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ակտիվի հանրագումարում հաշվետու տարվա վերջի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 27,6% և հաշվետու տարվա վերջի նկատմամբ նվազել 3,5%-ով: Այդ ոչ ընթացիկ ակտիվներում ամենամեծ տեսակարար կշիռն էլ ըստ տարիների բաժին է ընկնում ոչ ընթացիկ նյութական ակտիվներ համարվող հիմնական միջոցներին, որոնք համապատասխանաբար կազմել են 27,6% և 24,0%: Ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռն ըստ տարիների կազմել է 68,9% և 72,4%, այսինքն՝ ավելացել է



Աղյուսակ 2.1.2.2

Հաշվեկշռի ուղղահայաց վերլուծությունը %

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարի | Հաշվետու տարի | Շեղումը (+,-) |
|---|---|---|---|
| Ակտիվ | | | |
| 1.ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| 1.1.ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 27,6 | 24,0 | -3,7 |
| 1.2.ոչ նյութական ակտիվներ | 0,02 | 0,02 | 0,0 |
| 1.3.ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 3,1 | 3,2 | 0,1 |
| 1.4.այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 0,3 | 0,4 | 0,1 |
| ընդամենը ըստ 1-ին բաժնի | 31,1 | 27,6 | -3,5 |
| 2. ընթացիկ ակտիվներ | | | |
| 2.1.պաշարներ | 7,8 | 67,1 | 59,3 |
| 2.2.գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր | 59,6 | 4,3 | -55,3 |
| 2.3.ընթացիկ ֆինանսական ներդրումներ | - | - | - |
| 2.4.դրամական միջոցներ | 1,4 | 0,6 | -0,8 |
| 2.5.այլ ընթացիկ ակտիվներ | 0,1 | 0,4 | 0,3 |
| ընդամենը ըստ 2-րդ բաժնի | 68,9 | 72,4 | 3,5 |
| հաշվեկշիռ | 100,0 | 100,0 | - |
| Պասիվ | | | |
| 3. սեփական կապիտալ | | | |
| 3.1.կանոնադրական կապիտալ | 45,3 | 31,6 | -13,7 |
| 3.2.լրացուցիչ կապիտալ | - | - | - |
| 3.3.վերագնահատումից տարբերություններ | - | - | - |
| 3.4.կուտակված շահույթ | 5,9 | 17,5 | 11,6 |
| 3.5.կանխավճարներ շահաբաժինների գծով | - | | |
| 3.6.պահուստներ | 0,8 | 2,7 | 1,9 |
| ընդամենը ըստ 3-րդ բաժնի | 52,0 | 51,8 | -0,2 |
| 4. ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| 4.1.ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 13,2 | 17,5 | 4,3 |
| 4.2.այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | - | - | - |
| ընդամենը ըստ 4-րդ բաժնի | 13,2 | 17,5 | 4,3 |
| 5. ընթացիկ պարտավորություններ | | | |
| 5.1.ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | 6,8 | 5,0 | -1,8 |
| 5.2.գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր | 23,2 | 20,6 | -2,6 |
| 5.3.այլ ընթացիկ պարտավորություններ | 4,8 | 5,1 | 0,3 |
| ընդամենը ըստ 5-րդ բաժնի | 34,8 | 30,7 | -4,1 |
| հաշվեկշիռ | 100,0 | 100,0 | - |

3,5%-ով: Այդ տեսակարար կշռում ամենամեծ բաժինն ընկնում է պաշարներին, որը հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 67,1%, և գործառնական ու այլ ընթացիկ դեբիտորական պարտքերին, որը նախորդ տարվա վերջի դրությամբ կազմել է 59,6%: Հաշվեկշռի պասիվի հանրա-

գումարում ամենամեծ տեսակարար կշիռն ըստ տարիների բաժին է ընկել սեփական կապիտալին՝ համապատասխանաբար կազմելով 52,0% և 51,8%: Չնայած նախորդ տարվա համեմատությամբ այն պակասել է 0,8%-ով, բայց, այնուհանդերձ, տնտեսավարող սուբյեկտը դեռևս համարվում է ֆինանսապես բավարար չափով կայուն, քանի որ այդ տեսակարար կշիռը համապատասխանում է համաշխարհային նորմային, որը պակաս չպետք է լինի 50 – 60%-ից: Սեփական կապիտալի տեսակարար կշռի նվազեցումը արդյունք է ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունների բաժնի ավելացման, այսինքն՝ տեղի է ունեցել վարկերի ու փոխառությունների գծով կրեդիտորական պարտքերի մեծացում:

Եթե ընդհանրացնելու լինենք, անհրաժեշտ է նշել, որ հորիզոնական և ուղղահայաց վերլուծությունները իրար լրացնում են, և դրանց հիման վրա հնարավոր է կատարել հաշվեկշռի համեմատական վերլուծություն, որն էլ ավելի հստակ պատկերացում կտա տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրության մասին:

## 2.1.3. Հաշվապահական հաշվեկշռի համեմատական վերլուծությունը

Տնտեսավարող սուբյեկտների հաշվեկշռի համեմատական վերլուծություն կատարելիս հարկ է ներկայացնել հաշվապահական հաշվեկշռի ակտիվի և պասիվի հիմնական բաժինները: Այս վերլուծությունը բնութագրում է ինչպես առանձին բաժինների կառուցվածքը, այնպես էլ յուրաքանչյուր ամփոփ ցուցանիշի դինամիկ փոփոխությունները՝ բացարձակ և հարաբերական առումով[1]: Համեմատական վերլուծություն կատարելիս հիմք են ընդունվում նաև հորիզոնական և ուղղահայաց վերլուծությունների հաշվարկները: Հաշվեկշիռի համեմատական վերլուծությունը ներկայացնենք աղյուսակի (2.1.3) տեսքով:

Աղյուսակում ներառված ցուցանիշները կարելի է բաժանել 4 խմբի՝

1. հաշվեկշռի բացարձակ փոփոխության ցուցանիշներ (ս. 6),
2. հաշվեկշռի կառուցվածքային փոփոխության ցուցանիշներ (ս. 7),
3. հաշվեկշռի դինամիկայի փոփոխության ցուցանիշներ (ս. 8),
4. հաշվեկշռի դինամիկայի կառուցվածքային փոփոխության ցուցանիշներ (ս. 9):

[1] Зимин Н.Е. Оценка финансового состояния сельскохозяйственных предприятий. М., 1999, с. 19.



Աղյուսակ 2.1.3

Հաշվեկշռի համեմատական վերլուծությունը

Հազ. դրամ

| Ցուցանիշների անվանումը | Բացարձակ մեծությունը (հազ. դրամ) | | Տեսակարար կշիռը (%) | | Փոփոխությունը | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ժամանակի | ըստ հաստատության | ըստ ժամանակի | ըստ հաստատության | բացարձակ մեծությունով | տեսակարար կշիռներով (%) | ճախորդ տարվա նկատմամբ (%) | հաշվեկշռի համապատասխան գումարի նկատմամբ (%) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6(ս3-ս2) | 7(ս5-ս4) | 8(ս6 : ս2) | 9(ս6 : Σ6) |
| Ակտիվ | | | | | | | | |
| 1. ոչ ընթացիկ ակտիվներ | 106400 | 135416 | 31,1 | 27,6 | 29016 | -3,5 | 27,3 | 19,4 |
| 2. ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 235561 | 356082 | 68,9 | 72,4 | 120521 | 3,5 | 51,2 | 80,6 |
| պաշարներ | 26665 | 329758 | 7,8 | 67,1 | 303093 | 59,3 | 1136,7 | 202,7 |
| դեբիտորական պարտքեր | 204058 | 23277 | 59,7 | 4,7 | -180781 | -55,0 | -88,6 | -120,9 |
| դրամական միջոցներ | 4838 | 3047 | 1,4 | 0,6 | -1791 | -0,8 | -37,0 | -1,2 |
| հաշվեկշիռ | 341961 | 491498 | 100,0 | 100,0 | 149537 | 0,0 | 43,7 | 100,0 |
| Պասիվ | | | | | | | | |
| 1. սեփական կապիտալ | 177778 | 254426 | 52,0 | 51,8 | 76648 | -0,2 | 43,1 | 51,3 |
| 2. պարտավորություններ, այդ թվում՝ | 164183 | 237072 | 48,0 | 48,2 | 72889 | 0,2 | 44,4 | 48,7 |
| ոչ ընթացիկ պարտավորություններ | 45129 | 86049 | 13,2 | 17,5 | 40920 | 4,3 | 90,7 | 27,4 |
| ընթացիկ պարտավորություններ (կրեդիտորական պարտքեր) | 119054 | 151023 | 34,8 | 30,7 | 31969 | -4,1 | 26,9 | 21,3 |
| հաշվեկշիռ | 341961 | 491498 | 100,0 | 100,0 | 149537 | 0,0 | 43,7 | 100,0 |

Հաշվեկշռի բացարձակ փոփոխության ցուցանիշներն արդյունք են հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների առանձին բաժինների (հոդվածների) գումարների տարբերության: Օրինակ, դեբիտորական պարտքերի գծով այն հավասար է 180781 հազ. դրամի (23277 – 204058), այսինքն՝ տեղի է ունեցել նվազեցում, որը ցանկալի է տնտեսավարող սուբյեկտի համար: Դրան կից պաշարների գծով տեղի է ունեցել ավելացում 303093 հազ. դրամով, որը բացասական երևույթ է:

Հաշվեկշռի կառուցվածքային փոփոխության ցուցանիշները որոշվում են հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն հաշվարկված տեսակարար կշիռների տարբերությամբ: Օրինակ, ոչ ընթացիկ պարտավորությունների բաժինը պասիվում հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 4,3%-ով (17,5 – 13,2): Այս ավելացումը դրական է, եթե ներգրավված երկարաժամկետ վարկերն ու փոխառությունները տնտեսավարող սուբյեկտն օգտագործում է նպատակային: Կամ՝ սեփական կապիտալի բաժինը պակասել է 0,2%-ով (51,8 – 52,0), այսինքն՝ նախորդ տարվա համեմատությամբ ֆինանսական դրությունը բարվոք չէ:

Հաշվեկշռի դինամիկայի փոփոխության ցուցանիշները որոշելիս օգտվում ենք վիճակագրության ընդհանուր տեսությունից հայտնի հավելաճի տեմպի բանաձևից: Օրինակ, ոչ ընթացիկ ակտիվների գծով այն հավասար է 27,3% (29016 : 106400 · 100%) և ցույց է տալիս, որ հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ տեղի է ունեցել ավելացում: Չնայած տեսակարար կշռով սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0,2%-ով, բայց, այնուհանդերձ, հավելաճի տեմպը կազմել է 43,1%, իսկ դրան կից էլ ավելի արագ տեմպերով ավելացել են ինչպես ընդամենը պարտավորությունները՝ 44,4%-ով, այնպես էլ ոչ ընթացիկ պարտավորությունները՝ 90,7%-ով: Այստեղից հետևում է, որ ֆինանսապես խիստ բարվոք վիճակում կգտնվի այն տնտեսավարող սուբյեկտը, որի սեփական կապիտալն ավելի արագ է աճում, քան պարտավորությունները:

Հաշվեկշռի դինամիկայի կառուցվածքային փոփոխության ցուցանիշները բնութագրում են հաշվետու ու նախորդ տարիների առանձին բաժինների (հոդվածների) գծով հաշվարկված բացարձակ փոփոխությունների (սյունակ 6) և դրանց հանրագումարի միջև եղած հարաբերակցությունը: Օրինակ, ընթացիկ ակտիվների համար այն հավասար է 80,6%-ի (120521 : 149537 · 100%), այսինքն՝ տվյալ դեպքում տնտեսական միջոցների (ակտիվի) կազմում տեղի է ունեցել պաշարների ավելացում, որը հետագայում, տնտեսավարող սուբյեկտի ոչ ճիշտ տնտեսական քաղա-



քականություն վարելու դեպքում, նրան կբերի անկայունության:

Միաժամանակ պարզվում է, որ սեփական կապիտալը հաշվեկշռի հանրագումարի բացարձակ փոփոխությունում ավելի բարձր տեսակարար կշիռ ունի՝ 51,3%, քան ունեն ոչ ընթացիկ պարտավորությունները՝ 27,4% և կրեդիտորական պարտքերը՝ 21,3%: Հարկ է նշել, որ վերջինիս ավելացումը տնտեսավարող սուբյեկտին ձեռնտու չէ:

## 2.2. Ընթացիկ ակտիվների էությունը, դրանց պահանջի և օգտագործման արդյունավետության հաշվարկման մեթոդիկան

### 2.2.1. Տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ ակտիվները և դրանց հատկանիշները

Հայաստանի Հանրապետությունում տնտեսավարման նոր պայմաններում ձևավորվում և զարգանում են կազմակերպչական հիմունքներով ժամանակակից տնտեսավարող սուբյեկտներ (բաց և փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվության ընկերություններ, ֆերմերային տնտեսություններ և այլն), որոնք իրենց գործունեությունն իրականացնում են ֆինանսատնտեսական նոր փոխհարաբերությունների հիման վրա: Հետևաբար, անկախ սեփականության ձևից, իրավական կարգավիճակից և ստանձնած ծրագրի ծավալից, ձեռնարկչատիրական գործունեության ցանկացած տնտեսավարող սուբյեկտ պետք է իր տրամադրության տակ ունենա անհրաժեշտ չափով ակտիվներ, որոնք լինում են երկու տեսակի՝ ընթացիկ և ոչ ընթացիկ: Անշուշտ դրանցից յուրաքանչյուրն իր ուրույն տեղն ունի արտադրատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման գործընթացում, սակայն ավելի կարևոր են ընթացիկ ակտիվները, որոնք ապահովում են արտադրության ու շրջանառության ոլորտի անընդհատ գործունեությունը:

Ընթացիկ ակտիվները հաշվառման, պլանավորման և ֆինանսատնտեսական վերլուծության գծով կարող ենք ստորաբաժանել ըստ հետևյալ հատկանիշների[1].

1. *Հաշվեկշռում ներառման առումով*

ա) նյութական ընթացիկ ակտիվների՝ պաշարների տեսքով, այդ թվում՝ նյութերը, աճեցվող և բտվող կենդանիները, արագամաշ առարկաները, անավարտ արտադրությունը, պատրաստի արտադրանքը և ապրանքները,

[1] Артеменко В.Г., Белендир М.В. Финансовый анализ. М., 1997, с. 47-48.

բ) դեբիտորական պարտքերի, այդ թվում՝ առևտրական դեբիտորական պարտքերը, տրված ընթացիկ կանխավճարները, ընթացիկ դեբիտորական պարտքերը բյուջեի գծով, ընթացիկ ակտիվները հետաձգված հարկերի գծով և այլ ընթացիկ ակտիվները,

գ) դրամական միջոցների, այդ թվում՝ դրամական միջոցները դրամարկղում և բանկային հաշիվներում, ֆինանսական ընթացիկ ներդրումները և դրամական միջոցների համարժեքները:

2. *Արտադրության գործընթացին մասնակցության աստիճանի՝*

ա) ընթացիկ (շրջանառու) արտադրական միջոցների, այդ թվում՝ նյութերը (հումք, վառելիք, պահեստամասեր, սերմեր, կերեր և այլ նյութեր), աճեցվող և բտվող կենդանիները, արագամաշ առարկաները, անավարտ արտադրությունը, սեփական արտադրության կիսաֆաբրիկատները և այլ ընթացիկ ակտիվների մի մասը,

բ) շրջանառության միջոցների, այդ թվում՝ պատրաստի արտադրանքը, ապրանքները, դրամական միջոցներն ու դեբիտորական պարտքերը:

3. *Պլանավորման, կառավարման և վերահսկման գործընթացի հետ կապված՝*

ա) նորմավորվողի՝ արտադրական պաշարները, սեփական արտադրության կիսաֆաբրիկատները և պահեստում գտնվող պատրաստի արտադրանքի չիրացված մասը,

բ) չնորմավորվողի, այդ թվում՝ դրամական միջոցները, դեբիտորական պարտքերը և այլն:

4. *Կազմավորման աղբյուրների բնույթից կախված՝*

ա) սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների, որոնք արդյունք են հաշվեկշռում ներառված հետևյալ բաժինների գումարների՝ Պ(III) + Պ(IV) – Ա(I) կամ սեփական կապիտալ + ոչ ընթացիկ պարտավորություններ – ոչ ընթացիկ ակտիվներ,

բ) փոխառու ընթացիկ ակտիվների, որոնք ձևավորվում են բանկային վարկերի, փոխառությունների, ինչպես նաև կրեդիտորական պարտքերի հաշվին:

5. *Իրացվելիությունից կախված՝*

- բացարձակ իրացվելի,
- արագ իրացվելի,
- դանդաղ իրացվելի ընթացիկ ակտիվներ:

6. *Ներդրվող կապիտալի ռիսկի աստիճանից կախված՝*

ա) նվազագույն ռիսկով ներդրվող ընթացիկ ակտիվների՝ դրամական միջոցները և ընթացիկ ֆինանսական ներդրումները,

բ) փոքր ռիսկով ներդրվող ընթացիկ ակտիվների՝ արտադրական պա-



շարները (առանց չօգտագործված մասի), դեբիտորական պարտքերը (առանց կասկածելի պարտքերի), պատրաստի արտադրանքը և ապրանքների մնացորդները (առանց չիրացված մասի),

գ) միջին ռիսկով ներդրվող ընթացիկ ակտիվների՝ արագամաշ առարկաները, անավարտ արտադրությունը և գալիք ժամանակաշրջանի ծախսերը,

դ) բարձր ռիսկով ներդրվող ընթացիկ ակտիվների՝ կասկածելի դեբիտորական պարտքերը, չօգտագործված արտադրական պաշարները, չիրացված պատրաստի արտադրանքն ու ապրանքները:

7. *Նյութաառարկայական բնույթից կախված՝*

- աշխատանքի առարկաների,
- պատրաստի արտադրանքի,
- ապրանքների,
- դրամական միջոցների,
- դեբիտորական պարտքերի տեսքով:

Տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրությունն անմիջական կախվածության մեջ է գտնվում այն բանից, թե ինչ արագությամբ են ընթացիկ ակտիվները ներդրվում արտադրությունում և շրջանառության ոլորտում, իսկ վերջնական արդյունքում՝ պատրաստի արտադրանքն ու ապրանքներն իրացման հետևանքով վերածվում դրամական միջոցների: Ընթացիկ ակտիվների շրջապտույտում գտնվելու տևողության վրա ազդում են արտաքին և ներքին գործոններ: Արտաքին ազդող գործոնների թվին են դասվում՝ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը, նրա ճյուղային պատկանելիությունը, գործունեության ծավալները, տվյալ երկրի տնտեսական իրավիճակը և այլն:

Ներքին ազդող գործոններից են՝ տնտեսավարող սուբյեկտի գնային քաղաքականությունը, տնտեսական միջոցների (ակտիվների) կառուցվածքը, պաշարների գնահատման մեթոդիկան և այլն:

Նշված գործոններից հատկապես առանձնահատուկ տեղն ունեն ներքին ազդող գործոնները, որոնց միջոցով գնահատվում և հաշվարկվում են ընթացիկ ակտիվների գծով նորմատիվները, ինչպես նաև այդ ակտիվների օգտագործման ցուցանիշների համակարգը:

Իր էությամբ վերարտադրական գործունեությունում[1] ընթացիկ ակտիվների դրամական ձևը կատարում է առանձնահատուկ դեր և դա դրսևորվում է նրանում, որ ի տարբերություն մյուս ֆունկցիոնալ ձևերի,

[1] Բաղանյան Լ. Կարճաժամկետ ֆինանսական կանխատեսումը արտադրական կազմակերպությունում, Երևան, 2000, էջ 132:

հենց դրամական ձևն է ապահովում ինչպես տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները միմյանց միջև, այնպես էլ բյուջեի, սոցիալական մարմինների, վարկային համակարգի աշխատողների և այլ կազմակերպությունների հետ ունեցած փոխհարաբերությունները: Հենց դրամական ձևում գտնվող ակտիվներով է կատարվում միջոցների հետագա բաշխումն ու վերաբաշխումը նաև ներտնտեսական կարիքների ու սպառման պահանջների բավարարման նպատակով: Ասենք նաև, որ չնայած ազատ դրամական միջոցների բաժինն ընդհանուր ընթացիկ ակտիվներում կազմում է 5 – 6%, սակայն ներկայիս դեռ չձևավորված ու կանոնակարգված շուկայական հարաբերությունների պայմաններում էապես մեծացել է դրանց ծավալն ու դերը: Տնտեսավարող սուբյեկտների ազատ դրամական միջոցների գոյացումը հիմնականում հետևանք է ընթացիկ ակտիվների դանդաղ շրջապտույտի՝ հատկապես միջոցների ստացման և դրանց ծախսման ժամկետների անհամապատասխանելության: Բանն այն է, որ արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններում ընթացիկ ակտիվները դրսևորվում են որոշակի կազմով ու կառուցվածքով և որոնք ընդհանուր տեսքով ցույց են տրվում հաշվային պլանում, ինչպես նաև հաշվապահական հաշվեկշռում: Ոչստի ցանկացած կազմակերպության արտադրատնտեսական ծրագրի անխափան կատարման համար կարևոր է ոչ միայն նրա ունեցած ընթացիկ ակտիվների ծավալը, այլև դրանց կառուցվածքն ու առկա ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների նվազագույն մնացորդը: Ակտիվների և դրանց կազմավորման աղբյուրների մեծությունը պետք է լինի օպտիմալ և բխի արտադրատնտեսական ծրագրում ներառված չափումներից, իսկ դա հնարավոր է ապահովել միայն ճիշտ պլանավորման ու նորմավորման միջոցով: Միկրոմակարդակով ընթացիկ ակտիվների պահանջի պլանավորումը ֆինանսական պլանավորման կարևորագույն բնագավառներից մեկն է, որը պետք է գտնվի տնտեսավարող սուբյեկտների ու պետական համապատասխան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում:

## 2.2.2. Ընթացիկ ակտիվների կազմավորման աղբյուրները և նորմավորվող ընթացիկ ակտիվների պահանջի հաշվարկման մեթոդիկան

Տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ ակտիվների կազմավորման համակարգը իր էությամբ ազդեցություն է գործում ոչ միայն դրանց օգտագործման արդյունավետության, այլ նաև շրջապտույտների արագության կամ մեկ պտույտի տևողության վրա: Եթե տնտեսավարող սուբյեկտն ունի ընթացիկ ակտիվների ավելցուկ, կնշանակի, որ այդ մասն անգործության է մատնված, և դրա յուրաքանչյուր միավորը եկամուտ չի բերում նրան: Միաժամանակ անհրաժեշտ չափից պակաս ընթացիկ ակտիվներ ունենալու դեպքում, արտադրական գործընթացը խափանվում է: Այստեղից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի արտադրությունը և տնտեսական գործունեությունն անխափան կարգավորելու համար իր տրամադրության տակ պետք է ունենա անհրաժեշտ չափով ընթացիկ ակտիվներ: Դրա համար տնտեսավարող սուբյեկտը պետք է ապահովված լինի սեփական կապիտալով, բայց քանի որ գործում է մրցակցություն, ուստի ընթացիկ ակտիվների գծով պահանջմունքն անընդհատ փոխվում է, և միայն իր սեփական միջոցների աղբյուրների հաշվին գործնականում անհնար է այդ պահանջմունքների բավարարումը: Եվ ահա այստեղ օգնության է գալիս փոխառու կապիտալը՝ հիմնականում երկարաժամկետ, կարճաժամկետ վարկերի ու փոխառությունների տեսքով: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում փոխառու կապիտալի օգտագործման արդյունավետությունն ավելի բարձր է լինում, քան սեփական կապիտալինը: Այդ իսկ պատճառով էլ ընթացիկ ակտիվների կազմավորման գործընթացի կառավարման կարևորագույն խնդիր է համարվում ներգրավվող փոխառու կապիտալի արդյունավետ օգտագործումն ապահովելը:

Ընթացիկ ակտիվների կազմավորման աղբյուրների կառուցվածքում ներառվում են՝

- սեփական աղբյուրները (կանոնադրական, լրացուցիչ, պահուստային կապիտալները, չբաշխված շահույթը, վերագնահատումից տարբերությունները և այլն),
- փոխառու աղբյուրները (բանկերի երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը, երկարաժամկետ և կարճաժամկետ փոխառությունները և այլն),
- լրացուցիչ ներգրավվող աղբյուրները (կրեդիտորական պարտքերը կամ կարճաժամկետ պարտավորությունները):

Որպես կանոն տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ ակտիվների գծով նվազագույն պահանջմունքի բավարարումը իրականացվում է ի հաշիվ սեփական աղբյուրների (սեփական կապիտալի): Սակայն օբյեկտիվ մի շարք պատճառներից (արժեզրկում, արտադրության ծավալի աճ, հաճախորդների հաշիվներում վճարումների ձգձգում և այլն) ելնելով, տնտեսավարող սուբյեկտների մոտ ընթացիկ ակտիվների գծով առաջանում են ժամանակավոր լրացուցիչ պահանջներ: Նման դեպքերում տղն-

տեսական գործունեության ֆինանսական ապահովվածության նպատակով անհրաժեշտություն է առաջանում ներգրավել փոխառու միջոցներ՝ վարկերի, փոխառությունների, ինվեստիցիաների (երկարատև ներդրումների) տեսքով:

Տնտեսավարող սուբյեկտի ընթացիկ ակտիվների պահանջմունքի մեծության վրա ազդում են բազմաթիվ գործոններ[1], այդ թվում՝

- արտադրության ծավալը և իրացումը,
- գործարարության տեսակը (տնտեսավարող սուբյեկտի գործունեության բնույթը),
- գործունեության (գործարարության) ծավալները,
- արտադրական փուլի (ցիկլի) տևողությունը,
- ընդհանուր կապիտալի կառուցվածքը,
- հաշվառման քաղաքականությունը և հաշվարկների իրականացման համակարգը,
- տնտեսական գործունեության վարկավորման պայմանները և կիրառման պրակտիկան (փորձը),
- նյութատեխնիկական մատակարարման մակարդակը,
- օգտագործվող նյութերի տեսակները և կառուցվածքը,
- արտադրության ծավալների և արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ածի տեմպերը,
- ղեկավար անձնակազմի աշխատանքային հմտությունը և այլն:

Ընդհանուր առմամբ, ընթացիկ ակտիվների պահանջի որոշումը տընտեսավարող սուբյեկտներում իրականացվում է նորմավորման գործընթացի հիման վրա, այսինքն՝ սահմանվում են դրանց գծով նորմատիվներ: Նորմավորման նպատակն է՝ ելնելով արտադրության ու շրջանառության ոլորտների գործընթացի կազմակերպման ժամկետից, որոշել ընթացիկ ակտիվների օգտագործման չափաքանակը (լիմիտը): Շուկայական տընտեսավարման պայմաններում հատկապես գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և ֆերմերային տնտեսությունները հենց իրենք պետք է կարողանան որոշել, թե որքան նորմավորվող նյութական ընթացիկ ակտիվներ կարող են ձեռք բերել՝ ելնելով իրենց տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցների գումարի չափից: Ընթացիկ ակտիվների պահանջմունքի որոշումը յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի համար ունի խիստ կարևոր նշանակություն նաև այն առումով, որ սահմանվում են նորմատիվներ, և կատարվող ծախսումներն էլ կատարվում են դրանց հիման վրա: Հատկապես սեփական ընթացիկ ակտիվներում նորմավորվող նյութական ընթացիկ ակտիվների պահանջմունքների որոշումն անհրաժեշտ է ֆինանսական պլանի կազմման ժամանակ: Այդ առումով էլ նորմատիվների մեծությունը չի կարող համարվել հաստատուն, քանի որ սեփական ընթացիկ ակտիվների չափը կախված է արտադրության ծավալից, մատակարարման և վաճառահանման պայմաններից, արտադրվող արտադրանքի տեսականուց (ասորտիմենտից), կիրառվող հաշվարկների ձևերից:

[1] Шеремет А.Д., Сайфулин Р.С. Финансы предприятий. М.,1999,с.184.



Սեփական ընթացիկ ակտիվներում տնտեսավարող սուբյեկտների պաշարների գծով պահանջի հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ այդ ակտիվներն օգտագործվում են ոչ միայն հիմնական արտադրության արտադրական ծրագրի կատարման, այլ նաև օժանդակ, սպասարկող արտադրությունների կարիքների համար, որոնք ինքնուրույն հաշվեկշիռ չունեն, իսկ գործնականում ավելի հաճախ սեփական ընթացիկ ակտիվներում պաշարների պահանջը հաշվարկվում է միայն հիմնական արտադրական գործունեության համար և դրանով իսկ որոշ ոլորտներ դուրս են մնում:

Ընթացիկ ակտիվների նորմավորումն իրականացվում է դրամական արտահայտությամբ, որի հիմքում ընկած է լինում պլանավորվող ժամանակաշրջանում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման համար նախատեսված ծախսերի նախահաշիվը:

Նորմավորման գործընթացում սահմանվում են մասնակի և ընդհանրացնող նորմատիվներ: Այդ գործընթացը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից, այսինքն՝ մշակվում են նորմավորվող նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի գծով պաշարների նորմաներ: Վերջինս հարաբերական մեծություն է և հաշվարկվում է ընդհանուր պաշարի նկատմամբ: Այնուհետև, ելնելով օգտագործվող պաշարների և ապրանքանյութական արժեքների տվյալ տեսակի ծախսի նորմաներից, որոշվում է ընթացիկ ակտիվների գումարի այն չափը, որն անհրաժեշտ է դրանց յուրաքանչյուր տեսակի գծով նորմավորվող պաշարների ստեղծման համար: Դրանով իսկ որոշվում են մասնակի նորմատիվները, որոնց հիման վրա էլ հաշվարկվում են ընդհանրացնող նորմատիվները: Ավելի ամփոփ առումով, ընթացիկ ակտիվների նորմատիվը արժեքային արտահայտությամբ ապրանքանյութական պաշարների պլանավորվող այն նվազագույն չափն է, որն անհրաժեշտ է տնտեսավարող սուբյեկտին՝ վերարտադրության գործընթացի անընդհատ ապահովման համար:

Հաշվարկային գործընթացում օգտագործվում են ընթացիկ նյութական ակտիվների նորմատիվների որոշման հետևյալ երեք մեթոդները՝ անալի-

տիկ (վիճակագրա-վերլուծական), ուղղակի հաշվարկի և գործակցային:

Անալիտիկ մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ պլանավորվող ժամանակաշրջանում տնտեսավարող սուբյեկտի աշխատանքային պայմաններում չեն նախատեսվում էական փոփոխություններ՝ նախորդ ժամանակաշրջանի հետ համեմատած: Նման դեպքում ընթացիկ ակտիվների նորմատիվի հաշվարկն իրականացվում է՝ ելնելով նախորդ ժամանակաշրջանում արտադրության ծավալի աճի տեմպերի և նորմավորվող նյութական ընթացիկ ակտիվների չափի միջև եղած հարաբերակցությունից:

Ուղղակի հաշվարկի մեթոդի դեպքում նախօրոք հաշվարկվում է նորմավորվող ընթացիկ ակտիվի յուրաքանչյուրի գծով նախնական չափը, որից հետո էլ, դրանց հիման վրա, որոշվում է նորմատիվի ընդհանուր գումարը (արժեքային տեսքով):

Գործակցային մեթոդի դեպքում նոր նորմատիվի որոշման ժամանակ հաշվի են առնվում արտադրության, մատակարարման, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալների փոփոխությունները և ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագությունը:

Նշված մեթոդներից գործնականում ավելի հաճախակի օգտագործվում է ուղղակի հաշվարկի մեթոդը, որի առավելությունն այն է, որ հնարավորություն է ընձեռում էլ ավելի հստակ հաշվարկելու մասնակի և ընդհանրացնող նորմատիվներն ու կատարելու համապատասխան եզրահանգումներ: Ընթացիկ ակտիվներից մասնակի նորմատիվներով են բնութագրվում արտադրական բոլոր պաշարները՝ նյութերը, արագամաշ առարկաները, պատրաստի արտադրանքը, ինչպես նաև անավարտ արտադրությունը:

Տնտեսավարող սուբյեկտների սեփական նյութական ընթացիկ ակտիվների նորմատիվը[1] որոշվում է հետևյալ հիմնական ցուցանիշների հիման վրա՝

- արտադրության ծավալի և արտադրանքի իրացման,
- արտադրանքի արտադրության, դրա պահպանման և իրացման վրա կատարվող ծախսումների,
- ընթացիկ ակտիվներում պաշարների նորմաների (օրերով արտահայտված):

Սեփական նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի գծով նորմատիվի հաշվարկի ընդհանուր բանաձևն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

[1] Финансы. Под ред. проф. А.М. Ковалевой. М., 1999, с. 218.



$$Ն = \frac{Օ}{Տ} \times Օ_{ց}, \qquad (2.2.2.1)$$

որտեղ՝

Ն - սեփական նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի գծով նորմատիվն է,

Օ - տվյալ ժամանակաշրջանում նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի գծով ծախսի չափն է,

$Օ_{ց}$ - նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի ծախսի նորման է,

Տ - նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի օգտագործման տևողությունն է օրերով,

$\frac{Օ}{Տ}$ - նյութական ընթացիկ ակտիվներից յուրաքանչյուրի մեկօրյա ծախսն է:

Մեկօրյա ծախսը հաշվարկվում է թողարկվող համախառն կամ ապրանքային արտադրանքի վրա կատարված նյութական ծախսերը բաժանելով համապատասխան եռամսյակի օրերի (90) թվաքանակի վրա:

Ելնելով ընթացիկ ակտիվների առանձնահատկություններից՝ որոշենք դրանցից երեք տեսակների՝ *նյութերի*, *անավարտ արտադրության* և *պատրաստի արտադրանքի* նորմատիվները: Այսպես, սեփական ընթացիկ ակտիվներից նյութերի նորմատիվը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Ն_{ց} = Օ_{ց} \times Օ_{ց.օ}, \qquad (2.2.2.2)$$

որտեղ՝

$Ն_{ց}$ - նյութերի նորմատիվն է, որը ենթակա է որոշման,

$Օ_{ց}$ - նյութերի մեկօրյա ծախսն է՝ կատարված արտադրանքի արտադրության վրա,

$Օ_{ց.օ}$ - նյութերի առանձին տեսակների նորման է օրերով:

Եթե արտադրության գործընթացում մասնակցում են մի քանի տեսակի նյութեր, ապա դրանց գծով ծախսի միջին նորման կարելի է որոշել կշռված միջին թվաբանականի բանաձևով: Օրինակ, ասենք, տնտեսավարող սուբյեկտը եռամսյակի ընթացքում նախատեսում է արտադրանքի արտադրության վրա ծախսել 3 տեսակի նյութ.

1-ին տեսակի գծով՝ 5 մլն. դրամ,

2-րդ տեսակի գծով՝ 7 մլն. դրամ,

3-րդ տեսակի գծով՝ 4 մլն. դրամ:

Յուրաքանչյուր նյութի գծով եռամսյակում օգտագործման նորման, ըստ տարբեր ժամկետների, կազմել է՝

1-ին տեսակի գծով՝ 34,2 միավոր,
2-րդ տեսակի գծով՝ 16,8 միավոր,
3-րդ տեսակի գծով՝ 49,0 միավոր:

Ելակետային տվյալների հիման վրա, ըստ կշռված միջին թվաբանականի բանաձևի, նյութերի օգտագործման նորման միջին հաշվով կկազմի՝

$$Ծ_{ն.ն} = \frac{5 \times 34,2 + 7 \times 16,8 + 4 \times 49,0}{5 + 7 + 4} = \frac{484,6}{16} = 30,3 \text{ օր:}$$

Նյութերի մեկօրյա ծախսը կազմել է՝

$$Ծ = \frac{16 \text{ մլն դրամ}}{90} = 177,8 \text{ հազ. դրամ:}$$

Տեղադրելով հաշվարկված տվյալները բանաձևի (2.2.2.2) մեջ, կստանանք՝

$$Ն_ն = 177,8 \times 30,3 = 5387,3 \text{ հազ. դրամ:}$$

Ամավարտ արտադրության գծով սեփական ընթացիկ ակտիվների նորմատիվի հաշվարկման համար անհրաժեշտ է որոշել ապրանքային արտադրանքի արտադրության վրա կատարված ընթացիկ ակտիվների նորման: Այն որոշելու համար անհրաժեշտ է ելնել արտադրական փուլի տևողությունից (S) և նորմայից ավելի ծախսերի աճման գործակցից ($Գ_{ծ.ա.}$):

Ամավարտ արտադրության գծով ընթացիկ ակտիվների նորմատիվը ($Ն_{ամ.ա.}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ն_{ամ.ա.} = Ծ_{ա.ա.} \times \bar{S} \times Գ_{ծ.ա.}, \qquad (2.2.2.3)$$

որտեղ՝

$Ծ_{ա.ա.}$ - համախառն (ապրանքային) արտադրանքի արտադրության վրա մեկօրյա ծախսն է,

$\bar{S}$ - արտադրական փուլի (ցիկլի) միջին տևողությունն է օրերով,

$Գ_{ծ.ա.}$ - նորմայից ավելի ծախսերի աճման գործակիցն է ամավարտ արտադրությունում:

Այն տնտեսավարող սուբյեկտներում, որտեղ վերամշակման գործընթացի համար ծախսերը կատարվում են հավասարաչափ, ծախսերի աճման գործակիցը[1] որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{ծ.ա.} = \frac{\alpha + 0,5\beta}{\alpha + \beta}, \qquad (2.2.2.4)$$

[1] Шеремет А.Д., Сайфулин Р.С. Финансы предприятий. М., 1999, с.93.



որտեղ՝

α - արտադրության գործընթացի սկզբում միաժամանակյա կատարվող ծախսերն են,

β - մինչև պատրաստի արտադրանքի ստացումը կատարվող ծախսերն են:

Այսպես, եթե տնտեսավարող սուբյեկտը եռամսյակի համար պլանով նախատեսել է կատարել 58 մլն. դրամի ծախսեր, այդ թվում՝ եռամսյակի սկզբում միաժամանակյա կատարվող ծախսերը՝ 32 մլն. դրամ, իսկ հետագա կատարվող ծախսերը՝ 26 մլն. դրամ, ապա ծախսերի աճման գործակիցը հավասար կլինի՝

$$Գ_{ծ.ա.} = \frac{32 + 0,5 \times 26}{32 + 26} = \frac{45}{58} = 0,776 :$$

Եթե տնտեսավարող սուբյեկտի կողմից արտադրվող արտադրանքի վրա կատարվող մեկօրյա ծախսը եռամսյակում միջին հաշվով կազմում է 644 հազ. դրամ, իսկ արտադրական փուլի միջին տևողությունը 19 օր, ապա ամավարտ արտադրության գծով նորմատիվը, ըստ բանաձևի (2.2.2.3), հավասար կլինի՝

$$Ն_{ամ.ա.} = 644 \text{ հազ. դր.} \times 19 \times 0,776 = 9495,1 \text{ հազ. դրամ:}$$

Նման մեթոդով կարող ենք հաշվարկել արդյունաբերության, գյուղատնտեսության առանձին տնտեսավարող սուբյեկտների ամավարտ արտադրության գծով ընթացիկ ակտիվների նորմատիվները՝ ելնելով դրանց գործունեության բնույթից:

Պատրաստի արտադրանքի գծով ընթացիկ ակտիվների նորմատիվը որոշվում է պլանային ինքնարժեքով հաշվարկված ապրանքային արտադրանքի մեկօրյա ստացվածի և նյութական ընթացիկ ակտիվների նորմայի (օրերով) արտադրյալով: Վերջինս սահմանվում է արտադրության և առաքման գործընթացների բոլոր փուլերում:

Այսպես, եթե տնտեսավարող սուբյեկտը եռամսյակի համար պլանով նախատեսել է թողարկելու 270 մլն. դրամի ապրանքային արտադրանք, իսկ նյութական ընթացիկ ակտիվների նորման միջին հաշվով կազմել է 13,5 օր, ապա պատրաստի արտադրանքի նորմատիվը կկազմի՝

$$\frac{270 \text{ մլն. դրամ}}{90} \times 13,5 = 40,5 \text{ մլն. դրամ:}$$

Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտի պատրաստի արտադրանքի գծով նորմատիվը կազմել է 40.5 մլն. դրամ:

Ընթացիկ ակտիվների նորմատիվների հաշվարկումը գյուղատնտեսու-

թյան ոլորտում[1] առանձնանում է իր տեխնոլոգիական առանձնահատկություններով, և դրանք ուղղակի հաշվման դեպքում ելնում ենք պաշարներով առավելագույն ապահովման սկզբունքից: Պաշարների այս խմբում ներառվում են բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում օգտագործվող սերմերի, տնկանյութերի, աճեցվող և բտվող կենդանիների, անավարտ արտադրության և գալիք ժամանակաշրջանի ծախսերի համար նորմատիվները: Նշված նյութական ընթացիկ ակտիվների առանձին տեսակների գծով նորմատիվների հաշվարկման ժամանակ օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$Ն = Մ_{պլ} \times Ի_{պլ}, \qquad (2.2.2.5)$$

որտեղ՝

Ն - սեփական ընթացիկ ակտիվների նորմատիվն է պլանավորվող տարվա վերջում,

$Մ_{պլ}$ - նյութական ընթացիկ ակտիվների համապատասխան տեսակների (սերմերի, աճեցվող և բտվող կենդանիների, անավարտ արտադրությունում աշխատանքների ծավալի և այլնի) գծով պլանավորված մնացորդներն են, որոնք փոխանցվելու են հաջորդ տարի,

$Ի_{պլ}$ - միավորի (աշխատանքներ, ծառայություններ, կենդանի զանգվածի և այլն) պլանային ինքնարժեքն է կամ ձեռք բերման գինը:

Բանաձևի (2.2.2.5) հիման վրա հաշվարկվում են գյուղատնտեսության բնագավառում նորմավորվող ընթացիկ ակտիվների նորմատիվները:

## 2.2.3. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության և օգտագործման արդյունավետության հաշվարկման մեթոդիկան

Տնտեսավարող սուբյեկտների ընթացիկ ակտիվների շրջանառելիության գնահատման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝

1. ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) շրջանառելիության գործակիցը ($Գ_{շրջ.}$) արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{շրջ.} = \frac{ԻՁՀ}{\overline{ԸԱ}}, \qquad (2.2.3.1)$$

որտեղ՝

ԻՁՀ - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթն է (առանց անուղղակի հարկերի և հաստատագրված վճարների), հազ. դրամ,

[1] Финансы сельского хозяйства. Под ред. М.З. Пизенгольца. М., 1992, с.178.



$\overline{ԸԱ}$ - ընթացիկ ակտիվների միջին մեծությունն է հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջաններում (հազ. դրամ):

Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջաններում ընթացիկ ակտիվների կատարած պտույտների քվաքանակը: Որքան բարձր լինի պտույտների քվաքանակը, կնշանակի, որ տվյալ տնտեսավարող սուբյեկտի ընթացիկ ակտիվների մեկ միավորը (հազ. դրամ) ավելի շատ է բերել իրացումից զուտ հասույթ կամ, այլ կերպ, այդ գործակիցը բնութագրում է միջին հաշվով ընթացիկ ակտիվներին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի գումարի չափը (վերջինիս փոխարեն կարող ենք օգտագործել նաև արտադրանքի իրացման ծավալը):

2. Ընթացիկ ակտիվների մեկ պտույտի տևողությունը ($Պ_{տևող.}$) արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Պ_{տևող.} = \frac{\overline{ԸԱ}}{ԻՁՀ} (30, 90, 180, 360) \text{ օր}, \qquad (2.2.3.2)$$

կամ՝

$$Պ_{տևող.} = \frac{1}{Գ_{շրջ.}} (30, 90, 180, 360) \text{ օր}, \qquad (2.2.3.3)$$

որտեղ՝

30, 90, 180, 360-ը հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջանի տևողությունն է օրերով,

$Գ_{շրջ.}$ - ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցն է (պտույտներով)՝ հաշվարկված հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջանների համար:

Քանի որ այս ցուցանիշը համարվում է ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակցի հակադարձ մեծությունը, հետևաբար որքան փոքր լինի մեկ պտույտի տևողությունը, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը ավելի կարճ ժամանակահատվածում կարող է իրացումից ստանալ առավելագույն չափով հասույթ:

3. Ընթացիկ ակտիվների բեռնվածության գործակիցն ($Գ_{բեռն.}$) արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{բեռն.} = \frac{\overline{ԸԱ}}{ԻՁՀ}: \qquad (2.2.3.4)$$

Այս գործակիցը ցույց է տալիս մեկ միավոր (հազ. դրամ) իրացումից հասույթին ընկնող ընթացիկ ակտիվների միջին չափը: Որքան փոքր լինի

այս գործակիցը, կնշանակի, որ ընթացիկ ակտիվները, հիմնականում գտնվելով արտադրության ու շրջանառության ոլորտում, նպաստում են նոր արդյունքի (արտադրանք, ապրանքներ) ստացմանը, իսկ, որոնք էլ հետագայում իրացվելով՝ վերածվում են դրամական միջոցի:

Անհրաժեշտ է նշել, որ առևտրային կազմակերպությունները ընթացիկ ակտիվների շրջանառելիության ցուցանիշները հաշվարկելու ժամանակ իրացումից զուտ հասույթի փոխարեն օգտագործում են ապրանքների վաճառքի գները:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաշվարկվող շրջանառելիության ցուցանիշների իմաստն ավելի պարզ պատկերացնելու համար կազմենք ստորև բերվող աղյուսակը (2.2.3)՝ ըստ հավելված 1 և 2-ում բերված հավելվածների տվյալների:

Աղյուսակ 2.2.3

Ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) շրջանառելիության ցուցանիշները

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ ժամանակաշրջան (տարի) | Հաշվետու ժամանակաշրջան (տարի) | Շեղումը (+,-) | |
|---|---|---|---|---|
| | | | բացարձակ | հարաբերական % |
| 1 | 2 | 3 | 4 (ս.3 – ս. 2) | 5 (ս.4 : ս.2) |
| Ելակետային | | | | |
| 1.արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթ, հազ. դրամ | 517481 | 794709 | 277228 | 53,6 |
| 2.ընթացիկ ակտիվների միջին մնացորդը, հազ. դրամ | 204657 | 295822 | 91165 | 44,5 |
| Հաշվարկային | | | | |
| 3.շրջանառելիության գործակիցը, պտույտ (տող1 : տող 2) | 2,529 | 2,686 | 0,157 | 6,2 |
| 4.մեկ պտույտի տևողությունը, օրերով (տող 2 : տող 1 × օրերի թիվ) կամ (1: տող 3 × օրերի թիվ) | 142,37 | 134,0 | - 8,37 | - 5,9 |
| 5.ընթացիկ ակտիվների բեռնվածության գործակիցը (տող 2 : տող 1) | 0,395 | 0,372 | - 0,023 | - 5,8 |

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցը նախորդ տարվա 2,529 պտույտի փոխարեն կազմել է 2,686 պտույտ կամ մեկ պտույտի տևողությունը կազմել է 134 օր՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով մոտավորապես 8 օրով (134,0 – 142,37):



Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու տարիների ընթացքում ընթացիկ ակտիվների մեկ պտույտի տևողությունն այնքան էլ բարձր չէ, այսինքն՝ դա տնտեսավարող սուբյեկտի համար դրական ցուցանիշ է, և մեկ պտույտը հաշվետու տարում կազմում է 0,372 տարի: Տևողության բարձր լինելը արդյունք է անավարտ արտադրության, չիրացված արտադրանքի և դեբիտորական պարտքերի ավելացման: Այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է եղած պատրաստի արտադրանքը ժամանակին իրացնել, թեկուզ շուկայական գներից ցածր գներով, որպեսզի ստացված զուտ դրամական միջոցներն օգտագործվեն հետագա արտադրատնտեսական գործընթացի կարգավորման համար:

Ընթացիկ ակտիվների մեծությունը, ըստ տարիների, փոփոխության է ենթարկվում՝ կախված տնտեսավարող սուբյեկտի կազմակերպատնտեսական բնույթից: Այդ բացարձակ փոփոխությունը կարելի է հաշվարկել երկու եղանակով՝

1. $\pm \Delta ԸԱ = (\overline{ԸԱ})_1 - (\overline{ԸԱ})_0 \times Գ_{իա}$, (2.2.3.5)

որտեղ՝

$\pm \Delta ԸԱ$ - ընթացիկ ակտիվների ավելացման (+) կամ նվազեցման մեծությունն է (–),

$(\overline{ԸԱ})_1$ և $(\overline{ԸԱ})_0$ - համապատասխանաբար հաշվետու և նախորդ տարիների (ժամանակաշրջանների) ընթացիկ ակտիվների միջին մեծությունն է,

$Գ_{իա}$ - իրացումից զուտ հասույթի աճի գործակիցն է:

Տեղադրելով 2.2.3 աղյուսակից տվյալները (2.2.3.5) բանաձևի մեջ, կստանանք՝

$$\pm \Delta ԸԱ = 295822 - 204657 \times \frac{794709}{517481} = - 18476 \text{ հազ. դրամ:}$$

2. $\pm \Delta ԸԱ = (Պ_{տևող.1} - Պ_{տևող.0}) \times Ի_{հ.1}$, (2.2.3.6)

որտեղ՝

$Պ_{տևող.1}$ և $Պ_{տևող.0}$ - համապատասխանաբար հաշվետու և նախորդ տարիների (ժամանակաշրջանների) ընթացիկ ակտիվների մեկ պտույտի տևողությունն է, օրերով,

$Ի_{հ.1}$ - հաշվետու տարում մեկօրյա իրացումից զուտ հասույթի գումարի չափն է, հազ. դրամ:

Տեղադրելով աղյուսակից տվյալները բանաձևի (2.2.3.6) մեջ, կստանանք՝

$$\pm \Delta ԸԱ = (134,0 - 142,37) \times \frac{794709}{360 \text{ օր}} = - 18476 \text{ հազ. դրամ:}$$

Հաշվարկները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտի ընթացիկ ակտիվների շրջանառելիության աճման հետևանքով հաշվետու ժամանակաշրջանում (համեմատած նախորդի հետ) դրանց նվազեցում է կատարվել 18476 հազ. դրամով, այսինքն՝ ընթացիկ ակտիվներն արդյունավետ են օգտագործվել:

Արտադրանքի իրացումից զուտ հասույթի կամ արտադրանքի ծավալի մեծության հավելաճը, ի հաշիվ ընթացիկ ակտիվների շրջանառելիության փոփոխության հաշվարկելու համար, օգտագործենք տնտեսավարող սուբյեկտի իրացումից զուտ հասույթի (ԻՁՀ) կախվածությունը նրա գործունեության համար պահանջվող ընթացիկ ակտիվների (ԸԱ) փոփոխություններից: Այդ կախվածությունն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm \Delta \text{ԻՁՀ} = \pm \Delta \text{Գ}_{\text{շրջ.}} \times (\text{ԸԱ})_1, \qquad (2.2.3.7)$$

որտեղ՝

$\pm \Delta \text{Գ}_{\text{շրջ.}}$ - ընթացիկ ակտիվների պտույտների թվաքանակի փոփոխությունն է:

Քանի որ պտույտների թիվը (շրջանառելիության գործակիցը) հաշվարկվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար, ուստի ըստ դրա փոփոխության (2.2.3.7) բանաձևը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\pm \Delta \text{ԻՁՀ} = (\text{Գ}_{\text{շրջ.1}} - \text{Գ}_{\text{շրջ.0}}) \times (\text{ԸԱ})_1: \qquad (2.2.3.8)$$

Տեղադրելով 2.2.3 աղյուսակից տվյալները բանաձևի (2.2.3.7) մեջ, կստանանք՝

$$\pm \Delta \text{ԻՁՀ} = 0{,}157 \times 295822 = 46444 \text{ հազ. դրամ:}$$

Պարզվում է, որ ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) պտույտների ավելացման (0,157 պտույտ) հետևանքով իրացումից զուտ հասույթն աճում է 46444 հազ. դրամով՝ նախորդ ժամանակաշրջանի հետ համեմատած, և ըստ աղյուսակի, իրացումից զուտ հասույթի բացարձակ 277228 հազ. դրամով ավելացման դեպքում, այն կազմել է 16,8% (46444 : 277228,0 × 100%):

Միաժամանակ ընթացիկ ակտիվների շրջանառելիության փոփոխությունն ազդեցություն է ունենում նաև տնտեսավարող սուբյեկտի զուտ շահույթի ավելացման կամ նվազեցման ($\pm\Delta$ ԶՇ) վրա և այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm \Delta \text{ԶՇ} = (\text{ԶՇ})_0 \times \frac{\text{Գ}_{\text{շրջ.1}}}{\text{Գ}_{\text{շրջ.0}}} - (\text{ԶՇ})_0: \qquad (2.2.3.9)$$



Տեղադրելով 2.2.3 աղյուսակից և հավելված 2-ից համապատասխան տվյալները, կստանանք՝

$$\pm \Delta \text{ԶՇ} = 19484 \times \frac{2{,}686}{2{,}529} - 19484 = 20694 - 19484 = 1210 \text{ հազ. դրամ}$$

Պարզվում է, որ ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակցի 6,2% ավելացման հետևանքով հաշվետու ժամանակաշրջանում զուտ շահույթի գումարի չափը աճել է նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ 1210 հազ. դրամի չափով:

Ամփոփելով տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման վերաբերյալ վերոշարադրյալը, կարելի է ասել, որ ֆինանսական վերլուծություն իրականացնող յուրաքանչյուր ոք, օգտագործելով աշխատանքում բերված նյութը, կարող է ընդհանուր պատկերացում կազմել ֆինանսատնտեսական վիճակի, այդ թվում նաև ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվներով ապահովվածության մասին:

# Գլուխ 3

# Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը

## 3.1. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների ձևավորման և բաշխման մոդելը

Տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող արտադրական, ներդրումային, գործառնական, վաճառահանման, մատակարարման և ֆինանսական գործունեությունների տարբեր կողմերը վերջնական տեսքով՝ դրամական կամ արտարժույթային գնահատմամբ, արտահայտվում են ֆինանսական արդյունքների ցուցանիշների համակարգում: Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների առավել կարևոր ցուցանիշներն ավելի ընդհանրացված տեսքով արտացոլվում են «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում» (հավելված 2): Ֆինանսական արդյունքների ցուցանիշները բնութագրում են տնտեսավարող սուբյեկտի տնտեսավարման ընացարձակ արդյունավետությունը: Այդ ցուցանիշներից ամենահիմնականը շահույթի (եկամտի) կազմավորման ցուցանիշն է, որը շուկայական տնտեսության պայմաններում համարվում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական զարգացման հիմքը: Շահույթի գումարի չափի ավելացումը ֆինանսական ապահովվածության բազա է ստեղծում ինքնաֆինանսավորման, ընդլայնված վերարտադրության, աշխատանքային կոլեկտիվների սոցիալական և նյութական պահանջմունքների կարգավորման համար: Շահույթի հաշվին վճարվում է շահութահարկ, որը պետական բյուջեի եկամուտների կազմավորման հիմնական աղբյուրն է, միաժամանակ, ի հաշիվ շահույթի, մարվում են պարտքային պարտավորությունները բանկերին՝ ստացված վարկերի դիմաց, և ներդրողներին՝ ստացված փոխառությունների և ներդրումների դիմաց: Այսպիսով, շահույթը համարվում է ընդհանրացնող ցուցանիշ՝ տնտեսավարող սուբյեկտի արտադրական, առևտրային և ֆինանսական գործունեության գնահատման համար: Այն բնութագրում է նրա գործունեության ակտիվությունը և ֆինանսական կայունությունը: Ըստ շահույթի՝ որոշվում են ներդրված միջոցների հատուցման մակարդակը և տվյալ տնտեսավարող սուբյեկտի ակտիվներում կատարված ներդրումների արդյունավետությունը:

Տնտեսավարող սուբյեկտի գործունեության ֆինանսական վերջնական արդյունքը հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) կամ հաշվետու կշռային շահույթի (վնասի) գումարն է, որից պետք է վճարվի պետական բյուջեի եկամուտ կազմավորող շահութահարկը:

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների ձևավորման և բաշխման մոդելը[1] շուկայական տնտեսության պայմաններում ընդգրկում է հաջորդական հաշվարկներ՝ հիմք ընդունելով «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը» (հավելված 2): Այդ հաշվարկների մեջ են մտնում՝

1. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գծով համախառն շահույթի (վնասի) որոշումը, որը հաշվարկվում է տնտեսավարող սուբյեկտի կողմից թողարկման գներով, որպես արտադրանքի, ապրանքների իրացումից ստացված զուտ հասույթի (առանց ԱԱՀ-ի, ակցիզների և այլ համանման հարկերի ու վճարների) և արտադրանքի ինքնարժեքում ներառվող ծախսերի տարբերություն: Համախառն շահույթը որոշելու ժամանակ արտադրանքի ինքնարժեքում ներառվում են ուղղակի նյութական ծախսերը, աշխատավարձի վճարման ուղղակի ծախսերը, ինչպես նաև անուղղակի ընդհանուր արտադրական ծախսերը: Համախառն շահույթը տնտեսավարող սուբյեկտի արտադրական ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետությունը բնորոշող ցուցանիշ է, այն հաշվարկվում է արտադրական ինքնարժեքի հիման վրա:

2. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացված շահույթի (վնասի) մեծության որոշումը, որը հաշվարկվում է համախառն շահույթի գումարից հանելով իրացված արտադրանքին, ապրանքներին բաժին ընկնող առևտրային և ընդհանուր տնտեսական ծախսերը: Նշենք, որ այդ հաշվարկն իրականացվում է հաշվապահական հաշվառման չափանիշների համաձայն: Իրացումից ստացված շահույթը (վնասը) տնտեսավարող սուբյեկտի հիմնական գործունեությունը բնորոշող տնտեսական ցուցանիշն է, այսինքն՝ այն արտադրության կազմակերպման և արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման (առևտրային) գործունեության ցուցանիշ է, այսինքն հաշվարկվում է լրիվ ինքնարժեքի հիման վրա:

3. Գործառնական գործունեությունից շահույթի (վնասի) որոշումը հիմնվում է գործառնական այլ գործունեությունից ստացված եկամուտների և նույն գործունեության հետևանքով պատճառված վնասների տվյալների

[1] Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа (учебное пособие). М., 1999, с. 41.

վրա: Այսպես «Գործառնական այլ եկամուտներ» հոդվածում (տող 070) ցույց են տրվում գործառնական գործունեությունից ստացված այն եկամուտները, որոնք չեն արտացոլվել «Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթ» հոդվածում (տող 010), իսկ «Գործառնական այլ ծախսեր» հոդվածում (տող 080) ցույց են տրվում գործառնական գործունեության հետ կապված այն ծախսերը, որոնք չեն արտացոլվել «Իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեք», «Իրացման (առևտրային) ծախսեր», «Վարչական և ընդհանուր այլ ծախսեր» հոդվածներում (տող 020, 040, 050): Գործառնական այլ գործունեությունից ստացված եկամուտը և պատճառված վնասը (ծախսերը) արդյունք են՝

- ընթացիկ այլ ակտիվների վաճառքի կամ օտարման,
- գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների,
- տույժերի ու տուգանքների վճարման,
- դուրս գրված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ու դրանց մարման,
- արժեքների պակասորդների, կորուստների և դրանց փոխհատուցման,
- պաշարների արժեքի փոփոխության,
- ընթացիկ ֆինանսական ներդրումների վերագնահատման,
- ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկման և դրա վերականգնման,
- ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատման,
- հետազոտության և զարգացման ծախսերի,
- արտադրական ծախսումների նորմալ մակարդակը գերազանցող ծախսերի,
- դատական ծախսերի,
- ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսերի,
- հիմնական միջոցների լուծարման ծախսերի,
- այլ եկամուտների և ծախսերի:

4. Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթը (վնասը) արդյունք է նմանատիպ գործունեությունից ստացվող եկամուտների և ծախսերի տարբերության, այդ թվում՝

- հիմնական միջոցների վաճառքի կամ օտարման,
- ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումների վաճառքի կամ օտարման,
- ընթացիկ ֆինանսական ներդրումների վաճառքի կամ օտարման,
- ոչ ընթացիկ այլ ակտիվների վաճառքի կամ օտարման,



- գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքի կամ օտարման,
- փոխարժեքային տարբերությունների,
- շնորհի (գրանտ) և անհատույց ստացվող ակտիվների,
- ֆինանսական ներդրումների,
- ֆինանսական վարձակալության,
- ոչ գործառնական այլ գործունեության:

5. Սովորական գործունեությունից շահույթը (վնասը) որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն 2, 3 և 4 կետերում նշված շահույթը (վնասը), այլ նաև ֆինանսական ծախսերը և կապակցված (համատեղ գործունեություն իրականացնող) կազմակերպությունների ոչ ընթացիկ ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս ստացված շահույթը (վնասը):

«Ֆինանսական ծախսեր» հոդվածում (տող 100) ցույց են տրվում ֆինանսական վերլուծության, վարկերի ու փոխառությունների հետ կապված ծախսերը, իսկ «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառվող ներդրումներից շահույթը (վնասը) հաշվարկվում է ոչ ընթացիկ ներդրումների տեսակների, այդ թվում՝ դուստր ընկերություններում, բաժնետիրացված (ասոցիացված) կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում:

6. Զուտ շահույթը (վնասը) հարկումից հետո (տող 170) որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել՝

ա) արտասովոր (աննախադեպ) դեպքերից շահույթի (վնասի) մեծությունը (տող 140), որն արդյունք է արտասովոր դեպքերից և տարբեր իրադարձություններից ապասվելիք եկամուտների ու ծախսերի տարբերության,

բ) զուտ շահույթը (վնասը) մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցման մեծությունը (տող 150), որտեղ ցույց է տրվում հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը («Շահութահարկի մասին» օրենքով նախատեսված են նվազեցումներ համախառն եկամտից հարկվող շահույթը որոշելիս) մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը կամ շահութահարկի գծով եկամտի (փոխհատուցման) ավելացումը,

գ) շահութահարկի գծով ծախսի մեծությունը (տող 160), որտեղ ցույց է տրվում շահութահարկի գծով ծախսը, որը կազմված է ընթացիկ և հետաձգված հարկերի գծով ծախսերից:

Զուտ շահույթի (վնասի) մեծությունը հաշվարկելու համար բավական է տնտեսավարող սուբյեկտի նորմալ գործունեությունից (հաշվետու ժամանակաշրջանի) ստացված շահույթի (վնասի) արդյունքին գումարել կամ

դրանից հանել արտասովոր դեպքերից համապատասխանաբար ստացված շահույթը կամ պատճառված վնասը:

Գծապատկերի տեսքով (3.1.1) ներկայացնենք, թե ինչ հաջորդականությամբ են ձևավորվում տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական արդյունքները:

Տնտեսավարող սուբյեկտների եկամուտների կազմավորման ցուցանիշների հաշվարկներում կարևորագույն պահ է համարվում արտադրանքի, ապրանքների իրացման շրջանառության որոշումը: Հատկապես արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացված զուտ հասույթը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի արտադրական կամ գործառնական փուլի (ցիկլի) ավարտը, ըստ որի էլ պետք է այդ հասույթի գումարից հանել նախօրոք կատարված բոլոր տեսակի ծախսերը:

Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալի փոփոխություններն առավել զգալի ազդեցություն են ունենում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ֆինանսական ցուցանիշների վրա: Այդ առումով էլ տնտեսավարող սուբյեկտի համապատասխան ծառայության աշխատակիցները պետք է ամենօրյա օպերատիվ հսկողություն իրականացնեն արտադրական ու իրացման ողջ գործընթացի վրա՝ չթույլատրելով անօրինականություններ:

Տնտեսավարման նոր հարաբերությունների պայմաններում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ֆինանսական ցուցանիշների տնտեսական վերլուծության համար, անկախ սեփականության ձևից, խիստ կարևոր պայման է համարվում շահույթի (եկամտի) ձևավորմամբ հիմնավորված տնտեսական մեխանիզմի մոդելի հաստատումը: Այն արտահայտում է ազատ շուկայի պայմաններում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտներին հատուկ՝ տնտեսական գործունեության նպատակների, ֆինանսական արդյունքների ցուցանիշների, հաշվետու ժամանակաշրջանի շահույթի (եկամտի) ձևավորման ու բաշխման գործընթացների և հարկային քաղաքականության համակարգի միասնականությունը:






Գծ. 3.1.1. Ֆինանսական արդյունքների ձևավորման և բաշխման մոդելը

## 3.2. Շահույթի ցուցանիշների մակարդակի, դինամիկայի և կառուցվածքի վերլուծությունը

Տնտեսավարող սուբյեկտի շահույթի ցուցանիշների մակարդակի, դրանց դինամիկայի գնահատման և վերլուծության համար կազմվում է ամփոփ աղյուսակ «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության» (հավելված 2) տվյալների հիման վրա, որում ներառվում են տարբեր գործունեություններից ստացվող շահույթի բացարձակ մեծությունները, այդ թվում՝ համախառն շահույթը, իրացումից շահույթը, գործառնական գործունեությունից շահույթը, սովորական գործունեությունից շահույթը, արտասովոր դեպքերից շահույթը՝ զուտ շահույթը՝ մինչև հարկումը և հարկումից հետո:

Շահույթի (վնասի) մակարդակը և դինամիկան բնորոշող ցուցանիշների մասին ավելի հստակ պատկերացում ունենալու համար կազմենք աղյուսակ (3.2.1): Աղյուսակի տվյալներից հետևում է, որ հաշվետու ժամանակաշրջանում տնտեսավարող սուբյեկտի ստացած զուտ շահույթը շահութահարկի վճարումից հետո ավելացել է 66911 հազ. դրամով կամ 343,4%-ով, որը բավականին բարձր արդյունք է:

Ֆինանսական արդյունքների դինամիկայում կարող ենք առանձնացնել հետևյալ փոփոխությունները: Այսպես, իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գծով ստացված համախառն շահույթն ավելի արագ է աճել՝ 310,5%, քան իրացումից շահույթի մեծությունը՝ 295,8%: Դա արդյունք է իրացված արտադրանքի, ապրանքների լրիվ ինքնարժեքում ներառված առևտրային և վարչական ծախսերի հարաբերական ավելացման՝ 514,5%-ով: Զուտ շահույթը (հարկումից հետո) աճել է ավելի արագ՝ 343,4%, քան արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը՝ 295,8%, և գործառնական գործունեությունից ստացվող շահույթը՝ 280,5%, որը վկայում է այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթի ավելացման՝ 1480 անգամ:

Եթե շահույթի գծով բացարձակ և հարաբերական փոփոխությունները (գնահատումը) կատարվում է մի քանի ժամանակաշրջանների (տարիների) կտրվածքով, ապա կարող ենք օգտագործել վիճակագրության ընդհանուր տեսությունից հայտնի դինամիկայի վերլուծության ցուցանիշները՝ բացարձակ հավելաճը, աճի տեմպը, հավելաճի տեմպը, աճի միջին տեմպը, հավելաճի միջին տեմպը (բազիսային և շղթայական եղանակներով):



Աղյուսակ 3.2.1

Շահույթի (վնասի) մակարդակի և դինամիկայի ցուցանիշները

Հազ. դրամ

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին | Շեղումը (+,-) | |
|---|---|---|---|---|
| | | | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4(u3-u2) | 5(u4:u2) |
| 1. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթ | 517481 | 794709 | 277228 | 53,6 |
| 2. Իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեք | (480486) | (642828) | 162342 | 33,8 |
| 3. Համախառն շահույթ (վնաս) | 36995 | 151881 | 114886 | 310,5 |
| 4. Առևտրային և վարչական ծախսեր | (2489) | (15295) | 12806 | 514,5 |
| 5. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթ (վնաս) | 34506 | 136586 | 102080 | 295,8 |
| 6. Գործառնական գործունեության շահույթ (վնաս) | 26778 | 101890 | 75112 | 280,5 |
| 7. Ֆինանսական ծախսեր | - | - | - | - |
| 8. Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս) | 12 | 17777 | 17765 | 1480 անգամ |
| 9. Սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթ (վնաս) | 26790 | 119667 | 92877 | 346,7 |
| 10. Զուտ շահույթ (վնաս) հարկումից (շահութահարկի գծով) հետո | 19484 | 86395 | 66911 | 343,4 |

Շահույթի մակարդակի գծով այդ ցուցանիշները հաշվարկվում են հետևյալ բանաձևերով՝

- բացարձակ հավելաճը.

ա) բազիսային եղանակով ($\pm\Delta Շ_{բ.}$)՝

$$\pm\Delta Շ_{բ.} = Շ_i - Շ_0 \qquad (i = 1,2,\dots,n), \qquad (3.2.1)$$

բ) շղթայական եղանակով ($\pm\Delta Շ_{շղթ.}$)՝

$$\pm\Delta Շ_{շղթ.} = Շ_i - Շ_{i-1} \qquad (i = 1,2,\dots,n), \qquad (3.2.2)$$

որտեղ՝

$Շ_0$-ն բազիսային (համեմատելի) տարվա (ժամանակաշրջանի) շահույթի մակարդակն է,

$C_i$-ն i-րդ (համեմատվող) տարիների (ժամանակաշրջանների) շահույթի մակարդակն է,

$C_{i-1}$-ը (i-1)-րդ կամ նախորդ տարվա (ժամանակաշրջանի) շահույթի մակարադակն է:

- Աճի տեմպը

ա) բազիսային եղանակով ($K_{բ.}$)՝

$$K_{բ.} = \frac{C_i}{C_0} \times 100\% \qquad (i = 1,2,\ldots,n), \qquad (3.2.3)$$

բ) շղթայական եղանակով ($K_{շղթ.}$)՝

$$K_{շղթ.} = \frac{C_i}{C_{i-1}} \times 100\% \qquad (i = 1,2,\ldots,n), \qquad (3.2.4)$$

Հավելաճի տեմպը.

ա) բազիսային եղանակով ($\pm T_{բ.}$)՝

$$\pm T_{բ.} = \frac{C_i - C_0}{C_0} \times 100\% = \frac{\pm \Delta C_{բ.}}{C_0} \times 100\% = (K_{բ.} - 1) \times 100\%, \qquad (3.2.5)$$

բ) շղթայական եղանակով ($\pm T_{շղթ.}$)՝

$$\pm T_{շղթ.} = \frac{C_i - C_{i-1}}{C_{i-1}} \times 100\% = \frac{\pm \Delta C_{շղթ.}}{C_{i-1}} \times 100\% = (K_{շղթ.} - 1) \times 100\%: \qquad (3.2.6)$$

- Աճի միջին տեմպը.

ա) բազիսային եղանակով ($\overline{K}_{բ.}$)՝

$$\overline{K}_{բ.} = \sqrt[n-1]{\frac{C_n}{C_0}} \times 100\%, \qquad (3.2.7)$$

որտեղ՝

$C_n$-ը n-րդ տարվա (ժամանակաշրջանի) շահույթի մակարդակն է,

(n - 1)-ը տարիների (ժամանակաշրջանների) թվաքանակն է 1-ով պակաս,

բ) շղթայական եղանակով ($\overline{K}_{շղթ.}$)՝



$$\overline{K}_{շղթ.} = \sqrt[n]{K_1 \times K_2 \times \ldots \times K_n} \times 100\% = \sqrt[n]{\frac{C_1}{C_0} \times \frac{C_2}{C_1} \times \ldots \times \frac{C_n}{C_{n-1}}} \times 100\%: \qquad (3.2.8)$$

Անհրաժեշտ է նշել, որ աճի միջին տեմպի մեծությունները բազիսային և շղթայական եղանակներով հաշվարկելիս ստացվում է միևնույն արդյունքը:

- Հավելաճի միջին տեմպը.

ա) բազիսային եղանակով ($\pm \overline{T}_{բ.}$)՝

$$\pm \overline{T}_{բ.} = \overline{K}_{բ.} - 100\%, \qquad (3.2.9)$$

բ) շղթայական եղանակով ($\pm \overline{T}_{շղթ.}$)՝

$$\pm \overline{T}_{շղթ.} = \overline{K}_{շղթ.} - 100\%: \qquad (3.2.10)$$

Շահույթի գծով, բացի բացարձակ և հարաբերական փոփոխությունների գնահատումից, կարևոր նշանակություն ունի նաև հաշվարկել, թե նախորդ և հաշվետու տարիներին (ժամանակաշրջաններում) շահույթի կառուցվածքում[1] տոկոսային ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել՝ հիմք ընդունելով սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթը: Կազմենք հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ 3.2.2

Շահույթի կառուցվածքը %

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին | Շեղումը (+,-) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4(u3-u2) |
| Սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթ (վնաս), %, այդ թվում՝ | 100,0 | 100,0 | - |
| - համախառն շահույթ | 138,1 | 126,9 | -11,2 |
| - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթ | 128,8 | 114,1 | -14,7 |
| - գործառնական գործունեությունից շահույթ | 99,9 | 85,1 | -14,8 |
| - այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ | 0,1 | 14,9 | 14,8 |
| - արտասովոր դեպքերից շահույթ | - | - | - |
| - զուտ շահույթ հարկումից հետո | 72,7 | 72,2 | -0,5 |

[1] Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа (учебное пособие), с. 47.

Ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, հաշվետու ժամանակաշրջանում՝ համեմատած նախորդի հետ, շահույթի կառուցվածքում տեղի են ունեցել ոչ դրական փոփոխություններ: Համապատասխանաբար 11,2; 14,7; 14,8%-ներով նվազել են համախառն շահույթի, արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից և գործառնական գործունեությունից ստացվող շահույթի մեծությունները: Համարյա նույն մակարդակի վրա է մնացել տնտեսավարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող զուտ շահույթը՝ շահութահարկից հետո: Միայն այլ ոչ գործառնական շահույթի գծով է, որ ավելացում է կատարվել 14,8%-ի չափով:

Աղյուսակի տվյալներից պարզվում է նաև, որ ուսումնասիրվող տարիներին սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից ստացված շահույթի նկատմամբ ամենամեծ աճման միտումը համախառն շահույթի գծով է՝ համապատասխանաբար 138,1% և 126,9%, չնայած որ հաշվետու տարում համախառն շահույթը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 11,2%-ով:

## 3.3. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի գործոնային վերլուծությունը

Հաշվետու ժամանակաշրջանի շահույթն արտահայտում է տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության ընդհանուր ֆինանսական արդյունքը: Դրա կազմում իր կարևոր ու ամենահիմնական տեղն ունի արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը, որի մեծությունը կապված է արտադրանքի արտադրության և դրա իրացման գործընթացի հետ: Այդ իսկ պատճառով էլ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի համար կարևոր նշանակություն ունի, թե ինչպիսի գործոններ են ազդում իրացումից շահույթի գումարի ավելացման վրա կամ ինչ պատճառներով է շահույթի նվազեցում կատարվում:

Ըստ գործող չափանիշների («Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»), արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը (վնասը) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԻՇ = ԻՋՅ – (ԱԻ + ԱԾ + ՎԾ), \qquad (3.3.1)$$

որտեղ՝



ԻՋՅ - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթն է,

ԱԻ - իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեքն է,

ԱԾ - առևտրային (իրացման) ծախսերն են,

ՎԾ - վարչական ծախսերն են:

Բանաձևում փակագծի արտահայտությունը արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքն է:

Արտադրանքի իրացումից շահույթի աճի կարգավորման կարևորագույն պայմաններից են՝ արտադրվող արտադրանքի ծավալի ավելացումը, արտադրանքի արտադրության և ապրանքափոխադրման ռիթմիկության ապահովումը, ինքնարժեքի իջեցումը, որակի և մրցունակության բարձրացումը, պահեստների ապահովվածությունը անհրաժեշտ քանակի պաշարներով, գնորդ-մատակարար փոխհարաբերություններում արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) դիմաց հաշվարկների ժամանակակից ձևերի (ֆակտորինգ, օվերդրաֆտ և այլն) կիրառումը:

Անհրաժեշտ է նշել, որ հաշվետու տարում (ժամանակաշրջանում) արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման գործընթացում փաստացի ստացված շահույթի մեծության վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններ, որոնք նպաստում են բացարձակ և հարաբերական շեղումների ձևավորմանը՝ համեմատվող տարիների (ժամանակաշրջանների) շահույթի նկատմամբ: Դրա համար էլ վերլուծություն կատարելիս կարևոր է տալ ոչ միայն արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի գծով պլանի կատարման և դինամիկայի ընդհանուր գնահատականը, այլ նաև բազմակողմանի ուսումնասիրել շահույթի վրա ազդող գործոնները, իսկ այնուհետև որոշել դրանցից յուրաքանչյուրի ազդեցության աստիճանը:

Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը բնութագրող հիմնական ցուցանիշները, ինչպես նաև դրանց դինամիկան որոշելու համար տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական պլանի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալների հիման վրա կազմենք աղյուսակ (3.3.1), որտեղ արտացոլվում են իրացումից զուտ հասույթը, լրիվ ինքնարժեքը, ֆինանսական արդյունքը (իրացումից շահույթ կամ վնաս), ինչպես նաև իրացվող արտադրանքի շահութաբերության մակարդակը և իրացումից շահույթի տեսակարար կշիռը:

Աղյուսակ 3.3.1

Իրացումից շահույթի գործոնային վերլուծությունը

Հազ. դրամ

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին | |
|---|---|---|---|
| | | փաստացի իրացումը նախորդ տարվա գներով | փաստացի |
| 1. Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթը | 517481 | 481222 | 794709 |
| 2. Լրիվ ինքնարժեքը, այդ թվում՝ | 482975 | 444346 | 658123 |
| - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեք | 480486 | 442055 | 642828 |
| - առևտրային ծախսեր | - | - | 1911 |
| - վարչական ծախսեր | 2489 | 2291 | 13384 |
| 3. Ֆինանսական արդյունքը | | | |
| ա) շահույթ (+) | 34506 | 36876 | 136586 |
| բ) վնաս (-) | - | - | - |
| 4. Իրացվող արտադրանքի, ապրանքների շահութաբերության մակարդակը, % (տող 3ա : տող 2 × 100) | 7,1 | 8,3 | 20,7 |
| 5. Իրացումից շահույթի տեսակարար կշիռը, % (տող 3ա : տող 1 × 100) | 6,7 | 7,7 | 17,2 |

Աղյուսակի հաշվարկային տվյալներից պարզվում է, որ հաշվետու տարում իրացումից զուտ հասույթը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 277228 հազ. դրամով (794709 - 517481) կամ 53,6%-ով (277228 : 517481 × 100%): Լրիվ ինքնարժեքը նույնպես ավելացել է 175148 հազ. դրամով (658123 - 482975) կամ 36,3%-ով (175148 : 482975 × 100%), այդ թվում՝ ի հաշիվ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների)՝ 162342 հազ. դրամով (642828 - 480486), առևտրային ծախսերի՝ 1911 հազ. դրամով (1911 - 0) և վարչական ծախսերի՝ 10895 հազ. դրամով (13384 - 2489): Վերջնական արդյունքում՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ շահույթը նախորդ տարվա (ժամանակաշրջանի) համեմատությամբ ավելացել է 102080 հազ. դրամով (136586 - 34506):

Ստացված շահույթի մեծության վրա կարող են ազդել իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ծավալը (զուտ հասույթը), տեսականին ու կառուցվածքը, լրիվ ինքնարժեքը, իրացման (մեծածախ, շուկայական) գները:

Իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի և ստացվող շահույթի մեծության փոփոխությունների միջև կա ուղղակի համամասնական կախվածություն, այսինքն՝ որքան բարձր լինի իրացումից զուտ հասույթի գումարում շահույթի չափը կամ տեսակարար կշիռը, կնշանակի, որ տնտեսավարող սուբյեկտը արտադրում է շահութաբեր արտադրատեսակներ: Իսկ թե ինչպիսի ազդեցություն է գործում՝ իրացվող արտադրանքի ծավալը կամ իրացումից զուտ հասույթի գումարի չափը ստացվող շահույթի մեծության վրա, ներկայացնենք հետևյալ բանաձևի տեսքով՝

$$1.\ \pm\Delta(\text{ԻՇ})_1 = (\text{ԻՇ})_0 \times \text{Գ}_{\text{ԻՀՀ}} - (\text{ԻՇ})_0 = (\text{ԻՇ})_0 \times (\text{Գ}_{\text{ԻՀՀ}} - 1), \qquad (3.3.2)$$

որտեղ՝

$\pm\Delta(\text{ԻՇ})_1$ - իրացումից շահույթի հավելաճն է կամ նվազումը՝ ի հաշիվ իրացումից զուտ հասույթի փոփոխման,

$(\text{ԻՇ})_0$ - նախորդ ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) իրացումից ստացված շահույթն է,

$\text{Գ}_{\text{ԻՀՀ}}$ - իրացումից զուտ հասույթի գումարի փոփոխության գործակիցն է: Վերջինս արտահայտվում է հետևյալ հարաբերակցությամբ.

$$\text{Գ}_{\text{ԻՀՀ}} = \frac{(\text{ԻՀՀ})_{1,(\text{նժգ})}}{(\text{ԻՀՀ})_0}, \qquad (3.3.3)$$

որտեղ՝

(նժգ) - նախորդ ժամանակաշրջանի (տարվա) գներով,

$(\text{ԻՀՀ})_{1,(\text{նժգ})}$ - հաշվետու ժամանակաշրջանի (տարվա) իրացումից զուտ հասույթի գումարն է նախորդ ժամանակաշրջանի (տարվա) արտադրանքի, ապրանքների իրացման գներով,

$(\text{ԻՀՀ})_0$ - նախորդ ժամանակաշրջանի (տարվա) իրացումից զուտ հասույթի գումարի չափն է:

Տեղադրելով աղյուսակ 3.3.1-ից համապատասխան տվյալները բանաձևի (3.3.2) մեջ, կստանանք՝

$$\pm\Delta(\text{ԻՇ})_1 = 34506 \times \left(\frac{481222}{517481} - 1\right) = 34506 \times (0{,}9299 - 1) = -2419{,}0 \text{հազ.դրամ}:$$

Այսինքն՝ ի հաշիվ իրացումից զուտ հասույթի գումարի չափի փոփոխության (նախորդ ժամանակաշրջանի համադրելի գներով), արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթն իջել է 2419,0 հազ. դրամով:

(3.3.2) բանաձևի հիման վրա կարող ենք որոշել նաև իրացումից շահույթի մեծությունը՝ ի հաշիվ լրիվ ինքնարժեքի փոփոխության, այսինքն՝ գործակիցը կարտահայտվի հետևյալ հարաբերակցությամբ՝

$$Գ_{ԼԻ} = \frac{(ԼԻ)_{1,(ՆԺԳ)}}{(ԼԻ)_0}, \qquad (3.3.4)$$

որտեղ՝

$(ԼԻ)_{1,(ՆԺԳ)}$ - հաշվետու ժամանակաշրջանի (տարվա) փաստացի իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքն է նախորդ ժամանակաշրջանի (տարվա) համադրելի գներով,

$(ԼԻ)_0$ - նախորդ ժամանակաշրջանի (տարվա) իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքն է:

Այսինքն՝ (3.3.2) բանաձևը կարտահայտվի հետևյալ տեսքով՝

$$±Δ(ԻՇ)_1 = (ԻՇ)_0 × (Գ_{ԼԻ} - 1): \qquad (3.3.5)$$

Տեղադրելով աղյուսակ 3.3.1-ից համապատասխան տվյալները (3.3.5) բանաձևի մեջ, կստանանք՝

$$± Δ(ԻՇ)_1 = 34506 × \left(\frac{444346}{482975} - 1\right) = 34506 × (0,9200 - 1) = -2761,0 \text{հազ.դրամ}:$$

Կատարված հաշվարկից պարզվում է, որ, ի հաշիվ լրիվ ինքնարժեքի փոփոխության, հաշվետու ժամանակաշրջանում իրացումից շահույթը նվազել է 2761,0 հազ. դրամով:

Արտադրանքի, ապրանքների իրացումից շահույթի մեծության վրա ազդեցություն են ունենում նաև իրացվող արտադրանքի տեսականին և դրանց կառուցվածքային տեղաշարժերը: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ տարբեր արտադրատեսակների շահութաբերությունը միևնույն մակարդակով չի կարող լինել: Եթե իրացվող արտադրանքների, ապրանքների կազմում մեծ տեսակարար կշիռ ունի շահութաբեր տեսականին, կնշանակի՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից ստացվող շահույթի ավելացման միտում կա:

Թե իրացումից շահույթի վրա ինչպիսի ազդեցություն են ունենում իրացվող արտադրանքի, ապրանքների տեսականին և դրանց կառուցվածքային տեղաշարժերը, ներկայացնենք հետևյալ բանաձևերի տեսքով:



2ա. Ի հաշիվ փաստացի իրացված արտադրանքի զուտ հասույթի փոփոխման գործակցի՝

$$±Δ(ԻՇ)_1 = (ԻՇ)_{1,(ՆԺԳ)} - (ԻՇ)_0 × Գ_{ԶՀ}: \qquad (3.3.6)$$

2բ. Ի հաշիվ փաստացի իրացված արտադրանքի լրիվ ինքնարժեքի փոփոխման գործակցի՝

$$±Δ(ԻՇ)_2 = (ԻՇ)_{1,(ՆԺԳ)} - (ԻՇ)_0 × Գ_{ԼԻ}, \qquad (3.3.7)$$

որտեղ՝

$±Δ(ԻՇ)_2$ - արտադրանքի, ապրանքների տեսականու և դրանց կառուցվածքային տեղաշարժի հաշվով ստացված շահույթի հավելաճը կամ նվազումն է:

Տեղադրելով աղյուսակ 3.3.1-ից համապատասխան տվյալները, կըստանանք՝

$$2ա. \ ± Δ(ԻՇ)_1 = 36876 - 34506 × \frac{481222}{517481} = 4789 \text{հազ. դրամ}:$$

Այսինքն՝ ի հաշիվ փաստացի իրացված արտադրանքի (նախորդ տարվա գներով), զուտ հասույթի փոփոխման իրացումից շահույթի հավելաճը կազմել է 4789 հազ. դրամ:

$$2բ. \ ± Δ(ԻՇ)_2 = 36876 - 34506 × \frac{444346}{482975} = 5130 \text{ հազ. դրամ}:$$

Այսինքն՝ ի հաշիվ փաստացի իրացված արտադրանքի (նախորդ տարվա գներով), իրացումից շահույթի հավելաճը կազմել է 5130 հազ. դրամ:

Ինչպես հայտնի է, շահույթի և ինքնարժեքի մակարդակների միջև կա փոխկապվածություն, այսինքն՝ ինքնարժեքի իջեցումը, հավասար պայմաններում, բերում է շահույթի գումարի ավելացման: Հետևաբար, վերջինիս մեծության վրա զգալի ազդեցություն կարող է ունենալ իրացվող արտադրանքի, ապրանքների լրիվ ինքնարժեքի փոփոխությունը, այսինքն՝ երբ հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների գներով համեմատելի են դարձվում լրիվ ինքնարժեքները: Ասվածը ներկայացնենք բանաձևի տեսքով.

$$3. \ ±Δ(ԻՇ)_3 = (ԼԻ)_1 - (ԼԻ)_{1,(ՆԺԳ)}, \qquad (3.3.8)$$

որտեղ՝

$±Δ(ԻՇ)_3$ - իրացումից շահույթի մեծությունն է՝ ի հաշիվ իրացվող արտադրանքի, ապրանքների լրիվ ինքնարժեքների փոփոխության,

$(ԼԻ)_1$ - հաշվետու ժամանակաշրջանում (տարում) իրացվող արտա-

դրանքի, ապրանքների փաստացի լրիվ ինքնարժեքն է,

$(ԼԻ)_{1,(նժգ)}$ - հաշվետու ժամանակաշրջանի (տարվա) փաստացի իրացվող արտադրանքի, ապրանքների լրիվ ինքնարժեքն է՝ նախորդ ժամանակաշրջանի (տարվա) համադրելի գներով:

Ըստ աղյուսակ 3.3.1-ի տվյալների, հաշվետու տարվա վերջին իրացված արտադրանքի, ապրանքների փաստացի լրիվ ինքնարժեքը կազմել է 658123 հազ. դրամ, այսինքն՝ այդ թվերի համադրումից ստացվել է գերածախս 213777 հազ. դրամ գումարի չափով՝

$\pm\Delta\,(ԻՇ)_3 = 658123 - 444346 = 213777$ հազ. դրամ:

Այստեղից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի շահույթը պակասել է 213777 հազ. դրամով կամ լրիվ ինքնարժեքը ավելացել է 48,1%-ով (213777 : 444346 × 100%):

Կարևոր է նշել նաև, որ իրացումից շահույթը ուղղագծային կախվածության մեջ է գտնվում արտադրանքի, ապրանքների իրացման (մեծածախ, շուկայական) գների փոփոխությունից, քանի որ այդ շահույթն արդյունք է իրացումից զուտ հասույթի և լրիվ ինքնարժեքի գումարների տարբերության: Ավելի հստակ պատկերացնելու համար ներկայացնենք բանաձևի տեսքով՝

$$4.\ \pm\Delta\,(ԻՇ)_4 = (ԻՉՀ)_1 - (ԻՉՀ)_{1,(նժգ)}, \qquad (3.3.9)$$

որտեղ՝

$\pm\Delta\,(ԻՇ)_4$ - իրացումից շահույթի մեծությունն է՝ ի հաշիվ իրացման (մեծածախ, շուկայական) գների փոփոխության,

$(ԻՉՀ)_1$ - հաշվետու ժամանակաշրջանում (տարում) գործող գներով փաստացի իրացումից զուտ հասույթի գումարի չափն է,

$(ԻՉՀ)_{1,(նժգ)}$ - հաշվետու ժամանակաշրջանի (տարվա) իրացումից զուտ հասույթի գումարն է՝ նախորդ ժամանակաշրջանի (տարվա) արտադրանքի, ապրանքների իրացման գներով:

Տեղադրելով աղյուսակ 3.3.1-ից համապատասխան տվյալները բանաձևի մեջ, կստանանք՝

$\pm\Delta\,(ԻՇ)_4 = 794709 - 481222 = 313487$ հազ. դրամ:

Այսինքն՝ ի հաշիվ գների փոփոխության, իրացումից շահույթն ավելացել է 313487 հազ. դրամով կամ 65,1%-ով (313487 : 481222 × 100%):

Ընդհանրացված տեսքով՝ իրացումից շահույթի մեծությունն ըստ ազդող գործոնների կլինի հավասար՝

$$\pm\Delta\,ԻՇ = \pm\Delta\,(ԻՇ)_1\ \pm\Delta\,(ԻՇ)_2\ \pm\Delta\,(ԻՇ)_3\ \pm\Delta\,(ԻՇ)_4: \qquad (3.3.10)$$



Տեղադրելով հաշվարկված տվյալները (3.3.10) բանաձևի մեջ՝ կստանանք արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի մեծությունը՝

$\pm\Delta\,ԻՇ = -2419 + 4789 - 213777 + 313487 = 102080$ հազ. դրամ:

Եթե՝ հաշվետու ժամանակաշրջանում (տարում) տնտեսավարող սուբյեկտի արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալը կամ ստացված հասույթը վերահաշվարկված չէ նախորդ ժամանակաշրջանի (տարվա) ինքնարժեքով և իրացման (մեծածախ, շուկայական) գներով, ապա իրացումից շահույթի մեծության վրա գործոնային վերլուծությունը կարող ենք իրականացնել հետևյալ կերպ.

1. շահույթի մեծության վրա արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքի փոփոխության ազդեցությունն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm\Delta(ԻՇ)_1 = (ԻՇ)_0 \times \left[\frac{(ԼԻ)_1}{(ԼԻ)_0} - 1\right], \qquad (3.3.11)$$

$$\pm\Delta(ԻՇ)_1 = 34506 \times \left(\frac{444346}{482975} - 1\right) = 34506 \times (0{,}9200 - 1) = 12512\text{հազ.դրամ}:$$

Այսինքն՝ ի հաշիվ իրացումից զուտ հասույթի փոփոխության, իրացումից շահույթի մեծությունն ավելացել է 12512 հազ. դրամով:

2. Շահույթի մեծության վրա իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) տեսականու և դրանց կառուցվածքային տեղաշարժի ազդեցությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm\Delta(ԻՇ)_2 = (ԻՇ)_0 \times \left[\frac{(ԻՉՀ)_1}{(ԻՉՀ)_0} - \frac{(ԼԻ)_1}{(ԼԻ)_0}\right], \qquad (3.3.12)$$

$$\pm\Delta(ԻՇ)_2 = 34506 \times \left(\frac{794709}{517481} - \frac{658123}{482975}\right) = 34506 \times (1{,}5357 - 1{,}3626) =$$

$$= 5973\text{հազ.դրամ}:$$

Արդյունքում, կառուցվածքային տեղաշարժի հաշվին իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) շահույթն ավելացել է 5973 հազ. դրամով:

3. Շահույթի մեծության վրա իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մեկ միավոր (հազ. դրամ) ծախսի մակարդակի փոփոխության ազդեցությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm\Delta(\text{ԻԸ})_3 = (\text{ԻՋՅ})_1 \times \left[\frac{(\text{ԼԻ})_1}{(\text{ԻՋՅ})_1} - \frac{(\text{ԼԻ})_0}{(\text{ԻՋՅ})_0}\right], \qquad (3.3.13)$$

$$\pm\Delta(\text{ԻԸ})_3 = 794709 \times \left(\frac{658123}{794709} - \frac{482975}{517481}\right) = 794709 \times (0{,}828131 - 0{,}933319) =$$

$$= 83594 \text{հազ.դրամ}:$$

Պարզվում է, որ, ի հաշիվ մեկ միավոր (հազ. դրամ) ինքնարժեքի իջեցման, տնտեսավարող սուբյեկտը կարող է լրացուցիչ շահույթ ստանալ 83594 հազ. դրամ գումարի չափով:

Ընդհանրացված տեսքով՝ իրացումից շահույթի մեծությունը, ի հաշիվ վերոնշյալ երեք ազդող գործոնների, հավասար կլինի՝

$\pm\Delta$ ԻԸ = $\pm\Delta$ (ԻԸ)$_1$ $\pm\Delta$ (ԻԸ)$_2$ $\pm\Delta$ (ԻԸ)$_3$ = 12512 + 5973 + 83594 = 102080 հազ. դրամ կամ՝ 136586 – 34506 = 102080 հազ. դրամ:

Քանի որ շահույթի մեծության ավելացման վրա ազդում են բազմաթիվ գործոններ (իրացվող արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների միավորների վրա կատարվող ծախսումները, աշխատանքի արտադրողականությունը, հիմնական միջոցների հատույցը, արտադրանքի տեսականին և կառուցվածքը, ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածությունը, ընդհանուր կամ ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը, աշխատողների որակական մակարդակը, հիմնական միջոցների արժեքը և այլն), ուստի շահույթի և այդ ազդող գործոնների փոխկապակցության գնահատման համար կարևորվում է վիճակագրության ընդհանուր տեսությունից հայտնի բազմագործոն-կոռելյացիոն վերլուծության մեթոդի կիրառումը, որն արտահայտվում է հետևյալ հավասարման տեսքով՝

$$\tilde{y}_{x_1,x_2,\dots,x_m} = a_0 + a_1x_1 + a_2x_2 + \dots + a_mx_m = a_0 + \sum_{i=1}^{m} a_ix_i\,, \qquad (3.3.14)$$

որտեղ՝

$\tilde{y}_{x_1,x_2,\dots,x_m}$ - արդյունքային ցուցանիշն է (արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթը),

$x_1, x_2, x_3, \dots, x_m$-ը արդյունքային ցուցանիշի վրա ազդող գործոններն են,

$a_0$-ն այլ գործոնների ազդեցության չափի գործակիցն է, որն ենթակա է որոշման,

$a_1, a_2, a_3, \dots, a_m$ - որոշման ենթակա այն գործակիցներն են, որոնցից յուրաքանչյուրը բնորոշում է համապատասխան գործոնի ազդեցության



չափը:

$a_0, a_1, a_2, \dots, a_m$ գործակիցների որոշման համար պետք է հիմք ընդունել փոքրագույն քառակուսիների մեթոդը, որն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$f = \sum_{i=1}^{m}(y_{\text{իրատ.}} - \tilde{y}_{x_1,x_2,\dots,x_m})^2 \to \min: \qquad (3.3.15)$$

Վերջինս դիֆերենցելով կամ ածանցելով ըստ $a_0, a_1, a_2, \dots a_m$ գործակիցների և միաժամանակ ստացված հավասարումները հավասարեցնելով 0-ի, կստանանք՝

$$\begin{aligned}
&\frac{\partial f}{\partial a_0} = \sum[2(y - a_0 - a_1x_1 - a_2x_2 - \dots - a_mx_m)](-1) = 0\\
&\frac{\partial f}{\partial a_1} = \sum[2(y - a_0 - a_1x_1 - a_2x_2 - \dots - a_mx_m)](-x_1) = 0\\
&\frac{\partial f}{\partial a_2} = \sum[2(y - a_0 - a_1x_1 - a_2x_2 - \dots - a_mx_m)](-x_2) = 0\\
&\text{- - - -

Համակարգում ներառված $\Sigma y$, $\Sigma yx_1$,... $\Sigma x_1$,...,$\Sigma x_m^2$ արտահայտությունների հաշվարկման համար կազմվում է հաշվարկային աղյուսակ (այս մեթոդին կարելի է անցնել այն դեպքում, եթե ազդող գործոնները 2-ից կամ 3-ից չեն անցնում. մնացած դեպքերում անհրաժեշտ է հավասարումների համակարգի լուծումը կատարել համակարգիչների միջոցով՝ ալգորիթմ և ծրագիր կազմելով կամ արդեն եղածներից օգտվելով): Աղյուսակի (3.3.2) նախավերջին տողի ($\Sigma$) տվյալները տեղադրելով (3.3.17) հավասարումների համակարգի մեջ, կարող ենք որոշել $a_0$, $a_1$, $a_2$,...$a_m$ գործակիցները, այնուհետև դրանց արժեքներն էլ տեղադրելով բազմագործոն-կոռելյացիոն հավասարման մեջ, կստանանք արդյունքային ցուցանիշի (իրացումից շահույթ) և նրա վրա ազդող գործոնների միջև եղած փոխկախվածության հավասարումը:

Աղյուսակի նախավերջին սյունակի լրացման համար անհրաժեշտ է տողերի x-երի արժեքները տեղադրել արդեն ստացված բազմագործոն-կոռելյացիոն հավասարման մեջ և արդյունքում կստանանք յուրաքանչյուր փաստացի y-ին համապատասխան հաշվարկային նոր մեծություն: Աղյուսակի վերջին սյունակը բնութագրում է փաստացի և հաշվարկային արդյունքային ցուցանիշների միջև եղած բացարձակ հարաբերական շեղումը՝ տոկոսներով արտահայտված: Որքան փոքր լինի այդ ցուցանիշների միջև հարաբերական շեղումը, կնշանակի յուրաքանչյուր ազդող գործոնի վարիացիայի թափը /$x_{max}$ - $x_{min}$/ այնքան էլ մեծ չէ:

Իսկ պարզելու համար, թե ինչպիսի փոխկախվածության (ուղղակի, թե հակադարձ) մեջ են գտնվում արդյունքային ցուցանիշը (y) և ազդող գործոնները ($x_i$), անհրաժեշտ է հաշվարկել կոռելյացիայի գործակիցները, որոնք արտահայտվում են հետևյալ բանաձևով՝

$$r_{yx_i} = \frac{\overline{yx_i} - \bar{y} \cdot \bar{x_i}}{\sigma_y \cdot \sigma_{x_i}} \quad (i = 1, 2, ..., m), \qquad (3.3.18)$$

որտեղ՝

$\overline{yx_i}$ - արդյունքային ցուցանիշի (y) և ազդող i-րդ գործոններից ($x_i$) յուրաքանչյուրի միջև եղած արտադրյալի պարզ թվաբանական միջին մեծությունն է, որը հավասար է՝

$$\overline{yx_i} = \frac{\sum yx_i}{n}, \qquad (3.3.19)$$

(n - ուսումնասիրվող ցուցանիշների տարբերակների թիվն է),



Աղյուսակ 3.3.2

«Նորմալ» հավասարումների համակարգում ներկայացված արտահայտությունների հաշվարկման համար

| հ/հ | $y$ | $x_1$ | . | $x_m$ | $yx_1$ | . | $yx_m$ | $x_1x_2$ | . | $x_{m-1}x_m$ | $y^2$ | $x_i^2$ | . | $x_m^2$ | $\tilde{y}_{x_1,x_2,...,x_m}$ | $\left\|\frac{\tilde{y}_{x_1,x_2,...,x_m} - y_{ի}}{y_{ի}}\right\| \cdot 100\%$ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | | | | | | | |
| 3. | | | | | | | | | | | | | | | | |
| . | | | | | | | | | | | | | | | | |
| . | | | | | | | | | | | | | | | | |
| . | | | | | | | | | | | | | | | | |
| n | | | | | | | | | | | | | | | | |
| Σ | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդհակ | | | | | | | | | | | | | | | | |

$\bar{y}$-ը և $\bar{x_i}$-ը՝ համապատասխանաբար արդյունքային ցուցանիշի (y) և ազդող գործոնի ($x_i$) միջին մեծություններն են, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$\bar{y} = \frac{\sum y}{n}, \quad \bar{x} = \frac{\sum x_i}{n}: \tag{3.3.20}$$

$\sigma_y$-ը և $\sigma_{x_i}$-ը՝ համապատասխանաբար արդյունքային ցուցանիշի (y) և ազդող գործոնի ($x_i$) միջին քառակուսային շեղումներն են, որոնք հաշվարկվում են հետևյալ բանաձևերով՝

$$\sigma_y = \sqrt{\frac{\sum (y - \bar{y})^2}{n}} = \sqrt{\overline{y^2} - (\bar{y})^2}, \sigma_{x_i} = \sqrt{\frac{\sum (x_i - \bar{x_i})^2}{n}} = \sqrt{\overline{x_i^2} - (\bar{x_i})^2},$$

որտեղ՝

$$\overline{y^2} = \frac{\sum y^2}{n}, \quad \overline{x_i^2} = \frac{\sum x^2}{n}, \quad (\bar{y})^2 = \left(\frac{\sum y}{n}\right)^2, \quad (\bar{x_i})^2 = \left(\frac{\sum x_i}{n}\right)^2:$$

Այս բոլոր բանաձևերն էլ հաշվարկվում են հաշվարկային աղյուսակի հիման վրա:

Կոռելյացիայի գործակցի ($r_{yx_i}$) հաշվարկային արժեքը կարող է տարբեր լինել և ընկած լինել -1-ից միչև +1 սահմաններում ($-1 \le r_{yx_i} \le +1$):

Որքան բարձր լինի կոռելյացիայի գործակիցը տվյալ սահմաններում, նշանակում է՝ արդյունքային ցուցանիշի և ազդող գործոնի միջև եղած փոխադարձ կապը սերտ է:

Եթե կոռելյացիայի գործակիցը բացասական է, ապա փոխադարձ կապը հակադարձ է, իսկ դրականի դեպքում կապն ուղղակի է: Գործնականում, եթե կոռելյացիայի գործակցի արժեքը 0,75 և ավելի է, ապա փոխադարձ կապը բավականին բարձր է, և այն լիարժեք կարող ենք օգտագործել վիճակագրական վերլուծության մեջ:

Եթե կոռելյացիայի գործակիցը հավասար է -1-ի կամ +1-ի, նշանակում է՝ արդյունքային ցուցանիշի և ազդող գործոնի միջև փոխադարձ կապը ֆունկցիոնալ է:

Եթե կոռելյացիայի գործակիցները չեն գերազանցում 0,2 – 0,25 մեծությունները, նշանակում է՝ արդյունքային ցուցանիշի և ազդող գործոնների միջև գործող փոխադարձ կապը թույլ է:

Եթե ստացված կոռելյացիայի գործակիցները բավականին բարձր են,



ապա հաշվարկվում է կոռելյացիայի գործակցի միջին քառակուսային սխալի մեծությունը ($\sigma_r$), որն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_r = \frac{1 - r_{yx_i}^2}{\sqrt{n}}: \tag{3.3.21}$$

Այնուհետև հաշվարկվում է կոռելյացիայի գործակցի հուսալիության չափանիշը ($\mu_r$), որը հավասար է՝

$$\mu_r = \frac{r_{yx_i}}{\sigma_r}: \tag{3.3.22}$$

Հուսալիության չափանիշը համարվում է հավաստի, եթե այն մեծ է 2,5 – 3,0 մեծություններից, հակառակ դեպքում այն անիմաստ է և կնշանակի y-ի և $x_i$-ի միջև փոխադարձ կապը թույլ է եղել:

Եթե կոռելյացիայի գործակիցը բավականին բարձր է, ապա անհրաժեշտ է հաշվարկել $x_i$ գործոնի ազդեցության չափը արդյունքային ցուցանիշի վրա՝ տոկոսով արտահայտված: Այդ ազդեցության չափի որոշումը կատարվում է դետերմինացիայի գործակցի ($dyx_i$) միջոցով, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$dyx_i = r_{yx_i}^2 \cdot 100\%: \tag{3.3.23}$$

Այսինքն՝ դետերմինացիայի գործակիցը հավասար է կոռելյացիայի գործակցի քառակուսուն՝ տոկոսով արտահայտված:

Եթե արդյունքային ցուցանիշի վրա ազդող գործոնները թվով երկուսն են, ապա բազմագործոն-կոռելյացիայի գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$R_{yx_1x_2} = \sqrt{\frac{r_{yx_1}^2 + r_{yx_2}^2 - 2r_{yx_1} \cdot r_{yx_2} \cdot r_{x_1x_2}}{1 - r_{x_1x_2}^2}}, \tag{3.3.24}$$

որտեղ՝

$r_{yx_1}, r_{yx_2}$ - արտահայտությունները զույգային կոռելյացիայի գործակիցներն են,

$r_{x_1x_2}$ - $x_1$-ի և $x_2$-ի միջև եղած կոռելյացիայի գործակիցն է, որն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$r_{x_1x_2} = \frac{\overline{x_1x_2} - \overline{x_1}\cdot\overline{x_2}}{\sqrt{\left(\overline{x_1^2} - \overline{x_1}^2\right)\left(\overline{x_2^2} - \overline{x_2}^2\right)}}, \qquad (3.3.25)$$

իր հերթին՝

$$\overline{x_1^2} = \frac{\sum x_1^2}{n}, \quad \overline{x_2^2} = \frac{\sum x_2^2}{n}, \quad \left(\overline{x_1}\right)^2 = \left(\frac{\sum x_1}{n}\right)^2,$$

$$\left(\overline{x_2}\right)^2 = \left(\frac{\sum x_2}{n}\right)^2: \qquad (3.3.26)$$

Ինչպես զույգային կոռելյացիայի գործակցի դեպքում էր, այստեղ ևս հաշվարկվում են նաև բազմագործոն-կոռելյացիայի ընդհանուր գործակցի միջին քառակուսային սխալը ($\sigma_r$) և հուսալիության չափանիշը ($\mu_r$), որոնք համապատասխանաբար հավասար են՝

$$\sigma_R = \frac{1-R^2_{yx_1x_2\ldots x_m}}{\sqrt{n}}, \quad \mu_R = \frac{R_{yx_1x_2\ldots x_m}}{\sigma_R}, \qquad (3.3.27)$$

Եթե $\mu_r \geq 2{,}5 - 3{,}0$-ից, նշանակում է կոռելյացիայի ընդհանուր գործակիցը հավաստի է:

Բացի առանձին գործոնների և արդյունքային ցուցանիշի միջև եղած կոռելյացիայի գործակիցներից, խիստ անհրաժեշտ է հաշվարկել այդ նույն արդյունքային ցուցանիշի և ազդող բոլոր գործոնների փոխկախվածության աստիճանը, այսինքն՝ կոռելյացիայի ընդհանուր գործակիցը ($Ryx_1,x_2\ldots x_m$), որն արտահայտվում է հետևյալ բանաձևի տեսքով՝

$$R_{yx_1x_2\ldots x_m} = \sqrt{\beta_1 r_{yx_1} + \beta_2 r_{yx_2} + \beta_3 r_{yx_3} + \ldots + \beta_m r_{yx_m}} = \sqrt{\sum_{i=1}^{m} \beta_i r_{yx_i}}, \qquad (3.3.28)$$

որտեղ՝

$\beta_1, \beta_2, \beta_3, \ldots, \beta_m$-երը ստանդարտացման այն գործակիցներն են, որոնք հաշվարկվում են հետևյալ ընդհանուր բանաձևով՝

$$\beta_i = \frac{a_i\sigma_{x_i}}{\sigma_y}, \quad (i = 1, 2, 3, \ldots, m), \qquad (3.3.29)$$

որտեղ՝



$a_i$-ն արդեն հաշվարկված բազմագործոն-կոռելյացիայի հավասարման ($a_1, a_2, a_3, \ldots a_m$) գործակիցներն են,

$\sigma_{x_i}$-ն ազդող գործոնների միջև քառակուսային շեղումներն են,

$\sigma_y$-ը արդյունքային ցուցանիշի միջին քառակուսային շեղումն է:

Ինչպես զույգային կոռելյացիայի գործակիցների դեպքում էր, բազմագործոն-կոռելյացիայի ընդհանուր գործակցի մեծությունը ևս պետք է ընկած լինի -1-ից +1 սահմաններում ($-1 \leq R_{yx_1x_2\ldots x_m} \leq +1$): Իսկ դետերմինացիայի ընդհանուր գործակիցը ($D_{yx_1x_2\ldots x_m}$) որոշվում է նույն բանաձևով, ինչ զույգային դետերմինացիայի դեպքում էր՝

$$D_{yx_1x_2\ldots x_m} = R^2_{yx_1x_2\ldots x_m} \cdot 100\%: \qquad (3.3.30)$$

Դետերմինացիայի ընդհանուր գործակցով բնութագրվում է բոլոր գործոնների համատեղ ազդեցության չափը՝ տոկոսներով արտահայտված:

Տնտեսագիտական հետազոտությունների ժամանակ, բացի բազմագործոն-կոռելյացիոն վերլուծության մեթոդից, հաճախակի հանդիպում են ցուցանիշների այնպիսի համակցություններ, որոնք ունենում են աճման կամ նվազման տարբեր աստիճանի միտումներ և, ըստ այդմ էլ, հաճախակի օգտագործվում են տարբեր բանաձևեր՝

1.միագործոն գծային՝ $y_{x_1} = a_0 + a_1x_1$, (3.3.31)

2.երկգործոն գծային՝ $y_{x_1,x_2} = a_0 + a_1x_1 + a_2x_2$, (3.3.32)

3.միագործոն ոչ գծային (հիպերբոլային)՝ $y_{x_1} = a_0 + \frac{a_1}{x_1}$, (3.3.33)

4.միագործոն ոչ գծային (պարաբոլային)՝

$$y_{x_1} = a_0 + a_1x_1 + a_2x_1^2 + \ldots + a_mx_1^m, \qquad (3.3.34)$$

5.ցուցչային՝ $y_{x_1} = a_0a_1^{x_1}$ (3.3.35)

և այլն՝ կախված ազդող գործոնի բնույթից:

Նշված բանաձևերում ընդգրկված $a_0, a_1, a_2, \ldots, a_m$ գործոնների հաշվարկման համար կազմվում է «նորմալ» հավասարումների համապատասխան համակարգ:

Այսպես՝ միագործոն գծային հավասարման դեպքում այն ունենում է հետևյալ տեսքը.

$$\begin{cases} \sum y = ma_0 + a_1 \sum x_1 \\ \sum yx_1 = a_0 \sum x_1 + a_1 \sum x_1^2 : \end{cases} \quad (3.3.36)$$

Երկգործոն գծայինի համար՝

$$\begin{cases} \sum y = ma_0 + a_1 \sum x_1 + a_2 \sum x_2 \\ \sum yx_1 = a_0 \sum x_1 + a_1 \sum x_1^2 + a_2 \sum x_1 x_2 \\ \sum yx_2 = a_0 \sum x_2 + a_1 \sum x_2 x_1 + a_2 \sum x_2^2 : \end{cases} \quad (3.3.37)$$

Ոչ գծային հիպերբոլայինի (հակադարձ) համար՝

$$\begin{cases} \sum y = ma_0 + a_1 \sum \frac{1}{x_1} \\ \sum yx_1 = a_0 \sum x_1 + a_1 \sum \frac{1}{x_1^2} : \end{cases} \quad (3.3.38)$$

Ոչ գծային միագործոն պարաբոլային կախվածության համար (2-րդ կարգի պարաբոլի դեպքում)՝

$$\begin{cases} \sum y = ma_0 + a_1 \sum x_1 + a_2 \sum x_1^2 \\ \sum yx_1 = a_0 \sum x_1 + a_1 \sum x_1^2 + a_2 \sum x_1^3 \\ \sum yx_2 = a_0 \sum x_1^2 + a_1 \sum x_1^3 + a_2 \sum x_1^4 : \end{cases} \quad (3.3.39)$$

Ցուցչային կախվածության համար՝

$$\begin{cases} \sum \lg y = m \lg a_0 + \lg a_1 \sum x_1 \\ \sum \lg yx = \lg a_0 \sum x_1 + \lg a_1 \sum x_1^2 : \end{cases} \quad (3.3.40)$$



Ինչպես միագործոն, այնպես էլ երկգործոն և բազմագործոն վիճակագրական վերլուծությունների դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրվող տարբերակների թիվը (n) մեծ լինի առնվազն 10-ից (n > 10): Այսինքն՝ տվյալ ուսումնասիրության ընթացքում ավելի ճշգրիտ են բնութագրվում արդյունքային ցուցանիշի վրա ազդող գործոնների գործակիցները ($a_1, a_2, a_3, \dots, a_m$) և կոռելյացիայի, դետերմինացիայի գույգային (մասնակի) ու բազմագործոն ընդհանուր գործակիցները: Դրա համար, հավաստի տվյալներ ստանալու նպատակով, վիճակագրական վերլուծություն իրականացնող յուրաքանչյուր ոք պետք է կատարի բազմատարբերակային դիտարկումներ կամ օգտագործի արդեն գոյություն ունեցող համապատասխան տեղեկատվությունը:

## 3.4. Շահույթի օգտագործման վերլուծությունը

Բոլոր տեսակի տնտեսավարող սուբյեկտները ֆինանսատնտեսական գործունեության վերջնական արդյունքում ստանում են շահույթ կամ վնաս: Եթե տնտեսավարող սուբյեկտը շահույթ է ստանում, ապա պարտավոր է, օրենսդրությամբ սահմանված արտոնությունները հաշվի առնելուց հետո, հարկվող շահույթից պետական բյուջե վճարել շահութահարկ: Վերջինս հաշվարկվում է Հայաստանի Հանրապետությունում և արտերկրներում ստացված եկամուտների (համախառն եկամտի) հիման վրա՝ հաշվի առնելով նվազեցումները: Այսինքն՝ հարկվող շահույթը տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված համախառն եկամտի և կատարվող նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկը հաշվարկվում է՝ հարկվող շահույթի գումարը բազմապատկելով 20%-ով (2001 թ. հունվարի 1-ից՝ ըստ «Շահութահարկի մասին» փոփոխություններով հանդերձ նոր օրենքի): Եթե այդ տարբերությունը բացասական է կամ հավասար է 0-ի (այսինքն՝ հարկվող շահույթ չի առաջացել), ապա շահութահարկ չի վճարվում:

Շահութահարկի հաշվարկման համար անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել հարկվող շահույթը, նաև՝ համախառն եկամուտը և նվազեցումները: Վերջիններիս ճիշտ հաշվարկման համար անհրաժեշտ է որոշել՝

- թե կատարված գործարքներից առաջանում են արդյոք եկամուտներ կամ նվազեցումներ,
- եկամուտների և նվազեցումների առաջացման պահը,
- եկամուտների և նվազեցումների չափը (արժեքը):

Հարկ է նշել՝ բոլոր գործարքներից չէ, որ առաջանում են եկամուտներ կամ նվազեցումներ: Օրինակ, եթե տնտեսավարող սուբյեկտը կամ կազ-

մակերպությունը բանկային հաշիվներից հանում է դրամ և մուտքագրում դրամարկղ, ապա այդ գործարքից եկամուտ կամ նվազեցում չի առաջանում (չնայած տվյալ գործարքը պահանջում է հաշվապահական ձևակերպում): Հետևաբար, տնտեսավարող սուբյեկտը կամ կազմակերպությունը առաջին հերթին պետք է տարանջատի եկամուտներ կամ նվազեցումներ առաջացնող գործարքները այլ գործարքներից:

Տնտեսավարող սուբյեկտը հարկվող շահույթից շահութահարկ վճարելուց հետո արդյունքում ստանում է զուտ շահույթ, որը մնում է նրա տրամադրության տակ, և այն տնօրինում է ինքնուրույն՝ բաշխման առումով: Իսկ թե ինչպիսի կառուցվածք ունի շահույթի օգտագործումը, ներկայացնենք գծապատկերի տեսքով (3.4.1):




Գծ. 3.4.1. Շահույթի օգտագործման կառուցվածքը



Զուտ շահույթի օգտագործման հիմնական ուղղություններն են՝ պահուստային կապիտալին հատկացումները, կուտակման, սպառման և սոցիալական ոլորտի հիմնադրամների կազմավորումը, շահաբաժինների վճարումը (բաժնետիրական ընկերությունների դեպքում), բարեգործական և այլ նպատակների համար մասնահանումները: Զուտ շահույթի այն մասը, որը չի օգտագործվում տնտեսավարող սուբյեկտի կողմից, մնում է որպես չբաշխված շահույթ կամ կուտակված շահույթ:

Ասվածը ներկայացնենք՝ ուսումնասիրելով մի տնտեսավարող սուբյեկտ, որը բաժնետիրական ընկերություն է: Դրա ստացած զուտ շահույթի օգտագործման մասին ավելի հստակ պատկերացում ունենալու նպատակով կազմենք աղյուսակ (3.4.1), որում, երկու տարվա կտրվածքով, նշենք զուտ շահույթի օգտագործման ուղղությունները՝ կատարելով համապատասխան վերլուծություններ ու եզրահանգումներ (աղյուսակում օգտագործել ենք հավելված 2-ի տվյալները):

Աղյուսակ 3.4.1

Զուտ շահույթի օգտագործումը

Հազ. դրամ

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարի (ժամանակաշրջան) | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | Շեղումը (+,-) | |
|---|---|---|---|---|
| | | | բացարձակ, հազ. դրամ | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4(ս3 -ս2) | 5(ս4 : ս2) |
| Զուտ շահույթ (հարկումից հետո), այդ թվում օգտագործվել է հետևյալ նպատակների համար. | 19484 | 86395 | 66911 | 343,4 |
| - պահուստային կապիտալի | 2547 | 11384 | 8837 | 347,0 |
| - կուտակման հիմնադրամի | 7643 | 40358 | 32715 | 428,0 |
| - սպառման հիմնադրամի | 1698 | 5197 | 3499 | 206,1 |
| - սոցիալական ոլորտի հիմնադրամի | 5096 | 19046 | 13950 | 273,7 |
| - շահաբաժինների վճարում | - | - | - | - |
| - բարեգործական և այլ նպատակների համար | - | - | - | - |
| Ընդամենը չբաշխված շահույթ | 2500 | 10410 | 7910 | 316,4 |

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, հաշվետու տարում տնտեսավարող սուբյեկտի զուտ շահույթը 66911 հազ. դրամով կամ 343,4%-ով ավելացել է նախորդ տարվա համեմատությամբ: Ավելի արագ տեմպերով աճել են նաև զուտ շահույթից կուտակման հիմնադրամի գծով բաշխվող գումարները՝ 32715 հազ. դրամով կամ 4,3 անգամ (428%), որը կազմում է բացարձակ զուտ շահույթի 48,9%-ը (32715 : 66911 × 100%): Այսինքն՝

տնտեսավարող սուբյեկտը նպատակ է դրել գալիք ժամանակաշրջանում ընդլայնել իր արտադրության ծավալները կամ ձեռք բերել տնտեսական նոր միջոցներ:

Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու տարիներին տնտեսավարող սուբյեկտը, որպես բաժնետիրական ընկերություն, նպատակահարմար է գտել չկատարել շահաբաժինների վճարում: Շահաբաժինը զուտ շահույթի մի մասն է, որը բաժին է ընկնում յուրաքանչյուր բաժնետոմսին և ենթակա է բաժանման՝ բաժնետերերի միջև: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, տնտեսավարող սուբյեկտը հաշվետու տարում՝ նախորդի համեմատությամբ ունեցել է 7910 հազ. դրամի չափով չբաշխված շահույթի ավելացում և կարող է հաշվետու տարում իր տրամադրության տակ գտնվող 10410 հազ. դրամ չբաշխված շահույթն օգտագործել շահաբաժինների վճարման կամ նոր բաժնետոմսերի թողարկման համար: Այդ մասին որոշում կարող-է կայացնել բաժնետերերի խորհուրդը: Վերջինս կարող է որոշում կայացնել նաև ստացված զուտ շահույթի ողջ գումարը նպատակաուղղել միայն կուտակման հիմնադրամի կազմավորման համար:

## 3.5. Շահութաբերության ցուցանիշների համակարգը և հաշվարկման մեթոդները

Շուկայական հարաբերությունների ազատականացման պայմաններում, երբ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է սեփականության տարբեր ձևերի համատեղ գոյության ու զարգացման հիման վրա տնտեսավարման ամենահիմնական մեթոդը ֆինանսական արդյունքների ճշգրիտ հաշվարկն է, բացարձակ և հարաբերական առումով: Հատկապես ազատ մրցակցության պայմաններում խիստ կարևորվում և մեծանում է ֆինանսական արդյունքի գլխավոր հետևանքային ցուցանիշի՝ շահույթի դերը, որը հաշվապահական հաշվառման ստանդարտներին (չափանիշներին) համապատասխան հանդես է գալիս համախառն շահույթ, իրացումից շահույթ, գործառնական և ոչ գործառնական գործունեությունից շահույթ, սովորական գործունեությունից շահույթ, արտասովոր դեպքերից շահույթ, զուտ շահույթ մինչև հարկումը (շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը) և հարկումից հետո:

Շուկայական տնտեսության պայմաններում շահույթը ձեռք է բերում բազմանշանակ դեր, քանի որ բաժնետիրական, մասնավոր և այլ տիպի տնտեսավարող սուբյեկտները, ստանալով լայն ինքնուրույնություն ու անկախության հնարավորություն, իրավունք ունեն որոշելու, թե բյուջեի



վերաբերմամբ պարտականությունները կատարելուց հետո իրենց տրամադրության տակ մնացած շահույթից ո՞ր նպատակի համար և որքա՞ն հատկացնել: Հայաստանի հանրապետությունում ձևավորված օրենսդրությունը համապատասխան պայմաններ է ապահովում շահույթ ստանալու նպատակով տնտեսավարող սուբյեկտների նախաձեռնությունները ինքնուրույն իրականացնելու համար: Դա դրսևորվում է նրանում, որ նրանք ազատորեն իրականացնում են իրենց տնտեսական գործունեությունը, լիիրավ տնօրինում են թողարկվող արտադրանքը և զուտ շահույթը:

Պետք է նշել, որ տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետությունը գնահատելու համար ոչ միայն շահույթի բացարձակ մեծությունն է հանդես գալիս, այլ նաև դրան զուգահեռաբար օգտագործվում է շահութաբերությունը, որը լինելով հարաբերական ցուցանիշ արտահայտվում է հիմնականում տոկոսով: Եթե նախքան շուկայական էկոնոմիկային անցնելը շահութաբերությունը որոշվել է որպես շահույթի հարաբերությունը լրիվ ինքնարժեքին կամ արտադրական ֆոնդերին (շահույթի նորմա), ապա այժմ այն հանդես է գալիս տարբեր անվանումներով կապված տնտեսավարող սուբյեկտի արտադրատնտեսական բնույթից:

Տնտեսավարող սուբյեկտների շահութաբերության ցուցանիշները բնութագրում են դրանց եկամտաբերությունը և դրանք հաշվարկվում են հարաբերակցությամբ:

Միջազգային պրակտիկայում բոլոր տեսակի ձեռնարկատիրական գործունեությունները, որոնք իրականացվում են տնտեսավարող տարբեր սուբյեկտների կողմից, հանդես են գալիս 3 հիմնական ոլորտների գծով՝

- գործառնական կամ հիմնական գործունեություն,
- ներդրումային (բաժնետոմսերի, այլ արժեթղթերի, կապիտալի ներդրումների և այլ տեսքով) գործունեություն,
- ֆինանսական (ստացված կամ վճարված շահաբաժինների, տոկոսների և այլ տեսքով) գործունեություն:

Ելնելով վերոնշյալներից՝ գործնական վերլուծության ընթացքում եկամտաբերության գնահատման գծով կիրառվում են հետևյալ խումբ հարաբերական ցուցանիշները՝ արտադրանքի, սեփական ու ընդհանուր կապիտալի (ակտիվների), ներդրումների և ընթացիկ ակտիվների, հիմնական գործունեության և վաճառքի ծավալի գծով: Օրինակ՝ արտադրանքի եկամտաբերությունը որոշվում կամ գնահատվում է հարաբերական այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են՝ իրացվող, թողարկվող արտադրանքների շահութաբերությունը:

Տնտեսավարող սուբյեկտների շահութաբերության հիմնական ցուցա-

նիշները[1] կարող ենք ներառել հետևյալ խմբերում՝

1. արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) շահութաբերության ցուցանիշներ,
2. ակտիվների (ոչ ընթացիկ և ընթացիկ) շահութաբերության ցուցանիշներ,
3. դրամական միջոցների հոսքերի (շարժի) հիման վրա հաշվարկվող շահութաբերության ցուցանիշներ:

Շահութաբերության մակարդակը բնորոշող 1-ին խումբ ցուցանիշները բնութագրվում են՝ հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության տարբեր փուլերում ստացվող շահույթի (իրացումից շահույթ, սովորական գործունեությունից շահույթ, հարկման ենթակա շահույթ և զուտ շահույթ) մեծությունը, և հաշվարկվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների հիման վրա:

Այսպես, իրացումից շահույթի հիման վրա հաշվարկվող շահութաբերության մակարդակը՝ $Շ_{մակ.(1)}$, իրենից ներկայացնում է արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման դիմաց ստացվող շահույթի (ԻՇ) և իրացումից զուտ հասույթի (ԻՁՀ) հարաբերակցությունը: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Շ_{մակ.(1)} = \frac{ԻՇ}{ԻՁՀ} \times 100\% : \qquad (3.5.1)$$

Այս ցուցանիշը հաշվարկվում է նաև լրիվ ինքնարժեքի (ԼԻ) մեծությունը (իրացվող արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների հետ կապված ծախսերի և առևտրային ու վարչական ծախսերի հանրագումարն է) հաշվի առնելով՝

$$Շ_{մակ.(1)} = \frac{ԻՁՀ - ԼԻ}{ԻՁՀ} \times 100\% : \qquad (3.5.2)$$

Հաշվետու ժամանակաշրջանում սովորական գործունեությունից ստացված շահույթի հիման վրա շահութաբերության մակարդակը՝ $Շ_{մակ.(2)}$, հաշվարկվում է սովորական գործունեության շահույթի (ՍԳՇ) և իրացումից զուտ հասույթի հարաբերակցությամբ՝

$$Շ_{մակ.(2)} = \frac{ՍԳՇ}{ԻՁՀ} \times 100\% : \qquad (3.5.3)$$

Հարկման ենթակա շահույթի հիման վրա շահութաբերության մակարդակը՝ $Շ_{մակ.(3)}$, հաշվարկվում է մինչև հարկումը եղած շահույթի (ՀԵՇ) և իրացումից զուտ հասույթի (ԻՁՀ) հարաբերակցությամբ: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Շ_{մակ.(3)} = \frac{ՀԵՇ}{ԻՁՀ} \times 100\% : \qquad (3.5.4)$$

Զուտ շահույթի հիման վրա շահութաբերության մակարդակը՝ $Շ_{մակ.(4)}$, հաշվարկվում է հարկումից հետո տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ մնացած զուտ շահույթի (ԶՇ) և իրացումից զուտ հասույթի (ԻՁՀ) հարաբերակցությամբ: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Շ_{մակ.(4)} = \frac{ԶՇ}{ԻՁՀ} \times 100\% : \qquad (3.5.5)$$

Շահութաբերության վերոնշյալ մակարդակներից յուրաքանչյուրը բնութագրում է մեկ միավոր զուտ հասույթի հաշվով ստացված շահույթի գումարի չափը կամ ընդամենը իրացումից հասույթում շահույթի տեսակարար կշիռը՝ տոկոսով արտահայտված:

Կարևոր նշանակություն ունի հաշվարկել նաև արտադրանքի առանձին տեսակների գծով իրացվող ապրանքի շահութաբերությունը, որը որոշվում է իրացումից շահույթի (ԻՇ) և լրիվ ինքնարժեքի (ԼԻ) հարաբերությամբ՝ տոկոսով արտահայտված: Այս ցուցանիշը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի հիմնական գործունեության շահութաբերությունը $(ՀԳ)_{շահութ.}$, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$(ՀԳ)_{շահութ.} = \frac{ԻՇ}{ԼԻ} \times 100\% : \qquad (3.5.6)$$

Միջազգային պրակտիկայում այս ցուցանիշի մեծությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ոչ թե իրացումից զուտ հասույթի մեծությունը, այլ արտադրվող յուրաքանչյուր ապրանքի իրացման արժեքը կամ մեծածախ գինը (ՄԳ): Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$(ՀԳ)_{շահութ.} = \frac{ՄԳ - ԼԻ}{ԼԻ} \times 100\% : \qquad (3.5.7)$$

[1] Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс. М., 1998, с. 267.

Իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) շահութաբերության մակարդակի (նախորդ, հաշվետու ժամանակաշրջանների և ըստ պլանի) հաշվարկման ու դրա վրա ազդող գործոնների վերլուծության համար օգտագործվում են տնտեսավարող սուբյեկտի «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը», ֆինանսական պլանը և հաշվառման այլ ռեգիստրներ:

Շահութաբերության մակարդակը բնութագրող 2-րդ խումբ ցուցանիշների հաշվարկման համար հիմք են հանդիսանում տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ գտնվող զուտ շահույթը (ԶՇ), սովորական գործունեությունից շահույթը (ՍԳՇ) ընդհանուր կապիտալը (ԸԿ), ներդրումային (սեփական կապիտալ + ոչ ընթացիկ կամ երկարաժամկետ պարտավորություններ) կապիտալը (ՆԿ) և սեփական (բաժնետիրական) կապիտալը (ՍԿ): Դրանցից յուրաքանչյուրն արտահայտվում է առանձին բանաձևով:

1. Ընդհանուր կապիտալի (ակտիվների) շահութաբերությունը որոշվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$(\text{ԸԿ})_{\text{շահութ.}} = \frac{\text{ԶՇ}}{\text{ԸԿ}} \times 100\% : \qquad (3.5.8)$$

2. Ներդրումային կապիտալի շահութաբերությունը արտահայտվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$(\text{ՆԿ})_{\text{շահութ.}} = \frac{\text{ՍԳՇ}}{\text{ՆԿ}} \times 100\% : \qquad (3.5.9)$$

3. Սեփական (բաժնետիրական) կապիտալի շահութաբերությունը հավասար է հետևյալ հարաբերակցությանը՝

$$(\text{ՍԿ})_{\text{շահութ.}} = \frac{\text{ԶՇ}}{\text{ՍԿ}} \times 100\% : \qquad (3.5.10)$$

Եթե նշված հարաբերակցություններով հաշվարկված շահութաբերության մակարդակները բավականին ցածր են սահմանված նորմայից, ուրեմն տնտեսավարող սուբյեկտին պետք է մտահոգի ֆինանսական լծակների կարգավորումը, այսինքն՝ եկամտաբերության ավելացման նպատակով պետք է օգտվի երկարաժամկետ վարկերից և այլ տեսակի ներգրավվող փոխառու միջոցներից: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ շահութաբերությունը բնորոշող բոլոր ցուցանիշներն էլ կարևոր են իրենց էությամբ, և յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պետք է ապահովի ընդհանուր ակտիվների, ներդրումների և սեփական (բաժնետիրական) կապիտալի մեկ միավորի հաշվով ավելի շատ զուտ շահույթի ստացում: Սեփական կապիտալի շահութաբերությունը հատկապես բնութագրում է տնտեսական կայուն աճի ապահովումը, այսինքն՝ որքան բարձր լինի այս ցուցանիշը, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը գտնվում է տնտեսապես և ֆինանսապես կայուն վիճակում:

Շահութաբերության 3-րդ խումբ ցուցանիշները ձևավորվում են նախորդ երկու խումբ ցուցանիշների հիման վրա, երբ շահույթի փոխարեն հանդես են գալիս դրամական միջոցների զուտ հոսքերը (ԴՄԶՀ): Այսինքն՝ կարող ենք հաշվարկել դրամական միջոցների (դրամով և արտարժույթով) զուտ հոսքերը (մուտքագրումների և ելքագրումների տարբերությունը)՝

- իրացումից ստացվող զուտ հասույթի նկատմամբ, որն արտահայտվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$(\text{ԻԶՀ})_{\text{շահութ.}} = \frac{\text{ԴՄԶՀ}}{\text{ԻԶՀ}} \times 100\%, \qquad (3.5.11)$$

- ընդհանուր կապիտալի (ակտիվների) նկատմամբ, որը հավասար է՝

$$(\text{ԸԿ})_{\text{շահութ.}} = \frac{\text{ԴՄԶՀ}}{\text{ԸԿ}} \times 100\%, \qquad (3.5.12)$$

- սեփական (բաժնետիրական) կապիտալի նկատմամբ, որն արտահայտվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$(\text{ՍԿ})_{\text{շահութ.}} = \frac{\text{ԴՄԶՀ}}{\text{ՍԿ}} \times 100\% : \qquad (3.5.13)$$

Շահութաբերության գծով բոլոր ցուցանիշները հաշվարկելու համար, որպես տեղեկատվական աղբյուրներ, հանդես են գալիս ֆինանսական հաշվետվությունների ձևերը (№ 1, 2, 4): Այդ ցուցանիշները պատկերացում են տալիս տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական հնարավորությունների մասին, այն է՝ ժամանակին մարելու կրեդիտորներին (հարկերի, աշխատավարձերի վճարում, սոցիալական ապահովագրության վճարներ և այլն), փոխառուներին (վարկերի, փոխառությունների հետ վե-

րադարձում, տոկոսավճար և այլն) և բաժնետերերին (շահաբաժինների վճարում և այլն) ունեցած պարտքային պարտավորությունները: Շահութաբերության նմանատիպ ցուցանիշների հաշվարկումը լայնորեն տարածված է շուկայական տնտեսություն վարող երկրներում, քանի որ դրանց մեծությունով է պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության կարգավորումը:

Այժմ ներկայացնենք շահութաբերության գնահատման այն ցուցանիշների համակարգը և դրանց հաշվարկման մեթոդիկան, որոնք ավելի հաճախակի են օգտագործվում ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության ժամանակ (աղյուսակ 3.5.1):

Այդ ցուցանիշներն են՝

1. *Իրացվող արտադրանքի շահութաբերությունը* $(ԻԱ)_{շահութ.}$, որն իրենից ներկայացնում է իրացումից շահույթի (ԻՇ) և իրացումից զուտ հասույթի (ԻՀՅ) հարաբերակցությունը: Այս ցուցանիշով բնորոշվում է իրացումից զուտ հասույթում այդ շահույթի տեսակարար կշիռը և որքան բարձր լինի, այնքան լավ, քանի որ դրա մեծությունով է պայմանավորված նաև ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմավորումը և ավելացումը:

2. *Սեփական կապիտալի շահութաբերությունը* $(ՍԿ)_{շահութ.}$, որը որոշվում է շահութահարկի վճարումից հետո զուտ շահույթի (ՋՇ) և սեփական կապիտալի միջին մեծության ($\overline{ՍԿ}$) հարաբերակցությամբ: Այս ցուցանիշն իր էությամբ կարևորներից մեկն է, քանի որ նրա մեծությունով է արտահայտվում տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կայուն վիճակը: Անհրաժեշտ է նշել, որ շահութահարկի վճարումից հետո, մնացած շահույթը մնում է տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ, որպես սեփական կապիտալի բաղկացուցիչ մաս, որը կարող է օգտագործել իր ցանկությամբ որոշակի նպատակների՝ արտադրության զարգացման, սոցիալական կարիքների բավարարման, շահաբաժինների վճարման և այլ նպատակների համար:

3. *Հիմնական գործունեության շահութաբերությունը* $(ՀԳ)_{շահութ.}$, որը հաշվարկվում է իրացումից շահույթի (ԻՇ) և իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքի (ԼԻ) հարաբերակցությամբ: Այս ցուցանիշը բնորոշվում է մեկ միավոր լրիվ ինքնարժեքին բաժին ընկնող իրացումից ստացվող շահույթի գումարի չափը, և որքան բարձր լինի կատարվող ծախսի հատույցի չափը՝ կնշանակի տվյալ տնտեսավարող սուբյեկտն աշխատել է արդյունավետ և ապահովել է բարձր շահույթի ստացում:



Աղյուսակ 3.5.1

Շահութաբերության գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան

| Ցուցանիշների անվանումը | Պայմ. նշանակումներ | Գումարը (հազ. դրամ) | | Շեղումը (+;-) | |
|---|---|---|---|---|---|
| | | նախորդ տարի | հաշվետու տարի | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4 | 5(ս4 - ս3) | 6(ս5 : ս3) |
| I. ելակետային | | | | | |
| 1.իրացումից զուտ հասույթ | ԻՋՀ | 517481 | 794709 | 277228 | 53,6 |
| 2.իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեք | ԼԻ | 482975 | 658123 | 175148 | 36,3 |
| 3.իրացումից շահույթ | ԻՇ | 34506 | 136586 | 102080 | 295,8 |
| 4.սովորական (ֆինանսատնտեսական) գործունեության շահույթ | ՍԳՇ | 26790 | 119667 | 92877 | 346,7 |
| 5.զուտ շահույթ հարկումից հետո | ՋՇ | 19484 | 86395 | 66911 | 343,4 |
| 6.սեփական կապիտալի միջին մեծությունը | ՍԿ | 205555 | 216102 | 10547 | 5,1 |
| 7.ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մեծությունը | ԸԱ | 204657 | 295822 | 91165 | 44,5 |
| 8.ընդհանուր կապիտալի միջին մեծությունը | ԸԿ | 319055 | 416730 | 97675 | 30,6 |
| 9.ոչ ընթացիկ (հիմնական միջոցներ և այլ ներդրումներ) ակտիվների միջին մեծությունը | ՈԸԱ | 114398 | 120908 | 6510 | 5,7 |
| 10.նյութական ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մեծությունը | ՆԸԱ | 46333 | 178212 | 131879 | 284,6 |
| 11.ոչ ընթացիկ պարտավորությունների միջին մեծությունը | ՈԸՊ | 7918 | 65589 | 57671 | 728,4 |
| II. հաշվարկային, % | | | | | |
| 12.իրացվող արտադրանքի շահութաբերությունը (տ.3 : տ.1) | $(ԻԱ)_շ$ | 6,7 | 17,2 | 10,5 | 156,7 |
| 13.սեփական կապիտալի շահութաբերությունը (տ.5 : տ.6) | $(ՍԿ)_շ$ | 9,5 | 40,0 | 31,5 | 331,6 |
| 14.հիմնական գործունեության շահու- բաբերությունը (տ.3 : տ.2) | $(ՀԳ)_շ$ | 7,1 | 20,8 | 13,7 | 193,0 |
| 15.ընդհանուր կապիտալի շահութաբերությունը (տ.5 : տ.8) | $(ԸԿ)_շ$ | 6,1 | 20,8 | 14,6 | 239,3 |
| 16.ընթացիկ ակտիվների շահութաբերությունը (տ.5 : տ.7) | $(ԸԱ)_շ$ | 9,5 | 29,2 | 19,7 | 207,4 |
| 17.ներդրումների շահութաբերությունը [ տ.4 : (տ.6 + տ.11) ] | $Ն_շ$ | 12,6 | 42,5 | 29,9 | 237,3 |
| 18.շահույթի նորման [ տ.4 : (տ.9 + տ.10) ] | $Շ_ն$ | 16,7 | 40,0 | 23,3 | 139,5 |
| 19.վաճառքի ծավալի շահութաբերությունը (տ.5 : տ.1) | $(ԿԾ)_շ$ | 3,8 | 10,9 | 7,1 | 186,8 |

4. ***Ընդհանուր կապիտալի շահութաբերությունը*** ($ԸԿ)_{շահութ.}$, որն արտահայտվում է զուտ շահույթի (ԶՇ) և ընդհանուր կապիտալի միջին մեծության ($\overline{ԸԿ}$) հարաբերակցությամբ: Այս ցուցանիշը բնորոշում է միջին հաշվով ընդհանուր կապիտալի (հաշվեկշռի հանրագումարի) մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթի (շահութահարկի վճարումից հետո) գումարի չափը և այն ցույց է տալիս նաև ընդհանուր ակտիվների հատույցի մեծությունը:

5. ***Ընթացիկ ակտիվների շահութաբերությունը*** ($ԸԱ)_{շահութ.}$, որն իրենից ներկայացնում է զուտ շահույթի (ԶՇ) և ընթացիկ ակտիվների միջին մեծության ($\overline{ԸԱ}$) հարաբերակցությունը: Այս ցուցանիշը բնորոշում է նույնը, ինչ-որ ընդհանուր կապիտալի շահութաբերության իմաստն է:

6. ***Ներդրումների շահութաբերությունը*** ($Ն)_{շահութ.}$, որը որոշվում է սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթի (ՍԳՇ) և սեփական ու ոչ ընթացիկ պարտավորությունների միջին մեծությունների գումարի ($\overline{ՍԿ} + \overline{ՈԸՊ}$) հարաբերակցությամբ: Հատկապես այս ցուցանիշը հաշվարկելիս շատ կարևոր է ոչ ընթացիկ պարտավորությունների նպատակային օգտագործումը և դրա միջին հաշվով մեկ միավորի գծով շահույթի ապահովումը: Հակառակ դեպքում անիմաստ է ներդրումային քաղաքականության իրականացումը:

7. ***Շահույթի նորման*** ($Շ)_{ն.}$, որը հաշվարկվում է սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթի (ՍԳՇ) և ոչ ընթացիկ ակտիվների ու նյութական ընթացիկ ակտիվների միջին մեծությունների գումարի ($\overline{ՈԸԱ} + \overline{ՆԸԱ}$) հարաբերակցությամբ: Որքան մեծ լինի այս ցուցանիշը, կնշանակի միջին հաշվով մեկ միավոր ոչ ընթացիկ ու նյութական ընթացիկ ակտիվներին ավելի շատ շահույթ է ապահովել:

8. ***Վաճառքի ծավալի շահութաբերությունը*** ($ՎԾ)_{շահութ.}$, իրենից ներկայացնում է զուտ շահույթի (ԶՇ) և իրացումից զուտ հասույթի (ԻԶՀ) հարաբերակցությունը, որը ցույց է տալիս հարկային վճարումներից հետո տրնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող զուտ շահույթի տեսակարար կշիռը իրացումից զուտ հասույթում:

Նշված ցուցանիշները հաշվարկելու համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները՝

- իրացումից զուտ հասույթը,
- իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքը,
- իրացումից շահույթը,
- սովորական (ֆինանսատնտեսական) գործունեության շահույթը,



- զուտ շահույթը (հարկումից հետո),
- սեփական կապիտալի միջին մեծությունը,
- ընթացիկ ակտիվների միջին մեծությունը,
- ընդհանուր կապիտալի (հաշվեկշռի հանրագումարի) միջին մեծությունը,
- ոչ ընթացիկ ակտիվների միջին մեծությունը,
- նյութական ընթացիկ ակտիվների միջին մեծությունը,
- ոչ ընթացիկ պարտավորությունների միջին մեծությունը:

Շահութաբերության մակարդակի հաշվարկման մեթոդները տրված են աղյուսակ 3.5.1-ում (տող 12-19): Աղյուսակի տվյալներից երևում է, որ շահութաբերության մակարդակը բոլոր ցուցանիշների գծով հաշվետու տարում գերազանցել է նախորդ տարվան և ամենաբարձրն է եղել ներդրումների շահութաբերության համար: Այն կազմել է 42,5% և գերազանցել է նախորդ տարվա մակարդակին՝ 237,3%-ով: Հաշվետու տարում բավականին բարձր են եղել նաև միջին հաշվով սեփական կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթի (հարկումից հետո) գումարի չափը՝ 0,40 միավոր կամ 40%, ինչպես նաև նույն չափով շահույթի նորման՝ ոչ ընթացիկ ակտիվների և նյութական ընթացիկ ակտիվների միավորի հաշվով: Ամենացածրը վաճառքի ծավալի շահութաբերությունն է, որը նախորդ տարում կազմել է 3,8 %:

Ընդհանուր հետևություն, որ վերը նշված շահութաբերության ցուցանիշների հաշվարկումը հնարավորություն կտա յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի կողմնորոշվելու թերությունների բացահայտման, դրանց վերացման ու շահութաբերության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

## 3.6. Շահութաբերության ցուցանիշների գործոնային վերլուծությունը

Շահութաբերությունը բնութագրող ցուցանիշների մակարդակի և դինամիկայի վրա ազդեցություն են գործում արտադրատնտեսական գործունեությանը նպաստող բոլոր գործոնները, այդ թվում՝ արտադրության կազմակերպման ու կառավարման մակարդակը, ընդհանուր ակտիվների (կապիտալի) կառուցվածքը և դրա կազմավորման աղբյուրները, արտադրական ռեսուրսների օգտագործման աստիճանը, արտադրանքի ծավալը, կառուցվածքը և որակը, արտադրանքի արտադրության և իրացման հետ կապված ծախսերը, տարբեր գործունեություններից ստացված շահույթը և դրա օգտագործման ուղիները:

Շահութաբերության ցուցանիշների գործոնային վերլուծության մեթոդոլոգիան հիմնվում է այդ շահութաբերության ցուցանիշներից յուրաքանչյուրի առանձնահատկությունների վրա՝ ելնելով ազդող գործոնների հատկանիշներից[1], այսինքն, թե դրանցից որոնք են զգալի ազդեցություն գործում արդյունքային ցուցանիշ համարվող շահութաբերության մակարդակի վրա:

Շահութաբերության հաշվարկված յուրաքանչյուր մակարդակ համարելով արդյունքային ցուցանիշ, կարող ենք կազմել տարբեր գործոններով ազդեցության մոդելներ: Դրանցից են օրինակ՝

- երկգործոնային մոդելը, եթե արդյունքային ցուցանիշը ընդհանուր ակտիվների շահութաբերությունն է, ապա արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$\frac{ՋՇ}{ԸԿ} = \frac{ՋՇ}{ԻՋՀ} \times \frac{ԻՋՀ}{ԸԿ}: \qquad (3.6.1)$$

Այս մոդելում կա փոխկապվածություն ընդհանուր ակտիվների, իրացման շահութաբերությունների և ակտիվների շրջանառելիության միջև: Այսինքն՝ ընդհանուր ակտիվների ցածր շահութաբերության բարձրացման համար անհրաժեշտ է ձգտել ավելացնել ակտիվների մեկ միավորին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի գումարի չափը կամ արագացնել ակտիվների պտույտները:

- հինգգործոնային մոդելը, եթե արդյունքային ցուցանիշը նույնն է և միաժամանակ երկգործոնային մոդելում ներառված երկու գործոններից բացի կան նաև լրացուցիչ երեք ազդող գործոններ, ապա դրանցից՝

ա) ֆինանսական կախվածության ցուցանիշը, որը բնութագրում է ընդհանուր և սեփական կապիտալների հարաբերակցությունը,

բ) սեփական և ներդրումային կապիտալների հարաբերակցության ցուցանիշը,

գ) ներդրումային և ընդհանուր կապիտալների հարաբերակցության ցուցանիշը:

Այսինքն՝ արդյունքային ցուցանիշի և ազդող գործոնների միջև եղած փոխկախվածությունը կարտահայտվի հետևյալ բանաձևով՝

$$\frac{ՋՇ}{ԸԿ} = \underset{(1)}{\frac{ՋՇ}{ԻՋՀ}} \times \underset{(2)}{\frac{ԻՋՀ}{ԸԿ}} \times \underset{(3)}{\frac{ԸԿ}{ՍԿ}} \times \underset{(4)}{\frac{ՍԿ}{ՆԿ}} \times \underset{(5)}{\frac{ՆԿ}{ԸԿ}}: \qquad (3.6.2)$$

[1] Ковалев А.М., Привалов В.П. Анализ финансового состояния предприятия. М., 1997, с. 97.



Բերված մոդելում արդյունքային ցուցանիշ համարվող ընդհանուր ակտիվների շահութաբերության ավելացումը կախված է նաև 3-րդ գործոնից (ֆինանսական կախվածության ցուցանիշ) այն չափով, թե որքան մասն է կազմում սեփական կապիտալի բաժինը ընդհանուր ակտիվներում կամ այդ ակտիվների կազմավորման աղբյուրներում (հաշվեկշռի պասիվում): Այսինքն՝ որքան բարձր լինի սեփական կապիտալի տեսակարար կշիռը կազմավորման աղբյուրներում, կնշանակի տնտեսավարող սուբյեկտն ի վիճակի է ավելացնելու ընդհանուր ակտիվների շահութաբերության մակարդակը: Ելնելով 3-րդ գործոնի տնտեսագիտական մեկնաբանությունից, պետք է նշել, որ տվյալ հարաբերակցությունը որքան 1,0 գործակցին մոտ լինի, այնքան արդյունավետ է: Ըստ 4-րդ գործոնի տնտեսագիտական մեկնաբանության, որքան բարձր լինի սեփական կապիտալի բաժինը ներդրումային կապիտալի նկատմամբ և միաժամանակ այն օգտագործվի նպատակային, այնքան նպաստավոր պայմաններ կստեղծվեն ընդհանուր ակտիվների շահութաբերության բարձրացման համար: Վերջին 5-րդ գործոնը բնութագրում է ընդհանուր կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող ներդրումային (սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների հանրագումարը) կապիտալի չափը: Որքան ներդրումային կապիտալի տեսակարար կշիռը մեծ լինի ընդհանուր կապիտալում և այն օգտագործվի նպատակային, այնքան լավ: Այս գործոնը կարևոր ցուցանիշ է հատկապես տնտեսապես զարգացող երկրների (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության) համար, քանի որ եթե այդ ներգրավված ներդրումներն օգտագործվեն նպատակային տնտեսավարող սուբյեկտների և նմանատիպ այլ կազմակերպությունների կողմից, ապա դրանք կնպաստեն այդ սուբյեկտների և տվյալ երկրի եկամուտների ավելացմանը:

Օգտագործելի բոլոր գործոնային մոդելների հիմքում ընկած է հետևյալ հարաբերակցությունը՝

$$(ԸԿ)_{շահութ.} = \frac{ԻՇ}{ԸԿ} = \frac{ԻՇ}{ԻՋՀ} \times \frac{ԻՋՀ}{ԸԿ} = \frac{\frac{ԻՇ}{ԻՋՀ}}{\frac{ԸԿ}{ԻՋՀ}} = \frac{\frac{ԻՇ}{ԻՋՀ}}{\frac{ՈՐԱ}{ԻՋՀ} + \frac{ԸԱ}{ԻՋՀ}} = \frac{1 - \frac{ԼԻ}{ԻՋՀ}}{\frac{ՈՐԱ}{ԻՋՀ} + \frac{ԸԱ}{ԻՋՀ}} =$$

$$= \frac{1 - \left(\frac{ԱԿ}{ԻՋՀ} + \frac{ՆԾ}{ԻՋՀ} + \frac{ԱՀ}{ԻՋՀ}\right)}{\frac{ՈՐԱ}{ԱՀ} \times \frac{ԱՀ}{ԻՋՀ} + \frac{ԸԱ}{ԻՋՀ}}, \qquad (3.6.3)$$

որտեղ՝

$(ԸԿ)_{շահութ.}$ - ընդհանուր կապիտալի (ակտիվների) շահութաբերությունն է,

ԻՇ - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթն է,

$\overline{ԸԿ}$ - ընդհանուր կապիտալի (ակտիվների) միջին մեծությունն է ուսումնասիրվող ժամանակամիջոցում,

$\overline{ՈԸԱ(ՀՄ)}$ - ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների և այլ ներդրումների) միջին մեծությունն է ուսումնասիրվող ժամանակամիջոցում,

$\overline{ԸԱ}$ - ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մեծությունն է ուսումնասիրվող ժամանակամիջոցում,

ԻՋՀ - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթն է,

ԼԻ - իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքն է,

ԱՎ - աշխատանքի վարձատրությունն է՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով,

ՆԾ - արտադրության և իրացման գործընթացում նյութական, առևտրային և վարչական ծախսումներն են,

ԱՀ - տարեկան ամորտիզացիոն հատկացումների գումարն է,

$\frac{ԻՇ}{ԻՋՀ}$ - հարաբերակցությունը արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման շահութաբերությունն է,

$\frac{ԸԿ}{ԻՋՀ}$ - հարաբերակցությունը բնութագրում է ընդհանուր կապիտալի (ակտիվների) հատույցի միջին մեծությունը,

$\frac{ԼԻ}{ԻՋՀ}$ - հարաբերակցությունը իրացումից հասույթի մեկ միավորին բաժին ընկնող լրիվ ինքնարժեքն է,

$\frac{ԱՎ}{ԻՋՀ}, \frac{ՆԾ}{ԻՋՀ}, \frac{ԱՀ}{ԻՋՀ}$ - հարաբերությունները համապատասխանաբար իրացումից զուտ հասույթի մեկ միավորին բաժին ընկնող աշխատավարձն է՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով, նյութական ծախսումները և ամորտիզացիոն հատկացումները,

$\frac{\overline{ՈԸԱ(ՀՄ)}}{ԱՀ}$ - հարաբերակցությունը բնութագրում է ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) շրջանառելիության միջին արագությունը,



$\frac{\overline{ՈԸԱ(ՀՄ)}}{ԻՋՀ}$ - հարաբերակցությունը բնորոշում է իրացումից զուտ հասույթի կապիտալատարությունը ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) գծով կամ իրացումից զուտ հասույթի մեկ միավորին բաժին ընկնող ոչ ընթացիկ ակտիվների կամ հիմնական միջոցների գումարի մեջ չափը,

$\frac{ԻՋՀ}{\overline{ՈԸԱ(ՀՄ)}}$ - ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) հատույցն է,

$\frac{ԱՀ}{ԻՋՀ}$ - հարաբերակցությունը բնութագրում է իրացումից զուտ հասույթի մեկ միավորին բաժին ընկնող ամորտիզացիոն հատկացումների գումարի չափը,

$\frac{\overline{ԸԱ}}{ԻՋՀ}$ - հարաբերակցությունը բնութագրում է իրացումից զուտ հասույթի միավորին միջին հաշվով բաժին ընկնող ընթացիկ ակտիվների գումարի չափը:

Շահութաբերության ցուցանիշների գործոնային թվարկված մոդելները և դրանցում ընդգրկված ցուցանիշների էությունն ավելի հստակ պատկերացնելու համար կազմենք աղյուսակ (3.6.1)՝ տնտեսավարող սուբյեկտի արտադրատնտեսական գործունեության օրինակով, որում ներառվում են ելակետային տվյալներ և հաշվարկային ցուցանիշներ (հավելված 1 և 2):

Առաջին հերթին կատարենք երկգործոնային վերլուծություն՝ նախօրոք հաշվարկելով ընդհանուր կապիտալի (ակտիվների) շահութաբերությունը (3.6.1) բանաձևի հիման վրա՝ նախորդ (բազիսային) և հաշվետու տարիների կտրվածքով.

- նախորդ (բազիսային) տարվա համար՝

$$(ԸԿ)_{շահութ.(0)} = \frac{ԻՇ}{ԸԿ} = \frac{ԻՇ}{ԻՋՀ} \times \frac{ԻՋՀ}{ԸԿ},$$

$$(ԸԿ)_{շահութ.(0)} = \frac{34506}{319055} = \frac{34506}{517481} \times \frac{517481}{319055},$$

$$0,1082 = 0,0667 \times 1,6219,$$

Աղյուսակ 3.6.1

## Շահութաբերության ցուցանիշների գործոնային վերլուծությունը

| Ցուցանիշների անվանումը | Պայմանական նշանակումներ | Նախորդ ժամանակաշրջան (տարի) | Հաշվետու ժամանակաշրջան (տարի) | Շեղումը (+;-) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4 | 5(u4-u3) | 6(u5:u3) |
| ելակետային տվյալներ | | | | | |
| 1.իրացումից զուտ հասույթ, հազ.դր. | ԻՉՀ | 517481 | 794709 | 277229 | 53,6 |
| 2.աշխատանքային ռեսուրսներ՝ | | | | | |
| ա) աշխատողների միջին ցուցակային թիվը, մարդ | Ա | 114 | 122 | 8 | 7,0 |
| բ) աշխատավարձ սոցապ. հատկացումներով, հազ. դրամ | Ավ | 102406 | 134181 | 31775 | 31,0 |
| 3.նյութական, առևտրային և վարչական ծախսեր, հազ. դրամ | ՆԾ | 368191 | 510653 | 142462 | 38,7 |
| 4.ոչ ընթացիկ ակտիվների միջին մնծությունը, հազ. դրամ | ՈԸԱ | 114398 | 120908 | 6510 | 5,7 |
| ա)հիմնական միջոցներ և այլն | ՀՄ | 110727 | 117028 | 6301 | 5,7 |
| բ)ամորտիզացիոն հատկացումներ | ԱՀ | 12378 | 13289 | 911 | 7,4 |
| 5.ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մնծությունը, հազ. դր. | ԸԱ | 204657 | 295822 | 91169 | 44,5 |
| 6.ընդհանուր կապիտալի (ակտիվների) միջին մնծությունը, հազ. դր. | ԸԿ | 319055 | 416730 | 97675 | 30,6 |
| հաշվարկային ցուցանիշներ | | | | | |
| 7.լրիվ ինքնարժեք, հազ. դրամ (տ.2ա + տ.3 + տ.4բ) | ԼԻ | 482975 | 658123 | 175148 | 36,3 |
| 8.իրացումից շահույթ (տ.1 - տ.7) | ԻՇ | 34506 | 136586 | 102080 | 295,8 |
| 9.ընդհանուր կապիտալի (ակտիվների) շահութաբերությունը, % [ տ.8 : (տ.4 + տ.5) ] | $(ԸԿ)_ւ$ | 7,1 | 20,8 | 13,7 | 193,0 |
| հաշվարկներ երկգործոնային մոդելի համար | | | | | |
| 1-ին գործոն<br>արտադրանքի իրացման շահութաբերությունը, % | ԻՇ / ԻՉՀ | 6,7 | 17,2 | 10,5 | 156,7 |
| 2-րդ գործոն<br>ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) հատույցը | ԻՉՀ / ՈԸԱ | 4, 5235 | 6, 5728 | 2, 0493 | 45,3 |



Աղյուսակի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5(u4-u3) | 6(u5:u3) |
|---|---|---|---|---|---|
| հաշվարկներ երեքգործոնային մոդելի համար | | | | | |
| 1-ին գործոն<br>արտադրանքի իրացման շահութաբերությունը, % | ԻՇ / ԻՉՀ | 6,7 | 17,2 | 10,5 | 156,7 |
| 2-րդ գործոն<br>իրացումից զուտ հասույթի կապիտալատարությունը՝ ոչ ընթացիկ ակտիվների գծով | ՈԸԱ / ԻՉՀ | 0,2211 | 0,1521 | 0,0690 | -31,2 |
| 3-րդ գործոն<br>իրացումից զուտ հասույթի միավորին բաժին ընկնող ընթացիկ ակտիվները | ԸԱ / ԻՉՀ | 0,3955 | 0,3722 | -0,0233 | -5,9 |
| հաշվարկներ հինգգործոնային մոդելի համար | | | | | |
| 1-ին գործոն<br>արտադրանքի իրացումից զուտ հասույթի միավորին բաժին ընկնող նյութական, առևտրային և վարչական ծախսերը | ՆԾ / ԻՉՀ | 0,7115 | 0,6426 | -0,0689 | -9,7 |
| 2-րդ գործոն<br>արտադրանքի իրացումից զուտ հասույթի միավորին բաժին ընկնող աշխատավարձը սոցապ. հատկացումներով | ԱՎ / ԻՉՀ | 0,1979 | 0,1688 | -0,0291 | -14,7 |
| 3-րդ գործոն<br>արտադրանքի իրացումից զուտ հասույթի միավորին բաժին ընկնող ամոտիզացիոն հատկացումները | ԱՀ / ԻՉՀ | 0,0239 | 0,0167 | -0,0072 | -30,1 |
| 4-րդ գործոն<br>ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) շրջանառելիության արագությունը | ՈԸԱ / ԱՀ | 9, 2420 | 9, 0984 | -0,1536 | -1,7 |
| 5-րդ գործոն<br>արտադրանքի իրացումից զուտ հասույթի միավորին բաժին ընկնող ընթացիկ ակտիվները | ԸԱ / ԻՉՀ | 0,4972 | 0,3722 | -0,1250 | -25,1 |

- հաշվետու տարվա համար՝ վերը նշված բանաձևի հիման վրա՝

$$(ԸԿ)_{շահութ.(1)} = \frac{136586}{416730} = \frac{136586}{794709} \times \frac{794709}{416730},$$

$$0,3278 = 0,1719 \times 1,9070:$$

Հաշվարկներից երևում է, որ հաշվետու տարվա ընդհանուր կապիտալի շահութաբերության փոփոխությունը (հավելաճը կամ նվազումը) նախորդ տարվա համեմատությամբ, ըստ երկու ազդող գործոնների, կազմել է՝

$$\pm \Delta(ԸԿ)_{շահութ.} = \left(\frac{ԻԾ}{ԻՋՀ} \times \frac{ԻՋՀ}{ԸԿ}\right)_{(1)} - \left(\frac{ԻԾ}{ԻՋՀ} \times \frac{ԻՋՀ}{ԸԿ}\right)_{(0)}, \qquad (3.6.4)$$

$$\pm \Delta\,(ԸԿ)_{շահութ.} = 0,3278 - 0,1082 = 0,2196 \quad \text{կամ} \quad 22,0\ \% :$$

Այսինքն՝ շահութաբերությունն ավելացել է 22%-ով:

Այժմ կատարենք երեքգործոնային վերլուծություն՝ կապված ընդհանուր կապիտալի շահութաբերության հետ (բանաձև 3.6.3).

- նախորդ (բազիսային) տարվա համար՝

$$(ԸԿ)_{շահութ.(0)} = \frac{ԻԾ}{ԸԿ} = \frac{\frac{ԻԾ}{ԻՋՀ}}{\frac{ՈԸԱ}{ԻՋՀ} + \frac{ԸԱ}{ԻՋՀ}} = \frac{\frac{34506}{517481}}{\frac{114398}{517481} + \frac{204657}{517481}} = \frac{0,0667}{0,2211 + 0,3955} =$$

$$= \frac{0,0667}{0,6166} = 0,108 \text{ կամ } 10,8\%,$$

- հաշվետու տարվա համար այն հավասար կլինի՝

$$(ԸԿ)_{շահութ.(1)} = \frac{\frac{136586}{794709}}{\frac{120908}{794709} + \frac{295822}{794709}} = \frac{0,1719}{0,1521 + 0,3722} = \frac{0,1719}{0,5243} = 0,328$$

կամ 32,8 %:

Նույն եղանակով շահութաբերությունը հաշվարկվում է նաև հինգգործոնային մոդելի համար (բանաձև 3.6.3).

- նախորդ (բազիսային) տարվա համար՝

$$(ԸԿ)_{շահութ.(0)} = \frac{1 - \left(\frac{102406}{517481} + \frac{368191}{517481} + \frac{12378}{517481}\right)}{\frac{114398}{12378} + \frac{12378}{517481} + \frac{204657}{517481}} =$$



$$= \frac{1 - (0,1979 + 0,7115 + 0,0239)}{9,2420 \times 0,0239 + 0,3955} = \frac{0,0667}{0,6164} = 0,108 \text{ կամ } 10,8\%,$$

- հաշվետու տարվա համար՝

$$(ԸԿ)_{շահութ.(1)} = \frac{1 - \left(\frac{134181}{794709} + \frac{510653}{794709} + \frac{13289}{794709}\right)}{\frac{120908}{13289} \times \frac{13289}{794709} + \frac{295822}{794709}} =$$

$$= \frac{1 - (0,1688 + 0,6426 + 0,0167)}{9,0984 \times 0,0167 + 0,3722} = \frac{0,1719}{0,5241} = 0,328 \text{ կամ } 32,8\%:$$

Կատարված հաշվարկներից պարզվում է, որ ինչպես երեքգործոնային, այնպես էլ հինգգործոնային մոդելների ժամանակ ընդհանուր կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող իրացումից շահույթը նախորդ տարվա համար միջին հաշվով կազմել է 0,108, իսկ հաշվետու տարվա համար՝ 0,328 միավոր կամ բացարձակ հավելաճը կազմել է 0,22 միավոր (0,328 – 0,108):

Ամփոփելով վերոշարադրյալը կապված ֆինանսական արդյունքների վերլուծության հետ, կարելի է ասել, որ լուսաբանված հարցերը յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի հնարավորություն կտան ինքնուրույն կատարել ֆինանսական վերլուծություն և միաժամանակ հանգել համապատասխան եզրակացությունների՝ շահույթի ստացման ու շահութաբերության մակարդակների բարձրացման վերաբերյալ:

# Գլուխ 4

# Ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության գնահատման ցուցանիշներն ու դրանց հաշվարկման մեթոդիկան

## 4.1. Ֆինանսական կայունության գնահատումը

### 4.1.1. Ֆինանսական կայունության էությունն ու նշանակությունը

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կայունություն ասելով հասկանում ենք, որ դրանց գործունեության ընթացքում ապահովվում է եկամուտների կայուն աճ կատարվող ծախսերի նկատմամբ, դրամական միջոցների նպատակային օգտագործում, արտադրության գործընթացի անընդհատություն և արտադրված արտադրանքի ժամանակին իրացում[1]: Այդ իսկ պատճառով էլ ֆինանսական կայունությունը ձևավորվում է արտադրատնտեսական գործընթացի բոլոր փուլերում և համարվում է տընտեսավարող սուբյեկտի ընդհանուր կայունության ամենահիմնական ցուցանիշը:

Տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր կայունությունը բնորոշվում է դրամական միջոցների այնպիսի շարժով, որն ապահովում է այդ միջոցների մուտքագրման (եկամուտների) անընդհատ գերազանցումը դրանց ելքագրումների (ծախսերի) նկատմամբ:

Ֆինանսական կայունությունը, կախված ազդող գործոնների էությունից, լինում է երկու տեսակ՝ *ներքին* և *արտաքին*: Սրանց թվին են դասվում՝

- ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներով ապահովվածությունը,
- դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վիճակը,
- ապրանքային շուկայում որակյալ արտադրանքի մրցակցության ապահովումը,
- արտաքին ներդրողներից (ինվեստորներից) և կրեդիտորներից (վարկատուներից) կախվածության աստիճանը,
- տնտեսական ու ֆինանսական գործառնությունների արդյունավետությունը և այլ գործոններ:

[1] Абрютина М.С., Грачев А.В. Анализ финансового - экономической деятельности предприятия (учебно-практическое пособие). М., 1998, с.211.



Ներքին կայունությունը բնութագրվում է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրության այնպիսի իրավիճակով, երբ դրանց արտադրատնտեսական ճիշտ գործունեության հետևանքով ապահովվում է ֆինանսական բարձր, կայուն արդյունք (շահույթ):

Արտաքին կայունությունը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կայուն միջավայրով, որի շրջանակներում իրականացվում է նրա գործունեությունը: Շուկայական տնտեսավարման կառավարման համակարգում արտաքին կայունությունը դրսևորվում է բոլոր երկրների մասշտաբով:

Ելնելով կայունության վերոնշյալ բնորոշումներից՝ կարելի է ասել, որ ֆինանսական կայունությունն իր առանձնահատուկ տեղն ունի տնտեսավարող սուբյեկտի համար, և նրա գծով այս կամ այն ժամանակահատվածի համար վերլուծություն կատարելիս, տրվում են մի շարք հարցերի պատասխաններ, այդ թվում՝

- թե որքանով կամ քանի տոկոսով են տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ գտնվող ֆինանսական ռեսուրսները ճիշտ կառավարվել տվյալ ժամանակահատվածում՝ նախորդ համապատասխան ժամանակահատվածի հետ համեմատած,
- անհրաժեշտ է, որպեսզի ֆինանսական ռեսուրսների վիճակը համապատասխանի արտադրության զարգացման և շուկայի կողմից ներկայացվող պահանջներին, քանի որ ֆինանսական ոչ բավարար կայունությունը կարող է բերել տնտեսավարող սուբյեկտի անվճարունակության, իսկ հետագայում՝ նույնիսկ նրա սնանկացման:

Այստեղից հետևում է, որ ֆինանսական կայունությունը որոշվում է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կազմավորմամբ, օգտագործմամբ և բաշխմամբ, իսկ անվճարունակությունը հետևանք է ֆինանսական անկայունության դրսևորման:

Ընդհանուր առմամբ, վճարունակությունը տնտեսավարող սուբյեկտի ունակությունն է սահմանված ժամկետներում կատարելու իր վճարային պարտավորությունները՝ կապված առևտրային, վարկային և այլ բնույթի գործառնությունների հետ: Վճարունակության հաշվարկներն իրականացվում են կոնկրետ ամսաթվի դրությամբ, և որպեսզի պարզվի՝ արդյոք այն ճիշտ է կատարված թե ոչ, անհրաժեշտ է ստուգել դրամական միջոցների առկան՝ դրամարկղում, բանկային հաշիվներում (հաշվարկային և արտարժույթային հաշիվներ), և կարճաժամկետ ֆինանսական ներդրումները: Նշված ակտիվները պետք է ունենան սահմանված չափի մեծություն: Այսինքն, մի կողմից, որքան շատ լինեն դրամական միջոցները համապատասխան հաշիվներում, կնշանակի տվյալ տնտեսավարող սուբյեկտը

մեծ հավանականությամբ կարող է ժամանակին իրականացնել ընթացիկ հաշվարկներ և վճարումներ: Մյուս կողմից էլ, ոչ բավարար չափով դրամական միջոցների առկայությունը հեռևս չի նշանակում, թե տվյալ տնտեսավարող սուբյեկտն անվճարունակ է, քանի որ առաջիկա օրերի ընթացքում կարող են դրամական միջոցներ մուտքագրվել դրամարկղ, բանկային հաշիվներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ (արժեթղթերի տեսքով), և դրանով ապահովել վճարունակությունը:

Որպես ֆինանսական կայունության բացահայտման կարևորագույն օղակ, վճարունակության վերլուծության ժամանակ տնտեսավարող սուբյեկտը կազմում է վճարային օրացույց՝ ամսվա կտրվածքով, որտեղ ըստ տողերի նշվում են օրերը, իսկ ըստ սյուների՝ այդ օրերում դրամական միջոցների մուտքագրումները (իրացումից հասույթ, դեբիտորական պարտքերի մարումները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները և այլն), պարտավորությունների կատարումը (հարկատեսակների վճարում, վարկերի հետ վերադարձ, ստացված վարկի դիմաց տոկոսի վճարում, աշխատավարձը՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով և այլն):

Վճարային օրացույցի օրինակելի տեսքը

| Օրերը | Միջոցների մուտքագրումը | Պարտավորությունների (վճարումների) կատարումը | Մնացորդը (+,-) |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |

Ամսվա կտրվածքով դուրս են բերվում կատարված դրամական միջոցների մուտքագրումները, պարտավորությունները և մնացորդը: Եթե ամսվա վերջում մնացորդը դրական է, նշանակում է տնտեսավարող սուբյեկտը դեռևս ի վիճակի է հաջորդ ամսվա ընթացքում վճարումներ կատարել: Իսկ եթե մնացորդը բացասական է, ապա տնտեսավարող սուբյեկտին պետք է մտահոգի ֆինանսական անկայունության հարցը:



## 4.1.2. Ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշները

Ֆինանսական կայունության գնահատման բացարձակ ցուցանիշները բնութագրում են տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեությունը՝ արտադրական պաշարներով և կատարվող ծախսումների կազմավորման աղբյուրներով ապահովվածության աստիճանը[1]: Իսկ պարզելու համար, թե որքանով է ապահովված տվյալ տնտեսավարող սուբյեկտը պաշարներով, անհրաժեշտ է կատարել հաշվարկներ՝ հիմք ընդունելով հաշվապահական հաշվեկշռի ամփոփ տվյալները: Պաշարների և ծախսումների կազմավորման աղբյուրների (ՊԿԱ) բնութագրման համար ընդունված է երեք հիմնական ցուցանիշ: Դրանք են՝

1. Սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվները (ՍԸԱ), որոնք հաշվարկվում են երկու եղանակով.

ա) ՍԸԱ - ն հաշվապահական հաշվեկշռի (տե՛ս հավելված 1) պասիվի III (սեփական կապիտալ) և IV (ոչ ընթացիկ պարտավորություններ) բաժինների հանրագումարի ու ակտիվի I բաժնի (ոչ ընթացիկ ակտիվներ) գումարի տարբերությունն է: Ավելի արտահայտիչ լինելու համար դա ներկայացնենք բանաձևերի տեսքով՝

$$(ՊԿԱ)_1 = Պ(III) + Պ(IV) - Ա(I) = ՍԸԱ$$

կամ՝

$$(ՊԿԱ)_1 = ՍԿ + ՈԸՊ - ՈԸԱ = ՍԸԱ, \qquad (4.1.2.1)$$

որտեղ՝

ՍԿ - սեփական կապիտալն է,

ՈԸՊ - ոչ ընթացիկ պարտավորություններն են,

ՈԸԱ - ոչ ընթացիկ ակտիվներն են,

բ) ՍԸԱ-ն հաշվապահական հաշվեկշռի ակտիվի II (ընթացիկ ակտիվներ) և պասիվի V (ընթացիկ պարտավորություններ) բաժինների գումարների տարբերությունն է՝

$$(ՊԿԱ)_1 = Ա(II) - Պ(V) = ՍԸԱ$$

կամ՝

$$(ՊԿԱ)_1 = ԸԱ - ԸՊ = ՍԸԱ, \qquad (4.1.2.2)$$

որտեղ՝

ԸԱ - ընթացիկ ակտիվներն են,

[1] Артеменко В.Г., Беллендир М.В. Финансовый анализ (учебное пособие). М., 1997, с. 30.

ԸՊ - ընթացիկ պարտավորություններն են:

Ըստ հավելված 1-ի հաշվապահական հաշվեկշռի տվյալների, սեփական ընթացիկ ակտիվներն ըստ տարիների հավասար կլինեն՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

ա) $(ՊԿԱ)_{1.0} = 177778 + 45129 - 106400 = 116507$ հազ. դրամ,

բ) $(ՊԿԱ)_{1.0} = 235561 - 119054 = 116507$ հազ. դրամ,

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

ա) $(ՊԿԱ)_{1.1} = 254426 + 86049 - 135416 = 205059$ հազ. դրամ,

բ) $(ՊԿԱ)_{1.1} = 356082 - 151023 = 205059$ հազ. դրամ:

Երկու տարվա համար էլ, տարբեր եղանակներով հաշվարկներում, ստացվում է միևնույն արդյունքը. հաշվետու տարում սեփական ընթացիկ ակտիվները նախորդ տարվա համեմատությամբ ավել է եղել 88552 հազ. դրամով (205059 – 116507): Այս ցուցանիշը բնորոշում է տնտեսավարող սուբյեկտի զուտ ընթացիկ ակտիվների (շրջանառու կապիտալի) գումարի չափը, որի ավելացումը, նախորդ ժամանակաշրջանի հետ համեմատած, վկայում է նրա գործունեության հետագա արդյունավետ զարգացման մասին: Եթե տանք տնտեսագիտական ավելի խոր մեկնաբանություն, ապա անհրաժեշտ է նշել, որ ինչքան բարձր լինի այս մեծությունն իր արժեքային տեսքով, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը գտնվում է տնտեսապես նպաստավոր պայմաններում և ժամանակին ի վիճակի է մարելու բոլոր տեսակի կրեդիտորական պարտքերը, իսկ իր տրամադրության տակ եղած ապրանքանյութական ազատ արժեքներն ու դրամական միջոցները կարող է օգտագործել այլ նպատակների համար:

2. Արդեն հաշվարկված սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների (ՍԸԱ) և ոչ ընթացիկ պարտավորությունների հանրագումարը՝

$$(ՊԿԱ)_2 = ՍԸԱ + ՈԸՊ = ՍԸԱ + Պ(IV): \qquad (4.1.2.3)$$

Ըստ հավելված 1-ի տվյալների, պաշարների և ծախսումների կազմավորման աղբյուրներն ըստ տարիների հավասար կլինեն՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

$(ՊԿԱ)_{2.0} = 116507 + 45129 = 161636$ հազ. դրամ,

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

$(ՊԿԱ)_{2.1} = 205059 + 86049 = 291108$ հազ. դրամ:

Ի հաշիվ հաշվետու տարվա ոչ ընթացիկ պարտավորությունների 40920 հազ. դրամով ավելացման (86049 – 45129), աճել են նաև պաշարների և ծախսումների կազմավորման աղբյուրները՝ 129472 հազ. դրամով (291108 – 161636):

3. Պաշարների և ծախսումների կազմավորման մյուս կարևոր աղբյուրը $(ՊԿԱ)_3$ ավելի ընդհանրացված տեսքով իրենից ներկայացնում է (4.1.2.3) բանաձևում արդեն հաշվարկվածի և ընթացիկ պարտավորությունների (ԸՊ) հանրագումարը՝

$$(ՊԿԱ)_3 = (ՊԿԱ)_2 + ԸՊ = ՍԸԱ + Պ(IV) + Պ(V): \qquad (4.1.2.4)$$

Տեղադրելով հավելված 1-ից և (4.1.2.4) բանաձևից համապատասխան տվյալները, կստանանք՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

$(ՊԿԱ)_{3.0} = 161636 + 119054 = 280690$ հազ. դրամ,

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

$(ՊԿԱ)_{3.1} = 291108 + 151023 = 442131$ հազ. դրամ:

Հաշվետու տարում պաշարների և ծախսումների կազմավորման աղբյուրը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 161441 հազ. դրամով (442131 – 280690), ընդ որում ի հաշիվ ընթացիկ պարտավորությունների՝ 31969 հազ. դրամով (151023 – 119054):

Անհրաժեշտ է նշել, որ պաշարների և ծախսումների կազմավորման աղբյուրների գծով ներկայացված երեք ցուցանիշներից յուրաքանչյուրին համապատասխանում են պաշարներով ապահովվածության մակարդակը (ավելցուկը կամ պակասորդը), այդ թվում՝

1. պաշարների կազմավորման համար սեփական ընթացիկ ակտիվների ավելցուկը (+) կամ պակասորդը (–) արտահայտվում է հետևյալ հավասարման տեսքով՝

$$\pm(ՊԿԱ)_1 = ՍԸԱ - Պ, \qquad (4.1.2.5)$$

որտեղ՝

Պ-ն պաշարներն են:

Այսպես, ըստ հավելված 1-ի տվյալների, այն հավասար կլինի՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

$\pm\Delta (ՊԿԱ)_{1.0} = 116507 - 26665 = 89842$ հազ. դրամ,

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

$\pm\Delta (ՊԿԱ)_{1.1} = 205059 - 329758 = -124699$ հազ. դրամ:

Այստեղից հետևում է, որ հաշվետու տարվա վերջում պաշարների մնացորդը գերազանցում է կազմավորման աղբյուր հանդիսացող սեփական ընթացիկ ակտիվներին: Տվյալ դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտն ավելի շատ պաշարներ ունի, քան կազմավորման աղբյուրն է, որը դրական երևույթ չէ տնտեսավարող սուբյեկտի համար, քանի որ այդ պաշարները գտնվում են պահեստում, այլ ոչ թե արտադրության կամ շրջանա-

ռության ոլորտում:

2. Պաշարների կազմավորման համար սեփական և ոչ ընթացիկ (երկարաժամկետ) պարտավորությունների աղբյուրների ավելցուկը (+) կամ պակասորդը (–) հավասար է՝

$$\pm\Delta(\text{ՊԿԱ})_2 = (\text{ՍԸԱ} + \text{ՈԸՊ}) - \text{Պ}: \qquad (4.1.2.6)$$

Տեղադրելով հավելված 1-ից համապատասխան տվյալները, կստանանք՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

$\pm\Delta(\text{ՊԿԱ})_{2.0} = 161636 - 26665 = 134971$ հազ. դրամ,

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

$\pm\Delta(\text{ՊԿԱ})_{2.1} = 291108 - 329758 = -38650$ հազ. դրամ:

Այստեղից հետևում է, որ հաշվետու տարվա վերջում պաշարների մնացորդը կազմավորման աղբյուրներին գերազանցում է 38650 հազ. դրամով:

3. Պաշարների կազմավորման համար ընդհանուր աղբյուրների ավելցուկը (+) կամ պակասորդը (–) հավասար է՝

$$\pm\Delta(\text{ՊԿԱ})_3 = (\text{ՍԸԱ} + \text{ՈԸՊ} + \text{ԸՊ}) - \text{Պ}: \qquad (4.1.2.7)$$

Տեղադրելով համապատասխան տվյալները, կստանանք՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

$\pm\Delta(\text{ՊԿԱ})_{3.0} = 280690 - 26665 = 254025$ հազ. դրամ,

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

$\pm\Delta(\text{ՊԿԱ})_{3.1} = 442131 - 329738 = 112393$ հազ. դրամ:

Այսինքն՝ ի տարբերություն նախորդ երկու տեսակ կազմավորման աղբյուրների, հաշվետու տարվա վերջում արտադրական պաշարների համեմատությամբ ընդհանուր աղբյուրների (սեփական ընթացիկ ակտիվներ, ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ) ավելցուկ է գրանցվել 112393 հազ. դրամի չափով:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական իրավիճակը բնութագրվում է ֆինանսական կայունության 4 տարատեսակով:

1. Ֆինանսական դրության ***բացարձակ*** կայունություն, որն արտահայտվում է հետևյալ անհավասարության տեսքով՝

$$\text{Պ} < \text{ՍԸԱ} + \text{Վ}, \qquad (4.1.2.8)$$

որտեղ՝

Վ-ն բանկի վարկերն են, որոնք օգտագործվում են ապրանքանյութական արժեքների համար:



2. Ֆինանսական դրության ***նորմալ*** կայունություն, որի դեպքում երաշխավորվում է տնտեսավարող սուբյեկտի վճարունակությունը: Դա արտահայտվում է հետևյալ հավասարման տեսքով՝

$$\text{Պ} = \text{ՍԸԱ} + \text{Վ}: \qquad (4.1.2.9)$$

3. Ֆինանսական ***անկայուն*** դրություն, որը բնորոշվում է տնտեսավարող սուբյեկտի վճարունակության խախտումով: Նման իրավիճակի դեպքում պաշարների գծով հավասարակշռության պահպանումը հնարավոր է ի հաշիվ սեփական միջոցների աղբյուրների լրացման և սեփական ընթացիկ ակտիվների ավելացման: Դա արտահայտվում է հետևյալ հավասարման տեսքով՝

$$\text{Պ} = \text{ՍԸԱ} + \text{Վ} + \text{ՖՎԿԱ}, \qquad (4.1.2.10)$$

որտեղ՝

ՖՎԿԱ-ն ֆինանսական վիճակի կարգավորման աղբյուրներն են:

4. Ֆինանսական ***ճգնաժամային*** դրություն, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտը գտնվում է սնանկացման եզրին: Դա արտահայտվում է հետևյալ անհավասարության տեսքով՝

$$\text{Պ} > \text{ՍԸԱ} + \text{Վ}: \qquad (4.1.2.11)$$

Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտը տվյալ իրավիճակում չունի դրամական այնքան միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ (արժեթղթեր), դեբիտորական պարտքեր և այլ ընթացիկ ակտիվներ, որպեսզի կարողանա ծածկել (մարել) նույնիսկ կրեդիտորական պարտքերն ու այլ ընթացիկ (կարճաժամկետ) պասիվները:

## 4.1.3. Ֆինանսական կայունության գնահատման հարաբերական ցուցանիշները

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության ամենահիմնական բնութագիրը դրանց գործունեության կայունության ապահովումն է երկարատև ժամանակահատվածում[1]: Ֆինանսատնտեսական կայուն վիճակի ապահովումը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր ֆինանսական կառուցվածքով, արտաքին ու ներքին վարկատուներից և ներդրողներից (ինվեստորներից) կախվածության աստիճանով ու այլ բնույթի ազդող գործոններով: Այսպես, եթե տնտեսավարող

[1] Ван Хорн. Дж.К. Основы управления финансами. М., 2000, с. 133.

սուբյեկտի ֆինանսական կառուցվածքում «Սեփական կապիտալ և փոխառու կապիտալ» հարաբերակցությունում փոխառու կապիտալն ունի աճման միտում (դեպի պարտքային՝ ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների կողմը), ապա տվյալ իրավիճակում տնտեսավարող սուբյեկտն անմիջապես կսնանկանա, եթե միաժամանակ մի քանի վարկատուներ հետ պահանջեն իրենց հասանելիք պարտքերը: Այդ իսկ պատճառով, մեծ նշանակություն ունի սեփական կապիտալի աճի ապահովումը փոխառու կապիտալի նկատմամբ, որպեսզի տնտեսավարող սուբյեկտը մնա ֆինանսապես ու տնտեսապես կայուն վիճակում: Ուստի, ելնելով տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության կարևորությունից, խիստ անհրաժեշտ է, որպեսզի ֆինանսատնտեսական յուրաքանչյուր վերլուծություն իրականացնող կարողանա գնահատել տվյալ պահի դրությամբ այդ սուբյեկտի ֆինանսական վիճակը՝ հիմք ընդունելով հետևյալ հարաբերական ցուցանիշները (որոնք ենթական են հաշվարկման).

1. ***Սեփական կապիտալի կենտրոնացման գործակիցը*** ($Գ_{սկկ}$), որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի (ՍԿ) տեսակարար կշիռը հաշվեկշռի պասիվի հանրագումարում (ΣՊ) կամ ընդհանուր կապիտալում (ԸԿ): Որքան բարձր լինի այս գործակիցը, կնշանակի տնտեսավարող տվյալ սուբյեկտը ֆինանսապես կայուն վիճակում է և կախվածության մեջ չէ արտաքին ու ներքին վարկատուներից: Այս ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{սկկ} = \frac{ՍԿ}{ΣՊ} = \frac{ՍԿ}{ԸԿ}: \qquad (4.1.3.1)$$

Հաշվարկները ցույց են տալիս, որ տնտեսավարող սուբյեկտը ֆինանսապես բավարար չափով կայուն վիճակում կլինի, եթե $Գ_{սկկ} \geq 0,6$ (60%): Այսինքն՝ սեփական կապիտալի տեսակարար կշռի նվազագույն չափը 60%-ից ցածր չպետք է լինի, հակառակ դեպքում տնտեսավարող սուբյեկտն աստիճանաբար կհայտնվի ֆինանսապես անկայուն վիճակում:

2. ***Փոխառու կապիտալի (ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ) կենտրոնացման գործակիցը*** ($Գ_{փկկ}$), որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի փոխառու կապիտալի (ՓԿ) տեսակարար կշիռը հաշվեկշռի պասիվի հանրագումարում: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{փկկ} = \frac{ՓԿ}{ΣՊ} = \frac{ՓԿ}{ԸԿ}: \qquad (4.1.3.2)$$



Ի տարբերություն սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի, այս գործակիցը համարվում է արդյունավետ, եթե այն փոքր չէ 0,4 (40%)-ից, այսինքն՝ $Գ_{փկկ} \leq 0,4$ (40%):

Նշված երկու գործակիցների միջև կա փոխադարձ կապ, այսինքն՝ դրանց գումարը հավասար է 1,0 միավորի կամ 100%-ի՝

$$Գ_{սկկ} + Գ_{փկկ} = 1 \text{ կամ } 100\%:$$

3. ***Ֆինանսական կախվածության գործակիցը*** ($Գ_{ֆկ}$), որը բնութագրում է սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի հակադարձ մեծությունը: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$Գ_{ֆկ} = \frac{ΣՊ}{ՍԿ} = \frac{ԸԿ}{ՍԿ}: \qquad (4.1.3.3)$$

Նշված գործակցի աճման միտումը բնորոշվում է սեփական կապիտալի ավազեցմամբ կամ փոխառու կապիտալի մեծության ավելացմամբ: Այսինքն, որքան այս գործակիցը մոտ լինի 1,0 միավորին կամ 100%-ին, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը գտնվում է ֆինանսապես խիստ կայուն վիճակում և ապահովված է սեփական կապիտալով:

4. ***Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը*** ($Գ_{սկշ}$), որը ցույց է տալիս, թե դրա որ մասն է օգտագործվում տնտեսավարող սուբյեկտի ընթացիկ գործունեության ֆինանսավորման համար կամ այլ կերպ ներդրվում ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) համար, իսկ որ մասը կապիտալացվում: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{սկշ} = \frac{ՍԿ + ՈԸՊ - ՈԸԱ}{ՍԿ} = \frac{ՍԸԱ}{ՍԿ}: \qquad (4.1.3.4)$$

Դրա մեծության փոփոխությունը կախված է տվյալ տնտեսավարող սուբյեկտի ճյուղային պատկանելիությունից:

5. ***Երկարաժամկետ ներդրումների կառուցվածքի գործակիցը*** ($Գ_{ենկ}$), որը ցույց է տալիս, թե ոչ ընթացիկ ակտիվների որ մասն է վերաֆինանսավորվում ի հաշիվ ոչ ընթացիկ պարտավորությունների: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{ենկ} = \frac{ՈԸՊ}{ՈԸԱ}: \qquad (4.1.3.5)$$

Որքան բարձր լինի այս գործակցի մեծությունը, դրան համապատաս-

խան էլ անհրաժեշտ է, որպեսզի տնտեսավարող սուբյեկտն իր տրամադրության տակ եղած հիմնական միջոցներն ու այլ տեսակի ներդրումներն օգտագործի խիստ նպատակային:

Դրա համար էլ երբեմն հնարավոր չէ պարզել, թե ոչ ընթացիկ պարտավորությունները, որպես ակտիվների կազմավորման աղբյուր, արդյոք լիարժեք են օգտագործվում տնտեսավարող սուբյեկտի նյութատեխնիկական բազայի ընդլայնման գծով ֆինանսավորման համար: Իրականում երկարաժամկետ ներդրումները կարող են նույնիսկ նպատակային չօգտագործվել, և տնտեսավարող սուբյեկտը կանգնի սնանկացման ուղու վրա:

6. ***Երկարաժամկետ ներգրավվող պարտավորությունների գործակիցը*** ($Գ_{ենպ}$), որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի կողմից ներգրավվող ոչ ընթացիկ պարտավորությունների (երկարաժամկետ վարկերի և փոխառությունների) բաժինը՝ ընթացիկ ակտիվների լրացման նպատակով: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$Գ_{ենպ} = \frac{ՈԸՊ}{ՍԿ + ՈԸՊ}: \qquad (4.1.3.6)$$

Նշված գործակիցը միաժամանակ ցույց է տալիս երկարաժամկետ ներգրավված պասիվների տեսակարար կշիռը տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների հանրագումարում: Այս ցուցանիշի մեծության աճման միտումը կարող է տնտեսավարող սուբյեկտին էլ ավելի կախվածության մեջ դնել արտաքին ներդրողներից:

7. ***Փոխառու կապիտալի կառուցվածքի գործակիցը*** ($Գ_{կկ}$), որը բնութագրում է ոչ ընթացիկ պարտավորությունների բաժնի չափը փոխառու կապիտալի (ՓԿ) հանրագումարում: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$Գ_{կկ} = \frac{ՈԸՊ}{ՓԿ}: \qquad (4.1.3.7)$$

Նշված գործակիցը կարող է անընդհատ տատանվել՝ կախված տնտեսավարող սուբյեկտի կրեդիտորական պարտքերի գումարի չափից, արտադրական ընթացիկ գործունեության վարկավորման կարգից և այլ գործոններից:

8. ***Սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության գործակիցը*** ($Գ_{ս/փ}$), որը տալիս է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական



կայունության գնահատման ավելի իրական պատկերը: Այս ցուցանիշն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$Գ_{ս/փ} = \frac{ՍԿ}{ՓԿ}: \qquad (4.1.3.8)$$

Նշված գործակցի մեծության աճը վկայում է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության էլ ավելի բարելավում, այսինքն՝ հավասար պայմաններում սեփական կապիտալն ավելանում է, իսկ փոխառու կապիտալը՝ նվազում:

Վերը նշված ցուցանիշների էությունն ավելի հստակ պատկերացնելու համար կազմենք աղյուսակ (4.1.3.1), որում կարտացոլվեն տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության գնահատման ելակետային և հաշվարկային ցուցանիշները երկու տարվա կտրվածքով: Աղյուսակի ելակետային տվյալները վերցրել ենք 1-ին և 2-րդ հավելվածներից:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է՝ 52,0% և 51,8%: Այսինքն՝ երկու տարում էլ այդ գործակիցը ցածր է եղել 60%-ից, հետևաբար տնտեսավարող տվյալ սուբյեկտը պետք է մտահոգվի իր ֆինանսական կայունության կարգավորման համար: Միաժամանակ սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների ավելացման հետևանքով (88552 հազ. դրամ) հաշվետու տարում սեփական կապիտալի շարժունակության գործակիցն աճել է 0,151 միավորով (0,806 - 0,655) կամ 23,1%-ով և երկու տարում էլ արդյունավետ է եղել: Իսկ ինչպիսի՞ն է տնտեսավարող սուբյեկտի սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցությունը. պարզվում է՝ նախորդ տարում այն ավելի բարձր է եղել և կազմել է 1,083 միավոր, քան հաշվետու տարում՝ 1,073: Այստեղից՝ նույնպես հետևություն. նախորդ տարում տնտեսավարող տվյալ սուբյեկտը ֆինանսապես ավելի կայուն վիճակում է եղել, քան հաշվետու տարում:

Անհրաժեշտ է նշել, որ աղյուսակում ներառված ֆինանսական կայունության հարաբերական ցուցանիշների գնահատման համար չեն գործում միասնական չափանիշներ, քանի որ դրանցից յուրաքանչյուրի մեծությունը կախված է մի շարք գործոններից (տնտեսավարող սուբյեկտի ճյուղային պատկանելիություն, վարկավորման սկզբունքներ, ակտիվների կազմավորման աղբյուրների կառուցվածք, ընթացիկ ակտիվների շրջանառելիություն և այլն):

Աղյուսակ 4.1.3.1

## Ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան

| Ցուցանիշների անվանումը | Պայմ. նշանակ. | Գումարը (հազ. դրամ) | | Շեղումը (+;-) | |
|---|---|---|---|---|---|
| | | նախորդ տարվա վերջին | հաշվետու տարվա վերջին | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4 | 5(ս4-ս3) | 6(ս5:ս3) |
| I. Ելակետային | | | | | |
| 1.սեփական կապիտալ | ՍԿ | 177778 | 254426 | 76648 | 43,1 |
| 2.փոխառու կապիտալ (ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ) | ՓԿ | 164183 | 237072 | 72889 | 44,4 |
| 3.հաշվեկշռի հանրագումար (ընդհանուր կապիտալ) | Հ(ԸԿ) | 341961 | 491498 | 149537 | 30,4 |
| 4.ոչ ընթացիկ ակտիվներ | ՈԸԱ | 106400 | 135416 | 29016 | 27,3 |
| 5.ոչ ընթացիկ (երկարաժամկետ) պարտավորություններ | ՈԸՊ | 45129 | 86049 | 40920 | 90,7 |
| II. Հաշվարկային | | | | | |
| 6.սեփական կապիտալի կենտրոնացման գործակիցը կամ տեսակարարկշիռը (տ.1 : տ.3) | $Գ_{ս.կ.կ.}$ | 0,520 | 0,518 | 0,002 | -0,4 |
| 7.փոխառու կապիտալի կենտրոնացման գործակիցը կամ տեսակարարկշիռը (տ.2 : տ.3) | $Գ_{փ.կ.կ.}$ | 0,480 | 0,482 | 0,002 | 0,4 |
| 8.ֆինանսական կախվածության գործակիցը (տ.3 : տ.1) | $Գ_{ֆ.կ.}$ | 1,924 | 1,932 | 0,008 | 0,4 |
| 9.սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվներ (տ.1 + տ.5 - տ.4), հազ. դրամ* | ՍԸԱ | 116507 | 205059 | 88552 | 76,0 |
| 10.սեփական կապիտալի շարժունակության գործակիցը (տ.9 : տ.1) | $Գ_{ս.կ.շ.}$ | 0,655 | 0,806 | 0,151 | 23,1 |
| 11.երկարաժամկետ ներդրումների կուտակվածքի գործակիցը (տ.5 : տ.4) | $Գ_{ե.ն.կ.}$ | 0,424 | 0,635 | 0,211 | 49,8 |
| 12.երկարաժամկետ ներգրավվող պարտավորությունների գործակիցը տ.5 : (տ.1 + տ.5) | $Գ_{ե.ն.պ.}$ | 0,202 | 0,235 | 0,051 | 25,2 |
| 13.փոխառու կապիտալի կառուցվածքի գործակիցը (տ.5 : տ.2) | $Գ_{կ.կ.}$ | 0,275 | 0,363 | 0,088 | 32,0 |
| 14.սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության գործակիցը (տ.1 : տ.2) | $Գ_{ա.փ}$ | 1,083 | 1,073 | -0,010 | -0,9 |

*Տես (4.1.2.1) բանաձևը:



## 4.1.4. Սեփական կապիտալի արդյունավետության ցուցանիշների համակարգը

Շուկայական հարաբերությունների նոր պայմաններում, երբ արդեն ձևավորվել և ձևավորվում են փոքր ու միջին տնտեսավարող սուբյեկտներ, անհրաժեշտ է հաշվարկել դրանց գործունեությունը կարգավորող սեփական կապիտալի արդյունավետությունը բնութագրող եկամտաբերության ցուցանիշները, որոնց հիմքում ընկած են տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական կապիտալ կազմող հասարակ և արտոնյալ բաժնետոմսերը[1]: Բաժնետոմսը բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող արժեթուղթ է, որը ներդրողին արտոնում է լինել այդ ընկերության որևէ մասի սեփականատերը և, որպես կանոն, տալիս է եկամտի որոշակի մասնաբաժին ստանալու իրավունք: Եթե բաժնետերը բավարարված չէ եկամտի չափով, կարող է վաճառել բաժնետոմսը երկրորդական շուկայում՝ շուկայական գներով: Որպեսզի բաժնետոմսերը լինեն եկամտի ստացման հուսալի աղբյուր, անհրաժեշտ է դրանք ներդնել արդյունավետություն ապահովող տնտեսավարող սուբյեկտում: Նման խընդիր մշտապես ծագում է ինչպես ընկերությունների առջև, որոնք ընդլայնում են իրենց ազդեցությունն ի հաշիվ մեծ չափերի հասնող կապիտալների ներդրման, այնպես էլ մանր ներդրողների առջև, որոնք ծախսում են իրենց խնայած միջոցներն աննշան քանակությամբ արժեթղթերի գնման համար:

Բաժնետոմսերի եկամտաբերությունը կարելի է գնահատել սեփական կապիտալի արդյունավետության վերլուծություն կատարելով: Այդպիսի գնահատումն իրականացվում է բազմաթիվ ցուցանիշներով, որոնցից ամենակարևորը շահութաբերության ցուցանիշների վերլուծությունն է: Այդ ցուցանիշներից են՝

1. *բաժնետոմսի շահույթի նորման.* ցույց է տալիս բաժնետիրական ընկերության զուտ շահույթի (հարկումից հետո) և տարվա ընթացքում շրջանառությունում գտնվող հասարակ բաժնետոմսերի միջին թվաքանակի հարաբերությունը.

$$\text{Բաժնետոմսի շահույթի նորման} = \frac{\text{Զուտ շահույթ (հարկումից հետո)}}{\text{Հասարակ բաժնետոմսերի միջին թվաքանակը}} : \qquad (4.1.4.1)$$

[1] Ковалев А.М., Привалов В.П. Анализ финансового состояния предприятия. М., 1997, с. 117-119.

Այս ցուցանիշը մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող զուտ շահույթի չափն է: Եվ որքան բարձր է դա, նշանակում է, հավասար պայմաններում նույնքան արդյունավետ են օգտագործվել բաժնետոմսերը: Այս ցուցանիշը շատ զգայուն է շուկայի մրցակցության նկատմամբ, այդ պատճառով էլ յուրաքանչյուր բաժնետիրական ընկերության գործունեությունը գնահատելիս հետազոտվում են նրա տնտեսական կապերը տարբեր ժամանակահատվածներում:

Բաժնետոմսերի լրացուցիչ թողարկումը, առանց զուտ շահույթի որոշակի աճի, բերում է բաժնետոմսի շահույթի նորմայի իջեցման, որը ձեռնտու չէ տվյալ բաժնետիրոջը: Ուստի, դրա պահպանման համար, դրանց լրացուցիչ թողարկման դեպքում, համապատասխան կապիտալը պետք է աշխատի այնպես, որպեսզի շահույթ բերի:

2. ***Բաժնետիրական կապիտալի շահույթի նորման*** (սեփական կապիտալի շահութաբերություն). ցույց է տալիս զուտ շահույթի (հարկումից հետո) և սեփական կապիտալի հարաբերությունը, թե որքանով է բաժնետիրական ընկերությունում արդյունավետ օգտագործվում բաժնետերերի կողմից ներդրվող սեփական կապիտալը.

$$\text{Բաժնետիրական կապիտալի շահույթի նորման} = \frac{\text{Զուտ շահույթ (հարկումից հետո)}}{\text{Սեփական կապիտալ}} : \qquad (4.1.4.2)$$

Նշված ցուցանիշն ավելի լիարժեք է բնութագրում բաժնետիրական ընկերության սեփական կապիտալի արդյունավետությունը, որի մեծության վրա ազդում են մի շարք գործոններ: Այս ցուցանիշը գնահատվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$\text{Բաժնետիրական կապիտալի շահույթի նորման} = \frac{\text{Զուտ շահույթ (հարկումից հետո)}}{\text{Իրացման ծավալ (հասույթ)}} \times \frac{\text{Իրացման ծավալ (հասույթ)}}{\text{Ընդհանուր կապիտալ}} \times$$

$$\times \frac{\text{Ընդհանուր կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} : \qquad (4.1.4.3)$$

Կիրառելով այս բանաձևը, վերլուծություն կատարող յուրաքանչյուր ոք կարող է կողմնորոշվել, թե սեփական կապիտալի շահութաբերությունը (բաժնետիրական կապիտալի շահույթի նորման) ավելի շատ որ գործոնից է կախված, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի էական ազդեցություն:

3. ***Բաժնետոմսի կուրսը*** որոշվում է պահանջարկով և առաջարկով՝ տվյալ պահի շուկայական գնով: Վերջինս իր ազդեցությունն է ունենում ստացվող շահույթի և շահաբաժինների (դիվիդենտի) մեծության վրա: Այսինքն, որքան բաժնետոմսի շուկայական գինը բարձր լինի նրա անվանական արժեքից, այնքան բարձր կլինի նաև ստացվող շահույթի և շահաբաժնի չափը: Բաժնետոմսի կուրսը հաշվարկելիս կարևոր է նաև հաշվի առնել ներդրվող բաժնետոմսերի դիմաց վճարվող հաշվարկային միջին տոկոսադրույքի չափը (փոխատվական տոկոս): Հետազոտությունները ցույց են տալիս, որ բաժնետոմսի կուրսը ուղիղ համեմատական է ստացվող շահաբաժնի չափին և հակադարձ համեմատական՝ վճարվող փոխատվական տոկոսին: Դա արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Բաժնետոմսի կուրսը} = \frac{\text{Շահաբաժին (դիվիդենտ)}}{\text{Փոխատվական տոկոս}} \times 100\%: \qquad (4.1.4.4)$$

4. ***Շահաբաժինների վճարման ցուցանիշը***. ցույց է տալիս, թե զուտ շահույթի (հարկումից հետո) որ մասն է ուղղված շահաբաժինների վճարմանը: Դա արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Շահաբաժինների վճարման ցուցանիշ} = \frac{\text{Շահաբաժինների գումար}}{\text{Զուտ շահույթ (հարկումից հետո)}} : \qquad (4.1.4.5)$$

Բաժնետիրական ընկերությունների համար այս ցուցանիշը՝ կախված նրա տնտեսական զարգացման վիճակից, ունի տարբեր իմաստ: Այսպես, նորաստեղծ և արագ զարգացող ընկերություններն ունեն շատ ցածր կամ նույնիսկ զրոյական արժեք ապահովող ցուցանիշ: Իսկ ահա, ֆինանսապես բարվոք վիճակում գտնվող (մինչև 50% զուտ շահույթ ապահովող) ընկերությունները ձգտում են իրենց կողմը գրավել բաժնետերերին՝ բարձր և կայուն շահաբաժինների վճարման հաշվին:

Մեկ բաժնետոմսի շահաբաժինն ընդհանրապես որոշվում է շահաբա-

ժինների վճարման համար ուղղված դրամական միջոցների և շրջանառությունում գտնվող բաժնետոմսերի ընդհանուր քանակի հարաբերությամբ՝

$$\text{Մեկ բաժնետոմսի շահաբաժինը} = \frac{\text{Շահաբաժինների վճարման գումար}}{\text{Շրջանառությունում բաժնետոմսերի քանակ}} : \qquad (4.1.4.6)$$

5. ***Բաժնետիրական եկամտաբերությունը.*** մեկ բաժնետոմսի հաշվով ստացված զուտ շահույթի (բաժնետոմսի շահույթի նորման) և բաժնետոմսի շուկայական գնի հարաբերությունն է՝ արտահայտված տոկոսով՝

$$\text{Բաժնետոմսի եկամտաբերությունը} = \frac{\text{Բաժնետոմսի շահույթի նորմա}}{\text{Բաժնետոմսի շուկայական գին}} \times 100\%: \qquad (4.1.4.7)$$

Որքան բարձր է բաժնետոմսի եկամտաբերությունը, այնքան ավելի շահաբեր է ներդրումներ կատարողների համար, մյուս կողմից էլ, որքան ռիսկային են այդ ներդրումները, այնքան մեծ կլինի բաժնետոմսի եկամտաբերությունը ներդրողներին գրավելու համար: Զարգացած շուկայական տնտեսություն վարող երկրներում բաժնետոմսերի եկամտաբերության մասին տեղեկատվություն կարելի է ստանալ մասնագետների վերլուծական համապատասխան հետազոտություններից, որոնց արդյունքները գրանցվում են ֆոնդային բորսաներում: Բաժնետոմսի եկամտաբերության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար գծապատկերով (4.1.4.1) ցույց տանք դրա կախվածությունը շրջանառությունում գտնվող բաժնետոմսի շուկայական գնից: Ըստ գծապատկերի, բաժնետոմսի եկամտաբերությունը, դրանց շուկայական գնի բարձրացման դեպքում (այն կարող է կապված լինել բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման կամ դրանց կուրսի բարձրացման հետ), պահպանելու համար պահանջվում է, որ զուտ շահույթի աճի տեմպերը լինեն շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի ընդհանուր գումարի աճի տեմպերից ոչ պակաս:






Գծ. 4.1.4.1. Բաժնետոմսի եկամտաբերության կախվածությունը շուկայական գնից

6. ***Կայուն աճի գործակիցը.*** ցույց է տալիս բաժնետիրական ընկերության հնարավորությունները՝ հաջորդ տարում ավելացնելու իր ակտիվները ներքին ֆինանսավորման հաշվին, այն պայմանով, որպեսզի պահպանվի ինչպես սեփական կապիտալի և պարտավորությունների համամասնությունը, այնպես էլ, նույն չափով, նաև շահաբաժինների վճարման բաժինը հաշվետու տարում: Այս գործակիցը, որն ավելի ճիշտ կլինի անվանել ներքին ֆինանսավորման աղբյուրների հաշվին կայուն աճի տեմպի ապահովման գործակից, որոշվում է շահաբաժինների վճարումից հետո շահույթի մի մասի և ելակետային (սկզբնական) բաժնետիրական կապիտալի հարաբերությամբ՝

$$\text{Կայուն աճի գործակիցը} = \frac{\text{Զուտ շահույթ (հարկումից հետո)} - \text{Շահաբաժինների վճարման գումար}}{\text{Բաժնետիրական կապիտալ (նախորդ տարվա)}} : \qquad (4.1.4.8)$$

Որոշակի ձևափոխություններից հետո նշված գործակիցը կարելի է արտահայտել հետևյալ տեսքով՝

$$\text{Կայուն աճի գործակիցը} = \text{Բաժնետիրական կապիտալի շահույթի նորմա} \times (1 - \text{շահաբաժինների վճարման ցուցանիշ}) \quad (4.1.4.9)$$

Կայուն աճի գործակցի էությունն ավելի հստակ պատկերացնելու համար բերենք հետևյալ օրինակը: Բաժնետիրական ընկերության բաժնետիրական կապիտալի շահույթի նորման 2000թ. կազմել է 10%, իսկ շահաբաժինների վճարման ցուցանիշը՝ 30%: Այս տվյալները տեղադրելով (4.1.4.9) բանաձևի մեջ, կպարզվի, որ ընկերությունը հաջորդ տարում, ի հաշիվ ներքին ֆինանսավորման, հնարավորություն կունենա ավելացնել ակտիվներն ընդամենը 7%-ով [0,1 × (1 - 0,3) = 0,07 կամ 7,0%]:

## 4.2. Գործարար ակտիվության գնահատումը

### 4.2.1. Գործարար ակտիվության էությունը

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության կայունությունը պայմանավորված է դրանց կողմից ձեռնարկվող և իրականացվող գործարար ակտիվության կարգավորման մակարդակով, որի էությունը բնորոշող հրակական ու քանակական ամենահիմնական չափանիշներ են համարվում՝ արտադրանքի վաճառքի կազմակերպման շուկաները (ներառյալ արտահանման ծավալները), տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների պլանի կատարման աստիճանը և դրանց աճի տեմպերի ապահովումը, ընդհանուր կապիտալի և դրանում ներառվող առանձին տարրերի օգտագործման արդյունավետության մակարդակն ու տնտեսական աճի կայունությունը:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությունը կարող է բնութագրվել մի շարք ցուցանիշներով, որոնցից ամենահիմնականներն են՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալը կամ դրանց իրացումից զուտ հասույթը (առանց անուղղակի հարկերի և հաստատագրված վճարների), հաշվետու ժամանակաշրջանի շահույթը, ակտիվների կամ պասիվների մեծությունը: Դրանց դինամիկան գնահատելու համար, անհրաժեշտ է համադրել յուրաքանչյուրի աճի տեմպի փոփոխությունները: Այդ երեք ցուցանիշների



միջև եղած հարաբերակցության[1] լավագույն տարբերակն արտահայտվում է հետևյալ անհավասարության տեսքով՝

$$S_{\text{ՀԺԾ}} > S_{\text{ԻՔՁ}} > S_{\text{ԸԿ}} > 100\%, \quad (4.2.1.1)$$

որտեղ՝

$S_{\text{ՀԺԾ}}$, $S_{\text{ԻՔՁ}}$, $S_{\text{ԸԿ}}$ - հաշվետու ժամանակաշրջանում սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթի, իրացումից զուտ հասույթի և ընդհանուր կապիտալի աճի տեմպի փոփոխություններն են:

Ներկայացված հարաբերակցությունում յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր իմաստը՝

1-ինը նշանակում է, որ հաշվետու ժամանակաշրջանի շահույթն ավելի արագ տեմպերով է աճել, քան արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալը կամ զուտ հասույթի մեծությունը, որը վկայում է արտադրության և իրացման ծախսերի հարաբերական նվազման մասին:

2-րդը բնորոշում է, որ իրացման ծավալը կամ զուտ հասույթի մեծությունն ավելի արագ է աճում, քան տնտեսավարող սուբյեկտի ակտիվները (տնտեսական միջոցները), այսինքն՝ բոլոր ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ:

3-րդը ցույց է տալիս, որ տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կարողությունը (պոտենցիալը) նախորդ ժամանակաշրջանի համեմատ ավելի արագ է աճում:

Քննարկված հարաբերակցությունը համաշխարհային պրակտիկայում ստացել է «Տնտեսավարող սուբյեկտի տնտեսության ոսկյա կանոն» անվանումը: Սակայն եթե տնտեսավարող սուբյեկտի գործունեության համար պահանջվում են զգալի չափով կապիտալ ներդրումներ, որոնք կարող են հետ գնվել և բերել տնտեսությանը շահույթ ավելի երկարատև ժամանակում, ապա այդ դեպքում հավանական շեղում է նկատվում այդ «ոսկյա կանոնից»: Նման շեղումների ծագման պատճառներից են՝ գործող տնտեսավարող սուբյեկտների վերակառուցման և նորացման, արտադրանքի արտադրության, դրանց վերամշակման ու պահպանման ոլորտում նոր տեխնոլոգիաների գծով կապիտալի ներդրումը: Այսպես, ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտի համար հաշվետու ժամանակաշրջանում, նախորդի հետ համեմատած, ստացվել են հետևյալ հարաբերակցությունները սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթի, իրացումից զուտ հասույթի և ընդհանուր կապիտալի

[1] Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс. М., 1998, с. 252.

(ակտիվների) գծով (հաշվարկները կատարվել են ըստ հավելված 1-ի և 2-ի տվյալների).

| | Հաշվետու տարում՝ նախորդի համեմատությամբ, % |
|---|---|
| Սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից շահույթ | (119667 : 26790 × 100 = 446,7) |
| Իրացումից զուտ հասույթ | (794709 : 517481 × 100 = 153,6) |
| Ընդհանուր կապիտալ | (491498 : 341961 × 100 = 143,7) |

Հաշվարկային տվյալներից պարզվում է, որ տնտեսավարող սուբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում, բազիսայինի նկատմամբ, երեք ցուցանիշների գծով ապահովել է աճի տեմպ՝ համապատասխանաբար 346,7, 53,6 և 43,7%-ով, և իր օրինաչափությամբ համապատասխանում է 4.2.1.1 անհավասարությանը:

## 4.2.2. Գործարար ակտիվության գնահատման ցուցանիշների համակարգը

Տնտեսավարող սուբյեկտի գործարար ակտիվության գնահատման ցուցանիշները լինում են՝ ***բացարձակ*** և ***հարաբերական***: Այս ցուցանիշներից ամենակարևոր և ընդհանրացնող բացարձակ ցուցանիշը իրացումից զուտ հասույթի մեծությունն է, որի հիմքում ընկած է արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) դիմաց ստացված դրամական միջոցները (առանց անուղղակի հարկերի և հաստատագրված այլ վճարների):

Գործարար ակտիվության գնահատման հարաբերական ցուցանիշներն են՝

1. ***աշխատանքի արտադրողականությունը*** ($Ա_ա$). իրենից ներկայացնում է իրացումից զուտ հասույթի (ԻԶՀ) և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի ($\overline{Ա_թ}$) հարաբերությունը: Այն ցույց է տալիս մեկ աշխատողի հաշվով ստացված զուտ հասույթի գումարի չափը և արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_ա = \frac{\text{ԻԶՀ}}{\overline{Ա_թ}}: \qquad (4.2.2.1)$$

Այս ցուցանիշի մեծությունը կախված է ազդող մի շարք գործոններից, այդ թվում՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման գները, աշխատողների որակական աստիճանը, արտադրության տեխնիկական հագեցվածությունը և այլն:



2. Հիմնական միջոցների հատույցը (ֆոնդահատույց). ցույց է տալիս տնտեսավարող սուբյեկտում ներդրված միջին հաշվով մեկ միավոր հիմնական միջոցին բաժին ընկնող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից հասույթի չափը: Համաշխարհային պրակտիկայում հիմնական միջոցների հատույցը $(ՀՄ)_հ$ ստացել է ներդրված հիմնական կապիտալի շրջանառելիության անվանումը[1], որն արտահայտվում է հետևյալ բանաձևի տեսքով՝

$$(ՀՄ)_հ = \frac{\text{ԻԶՀ}}{\overline{ՀՄ}}, \qquad (4.2.2.2)$$

որտեղ՝

ԻԶՀ-ն արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի չափն է,

$\overline{ՀՄ}$-ն հիմնական միջոցների միջին մեծությունն է:

Ըստ տնտեսագիտական մեկնաբանության, հիմնական միջոցների հատույցի կամ նրա պտույտների թվաքանակի ավելացումը վկայում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կարողության օգտագործման արդյունավետության մեծացման մասին:

Վիճակագրության ընդհանուր տեսությունից հայտնի է, որ եթե ուսումնասիրվող ցուցանիշները (ակտիվները, այդ թվում՝ հիմնական միջոցները, դեբիտորական պարտքերը, պաշարները, դրամական միջոցները և այլն) տրված են որևիցե ժամանակաշրջանի սկզբի կամ վերջի դրությամբ, ապա դրանց միջին մեծությունը հաշվարկվում է միջին ժամանակագրականի բանաձևով՝

$$\overline{Y} = \frac{1}{n-1} \times \left( \frac{Y_1}{2} + Y_2 + Y_3 + \ldots + Y_{n-1} + \frac{Y_n}{2} \right), \qquad (4.2.2.3)$$

որտեղ՝

$\overline{Y}$-ը ուսումնասիրվող ցուցանիշների միջին մեծությունն է,

$Y_1, Y_2 \ldots, Y_{n-1}, Y_n$–ը ցուցանիշների մնացորդային արժեքներն են,

n-ը ժամանակաշրջանների թվաքանակն է (եթե մնացորդային արժեքները տրված են ըստ եռամսյակների, ապա n = 5, իսկ եթե ըստ ամիսների՝ n = 13):

Եթե Y-ների մնացորդային արժեքները տրված են տարվա սկզբի և վերջի դրությամբ, ապա այդ ցուցանիշի միջին մեծությունը ($\overline{Y}$) հավասար է այդ արժեքների կիսագումարին:

[1] Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс, с. 256.

3. ***Դեբիտորական պարտքերի*** (առևտրական դեբիտորական պարտքեր, տրված ընթացիկ կանխավճարներ, ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով, ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով) ***շրջանառելիությունը՝ պտույտներով և օրերով.***

ա) դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը պտույտներով $(ԴՊ)_{շ.պ.}$. ներկայացնում է իրացումից զուտ հասույթի (ԻԶՀ) և դեբիտորական պարտքերի միջին մեծության ($\overline{ԴՊ}$) հարաբերակցությունը: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$(ԴՊ)_{շ.պ.} = \frac{ԻԶՀ}{\overline{ԴՊ}}: \qquad (4.2.2.4)$$

Այս ցուցանիշը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի միջին հաշվով մեկ միավոր դեբիտորական պարտքին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի չափը կամ դեբիտորական պարտքերի պտույտների թիվը. որքան բարձր լինի պտույտների թիվը, այնքան արդյունավետ կլինի դրա օգտագործումը:

բ) Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը օրերով $(ԴՊ)_{շ.օ.}$. նախորդ ցուցանիշի $(ԴՊ)_{շ.պ.}$ հակադարձ մեծությունն է.

$$(ԴՊ)_{շ.օ.} = \frac{(30, 90, 180, 270, 360)\ օր}{(ԴՊ)_{շ.պ.}}: \qquad (4.2.2.5)$$

Այս ցուցանիշը բնորոշում է դեբիտորական պարտքերի մեկ պտույտի տևողությունը օրերով. որքան փոքր լինի այն, կնշանակի իրացումից զուտ հասույթի մեկ միավորին բաժին ընկնում միջին հաշվով ավելի քիչ դեբիտորական պարտքի մնացորդ, այսինքն՝ դեբիտորական պարտքի յուրաքանչյուր միավոր, գտնվելով տնտեսավարող սուբյեկտի (դեբիտորի) շրջանառությունում, ավելի շատ հասույթ է ստեղծում:

4. ***Նյութական ընթացիկ (շրջանառու) ակտիվների*** (արտադրական պաշարների) ***շրջանառելիությունը*** ևս հաշվարկվում է պտույտներով և օրերով.

ա) պաշարների շրջանառելիությունը պտույտներով $(Պ_{շ.պ.})$. իրենից ներկայացնում է իրացվող արտադրանքի ինքնարժեքի (ԻԱԻ) ու պաշարների միջին մեծության ($\overline{Պ}$) հարաբերակցությունը, որն արտահայտվում հետևյալ տեսքով՝

$$Պ_{շ.պ.} = \frac{ԻԱԻ}{\overline{Պ}}: \qquad (4.2.2.6)$$



Այս ցուցանիշը ցույց է տալիս միջին հաշվով մեկ միավոր պաշարներին (նյութեր, արագամաշ առարկաներ, աճեցվող և բտվող կենդանիներ, անավարտ արտադրություն, արտադրանք, ապրանքներ) բաժին ընկած իրացվող արտադրանքի ինքնարժեքի չափը կամ պաշարների պտույտների թիվը: Եթե այս ցուցանիշն ունի նվազման միտում, կնշանակի տնտեսավարող սուբյեկտի մոտ առաջանում են արտադրական ավելորդ պաշարների կուտակումներ, որոնք չեն մասնակցում արտադրության գործընթացին և արհեստականորեն մեծացնում են ինքնարժեքի գումարի չափը:

բ) Պաշարների շրջանառելիությունը օրերով $(Պ_{շ.օ.})$՝ նախորդ ցուցանիշի $(Պ_{շ.պ.})$ հակադարձ մեծությունն է և արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Պ_{շ.օ.} = \frac{(30, 90, 180, 270, 360)\ օր}{Պ_{շ.պ.}}: \qquad (4.2.2.7)$$

Այս ցուցանիշը բնութագրում է իրացվող արտադրանքի ինքնարժեքին բաժին ընկնող պաշարների մնացորդային գումարի չափը ուսումնասիրվող որևիցե ժամանակաշրջանի վերջում կամ այլ կերպ՝ ցույց է տալիս պաշարների շրջանառելիության տևողությունը օրերով: Որքան փոքր է այդ տևողությունը, կնշանակի այդ պաշարները լիովին մասնակցում են արտադրության գործընթացին և նպաստում նոր արտադրանքի ստացմանը:

5. ***Կրեդիտորական պարտքերի (ընթացիկ պարտավորությունների) շրջանառելիությունը օրերով*** $(ԿՊ)_{շ.օ.}$. իրենից ներկայացնում է կրեդիտորական պարտքերի միջին մեծության ($\overline{ԿՊ}$) և իրացվող արտադրանքի ինքնարժեքի (ԻԱԻ) հարաբերակցությունը.

$$(ԿՊ)_{շ.օ.} = \frac{\overline{ԿՊ}}{ԻԱԻ}(30, 90, 180, 270, 360)\ օր: \qquad (4.2.2.8)$$

Ինչպես դեբիտորական պարտքերի շրջանառելիության (օրերով) դեպքում էր, այս ցուցանիշը ևս բնորոշում է իրացվող արտադրանքի ինքնարժեքին բաժին ընկնող կրեդիտորական պարտքերի միջին չափը տվյալ ժամանակահատվածում կամ կրեդիտորական պարտքերի մեկ պտույտի տևողությունը: Որքան փոքր լինի այդ տևողությունը, կնշանակի տվյալ տնտեսավարող սուբյեկտն ապահովված է սեփական ընթացիկ ակտիվներով և կախվածությունը մեծ չէ կարճաժամկետ վարկերից, փոխառու-

թյուններից, հարկային և այլ տեսակի վճարումներից:

6. ***Գործառնական փուլի (ցիկլի) տևողությունը*** $(ԳՓ)_{տ.}$. արտադրական պաշարների և դեբիտորական պարտքերի շրջանառելիության (օրերով) ցուցանիշների հանրագումարն է.

$$(ԳՓ)_{տ.} = (ԴՊ)_{շ.օ.} + Պ_{շ.օ.}: \qquad (4.2.2.9)$$

Այստեղից՝ որքան փոքր լինի գործառնական փուլի ժամանակահատվածը, կնշանակի դեբիտորական պարտքերի և արտադրական պաշարների յուրաքանչյուր համատեղ պտույտ ֆինանսատնտեսական ավելի շատ արդյունք է բերել:

7. ***Ֆինանսական փուլի տևողությունը*** $(ՖՓ)_{տ.}$. այս ցուցանիշը գործառնական փուլի տևողության և կրեդիտորական պարտքերի շրջանառելիության $(ԿՊ)_{շ.օ.}$ տարբերությունն է.

$$(ՖՓ)_{տ.} = (ԳՓ)_{տ.} - (ԿՊ)_{շ.օ.}: \qquad (4.2.2.10)$$

Ցուցանիշի մեծությունը կախված է տնտեսավարող սուբյեկտի կրեդիտորական պարտքերի մարման տևողության երկարատևությունից, այսինքն՝ կուտակվել են կրեդիտորական անհուսալի պարտքեր, որոնց հիմնական մասը ժամանակին չի մարվել:

8. ***Սեփական կապիտալի շրջանառելիությունը (պտույտներով)*** $(ՍԿ)_{շ.պ.}$. այս ցուցանիշն իրացումից զուտ հասույթի (ԻՋՀ) և սեփական կապիտալի միջին մեծության ($\overline{ՍԿ}$) հարաբերակցությունն է.

$$(ՍԿ)_{շ.պ.} = \frac{ԻՋՀ}{\overline{ՍԿ}}: \qquad (4.2.2.11)$$

Ցուցանիշը բնորոշում է տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի գումարի չափը. որքան բարձր լինի այդ մեծությունը, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը ցուցաբերել է գործարար արդյունավետ ակտիվություն և գտնվում է ֆինանսապես կայուն վիճակում:

9. ***Ընդհանուր կապիտալի (ակտիվների) շրջանառելիությունը (պտույտներով)*** $(ԸԿ)_{շ.պ.}$. այս ցուցանիշն իրացումից զուտ հասույթի (ԻՋՀ) և ընդհանուր կապիտալի միջին մեծության ($\overline{ԸԿ}$) հարաբերակցությունն է, որը ցույց է տալիս ակտիվների միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի չափը.



$$(ԸԿ)_{շ.պ.} = \frac{ԻՋՀ}{\overline{ԸԿ}}: \qquad (4.2.2.12)$$

Ցուցանիշը միաժամանակ բնութագրում է ընդհանուր ակտիվների հատույցը. որքան այն բարձր լինի, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը գտնվում է տնտեսապես կայուն վիճակում:

Որպեսզի տնտեսավարող սուբյեկտը կարողանա կողմնորոշվել, արդյունավետ է արդյոք իրականացնում իր գործունեությունը թե ոչ, անհրաժեշտ է հաշվարկել տնտեսական կայուն աճի գործակիցը (տե՛ս 4.1.4.9 և 4.2.3.1 բաժանները):

Վերոնշյալ ցուցանիշների էությունն ավելի հստակ պատկերացնելու համար կազմենք աղյուսակ (4.2.2), որում կարտացոլվեն տնտեսավարող սուբյեկտի գործարար ակտիվության գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան: Աղյուսակի ելակետային տվյալները վերցրել ենք 1-ին և 2-րդ հավելվածներից:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ աշխատանքի արտադրողականությունը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1975 հազ. դրամով կամ 43,5%-ով: Ավելացում է տեղի ունեցել նաև հիմնական միջոցների հատույցի և դեբիտորական պարտքերի շրջանառելիության (պտույտ) գծով: Վերջինս ավելացել է 3,3 պտույտով, այսինքն՝ դեբիտորական պարտքերի մեկ պտույտը միջին հաշվով բերել է 3,3 հազ. դրամ իրացումից զուտ հասույթ: Դրան հակառակ, նյութական ընթացիկ ակտիվների (արտադրական պաշարների) շրջանառելիությունը նվազել է 3,8 պտույտով: Պատճառն այն է, որ չնայած հաշվետու ժամանակաշրջանում իրացումից զուտ հասույթը նախորդ տարվա համեմատությամբ աճել է, այնուհանդերձ, նյութական ընթացիկ (շրջանառու) ակտիվների (արտադրական պաշարների) մնացորդը մոտ 3 անգամ ավելի արագ է աճել, քան նախորդ տարում է եղել. դա էլ նպաստել է նախորդ տարվա համեմատությամբ հաշվետու տարվա գործառնական փուլի տևողության 7 օրով մեծացմանը:

Միաժամանակ, չնայած կրեդիտորական պարտքերի շրջանառելիությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3 օրով, այն ազդեցություն է ունեցել ֆինանսական փուլի տևողության վրա, որն ավելացել է 10 օրով կամ 15,4%-ով:

Պարզվում է նաև, որ հաշվետու տարում սեփական կապիտալի շրջանառելիությունը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1,2 պտույտով կամ 48%-ով, որը դրական երևույթ է:

Աղյուսակ 4.2.2

Գործարար ակտիվության գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան

| Ցուցանիշների անվանումը | Պայմ. նշանակ. | Գումարը (հազ. դրամ) | | Շեղումը (+;-) | |
|---|---|---|---|---|---|
| | | նախորդ տարի | հաշվետու տարի | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| I. Ելակետային | 1 | 2 | 3 | 4(u3-u2) | 5(u4:u2) |
| 1.իրացումից զուտ հասույթ | ԻԶՀ | 517481 | 794709 | 277229 | 53,6 |
| 2.աշխատողների միջին ցուցակային թիվ | $\overline{Մ}_թ$ | 114 | 122 | 8 | 7,0 |
| 3.հիմնական միջոցների միջին մնացորդային արժեքը | ՀՄ | 110727 | 117028 | 6301 | 5,7 |
| 4.դեբիտորական պարտքերի միջին մեծությունը | ԴՊ | 136512 | 112525 | -23987 | -17,6 |
| 5.շրջանառու ակտիվների միջին մեծությունը | ՇԸԱ | 65145 | 178212 | 113067 | 173,6 |
| 6.իրացվող արտադրանքի ինքնարժեքը | ԻԱԻ | 480486 | 642828 | 162342 | 33,8 |
| 7.կրեդիտորական պարտքերի միջին մեծությունը | ԿՊ | 105582 | 135039 | 29475 | 27,9 |
| 8.սեփական կապիտալի միջին մեծությունը | ՍԿ | 205555 | 216102 | 10547 | 5,1 |
| 9.հաշվեկշռի հանրագումարի (ընդհանուր կապիտալի) միջին մեծությունը | ԸԿ | 319055 | 416730 | 97675 | 30,6 |
| II. Հաշվարկային | | | | | |
| 10.աշխատանքի արտադրողականությունը (տ.1 : տ.2) | $Ա_ա$ | 4539 | 6514 | 1975 | 43,5 |
| 11.հիմնական միջոցների հատույցը (տ.1 : տ.3) | $(ՀՄ)_հ$ | 4,67 | 6,79 | 2,12 | 45,4 |
| 12.դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը՝ | | | | | |
| ա) պտույտներով (տ.1 : տ.4) | $(ԴՊ)_{շ.պ.}$ | 3,8 | 7,1 | 3,3 | 86,8 |
| բ) օրերով (տ.4 : տ.1) x 360 | $(ԴՊ)_{շ.օ.}$ | 95 | 51 | -44 | -46,3 |
| 13.շրջանառու ակտիվների (արտադրական պաշարների) շրջանառելիությունը՝ | | | | | |
| ա) պտույտներով (տ.6 : տ.5) | $Պ_{շ.պ.}$ | 7,4 | 3,6 | -3,8 | -51,4 |
| բ) օրերով (տ.5 : տ.6) x 360 | $Պ_{շ.օ.}$ | 49 | 100 | 51 | 104,1 |
| 14.կրեդիտորական պարտքերի շրջանառելիությունը օրերով (տ.7 : տ.6) x 360 | $(ԿՊ)_{շ.օ}$ | 79 | 76 | -3 | -3,8 |
| 15.գործառնական փուլի տևողությունը (12բ + 13բ), օրերով | $(ԳՓ)_տ$ | 144 | 151 | 7 | 4,9 |
| 16.ֆինանսական փուլի տևողությունը (տ.15 - տ.14), օրերով | $(ՖՓ)_տ$ | 65 | 75 | 10 | 15,4 |
| 17.սեփական կապիտալի շրջանառելիությունը, պտույտներով (տ.1 : տ.8) | $(ՍԿ)_{շ.պ.}$ | 2,5 | 3,7 | 1,2 | 48,0 |
| 18.ընդհանուր կապիտալի շրջանառելիությունը, պտույտներով (տ.1 : տ.9) | $(ԸԿ)_{շ.պ.}$ | 1,6 | 1,9 | 0,3 | 18,8 |



Ավելացել է նաև ընդհանուր կապիտալի (ակտիվների) շրջանառելիությունը 0,3 պտույտով, այսինքն՝ դրանց հատույցն ավելացել է 0,3 միավորով:

## 4.2.3. Տնտեսական կայուն աճի վերլուծությունը

Համաշխարհային փորձը վկայում է, որ տնտեսավարող սուբյեկտների գործարար ակտիվությունը պայմանավորված է դրա տնտեսական աճով և զարգացման աստիճանով: Հենց տնտեսական կայուն աճն է վկայում, որ տնտեսավարող սուբյեկտը կարող է չկանգնել լուծարման կամ սնանկացման եզրին: Միարժեքորեն ակնհայտ է նաև, որ տնտեսության անկայուն զարգացումը նրան բերում է հավանական սնանկացման: Դրա համար էլ տնտեսավարող սուբյեկտների ղեկավար անձնակազմը պետք է մտահոգ լինի մի կարևորագույն խնդրով, այն է՝ ապահովել տնտեսության զարգացման կայուն աճի տեմպեր: Իսկ ինչպե՞ս և ինչպիսի՞ մեթոդներով կարելի է պահպանել տնտեսության զարգացման կայուն աճի տեմպերը: Հայտնի է, որ տնտեսական գործունեության ծավալների (արտադրանքի թողարկման և իրացման) ավելացումը հիմնականում կախված է տնտեսական միջոցների կամ այլ կերպ՝ ակտիվների աճից, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են ուղղագծային կախվածության մեջ: Դրան հասնելու համար պահանջվում են ֆինանսական լրացուցիչ ռեսուրսներ, որոնք կարող են ապահովվել ի հաշիվ ներքին ու արտաքին ֆինանսավորման աղբյուրների:

Ներքին ֆինանսավորման աղբյուրներին են ամենից առաջ վերագրվում տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ գտնվող շահույթը (շահութահարկի վճարումից հետո), որն արտադրության զարգացման համար ուղղվում է կուտակման հիմնադրամի կազմավորմանը, ինչպես նաև հաշվարկված (կուտակված) ամորտիզացիոն հիմնադրամները: Նշված ֆինանսավորման աղբյուրները լրացնում կամ ավելացնում են սեփական կապիտալի գումարի չափը:

Արտաքին ֆինանսավորման աղբյուրները դրսից ներգրավվող ֆինանսական ռեսուրսներն են, բանկային ու միջազգային կազմակերպություններից ստացվող վարկերը, փոխառությունները և այլն: Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ արտաքին ֆինանսավորման աղբյուրների ներգրավումը պետք է լինի սահմանափակ, քանի որ դրանք տրամադրվում են հիմնականում հետ վերադարձման պայմանով, իսկ սեփական կապիտալի նկատմամբ փոխառու կապիտալի (ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ) գումարի չափի ավելացումը

կբերի տնտեսավարող սուբյեկտի սնանկացման հավանականության մեծացման:

Հետևաբար, առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի տնտեսավարող սուբյեկտն ապահովված լինի սեփական կապիտալի անհրաժեշտ չափով, այսինքն՝ սեփական ֆինանսական միջոցներով, որի մեծությունը կախված է մի շարք ազդող գործոններից, այդ թվում՝ ընթացիկ արդյունավետության ցուցանիշներից (իրացվող արտադրանքի շահութաբերություն, սեփական միջոցների շրջանառելիություն և այլն) և ֆինանսական գործունեությունից (շահաբաժինների վճարման քաղաքականություն, ֆինանսական ռազմավարություն, կապիտալի կառուցվածքի ընտրություն և այլն): Ելնելով սեփական կապիտալով ապահովվածության անհրաժեշտությունից և շահաբաժինների վճարման քաղաքականությունից, հաշվավերլուծական պրակտիկայում, որպես գործարար ակտիվության գնահատման ամենահիմնական ցուցանիշ, հաշվարկվում է տնտեսական կայուն աճի գործակիցը ($Գ_{տ.կ.ա.}$): Այն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$Գ_{տ.կ.ա.} = \frac{ԶՇ - ՎՇ}{\overline{ՍԿ}} \times 100\%, \qquad (4.2.3.1)$$

որտեղ՝

ԶՇ - տնտեսավարող սուբյեկտի ենթակայության տակ մնացած զուտ շահույթն է,

ՎՇ - բաժնետերերին վճարվող շահաբաժիններն են,

$\overline{ՍԿ}$ - սեփական կապիտալի միջին մեծությունն է:

Տնտեսական կայուն աճի գործակիցը ցույց է տալիս, թե միջին հաշվով ինչպիսի տեմպերով է ավելանում տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կարողությունը (պոտենցիալը): Տնտեսական կայուն աճի վրա ազդող գործոնների գնահատման համար, որոնք բնորոշում են ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունավետությունը, սովորաբար օգտագործվում է մաթեմատիկական հետևյալ արտահայտությունը (մոդելը)[1]՝

$$Գ_{տ.կ.ա.} = \underset{(1)}{\frac{ՆՇ}{ԶՇ}} \times \underset{(2)}{\frac{ԶՇ}{ԻԶՀ}} \times \underset{(3)}{\frac{ԻԶՀ}{\overline{ԸԿ}}} \times \underset{(4)}{\frac{\overline{ԸԿ}}{\overline{ՍԿ}}} \times 100\% \qquad (4.2.3.2)$$

կամ

$$Գ_{տ.կ.ա.} = Գ_{ն.շ.} \times Գ_{ա.շ.} \times Գ_{ը.կ.հ.} \times Գ_{ֆ.կ.} \times 100\%, \qquad (4.2.3.3)$$

[1] Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс, с. 254.



որտեղ՝

$Գ_{ն.շ.}$ - ներդրվող շահույթի (ՆՇ) տեսակարար կշիռն է զուտ շահույթի (հարկումից հետո) գումարում,

$Գ_{ա.շ.}$ - իրացվող արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) շահութաբերությունն է ըստ զուտ շահույթի,

$Գ_{ը.կ.հ.}$ - ընդհանուր կապիտալի (ակտիվների) հատույցի գործակիցն է,

$Գ_{ֆ.կ.}$ - ֆինանսական կախվածության գործակիցն է:

Ներկայացված բանաձևերում 1-ին հարաբերակցությունը ($Գ_{ն.շ.}$) բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի շահաբաժինների քաղաքականությունը, այսինքն, թե զուտ շահույթից որքան գումար է հատկացվում արտադրության զարգացման համար յուրաքանչյուր բաժնետոմսի հաշվով (շահաբաժնի վճարումից հետո):

2-րդ հարաբերակցությունը ($Գ_{ա.շ.}$) բնութագրում է իրացվող արտադրանքի շահութաբերությունը կամ իրացումից հասույթում զուտ շահույթի տեսակարար կշիռը, որտեղ (ԻԶՀ)-ն արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի գումարն է:

3-րդ հարաբերակցությունը ($Գ_{ը.կ.հ.}$) բնութագրում է ակտիվների կամ պասիվների միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի գումարի չափը, որտեղ ($\overline{ԸԿ}$)-ն հաշվապահական հաշվեկշռի նախորդ և հաշվետու տարիների (ժամանակաշրջանների) ակտիվների (ընդհանուր կապիտալի) միջին մեծությունն է:

4-րդ ազդող գործոնը ֆինանսական կախվածության գործակիցն է ($Գ_{ֆ.կ.}$), որը բնութագրում է ընդհանուր և սեփական կապիտալների միջև եղած հարաբերակցությունը և միաժամանակ ցույց է տալիս միջին հաշվով մեկ միավոր սեփական կապիտալին բաժին ընկնող ակտիվների (ընդհանուր կապիտալի) գումարի չափը: Այն համարվում է սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի հակադարձ մեծություն:

Վերը նշված բանաձևերում (4.2.3.2 կամ 4.2.3.3) ազդող գործոնները բաժանվում են երկու խմբի՝

1. ֆինանսական (1-ին և 4-րդ գործոնները),
2. արտադրական (2-րդ և 3-րդ գործոնները):

Վերն ասվածից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտը նախ հնարավորություն ունի օգտագործել տնտեսական որոշակի լծակներ՝ ազդելու տնտեսական կայուն աճի գործակցի վրա, այդ թվում՝ ի հաշիվ վճարվող շահաբաժինների գումարի չափի նվազեցման, ակտիվների հատույցի և արտադրանքի շահութաբերության ավելացման, միաժամանակ՝

ուղիներ փնտրել ստանալու տարբեր տեսակի վարկեր ու փոխառություններ՝ հետագայում սնանկացումից խուսափելու համար:

Բերված գործոնային բանաձևերը կարելի է ավելի ծավալուն ներկայացնել[1], եթե դրանում ներառենք տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրությունը բնութագրող այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են՝ սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվներով ապահովվածությունը, ընթացիկ ակտիվների իրացվելիությունը, ընթացիկ (շրջանառու) ակտիվների շրջանառելիությունը, սեփական կապիտալի և ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունների հարաբերակցությունը: Ուստի, ելնելով վերոնշյալ հարաբերական ցուցանիշների համակարգից, տնտեսական կայուն աճի գործակցի հաշվարկի համար կարող ենք օգտագործել ավելի ընդգրկուն գործոնային մոդել, որը կարտահայտվի հետևյալ տեսքով՝

$$Գ_{տ.կ.ա.} = \frac{ՆՇ}{ՋՇ} \times \frac{ՋՇ}{ԻՋՀ} \times \frac{ԻՋՀ}{\overline{ՍԸԱ}} \times \frac{\overline{ՍԸԱ}}{\overline{ԸԱ}} \times \frac{\overline{ԸԱ}}{\overline{ԸՊ}} \times \frac{\overline{ԸՊ}}{\overline{ԸԿ}} \times \frac{\overline{ԸԿ}}{ՍԿ} \qquad (4.2.3.4)$$

(1) (2) (3) (4) (5) (6) (7)

կամ

$$Գ_{տ.կ.ա.} = Գ_{մ.շ.} \times Գ_{ա.շ.} \times Գ_{ս.ը.ա.շ.} \times Գ_{ս.ը.ա.ա.} \times Գ_{ը.ի.} \times Գ_{ը.պ.բ.} \times Գ_{ֆ.կ.}, \qquad (4.2.3.5)$$

որտեղ՝

1-ին, 2-րդ և 7-րդ ազդող գործոնների իմաստը նույնն է ինչ-որ նախորդ բանաձևերի դեպքում էր:

3-րդ հարաբերակցությունը սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների շրջանառելիության գործակիցն է ($Գ_{ս.ը.ա.շ.}$), որը բնութագրում է սեփական ընթացիկ ակտիվների միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի գումարի չափը, որտեղ ($\overline{ՍԸԱ}$)-ը սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մեծությունն է:

4-րդ հարաբերակցությունը սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակիցն է ($Գ_{ս.ը.ա.ա.}$), որը բնութագրում է ընթացիկ ակտիվների միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների գումարի չափը, որտեղ ($\overline{ԸԱ}$)-ն ընթացիկ ակտիվների միջին մեծությունն է:

5-րդ հարաբերակցությունը ընթացիկ իրացվելիության գործակիցն է ($Գ_{ը.ի.}$), որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների միջին հաշ-

[1] Маркарьян Э.А., Герасименко Г.П. Финансовый анализ. М., 1997, с.117.



վով մեկ միավորին բաժին ընկնող ընթացիկ ակտիվների գումարի չափը, որտեղ ($\overline{ԸՊ}$)-ն ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունների միջին մեծությունն է:

6-րդ հարաբերակցությունը ($Գ_{ը.պ.բ.}$) ցույց է տալիս ակտիվների (ընդհանուր կապիտալի) միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող ընթացիկ պարտավորությունների գումարի չափը կամ այլ կերպ՝ այն տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր կապիտալում ընթացիկ պարտավորությունների բաժինն է (տեսակարար կշիռը):

Տնտեսական կայուն աճի գործակցի ($Գ_{տ.կ.ա.}$) գործոնային վերլուծությունը կատարվում է 1-ին և 2-րդ հավելվածների ելակետային տվյալների հիման վրա (աղյուսակ 4.2.3):

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ տնտեսական կայուն աճի գործակիցը հաշվետու ժամանակաշրջանում ավելացել է 14,96%-ով: Դա, ի հաշիվ արտադրության զարգացմանն ուղղված շահույթի, տեղի է ունեցել հետևյալ գործոնների ազդեցության արդյունքում.

1. արտադրության զարգացմանն ուղղված շահույթը հաշվետու տարում ավելի շատ է եղել, քան նախորդ տարում: Միաժամանակ իրացումից զուտ հասույթում նրա բաժինը հաշվետու տարում ավելի բարձր է եղել, և նախորդ տարվա համեմատությամբ աճել է 0,075 միավորով, և արդյունքում տնտեսական կայուն աճի գործակիցն ավելացել է 0,0071 միավորով կամ 0,71%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{մ.շ.} \times Գ_{ա.շ.(0)} \times Գ_{ս.ը.ա.շ.(0)} \times Գ_{ս.ը.ա.ա.(0)} \times Գ_{ը.ի.(0)} \times Գ_{ը.պ.բ.(0)} \times$$
$$\times Գ_{ֆ.կ.(0)} = 0,075 \times 0,0377 \times 3,802 \times 0,665 \times 1,938 \times 0,331 \times$$
$$\times 1.552 = 0,0071\ (0,71\%): \qquad (4.2.3.6)$$

2. Իրացվող արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) շահութաբերության մակարդակի 0,071 միավորով բարձրացումը նպաստել է տնտեսական կայուն աճի գործակցի մեծացմանը 0,0835 միավորով կամ 8,35%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{\frac{ՆՇ}{ՋՇ}} \times Գ_{մ.շ.(1)} \times Գ_{ս.ը.ա.շ.(0)} \times Գ_{ս.ը.ա.ա.(0)} \times Գ_{ը.ի.(0)} \times Գ_{ը.պ.բ.(0)} \times$$
$$\times Գ_{ֆ.կ.(0)} = 0,071 \times 0,467 \times 3,802 \times 0,665 \times 1,938 \times 0,331 \times$$
$$\times 1,552 = 0,0835\ (8,35\%): \qquad (4.2.3.7)$$

Աղյուսակ 4.2.3

Տնտեսական կայուն աճի գործոնային վերլուծություն

| Ցուցանիշների անվանումը | Գումարը(հազ. դրամ) | | Շեղումը (+;-) | |
|---|---|---|---|---|
| | Նախորդ տարի | Հաշվետու տարի | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4(u3 - u2) | 5(u4 : u2) |
| I.Ելակետային | | | | |
| 1.զուտ շահույթ հարկումից հետո | 19484 | 86395 | 66911 | 343,4 |
| 2.արտադրության զարգացմանն ուղղված շահույթ | 7643 | 40358 | 32715 | 428,0 |
| 3.արտադրանքի, ապրանքների (աշխ-րի, ծառայությունների) իրացումից զուտ հասույթ | 517481 | 794709 | 277228 | 53,6 |
| 4.ընդհանուր կապիտալի (հաշվեկշռի հանրագումարի) միջին մեծությունը | 319055 | 416730 | 97675 | 30,6 |
| 5.ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մեծությունը | 204657 | 295822 | 91165 | 44,5 |
| 6.սեփական կապիտալի միջին մեծությունը | 205555 | 216102 | 10547 | 5,1 |
| 7.սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների միջին մեծությունը | 136111 | 160783 | 24672 | 18,1 |
| 8.ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունների միջին մեծությունը | 105582 | 135039 | 29475 | 27,9 |
| II.Հաշվարկային | | | | |
| 9.զուտ շահույթի կազմում արտադրությունում ներդրված շահույթի բաժինը կամ տեսակարար կշիռը ($Գ_{ն.շ}$), տող2 : տող1 | 0,392 | 0,467 | 0,075 | 19,1 |
| 10.իրացվող արտադրանքի (աշխ-րի, ծառ-րի) շահութաբերությունը ($Գ_{ա.շ.}$),տող1 : տող3 | 0,0377 | 0,1087 | 0,071 | 188,3 |
| 11.սեփական ընթացիկ (շրջ-ռու) ակտիվների շրջանառելիությունը ($Գ_{ս.ը.ա.շ.}$), տող3 : տող7 | 3,802 | 4,943 | 1,141 | 30,0 |
| 12.սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվներում ապահովվածության գործակիցը ($Գ_{ս.ը.ա.ա.}$), տող7 : տող5 | 0,665 | 0,544 | 0,121 | -18,2 |
| 13.ընթացիկ իրացվելիության գործակիցը ($Գ_{ը.ի.}$), տող5 : տող8 | 1,938 | 2,191 | 0,253 | 13,1 |
| 14.հաշվեկշռի հանրագումարում ընթացիկ պարտավորությունների բաժինը կամ տեսակարար կշիռը ($Գ_{ը.պ.բ.}$), տող8 : տող4 | 0,331 | 0,324 | -0,007 | -2,1 |
| 15.ֆինանսական կախվածության գործակիցը ($Գ_{ֆ.կ.}$), տող4 : տող6 | 1,552 | 1,928 | 0,376 | 24,2 |
| 16.տնտեսական կայուն աճի գործակիցը ($Գ_{տ.կ.ա.}$) ա) տող2 : տող6 x 100% | 3,72 | 18,68 | 14,96 | 402,3 |
| բ) տող1 : տող6 x 100% | 9,479 | 39,979 | 30,5 | 321,8 |



3. Սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների շրջանառելիության (պտույտների թիվը) 1,141 միավորով ավելացումը նպաստել է տնտեսական կայուն աճի գործակցի աճմանը 0,0383 միավորով կամ 3,83%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{ս.ը.ա.շ.} \times Գ_{ն.շ.\,(1)} \times Գ_{ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.ա.\,(0)} \times Գ_{ը.ի.\,(0)} \times Գ_{ը.պ.բ.\,(0)} \times Գ_{ֆ.կ.\,(0)} = 1,141 \times 0,467 \times 0,1087 \times 0.665 \times 1,938 \times 0,331 \times 1,552 = 0,0383\ (3,83\%):$$

(4.2.3.8)

4. Սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվներով ապահովվածության աստիճանի 0,121 միավորով նվազեցումը հանգեցրել է տնտեսական կայուն աճի գործակցի պակասեցմանը 0,0302 միավորով կամ 3,02%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{ս.ը.ա.ա.} \times Գ_{ն.շ.\,(1)} \times Գ_{ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.շ.\,(1)} \times Գ_{ը.ի.\,(0)} \times Գ_{ը.պ.բ.\,(0)} \times Գ_{ֆ.կ.\,(0)} = -0,121 \times 0,467 \times 0,1087 \times 4,943 \times 1,938 \times 0,331 \times 1,552 = -0,0302\ (3,02\%):$$

(4.2.3.9)

5. Ընթացիկ ակտիվների իրացվելիության բարձրացումը 0,253 միավորով նպաստել է տնտեսական կայուն աճի գործակցի աճմանը 0,0177 միավորով կամ 1,77%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{ը.ի.} \times Գ_{ն.շ.\,(1)} \times Գ_{ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.ա.\,(1)} \times Գ_{ը.պ.բ.\,(0)} \times Գ_{ֆ.կ.\,(0)} = 0,253 \times 0,467 \times 0,1087 \times 4,943 \times 0,544 \times 0,331 \times 1,552 = 0,0177\ (1,77\%):$$

(4.2.3.10)

6. Ընդհանուր ակտիվներում (կապիտալում) ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունների բաժնի նվազեցումը 0,007 միավորով բերել է տնտեսական կայուն աճի գործակցի պակասեցում 0,0032 միավորով կամ 0,32%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{ը.պ.բ.} \times Գ_{ն.շ.\,(1)} \times Գ_{ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.ա.\,(1)} \times Գ_{ը.ի.\,(1)} \times Գ_{ֆ.կ.\,(0)} = -0,007 \times 0,467 \times 0,1087 \times 4,943 \times 0,544 \times 2,191 \times 1,552 = -0,0032\ (0,32\%):$$

(4.2.3.11)

7. Ֆինանսական կախվածության գործակցի 0,376 միավորով մեծացումը բերել է տնտեսական կայուն աճի գործակցի փոփոխության 0,0364 միավորով կամ 3,64%-ով:

$$\pm\Delta Գ_{տ.կ.ա.} = \pm\Delta Գ_{ֆ.կ.} \times Գ_{ն.շ.\,(1)} \times Գ_{ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.շ.\,(1)} \times Գ_{ս.ը.ա.ա.\,(1)} \times Գ_{ը.հ.\,(1)} \times$$
$$\times Գ_{ը.պ.բ.\,(1)} = 0,376 \times 0,467 \times 0,1087 \times 4,943 \times 0,544 \times 2,191 \times$$
$$\times 0,324 = 0,0364\ (3,64\%):$$

(4.2.3.12)

Տնտեսական կայուն աճի գործակցի մեծությունը, բոլոր գործոնների գծով, ընդհանրացված տեսքով կազմում է՝

$$0,0071 + 0,0835 + 0,0383 - 0,0302 + 0,0177 - 0,0032 + 0,0364 = 0,1496$$

կամ 14,96%:

Այստեղից հետևում է, որ (4.2.3.5) բանաձևում ընդգրկված բոլոր գործոնների ազդեցությունը՝ 14,96%-ը, համընկնում է տնտեսական կայուն աճի գործակցին (տե՛ս աղյուսակ 4.2.3.1, սյունակ 3):

Ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտում տնտեսական կայուն աճի գործակցի մեծացումը հաշվետու տարում նախորդի համեմատությամբ տեղի է ունեցել ի հաշիվ 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ ու 7-րդ ազդող գործոնների ավելացման և 4-րդ, 6-րդ գործոնների նվազեցման: Հատկապես վերջին 7-րդ գործոնը կարևոր նշանակություն ունի տնտեսական կայուն աճի կարգավորման գործում, այսինքն՝ որքան բարձր լինի սեփական և փոխառու կապիտալի (ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունների) հարաբերակցության գործակիցը կամ սեփական կապիտալի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում, կնշանակի տնտեսավարող տվյալ սուբյեկտը գտնվում է ֆինանսապես խիստ կայուն վիճակում և կարող է գալիք ժամանակաշրջաններում ապահովել տնտեսական աճ:

Նման վերլուծություններ կարելի է կատարել նաև զուտ շահույթի (մինչև հարկումը) հետ կապված՝ նախքան շահաբաժինների վճարումը, երբ զուտ շահույթի ամբողջական գումարը ծախսվում է արտադրության զարգացման նպատակով:



## 4.3. Իրացվելիության գնահատումը

### 4.3.1. Հասկացություն իրացվելիության մասին

Տնտեսավարող սուբյեկտների ակտիվների իրացվելիության (վճարունակության) վերլուծությունն ամենից առաջ վերաբերում է այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնց տրամադրվում են առևտրային վարկեր: Քանի որ առևտրային վարկերը հիմնականում կարճաժամկետ են, հետևաբար այդ տնտեսավարող սուբյեկտները պետք է ի վիճակի լինեն ժամանակին վճարել (մարել) այդ պարտքերը՝ գնահատելով իրենց հնարավորությունները կարճաժամկետ պարտավորությունների նկատմամբ, այսինքն՝ նախապես պետք է կատարեն իրացվելիության վերլուծություն:

Իրացվելիության հարցը կարելի է քննարկել երկու առումով.

- պետք է որոշել ամենաարդյունավետ այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կարելի է իրացնել բոլոր տեսակի ակտիվները,
- պետք է որոշել սպասվելիք այն գումարի չափը, որը առաջանալու է ակտիվների ընդհանուր վաճառքից:

Սրանք փոխկապակցված են, այսինքն՝ ակտիվների որոշ մասը կարելի է վաճառել ծառայության ժամկետից շուտ, թեկուզև իրացման գինը սահմանվածից (շուկայականից) փոքր-ինչ ցածր լինի:

Իրացվելիությունը, ընդհանրացված առումով, տնտեսավարող սուբյեկտների ունակությունն է իրենց տրամադրության տակ գտնվող ակտիվները դրամական կամ արտարժութային միջոցների փոխարկելու և դրանով սահմանված ժամկետներում ծածկելու անհրաժեշտ բոլոր տեսակի վճարումները: Տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գըտնվող ընթացիկ ակտիվների կազմում գերակշռում են դրամական միջոցներն ու կարճաժամկետ դեբիտորական պարտքերը, որոնք սովորաբար համարվում են ավելի իրացվելի, քան եթե այդ ակտիվներում ավելի մեծ տեսակարար կշիռ ունենային արտադրական պաշարները կամ ընդհանուր ակտիվներում ամենամեծ բաժինն ընկներ ոչ ընթացիկ ակտիվներին:

Տնտեսավարող սուբյեկտների բոլոր ակտիվները, կախված իրացվելիության աստիճանից (այսինքն, թե ինչ արագությամբ են այդ ակտիվները փոխակերպվում դրամական միջոցների), պայմանականորեն կարելի է բաժանել 4 խմբի:

1. ***Ամենաշատ իրացվելի ակտիվներ*** ($Ա_1$) - ընթացիկ ակտիվների մի մասը կազմող բոլոր տեսակի դրամական միջոցների այն գումարն է, որը կարելի է օգտագործել անմիջականորեն հաշվարկային գործառնություններ կատարելու համար: Այս խմբում ներառվում են նաև կարճաժամկետ

ֆինանսական ներդրումները՝ արժեթղթերի տեսքով:

2. *Արագ իրացվելի ակտիվներ* ($Ա_2$) - ընթացիկ ակտիվների մի մասը կազմող և որոշակի ժամանակում շրջանառության համար պահանջվող այն միջոցներն են, որոնք հանդես են գալիս հիմնականում դեբիտորական պարտքերի (վճարումներ, որոնք պետք է կատարվեն հաշվետու պահից 12 ամսվա ընթացքում) և այլ ընթացիկ ակտիվների տեսքով: Այդպիսի ակտիվների իրացվելիությունը տարբերակվում է՝ կախված օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից (ֆինանսական ոլորտի աշխատողների որակավորումը, մատակարարների հետ փոխհարաբերությունները և դրանց վճարունակությունը, գնորդներին վարկերի տրամադրման պայմանները, մուրհակային շրջանառության կազմակերպումը):

3. *Դանդաղ իրացվելի ակտիվներ* ($Ա_3$) - ավելի քիչ իրացվելի ընթացիկ ակտիվներն են՝ արտադրական պաշարները, անավարտ արտադրության ծախսերը, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները, դեբիտորական պարտքերը (վճարումներ, որոնք պետք է կատարվեն հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո), ապրանքանյութական արժեքների ձեռքբերման գծով ավելացված արժեքի և ակցիզային հարկերը:

4. *Դժվար իրացվելի ակտիվներ* ($Ա_4$) - ակտիվներ, որոնք նախատեսված են համեմատաբար ավելի երկարատև ժամանակաընթացքում տնտեսական գործունեության մեջ օգտագործելու համար: Դրանց թվին են դասվում հաշվեկշռի ակտիվի 1-ին բաժնի՝ ոչ ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ երկարաժամկետ ֆինանսական ներդրումների:

Առաջին 3 խումբ ակտիվները, 4-րդի հետ համեմատած, ավելի իրացվելի են:

Նման ձևով հաշվեկշռի պասիվները, ըստ պարտավորությունների մարման ժամկետների, խմբավորվում են ըստ հետևյալ հատկանիշների՝

1. *ամենահրատապ պարտավորություններ* ($Պ_1$) - ընթացիկ պարտավորություններից կրեդիտորական պարտքերը (առևտրական կրեդիտորական պարտքերը, կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին, պարտադիր սոցիալական ապահովագրության գծով պարտքեր և այլն), շահաբաժինների գծով կանխավճարները, այլ կրեդիտորական պարտքերը, որոնք սահմանված ժամկետում չեն վճարվում:

2. *կարճաժամկետ պասիվներ* ($Պ_2$) - ընթացիկ պարտավորություններից՝ բանկերի կարճաժամկետ վարկերն ու փոխառությունները, վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները, ինչպես նաև այլ ընթացիկ պարտավորությունները, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից 12 ամսվա ընթացքում:

3. *երկարաժամկետ պասիվներ* ($Պ_3$) - երկարաժամկետ բանկային



վարկերը և փոխառությունները, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները, հետաձգված հարկային պարտավորությունները և այլ ոչ ընթացիկ պարտավորությունները, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո:

4. *Կայուն (հաստատուն) պասիվներ* ($Պ_4$) - սեփական կապիտալից՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարը, լրացուցիչ կապիտալը, վերագնահատումից տարբերությունները, կուտակված շահույթը, պահուստները (բացի շահաբաժինների գծով կանխավճարներից), ինչպես նաև ոչ ընթացիկ պարտավորություններից՝ նպատակային ֆինանսավորումն ու մուտքերը և գալիք ժամանակաշրջանի ծախսերի ու վճարումների պահուստները:

## 4.3.2. Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիությունը

Տնտեսավարող սուբյեկտը կարող է լինել մեծ կամ փոքր աստիճանի իրացվելի: Այդ սուբյեկտների իրացվելիության իրական աստիճանը գնահատելու համար անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն: Հաշվեկշռի իրացվելիության որոշման համար հարկ է համեմատել ակտիվի և պասիվի համապատասխան խմբերը: Հաշվեկշիռը համարվում է բացարձակ առումով իրացվելի, եթե այդ խմբերի միջև կան հետևյալ հարաբերակցությունները՝

$$Ա_1 > Պ_1$$
$$Ա_2 > Պ_2$$
$$Ա_3 > Պ_3$$
$$Ա_4 < Պ_4$$

Այս խմբերից առաջին երեքն են, որ հստակ պատկերացում են տալիս հաշվեկշռի իրացվելիության վերաբերյալ, իսկ 4-րդը հիմնականում ապահովում է ակտիվի և պասիվի հավասարակշռվածությունը:

Եթե կատարվում են առաջին 3 անհավասարությունները, ապա նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտն ունի ընթացիկ ակտիվների այնքան բացարձակ մեծություն, որը գերազանցում է ընթացիկ պարտավորությունները, բայց միաժամանակ պետք է պահպանվի 4-րդ անհավասարությունը: Այսինքն՝ անհրաժեշտ է ունենալ այնքան սեփական կապիտալ, որ հնարավոր լինի ժամանակին փոխհատուցել ոչ ընթացիկ ակտիվները և մնացած տարբերության ($Պ_4 - Ա_4 > 0$) գումարի հաշվին ապահովել սեփական ընթացիկ ակտիվները (սեփական միջոցները): Դրանով էլ կապահովվի տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության նվազագույն պայմանը: Իսկ եթե չի կատարվում առաջին 3 անհավասարու-

թյուններից թեկուզ մեկը, նշանակում է հաշվեկշռի իրացվելիությունն արդեն տարբերվում է բացարձակ իրացվելիությունից, այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտը ֆինանսապես կայուն չէ:

Ասվածն ավելի հստակ պատկերացնելու համար կոնկրետ օրինակով ներկայացնենք հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը (աղյուսակ 4.3.2):

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտի հաշվեկշիռը չի համարվում բացարձակ իրացվելի, ինչպես նախորդ տարվա, այնպես էլ հաշվետու տարվա վերջի դրությամբ: Այսինքն՝ հաշվարկներից պարզվում է, որ՝

- նախորդ տարվա վերջի դրությամբ՝

$$Ա_1 < Պ_1,\ Ա_2 > Պ_2,\ Ա_3 < Պ_3,\ Ա_4 < Պ_4,$$

- հաշվետու տարվա վերջի դրությամբ՝

$$Ա_1 < Պ_1,\ Ա_2 < Պ_2,\ Ա_3 > Պ_3,\ Ա_4 < Պ_4:$$

Պարզվում է, որ միայն դժվար իրացվելի ակտիվների ($Ա_4$) և կայուն պասիվների ($Պ_4$) գծով է, որ համաչափությունը պահպանված: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտն ապահովված է սեփական կապիտալով և ոչ ընթացիկ ակտիվների (դժվար իրացվելի ակտիվների) նկատմամբ ունի ավելցուկ՝ համապատասխանաբար 71378 և 119010 հազ. դրամի չափով: Մյուս կողմից էլ տնտեսավարող սուբյեկտն ապահովված չէ այնքան դրամական միջոցներով, որ կարողանա ժամանակին կատարել ամենահրատապ պարտավորությունների մարում:

Արագ իրացվելի ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների համադրումից պարզվում է, որ նախորդ տարվա վերջին դեբիտորական պարտքերի ավելցուկ է եղել 164166 հազ. դրամի չափով: Այդ գումարը պարտատիրոջ (կրեդիտորի) կողմից՝ դեբիտորին (տնտեսավարող սուբյեկտին) հետ վերադարձնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը ի վիճակի կլինի ժամանակին մարել կարճաժամկետ վարկերն ու փոխառությունները: Նույնը չի կարելի ասել հաշվետու տարվա վերջի դրությամբ, քանի որ պակասորդը կազմել է 26569 հազ. դրամ:

Հաշվեկշռի իրացվելիությունը գալիք ժամանակաշրջանների համար կարելի է որոշել, դանդաղ իրացվելի ակտիվները համեմատելով ոչ ընթացիկ պարտավորությունների հետ, քանի որ վերջինս առնչվում է երկարաժամկետ բանկային վարկերի, փոխառությունների և տարբեր տեսակի ներդրումների հետ: Հաշվեկշիռների իրացվելիությունը գալիք ժամանա-



Աղյուսակ 4.3.2

Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը

Հազ. դրամ

| Ակտիվ | Նախորդ ժամանակաշրջանի վերջում (տարի, եռամսյակ) | Հաշվետու ժամանակաշրջանի վերջում (տարի, եռամսյակ) | Պասիվ | Նախորդ ժամանակաշրջանի վերջում (տարի, եռամսյակ) | Հաշվետու ժամանակաշրջանի վերջում (տարի, եռամսյակ) | Վճարային ավելցուկ կամ պակասորդ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | նախորդ ժամանակաշրջանի վերջում (տարի, եռամսյակ) | հաշվետու ժամանակաշրջանի վերջում (տարի, եռամսյակ) |
| 1.ամենաշատ իրացվելի ակտիվներ (Ա1) | 4838 | 3047 | 1.ամենահրատապ պարտավորություններ (Պ1) | 79162 | 101177 | -74324 | -98130 |
| 2.արագ իրացվելի ակտիվներ (Ա2) | 204058 | 23277 | 2.կարճաժամկետ պասիվներ (Պ2) | 39892 | 49846 | 164166 | -26569 |
| 3.դանդաղ իրացվելի ակտիվներ (Ա3) | 26665 | 329758 | 3.երկարաժամկետ պասիվներ (Պ3) | 45129 | 86049 | -18464 | 243709 |
| 4.դժվար իրացվելի ակտիվներ (Ա4) | 106400 | 135416 | 4.կայուն պասիվներ (Պ4) | 177778 | 254426 | -71378 | -119010 |
| 5.հաշվեկշիռ | 341961 | 491498 | 5.հաշվեկշիռ | 341961 | 491498 | | |

կաշրջանների համար պատկերացում է տալիս տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական դրության փոփոխության մասին:

Ֆինանսական պլանի կազմման համար տեղեկատվության ամենահիմնական աղբյուրներից մեկը հաշվեկշռի իրացվելիությունն է:

Հաշվեկշռի իրացվելիության օգնությամբ կարելի է կանխատեսել տընտեսավարող սուբյեկտի սնանկացման վտանգը:

### 4.3.3. Իրացվելիության գնահատման ցուցանիշները

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրությունը, ինչպես նշվեց, կարելի է գնահատել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ (հեռանկարային) կտրվածքով: Առաջին դեպքում ֆինանսական դրության գնահատման չափանիշը տնտեսավարող սուբյեկտի իրացվելիությունը կամ վճարունակությունն է, որի դեպքում նա ի վիճակի է ամբողջ ծավալով կատարել կարճաժամկետ (ընթացիկ) պարտավորությունների գծով հաշվարկներ: Օրինակ, հաշվարկներ աշխատողների հետ՝ աշխատանքի վարձատրության, մատակարարների հետ՝ ստացված ապրանքանյութական արժեքների և ցուցաբերված ծառայությունների դիմաց, բանկի հետ՝ վարկերի ու տոկոսավճարների և հաշվարկային այլ փոխհարաբերությունների գծով:

Իրացվելիության գնահատման ցուցանիշները[1] պատկերացում են տալիս ոչ միայն տնտեսավարող սուբյեկտների վճարունակության մասին կոնկրետ ամսաթվի դրությամբ, այլ նաև արտասովոր կամ անկանխատեսելի դեպքերի ժամանակ: Այսպես, վճարունակությունը գնահատելիս հաշվի են առնում կանխիկ դրամի գումարի չափը տնտեսավարող սուբյեկտի դրամարկղում կամ նրան սպասարկող բանկի հաշվարկային հաշվում: Նշված ֆինանսական միջոցները, համեմատած, օրինակ, ապրանքանյութական արժեքների հետ, ավելի շարժունակ են և հեշտությամբ կարող են ներգրավվել ֆինանսատնտեսական գործունեության մեջ յուրաքանչյուր պահի դրությամբ:

Իրացվելիությունը գնահատվում է տարբեր գործակիցների օգնությամբ: Դրանց թվին են դասվում՝

- սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների մեծությունը կամ գործող կապիտալը,
- գործող կապիտալի շարժունակության գործակիցը,

[1] Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа (учебное пособие). М., 1999, с.162.



- բացարձակ իրացվելիության գործակիցը,
- արագ իրացվելիության գործակիցը,
- ընթացիկ իրացվելիության գործակիցը,
- ընդհանուր ակտիվներում (կապիտալում) ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը կամ բաժինը,
- ընթացիկ ակտիվներում նյութական շրջանառու ակտիվների տեսակարար կշիռը կամ բաժինը,
- պաշարների ծածկման գործակիցը:

Գնահատման վերոնշյալ գործակիցների հաշվարկման համար ելակետային տվյալներ կարող են հանդես գալ տնտեսավարող սուբյեկտի տրամադրության տակ եղած դրամական միջոցները, կարճաժամկետ ֆինանսական ներդրումները, սեփական կապիտալը, ոչ ընթացիկ (երկարաժամկետ) և ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունները, ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվները, նյութական ընթացիկ ակտիվները և հաշվեկշռի հանրագումարը (ընդհանուր կապիտալը), որոնք արտացոլված են հիմնականում հաշվապահական հաշվեկշռում:

Տնտեսական ծանր վիճակում գտնվող երկրներում արտադրություն կազմակերպելու կամ տնտեսական համատեղ գործունեություն իրականացնելու համար խիստ անհրաժեշտություն է դառնում երկարաժամկետ ներդրումներ և վարկային միջոցներ (դրանք ոչ ընթացիկ պարտավորություններն են) ներգրավելու հարցը: Այդ ներգրավված միջոցները դառնում են ակտիվների կազմավորման աղբյուր: Անհրաժեշտ է, որպեսզի տնտեսավարող սուբյեկտն իմանա արդյոք ի վիճակի է ժամանակին մարելու ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորությունները, այսինքն, նախօրոք պարտքի ձևով վերցված բանկային կարճաժամկետ վարկերն ու կարճաժամկետ փոխառությունները, տարբեր տեսակի կրեդիտորական պարտքերը (աշխատանքի վարձատրություն, սոցիալական ապահովագրություն և ապահովություն, բյուջեին պարտք հարկերի գծով և այլն): Միաժամանակ չպետք է մոռանալ, որ այս ամենով հանդերձ, տնտեսավարող սուբյեկտն իր տրամադրության տակ պետք է ունենա որոշակի սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվներ, որն անվանվում է նաև *գործող կապիտալ*:

Այժմ համառոտակի ներկայացնենք իրացվելիության գնահատման ցուցանիշները:

1. ***Սեփական ընթացիկ ակտիվների (ՍԸԱ) մեծությունը կամ գործող կապիտալը*** **բնորոշում** է տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր իրացվելիությունը, որի փոփոխությունը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ ճյուղային պատկանելիությունից, բանկերի վարկավորման պայ-

մաններից, շահութաբերությունից, աշխատանքների կազմակերպման մակարդակից և այլն: Այդ ցուցանիշը ընթացիկ ակտիվների (ԸԱ) և ընթացիկ պարտավորությունների (ԸՊ) գումարների տարբերությունն է՝

$$ԱԸԱ = ԸԱ - ԸՊ: \qquad (4.3.3.1)$$

2. ***Գործող կապիտալի շարժունակության գործակիցը*** ($Գ_{գ.կ.շ.}$) ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանի (տարի, եռամսյակ) սկզբի կամ վերջի դրությամբ նյութական ընթացիկ ակտիվների շարժունակությունը սեփական ընթացիկ ակտիվների նկատմամբ: Այն արտահայտվում է նյութական ընթացիկ ակտիվների (ՆԸԱ) և սեփական ընթացիկ ակտիվների (ՍԸԱ) հետևյալ հարաբերակցությամբ՝

$$Գ_{գ.կ.շ.} = \frac{ՆԸԱ}{ՍԸԱ}: \qquad (4.3.3.2)$$

Որքան տվյալ ցուցանիշի մեծությունը փոքրանա, տնտեսավարող սուբյեկտը ֆինանսապես ավելի կայուն վիճակում կլինի, քանի որ նյութական ընթացիկ ակտիվները (արտադրական պաշարները) անընդհատ կգտնվեն արտադրության ոլորտում և կստեղծեն ավելի շատ նոր ապրանքներ:

3. ***Բացարձակ իրացվելիության գործակիցը*** ($Գ_{բ.ի.}$) ցույց է տալիս, թե ընթացիկ (կարճաժամկետ) փոխառու պարտավորությունների որ մասը կարող է մարվել անմիջապես տվյալ պահի դրությամբ. այն ներկայացնում է դրամական միջոցների (ԴՄ), կարճաժամկետ ֆինանսական ներդրումների (ԿՖՆ) գումարների և ընթացիկ պարտավորությունների (ԸՊ) հետևյալ հարաբերակցությունը՝

$$Գ_{բ.ի.} = \frac{ԴՄ + ԿՖՆ}{ԸՊ}: \qquad (4.3.3.3)$$

Այս գործակիցն արդյունավետ է համարվում այն դեպքում, երբ փոքր չէ 0,2-ից կամ 20%-ից: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտը տվյալ պահի դրությամբ ունի մեկ միավոր կարճաժամկետ պարտքի մարման դիմաց 0,2 միավորից ոչ պակաս դրամական միջոցներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ՝ արժեթղթերի տեսքով:

4. ***Արագ իրացվելիության գործակիցը*** ($Գ_{ա.ի.}$) ցույց է տալիս, թե ընթացիկ պարտավորությունների որ մասը կարող է մարվել ոչ միայն ունեցած դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների, այլև սպասվող դեբիտորական պարտքերի (ԴՊ) և այլ ընթացիկ



ակտիվների (ԱԸԱ) մուտքերի հաշվին: Այն արտահայտվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$Գ_{ա.ի.} = \frac{ԴՄ + ԿՖՆ + ԴՊ + ԱԸԱ}{ԸՊ} \qquad (4.3.3.4)$$

կամ

$$Գ_{ա.ի.} = \frac{ԸԱ - Պ}{ԸՊ}: \qquad (4.3.3.5)$$

Այս գործակիցն արդյունավետ է համարվում 0,8–1,0 միավորից պակաս չլինելու դեպքում:

5. ***Ընթացիկ իրացվելիության գործակիցը*** ($Գ_{ը.ի.}$) ցույց է տալիս, թե տնտեսավարող սուբյեկտը որքանով է պատրաստ իր տրամադրության տակ եղած ընթացիկ ակտիվներով մարել բոլոր տեսակի կարճաժամկետ պարտավորությունները (կարճաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները, կրեդիտորական պարտքերը և այլն): Այն ընթացիկ ակտիվների (ԸԱ) և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունն է՝

$$Գ_{ը.ի.} = \frac{ԸԱ}{ԸՊ}: \qquad (4.3.3.6)$$

Տնտեսապես զարգացած երկրներում նորմալ է համարվում, երբ ընթացիկ իրացվելիության գործակիցը տատանվում է 2,0–3,0-ի սահմաններում: Եթե այս գործակիցը աճում և գերազանցում է սահմանված նորման, ապա դա վկայում է ընթացիկ ակտիվների անարդյունավետ օգտագործման մասին, այսինքն՝ դանդաղում է արտադրական պաշարների, դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը, մեծանում է անհուսալի դեբիտորական պարտքերի գումարի չափը և այլն:

6. ***Ընդհանուր կապիտալում (ակտիվներում) ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը կամ բաժինը*** ($(ԸԱ)_բ$) բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի ապահովվածության աստիճանը ընթացիկ ակտիվներով: Այն արտահայտվում է ընթացիկ ակտիվների և ընդհանուր կապիտալի (ԸԿ) հարաբերակցությամբ՝

$$(ԸԱ)_բ = \frac{ԸԱ}{ԸԿ}: \qquad (4.3.3.7)$$

Այս ցուցանիշը միաժամանակ ցույց է տալիս ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների հանրագումարում, որի մեծությունը կախված է ճյուղային պատկանելիությունից և դրանց շրջանա-

ռելիությունից (պտույտներով): Վերջիններիս թվաքանակի ավելացումը վկայում է, որ ընթացիկ ակտիվներն արդյունավետ են օգտագործվել:

7. ***Ընթացիկ ակտիվներում նյութական շրջանառու ակտիվների տեսակարար կշիռը կամ բաժինը*** (ՆՇԱ)$_{բ}$ ցույց է տալիս տնտեսավարող սուբյեկտի արտադրական պաշարներով ապահովվածության աստիճանը: Այն արտահայտվում է նյութական ընթացիկ (շրջանառու) ակտիվների (ՆՇԱ) և ընթացիկ ակտիվների հարաբերակցությամբ՝

$$(\text{ՆՇԱ})_{բ} = \frac{\text{ՆՇԱ}}{\text{ԸԱ}} : \qquad (4.3.3.8)$$

Այս ցուցանիշը բնութագրում է տվյալ ժամանակաշրջանների սկզբում կամ վերջում ընթացիկ ակտիվների մեկ միավորին բաժին ընկնող արտադրական պաշարների գումարի չափը: Որքան փոքր լինի այդ մեծությունը, կնշանակի տնտեսավարող սուբյեկտի պաշարները գտնվում են արտադրական գործընթացի փուլում և ստեղծում են պատրաստի արտադրանք:

8. ***Պաշարների ծածկման գործակիցը*** ($Գ_{պ.ծ.}$) բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի նյութական ընթացիկ ակտիվների (ՆԸԱ) մեկ միավորին բաժին ընկնող սեփական ընթացիկ ակտիվների (ՍԸԱ) գումարի չափը: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{պ.ծ.} = \frac{\text{ՍԸԱ}}{\text{ՆԸԱ}} : \qquad (4.3.3.9)$$

Այս ցուցանիշն արդյունավետ է համարվում, եթե մեծ է 1,0 գործակցից: Հետևաբար, որքան բարձր լինի այն, կնշանակի տնտեսավարող սուբյեկտն ի վիճակի է ժամանակին ձեռք բերելու արտադրական պաշարներ:

Իրացվելիության գնահատման թվարկված ցուցանիշների իմաստն ավելի հստակ պատկերացնելու համար կազմենք հաշվարկային աղյուսակ (4.3.3): Աղյուսակի ելակետային տվյալները վերցրել ենք հավելված 1-ից:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ բացարձակ իրացվելիությունը, ըստ նախորդ և հաշվետու տարիների, բավականին ցածր է (0,2 գործակցից) և համապատասխանաբար կազմում է 0,041 և 0,020 միավոր: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտը չունի դրամական այնքան միջոցներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, որպեսզի կարողանա մարել ամենահրատապ կարճաժամկետ պարտավորությունները:



Աղյուսակ 4.3.3

Իրացվելիության գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան

| Ցուցանիշների անվանումը | Պայմ. նշանակ. | Գումարը (հազ. դրամ) | | Շեղումը (+;-) | |
|---|---|---|---|---|---|
| | | նախորդ տարվա վերջին | հաշվետու տարվա վերջին | բացարձակ, հազ. դր. | հարաբերական, % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I. Ելակետային | | | | | |
| 1.դրամական միջոցներ | ԴՄ | 4838 | 3047 | -1791 | -37,0 |
| 2.կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ | ԿՖՆ | . | — | — | — |
| 3.սեփական կապիտալ | ՍԿ | 177778 | 254426 | 76648 | 43,1 |
| 4.ոչ ընթացիկ (երկարաժամկետ) պարտավորություններ | ՈԸՊ | 45129 | 86049 | 40920 | 90,7 |
| 5.ոչ ընթացիկ (հիմնական միջոցներ և այլ ներդրումներ) ակտիվներ | ՈԸԱ | 106400 | 135416 | 29016 | 27,3 |
| 6.ընթացիկ ակտիվներ | ԸԱ | 235561 | 356082 | 120521 | 51,2 |
| 7.նյութական ընթացիկ (շրջանառու) ակտիվներ կամ արտադրական պաշարներ | ՆԸԱ | 26665 | 329758 | 303093 | x 11,4 |
| 8.ընթացիկ (կարճաժամկետ) պարտավորություններ | ԸՊ | 119054 | 151023 | 31969 | 26,9 |
| 9.հաշվեկշռի հանրագումարը (ընդհանուր կապիտալ) | Հ(ԸԿ) | 341961 | 491498 | 149537 | 30,4 |
| II. Հաշվարկային | | | | | |
| 10.սեփական ընթացիկ (շրջանառու) ակտիվների մեծությունը (գործող կապիտալ. տ.3 + տ.4 -տ.5 կամ տ.6-տ.8) | ՍԸԱ | 116507 | 205059 | 88552 | 76,0 |
| 11.գործող կապիտալի շարժունակության գործակիցը (տ.7 : տ.10) | $Գ_{գ.կ.շ.}$ | 0,229 | 1,608 | 1,379 | x 6,0 |
| 12.բացարձակ իրացվելիության գործակիցը [ (տ.1 + տ.2) : տ.8 ] | $Գ_{բ.ի.}$ | 0,041 | 0,020 | -0,021 | -51,2 |
| 13.արագ իրացվելիության գործակիցը (տ.6 - տ.7) : տ.8 | $Գ_{ա.ի.}$ | 1,755 | 0,174 | -1581 | -90,1 |
| 14.ընթացիկ իրացվելիության գործակիցը (տ.6 : տ.8) | $Գ_{ը.ի.}$ | 1,979 | 2,358 | 0,379 | 19,2 |
| 15.ընդհանուր կապիտալում ընթացիկ ակտիվների բաժինը (տ.6 : տ.9) | $(ԸԱ)_{բ.}$ | 0,689 | 0,724 | 0,035 | 5,1 |
| 16.ընթացիկ ակտիվներում նյութական շրջանառու ակտիվների բաժինը (տ.7 : տ.6) | $(ՆՇԱ)_{բ.}$ | 0,113 | 0,926 | 0,813 | 625,4 |
| 17.պաշարների ծածկման գործակիցը (տ.10 : տ.7) | $Գ_{պ.ծ.}$ | 4,369 | 0,622 | -3,747 | -85,8 |

Արագ իրացվելիության գործակիցը նախորդ տարվա վերջի դրությամբ բավականին բարձր է և կազմում է 1,755 միավոր՝ հաշվետու տարվա 0,174-ի փոխարեն (վերջինս նվազել է 90,1%-ով): Սա վկայում է, որ տնտեսավարող սուբյեկտն ունի դեբիտորական պարտքերի գծով սպասվելիք մուտքագրումներ, որոնց հիման վրա էլ կարող է մարել կարճաժամկետ պարտավորությունների մի մասը: Նույնը չենք կարող ասել հաշվետու տարվա վերջի դրությամբ, քանի որ նյութական ընթացիկ ակտիվների (արտադրական պաշարների) մեծությունը 11,4 անգամ գերազանցում է նախորդ տարվա մակարդակը: Այսինքն՝ հաշվետու տարվա ընթացքում սպասվելիք գումարների մուտքագրումները ավելի քիչ են և, ըստ այդմ էլ, արագ իրացվելիության գործակիցը կազմում է 0,174 միավոր, որը բավականին ցածր է 0,8 գործակցից և համարվում է անարդյունավետ:

Ինչ վերաբերում է ընթացիկ իրացվելիության գործակցին, ապա այն բավականաչափ մոտ է 2,0–3,0 սահմանային նորմային, որը հաշվետու տարվա սկզբում կազմել է 2,358 միավոր և նախորդ տարվա մակարդակը գերազանցել 19,2%-ով:

Հաշվարկներից հետևում է նաև, որ նախորդ տարվա սկզբում սեփական ընթացիկ ակտիվներով պաշարների ծածկման գործակիցը 4,396 միավոր է և հաշվետու տարվա մակարդակը գերազանցում է 3,747 միավորով:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է ասել, որ աշխատանքում լուսաբանված ֆինանսական դրության գնահատման ցուցանիշների համակարգը մեծապես կնպաստի, որ տնտեսավարող սուբյեկտները օգտագործելով բերված բանաձևերն ու ելակետային տվյալները, դրանց հիման վրա օբյեկտիվորեն գնահատեն իրենց ֆինանսական կայուն վիճակը, գործարար ակտիվության և շահութաբերության մակարդակները:



# Գլուխ 5

# Տնտեսավարող սուբյեկտների սնանկացումը և ռիսկերի գնահատման մեթոդիկան

## 5.1. Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման էությունը

### 5.1.1. Սնանկացման պատճառները և ազդող գործոնները

Տնտեսավարող սուբյեկտների սնանկացումը ոչ պլանային զարգացման արդյունք է և հատուկ է շուկայական տնտեսության տարերայնությանը: Այսինքն՝ դրանով դրսևորվում է տնտեսավարող սուբյեկտի անվճարունակությունը, իսկ հետագայում՝ ֆինանսատնտեսական գործունեության անհնարինությունը: Նման պայմաններում տնտեսավարող սուբյեկտը չի կարող ժամանակին ապահովել հարկային, մաքսային ու հաստատագրված պարտադիր վճարումները, կատարված աշխատանքի դիմաց աշխատավարձ վճարել և մարել կրեդիտորական այլ պարտքերը:

Սնանկացման պատճառները[1] հիմնականում լինում են երկու տեսակի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ պատճառները կապված են ֆինանսական, դրամական, վարկային, հարկային համակարգի անկատարելիության և արժեզրկման (ինֆլյացիայի) բավականին բարձր մակարդակի հետ:

Սուբյեկտիվ պատճառներն անմիջականորեն կապված են տնտեսավարող սուբյեկտի ոչ ճիշտ կառավարման աշխատանքների հետ, այդ թվում՝

- ժամանակին սնանկացման վիճակը կանխատեսելու ու հետագայում դրանից խուսափելու ուղիների որոնման անկարողությունը,
- վաճառահանման շուկաների, գովազդների ոչ լիարժեք ուսումնասիրման պատճառով իրացման ծավալների նվազումը,
- արտադրության ծավալի, արտադրանքի որակի և գների իջեցումը,
- չհիմնավորված և աննպատակ կատարվող ծախսերը,
- արտադրանքի շահութաբերության նվազեցումը,
- արտադրական գործընթացի տևողության մեծացումը,
- պարտքային պարտավորությունների ավելացումը և այլն:

[1] Теория и практика антикризисного управления. Под ред. С.Г. Беляева и В.И. Кошнина. М., 1996, с. 22.

Աղյուսակ 5.1.1

Տնտեսավարող սուբյեկտների սննդնամթերքի և դրանց վրա ազդող գործոնների

| Տնտեսավարող սուբյեկտի գործունեության բնույթը | Արտադրության գործընթացի նկարագրությունը | Պահածոյի տարայի տեսակը | Հումքի և նյութերի ընդունումը | Հումքի և նյութերի նախնական մշակումը | Մորգակցության ենթարկվող հումքի, նյութերի և պատրաստի արտադրանքի տեղափոխումը | Հումքի և նյութերի պահեստավորումը | Պատրաստի արտադրանքի պահեստավորումը | Տնտեսության ջրամատակարարման աղբյուրները |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | |
| 1) սեփական արտադրանք | | | | | | | | |
| | Միս և մսամթերք | Պլաստմասսե տարաներ, ապակե տարաներ, թղթե տարաներ, մետաղական տարաներ | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Ջրամատակարարման կենտրոնական համակարգ |
| | Ձուկ և ձկնամթերք | Պլաստմասսե տարաներ, ապակե տարաներ, թղթե տարաներ, մետաղական տարաներ | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Ջրամատակարարման կենտրոնական համակարգ |
| | Կաթ և կաթնամթերք | Պլաստմասսե տարաներ, ապակե տարաներ, թղթե տարաներ, մետաղական տարաներ | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Ջրամատակարարման կենտրոնական համակարգ |
| | Ձու և ձվամթերք | Պլաստմասսե տարաներ, ապակե տարաներ, թղթե տարաներ, մետաղական տարաներ | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Ջրամատակարարման կենտրոնական համակարգ |
| | Բուսական ծագման հումքի վերամշակում | Պլաստմասսե տարաներ, ապակե տարաներ, թղթե տարաներ, մետաղական տարաներ | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Ջրամատակարարման կենտրոնական համակարգ |
| | Ընդհանուր սննդի պատրաստում | Պլաստմասսե տարաներ, ապակե տարաներ, թղթե տարաներ, մետաղական տարաներ | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Միս և մսամթերք, ձուկ և ձկնամթերք, կաթ և կաթնամթերք, ձու և ձվամթերք, բուսական ծագման հումք, համեմունքներ, հավելումներ, ջուր | Ջրամատակարարման կենտրոնական համակարգ |



| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2) սեփական ածխաջրածնային վառելիքի օգտագործում | | | | | | | |
| | Կաթսայատների գազի օգտագործում | | | | | | |
| | Վերամշակում և պահպանում | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում |
| | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | | | | | | |
| | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | | | | | | |
| | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | | | | | | |
| | Ընդհանուր կարիքների համար ածխաջրածնային վառելիքի օգտագործում | | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3) սեռահասակային կազմ | Ընտանեկան կազմ | Ընտանիքների թիվը | 1 | 2 | 3 | 4 | 5 և ավելի |
| | | Ընտանիքների անդամների միջին թիվը | | | | | |
| 4) սեռահասակային կառուցվածք | Բնակչություն՝ ընդամենը | | | | | | |
| | Այդ թվում՝ | 0-4 տարեկան | | | | | |
| | | 5-9 տարեկան | | | | | |
| | | 10-14 տարեկան | | | | | |
| | | 15-19 տարեկան | | | | | |
| | | 20-24 տարեկան | | | | | |
| | | 25-29 տարեկան | | | | | |
| | | 30-34 տարեկան | | | | | |
| | | 35-39 տարեկան | | | | | |
| | | 40-44 տարեկան | | | | | |
| | | 45-49 տարեկան | | | | | |
| | | 50-54 տարեկան | | | | | |
| | | 55-59 տարեկան | | | | | |
| | | 60-64 տարեկան | | | | | |
| | | 65-69 տարեկան | | | | | |
| | | 70-74 տարեկան | | | | | |
| | | 75-79 տարեկան | | | | | |
| | | 80-84 տարեկան | | | | | |
| | | 85 և ավելի տարեկան | | | | | |



| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5) ինքնագործունեության կազմակերպման | Զբաղված բնակչություն՝ ընդամենը | | | | | | |
| | Այդ թվում՝ | Ձեռնարկատերեր | | | | | |
| | | Վարձու աշխատողներ | | | | | |
| | | Ինքնազբաղվածներ | | | | | |
| | | Անվճար ընտանեկան աշխատողներ | | | | | |
| | Գործազուրկներ՝ ընդամենը | | | | | | |
| | Այդ թվում՝ | Նախկին ձեռնարկատերեր | | | | | |
| | | Նախկին վարձու աշխատողներ | | | | | |
| | | Նախկին ինքնազբաղվածներ | | | | | |
| | | Նախկին անվճար ընտանեկան աշխատողներ | | | | | |
| | | Առաջին անգամ աշխատանք փնտրողներ | | | | | |
| | Տնային տնտեսուհիներ, տնային տնտեսություններում զբաղված այլ անձինք | | | | | | |
| | Ուսանողներ, աշակերտներ | | | | | | |
| | Թոշակառուներ | | | | | | |
| | Այլ անձինք, որոնք չունեն զբաղմունք | | | | | | |

Շուկայական տնտեսություն վարող երկրների փորձը ցույց է տալիս, որ տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության ընթացքում կարող են անցնել սնանկացման հետևյալ փուլերը՝

1. սնանկացման առաջացում,
2. սնանկացման աճի արագացում,
3. սնանկացման աճի դանդաղում,
4. սնանկացման հասունացում,
5. վերջնական սնանկացում (անկում):

Նշված բոլոր փուլերում էլ տնտեսավարող սուբյեկտների սնանկացման վրա ազդում են հետևյալ խումբ գործոնները, այդ թվում՝

- արտադրության և պահանջարկի պարամետրերը,
- դուստր և սատարող ճյուղերը,
- մրցակցությունը ճյուղային տնտեսավարող սուբյեկտների միջև,
- երկրի քաղաքականությունը տնտեսության ոլորտում,
- պատահաբար ազդող գործոնները,
- տնտեսության ճյուղերի սեփականաշնորհման աստիճանը:

Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման փուլերի և դրանց վրա ազդող գործոնների մասին ավելի հստակ պատկերացում ունենալու համար դրանք ներկայացնենք աղյուսակի (5.1.1) տեսքով[1]:

Աղյուսակի արտահայտություններից պարզ երևում է, որ առանձին փուլերում ազդող գործոններն իրենց էությամբ համընկնում են: Միաժամանակ ներկայացված աղյուսակն իր էությամբ տնտեսավարող սուբյեկտին հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փուլում կողմնորոշվելու, թե սնանկացումից ինչ ուղիներով կարելի է աստիճանաբար դուրս գալ:

## 5.1.2. Անվճարունակության գնահատումը

Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման հավանականությունը կարելի է գնահատել միայն ֆինանսական վերլուծություն իրականացնելու միջոցով: Դա հնարավորություն կտա բացահայտել նրա ֆինանսատնտեսական դրության թույլ կողմերը, միաժամանակ կանխանշի՝ ինչպիսի ուղիներով կարելի է դրանք կարգավորել և դուրս գալ ճգնաժամային այդ իրավիճակից:

Թեպետ ֆինանսական վերլուծության իրականացումը հիմնվում է տնտեսագիտության տեսության, իրավաբանական դաշտի, հաշվապահական հաշվառման, տնտեսամաթեմատիկական մեթոդների և համանման այլ գիտելիքների իմացության վրա, բայց միանշանակ հետևություն անել այն մասին, որ տվյալ տնտեսավարող սուբյեկտը մոտակա ժամանակներում անվճարունակ է դառնալու, անհնար է: Դրա համար անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվեկշռի վերլուծություն ու գնահատում՝ հիմնվելով իրացվելիության գործակիցների և սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակցի վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսավարող սուբյեկտի հաշվեկշռի կառուցվածքը համարվում է ոչ բավարար, իսկ ինքն էլ անվճարունակ այն դեպքում, եթե վերոնշյալ գործակիցների հետ կապված տեղի են ունենում հետևյալ շեղումները՝

1. ընթացիկ իրացվելիության գործակիցը (ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունը) տվյալ ժամանակաշրջանի վերջում փոքր է լինում 2-ից ($Գ_{ընի} < 2$),
2. սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակիցը (սեփական ընթացիկ ակտիվների և ընթացիկ ակտիվների հարաբերակցությունը) փոքր է լինում 0,1-ից ($Գ_{ս.ը.ա.ա.} < 0,1$):

Հաշվեկշռի ոչ բավարար կառուցվածքի դեպքում տնտեսավարող սուբյեկտի հնարավոր անվճարունակությունը ստուգելու նպատակով անհրաժեշտ է հաշվետու ժամանակաշրջանի 6 ամսվա համար հաշվարկել վճարունակության վերականգնման գործակիցը ($Գ_{վ.վ.}$)՝ հետևյալ բանաձևի[1] միջոցով՝

$$Գ_{վ.վ.} = \frac{Գ_{ը.ի.ժ.վ.} + 6/Ժ\,(Գ_{ը.ի.ժ.վ.} - Գ_{ը.ի.ժ.ս.})}{2}, \qquad (5.1.2.1)$$

որտեղ՝

$Գ_{ը.ի.ժ.վ.}$ և $Գ_{ը.ի.ժ.ս.}$-ն ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի արժեքներն են հաշվետու ժամանակաշրջանի վերջում և սկզբում,

6-ը տնտեսավարող սուբյեկտի վճարունակության վերականգնման ժամանակաշրջանն է (ամիսներով),

Ժ-ն հաշվետու ժամանակաշրջանն է,

2-ը ընթացիկ իրացվելիության գործակցի նորմատիվային արժեքը:

Եթե $Գ_{վ.վ.} < 1$-ից, նշանակում է տնտեսավարող սուբյեկտը 6 ամսվա ընթացքում հնարավորություն չունի կարգավորելու իր վճարունակությունը:

Եթե $Գ_{վ.վ.} > 1$-ից, նշանակում է տնտեսավարող սուբյեկտը հնարավորություններ ունի վերականգնելու իր վճարունակությունը և նույնիսկ կա-

[1] Берлин С.И. Теория финансов (учебное пособие). М., 1999, с. 233.

[1] Артеменко В.Г., Белендир М.В. Финансовый анализ (учебное пособие). М., 1997, с. 97.

րող է ընդունել որոշում, ըստ որի հաշվեկշիռն իր կառուցվածքով ունի իրացվելի մակարդակ և 6 ամսվա կտրվածքով վճարունակ է:

Եթե ընթացիկ իրացվելիության գործակիցը մեծ կամ հավասար է 2-ի ($Գ_{ը.ի.} \geq 2$), իսկ սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածության գործակիցը մեծ կամ հավասար է 0,1-ի ($Գ_{ս.ը.ա.ա.} \geq 0,1$), ապա վճարունակությունը կորցնելու գործակիցը ($Գ_{վ.կ.}$) 3 ամսվա կտրվածքով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{վ.կ.} = \frac{Գ_{ը.ի.ժ.վ.} + 3/ժ(Գ_{ը.ի.ժ.վ.} - Գ_{ը.ի.ժ.ս.})}{2}, \qquad (5.1.2.2)$$

որտեղ՝

3-ը տնտեսավարող սուբյեկտի վճարունակությունը կորցնելու ժամանակաշրջանն է (ամիսները):

Եթե $Գ_{վ.կ.} > 1$-ից, նշանակում է տնտեսավարող սուբյեկտն իրական հնարավորություններ ունի պահպանելու իր վճարունակությունը առաջիկա 3 ամիսների ընթացքում:

Եթե $Գ_{վ.կ.} < 1$-ից, նշանակում է տնտեսավարող սուբյեկտն առաջիկա 3 ամիսների ընթացքում կարող է կորցնել իր վճարունակությունը:

Ելնելով վերը նշված ցուցանիշներից՝ ներկայացնենք ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտի հաշվեկշռի կառուցվածքի գնահատումը՝ կազմելով վերլուծական աղյուսակ (5.1.2): Ելակետային տվյալները բերված են հավելված 1-ից:

Աղյուսակ 5.1.2

Հաշվեկշռի կառուցվածքի գնահատումը

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին | Գործակցի նորման |
|---|---|---|---|
| 1.ընթացիկ իրացվելիության գործակիցը | 235561 : 119054 = = 1,979 | 356082 : 151023 = = 2,358 | 2,0 - ից ոչ փոքր |
| 2.սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածությունը | 116507 : 235561 = = 0,495 | 205059 : 356082 = = 0,576 | 0,1 - ից ոչ փոքր |
| 3.վճարունակության վերականգնման գործակիցը 6 ամսվա համար | (2,358 + 6:12· (2,358 – 1,979)) : 2 =1,274 | | 1,0 - ից ոչ փոքր |

Աղյուսակի հաշվարկային տվյալներից պարզվում է, որ հաշվեկշռի կառուցվածքը տարվա վերջին բավարար մակարդակի վրա է գտնվում, իսկ տնտեսավարող սուբյեկտը համարվում է վճարունակ: Միաժամանակ



վճարունակության վերականգնման գործակիցը առաջիկա 6 ամսվա համար սահմանված նորմայից ավել է 0,274-ով (1,274 – 1,0), այսինքն՝ տվյալ տնտեսավարող սուբյեկտն իրական հնարավորություն ունի անվճարունակությունից զերծ մնալու համար:

Եթե տնտեսավարող սուբյեկտը գտնվում է հնարավոր սնանկացման շեմին, ապա խիստ անհրաժեշտ է մաթեմատիկավիճակագրական մեթոդների հիման վրա դրա վերաբերյալ կատարել կանխատեսման հաշվարկներ:

## 5.1.3. Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման կանխատեսման մեթոդները

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների զարգացման հնարավոր ուղիների ուսումնասիրման ու դրանց մշակման համար անհրաժեշտ է կատարել ֆինանսական կանխատեսում: Վերջինիս հիմնական նպատակը կլինի նախանշել գալիք ժամանակաշրջանի համար ֆինանսական ռեսուրսները, դրանց կազմավորման աղբյուրների ծավալը և էլ ավելի արդյունավետ օգտագործման ուղիները: Ֆինանսական կանխատեսում կատարելիս պետք է օգտագործել տնտեսամաթեմատիկական մոդելավորում, որը հնարավորություն կտա ընտրել ցուցանիշների այն համակարգը, որ կնպաստի գալիք ժամանակաշրջանում տնտեսավարող սուբյեկտի տնտեսական վիճակը կայուն մակարդակի վրա պահելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է վիճակագրական տարբեր մեթոդներով գնահատել ցուցանիշների այն համակարգը, որն իր դրական կամ բացասական ազդեցությունն է թողնելու տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության վրա:

Համաշխարհային փորձից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի կայունության կանխատեսման, նաև նրա հնարավոր սնանկացման որոշման համար օգտագործվում են տնտեսամաթեմատիկական տարբեր տեսակի մոդելներ: Դրանցից ամենապարզը արևմտյան հայտնի տնտեսագետ է. Ալտմանի կողմից առաջարկվող երկգործոն Z մոդելն է[1], ըստ որի տնտեսավարող սուբյեկտի սնանկացման ամենահավանական ցուցանիշներն են՝

1. պարտքի ծածկման գործակիցը ($x_1$), որը բնութագրում է ընթացիկ ակտիվների իրացվելիությունը,

[1] Ковалев А.М., Привалов В.П. Анализ финансового состояния предприятия. М., 1997, с. 107.

2. փոխառու կապիտալի կենտրոնացման գործակիցը ($x_2$), որը բնորոշում է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունությունը:

Այդ մոդելը, ինչպես ասվեց, արտահայտվում է երկգործոն հավասարման տեսքով.

$$Z = a_0 + a_1x_1 + a_2x_2, \qquad (5.1.3.1)$$

որտեղ՝

$a_0$-ն սնանկացման վրա այլ գործոնների ազդեցության չափն է,

$a_1$ և $a_2$-ն ազդող գործոնների կշռային գործակիցներն են:

Ինչպես $a_0$-ն, այնպես էլ $a_1$ և $a_2$ գործակիցները ենթակա են որոշման:

Համաշխարհային փորձի և համապատասխան վերլուծությունների հիման վրա հաշվարկվել են այդ գործակիցների կշռային արժեքները և ԱՄՆ-ի տեսաբան-վերլուծություն իրականացնողների կողմից երկգործոն մոդելի համար առաջարկվել են՝

$a_0 = -0,3877$

$a_1 = -1,0736$ ($x_1$-ի համար)

$a_2 = 0,0579$ ($x_2$-ի համար)

$x_1$ և $x_2$ - ն արտահայտվում են հետևյալ հարաբերակցությամբ՝

$$X_1 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}}.$$

$$X_2 = \frac{\text{Ոչ ընթացիկ պարտավորություններ + ընթացիկ պարտավորություններ}}{\text{Պասիվների հանրագումար (ընդհանուր կապիտալ)}}:$$

Ըստ վերոնշյալ գործակցային արժեքների՝ Z մոդելը կստանա հետևյալ տեսքը՝

$$Z = -0,3877 - 1,0736\,X_1 + 0,0579\,X_2: \qquad (5.1.3.2)$$

Անհրաժեշտ է նշել, որ տնտեսավարող սուբյեկտների համար, որոնց մոտ $Z = 0$, սնանկացման հավանականությունը հավասար է 50%-ի: Եթե $Z < 0$, սնանկացման հավանականությունը փոքր կլինի 50% -ից, և այն ավելի է իջնում Z-ի փոքրացմանը համընթաց: Եթե $Z > 0$, սնանկացման հավանականությունը մեծանում է 50%-ից, և այն աճում է Z-ի մեծացմանը համընթաց:

Հարկ է նշել սակայն, որ երկգործոն մոդելի հիման վրա դեռևս հնարավոր չէ ստույգ կանխատեսել տնտեսավարող սուբյեկտների հավանական



սնանկացումը, քանի որ մոդելում հաշվի չեն առնված մի շարք կարևոր այլ գործոններ, որոնց թվին են դասվում ֆինանսական դրության գնահատման ցուցանիշներից՝ շահութաբերությունը, ակտիվների հատույցը, սեփական ու փոխառու կապիտալների հարաբերակցությունը և այլն: Հաշվարկները ցույց են տալիս, որ սնանկացման կանխատեսման սխալը երկգործոն մոդելի օգտագործման դեպքում գնահատվում է $\Delta Z = \pm 0,65$ սահմաններում:

Ինչպես ԱՊՀ մնացած երկրներում, այնպես էլ Հայաստանում տնտեսավարող սուբյեկտները գործում են այլ պայմաններում, ուստի վերոնշյալ երկգործոն մոդելում ներառված գործակիցները չի կարելի մեխանիկորեն օգտագործել, քանի որ այն չի կարող տալ հնարավոր սնանկացման գնահատման իրական պատկերը:

Բայց, այնուհանդերձ, օգտագործենք այդ մոդելը պարզելու համար, թե ֆինանսատնտեսական ինչպիսի վիճակում է գտնվում ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտը նախորդ և հաշվետու տարիներին՝ այն ներկայացնելով աղյուսակի (5.1.3.1) տեսքով:

Աղյուսակ 5.1.3.1

Տնտեսավարող սուբյեկտի սնանկացման կանխատեսումը երկգործոն Z մոդելի դեպքում

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|
| 1.ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ $x_1$ | $\frac{235561}{119054} = 1,979$ | $\frac{356082}{151023} = 2,358$ |
| 2.փոխառու կապիտալի կենտրոնացման գործակիցը՝ $x_2$ | $\frac{164183}{341961} = 0,480$ | $\frac{237072}{491498} = 0,482$ |
| 3.Z-սնանկացման կանխատեսման ցուցանիշը | - 2,485 | - 2,892 |
| 4.սնանկացման հավանականությունը | < 50% | < 50% |

Աղյուսակից տեղադրելով ըստ տարիների $x_1$-ի և $x_2$-ի տվյալները (5.1.3.2) հավասարման մեջ, կստանանք տնտեսավարող սուբյեկտի սնանկացման կանխատեսման ցուցանիշը (Z), որը նախորդ տարվա համար հավասար է - 2,485, իսկ հաշվետու տարվա համար՝ - 2,892:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ տնտեսավարող սուբյեկտի սնանկացման հավանականությունը նախորդ և հաշվետու տարիներին 0,5-ից կամ 50%-ից փոքր է:

Բացի երկգործոն մոդելից, է.Ալտմանը առաջարկել է նաև տնտեսավա-

րող սուբյեկտների սնանկացման կանխատեսման հինգգործոն Z մոդել[1], որն արտահայտվում է հետևյալ կշռային գործակիցներով՝

$$Z = 1,2\ y_1 + 1,4\ y_2 + 3,3\ y_3 + 0,6\ y_4 + 0,999\ y_5, \qquad (5.1.3.3)$$

որտեղ՝

$y_1$, $y_2$, $y_3$, $y_4$, $y_5$ ազդող գործոնները (ցուցանիշները) հաշվարկվում են հետևյալ կերպ՝

$$y_1 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընդհանուր կապիտալ (ակտիվներ)}},$$

$$y_2 = \frac{\text{Կուտակված (չբաշխված) շահույթ}}{\text{Ընդհանուր կապիտալ (ակտիվներ)}},$$

$$y_3 = \frac{\text{Զուտ շահույթ (մինչև հարկումը)}}{\text{Ընդհանուր կապիտալ (ակտիվներ)}},$$

$$y_4 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ}},$$

$$y_5 = \frac{\text{Իրացումից զուտ հասույթ}}{\text{Ընդհանուր կապիտալ (ակտիվներ)}}.$$

Եթե ստացված Z-ի մեծությունը փոքր է 1,8 արժեքից, կնշանակի տվյալ տնտեսավարող սուբյեկտի սնանկացման հավանականությունը բավականին բարձր է: Եթե Z-ի մեծությունն ընկած է 1,8-ից մինչև 2,7-ի սահմաններում, ապա սնանկացման հավանականությունը միջին մակարդակի է, իսկ եթե այն ընկած է 2,7-ից 2,9-ի սահմաններում՝ սնանկացման հավանականությունը այնքան էլ բարձր չէ: Եթե Z-ը մեծ է 2,9-ից, կնշանակի սնանկացման հավանականությունը շատ փոքր է կամ սնանկացում ընդհանրապես չկա:

Թեև մոդելն առաջարկված է զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար, այնուհանդերձ այն կիրառենք ուսումնասիրվող տնտեսավարող սուբյեկտի համար և ներկայացնենք աղյուսակի (5.1.3.2) տեսքով: Աղյուսակի ելակետային տվյալները բերված են հավելված 1-ից:

[1] Ковалев А.М., Привалов В.П. Анализ финансового состояния предприятия, с. 109.



Աղյուսակ 5.1.3.2

Տնտեսավարող սուբյեկտի սնանկացման կանխատեսումը հինգգործոն Z մոդելի դեպքում

| Ցուցանիշների անվանումը | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|
| 1.ընդհանուր կապիտալում (ակտիվներ) ընթացիկ ակտիվների բաժինը ($y_1$) | $\frac{235561}{341961} = 0,689$ | $\frac{356082}{491498} = 0,724$ |
| 2.ընդհանուր կապիտալի (ակտիվների) շահութաբերությունը ըստ կուտակված (չբաշխված) շահույթի ($y_2$) | $\frac{20130}{341961} = 0,059$ | $\frac{86248}{491498} = 0,175$ |
| 3.ընդհանուր կապիտալի (ակտիվների) շահութաբերությունը ըստ զուտ շահույթի (մինչև հարկումը) ($y_3$) | $\frac{26790}{341961} = 0,078$ | $\frac{119667}{491498} = 0,243$ |
| 4.սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության գործակիցը ($y_4$) | $\frac{177778}{164183} = 1,083$ | $\frac{254426}{237072} = 1,073$ |
| 5.ընդհանուր կապիտալի (ակտիվների) շրջանառելիությունը կամ ակտիվների հատույցը ($y_5$) | $\frac{517481}{341961} = 1,5$ | $\frac{794709}{491498} = 1,6$ |
| 6.Z - սնանկացման կանխատեսման ցուցանիշը | 3,315 | 4,158 |
| 7.սնանկացման հավանականությունը | շատ փոքր է | շատ փոքր է |

Աղյուսակից տեղադրելով $y_1$, $y_2$, $y_3$, $y_4$ և $y_5$-ի տվյալները (5.1.3.3) բանաձևի մեջ, ըստ տարիների կստանանք տնտեսավարող սուբյեկտի հնարավոր սնանկացման կանխատեսման ցուցանիշը (Z): Այն նախորդ տարվա համար կազմում է 3,315 միավոր, իսկ հաշվետու տարվա համար՝ 4,158 միավոր:

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ուսումնասիրվող տարիներին տնտեսավարող սուբյեկտի սնանկացման հավանականությունը բավականին փոքր է և բարձր է սահմանված նորմայից՝ 2,9 գործակցից: Մոդելում ընդգրկված գործոններից ամենամեծ ազդեցությունն ընկնում է ակտիվների մեկ միավորի հաշվով ստացված հատույցի մեծությանը, որն ըստ տարիների կազմել է 1,5 և 1,6 միավոր կամ պտույտ:

Անհրաժեշտ է նշել, որ նման մոդելների կազմման հիմքում ընկած է բազմագործոն-կոռելյացիոն մեթոդը, ըստ որի գնահատվում են այդ մոդելում ընդգրկվող համապատասխան ազդող գործոնները:

## 5.1.4. Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական առողջացման ուղիները

«Ձեռնարկությունների ֆինանսական սնանկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ֆինանսական սնանկացումը տնտեսավարող սուբյեկտի անվճարունակությունն է նրա ֆինանսատնտեսական հետագա գործունեության շարունակման առումով[1]: Այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտն այդ պայմաններում չի կարողանում ապահովել պարտադիր վճարումների իրականացում՝ կապված պետական բյուջեին տրվող հարկատեսակների ու հաստատագրված վճարների, աշխատողներին հասանելիք աշխատավարձի և կենսաթոշակային հիմնադրամների վճարումների ու կրեդիտորական այլ պարտքերի մարումների հետ: Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման առաջնային հատկանիշներից է նաև ընթացիկ վճարումներ կատարելու անկարողությունը, այսինքն, երբ ի վիճակի չէ ժամանակին ապահովելու պարտատերերի վճարումները:

Եթե ֆինանսական սնանկացման եզրին գտնվող տնտեսավարող սուբյեկտը ցանկանում է խուսափել լուծարումից, ապա պարտավոր է ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր՝ հիմք ընդունելով «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքի պահանջները[2]:

Ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրականացվող պարտապանի (տնտեսավարող սուբյեկտի) ցանկացած վերակազմավորումը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում:

Ֆինանսական առողջացման ծրագիրը ներառում է իրականացվող միջոցառումների ուղղությունները՝ տեխնիկատնտեսական հիմնավորումով և տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության մասին տեղեկատվական արդյունքներով[3]:

Ֆինանսական առողջացման ծրագիրը նաև պետք է ներառի՝

[1] ՀՀ օրենքը «Ձեռնարկությունների ֆինանսական սնանկացման մասին», Երևան, 1995, էջ 5:
[2] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 2, 20 փետրվարի, 1997, էջ 3:
[3] Նույն տեղում, էջ 21:



1. ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերին կատարելիք վճարումների կարգը, ժամկետները և չափը, նրանց պահանջների դիմաց փոխհատուցումների կարգը,
2. տնտեսավարող սուբյեկտին (պարտապանին) պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափերը,
3. տնտեսավարող սուբյեկտի (պարտապանի) վճարունակությունը վերականգնելու համար նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման (կազմակերպչական, կառուցվածքային, իրավաբանական, ֆինանսական, տեխնիկական և աշխատանքային) ժամկետները,
4. պարտապանին պատկանող գույքի վաճառքի կարգը և դրանից ստացվելիք եկամուտների օգտագործումը նրա գործունեության շարունակման դեպքում՝ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները հաշվի առնելով,
5. այդ ծրագրի կատարման համար անհրաժեշտ ղեկավարի, մասնագետների վարձատրության ու վարչական ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

Տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական առողջացման գծով միջոցառումների անցկացման արդյունավետության բարձրացման նպատակով խիստ անհրաժեշտ է ***գործարարության (բիզնես) պլանի*** կազմումը՝ նախօրոք մշակված մեթոդական ցուցումների հիման վրա: Գործարարության պլանը համարվում է ամփոփ պաշտոնական փաստաթուղթ: Նրա կազմման համար անհրաժեշտ է տվյալ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ իրականացնել մանրակրկիտ ուսումնասիրություն և հավաքել բավականաչափ հավաստի տեղեկատվություն: Միաժամանակ, գործարարության պլանի ծավալը՝ կապված տնտեսավարող սուբյեկտի գործունեության զարգացման կոնկրետ նպատակների ու խնդիրների հետ, կարող է փոփոխվել, ուստի նպատակահարմար է ունենալ գործարարության միևնույն պլանի երկու տարբերակ:

Առաջին տարբերակը տնտեսավարող սուբյեկտի անցյալ, ներկա և ապագա գործունեության փոխկապակցված նպատակների, խնդիրների ամբողջականությունն է, որը ներկայացվում է պաշտոնական փաստաթղթի ձևով: Տնտեսավարող սուբյեկտին և նրա հետ որոշակի գործունեություն իրականացնող գործընկերներին, ներդրողներին և բաժնետերերին այն անհրաժեշտ է ընդհանուր նպատակները պարզաբանելու և նրա կիրառման արդյունավետությունը հիմնավորելու համար:

Երկրորդ տարբերակը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի, գործու-

նեության իրականացման ծրագիրը մշակողների և խորհրդատուների խմբի համար ամենօրյա մի փաստաթուղթ է, որում ներառվում է աշխատանքների հաջորդական կատարման և տեղեկատվության ամբողջական նյութը: Այս տարբերակը կրում է «Աշխատանքային գործարարության պլան» անվանումը և հնարավորություն է տալիս ավելի խոր հասկանալ առաջին տարբերակի կարևորությունը, նախապես ճանաչել և գնահատել գործունեության իրականացման ռիսկի երկու հիմնական տեսակները՝ ներքին (վերահսկելու հնարավորությունը) և արտաքին (կապված տնտեսական համակարգի և օրենսդրական դաշտի հետ), որոնց մասին կխոսվի հետագա շարադրանքում:

Գործարարության պլանը նախաներդրումային փուլի անբաժանելի մասն է հատկապես տնտեսավարման նոր պայմանների փուլում գտնվող երկրների համար: Այդ պլանն արժեքավոր փաստաթուղթ է տնտեսավարող սուբյեկտների համար նոր գործունեություն իրականացնելու կամ սնանկացումից խուսափելու առումով:

Թեև գործարարության պլանն «ազատ ստեղծագործության» ամփոփ փաստաթուղթ է[1], այնուհանդերձ դրան ներկայացվում են որոշակի պահանջներ. պլանում պետք է արտահայտված լինեն՝

- ըստ տեսականու (ասորտիմենտի) թողարկվող արտադրանքի գների մակարդակը և դրանց փոփոխությունը,
- սպառողների տեսակը և դրանց գնողունակության մակարդակը,
- շուկայի աշխարհագրական դիրքը,
- մրցունակության վերլուծությունը,
- ներկայացվող արտադրական ծրագիրը և շրջանառության ծավալի, ինքնարժեքի, շահույթի ու շահութաբերության տեսակների հաշվարկները,
- շուկայավարության և կազմակերպական պլանը (գովազդային աշխատանքների իրականացում, նորամուծություններին ծանոթանալու նպատակով մասնագետների համար դասընթացների կազմակերպում և այլն),
- ներդրումային ռիսկը,
- ֆինանսական պլանը:

Գործարարության պլանը կազմվում է հատուկ մշակված ձևով[2], որի 1-ին բաժնում տեղեկություններ են տրվում սնանկացման ենթակա տընտեսավարող սուբյեկտի *ընդհանուր բնութագրի մասին*: Այսինքն՝ նշվում

[1] Գործարարության պլան (մեթոդական ձեռնարկ), Երևան, 1999, էջ 6:

[2] Берлин С.И. Теория финансов (учебное пособие), с. 240.



են նրա անվանումը, իրավաբանական և հեռախոսային հասցեն, բանկային ռեկվիզիտները, վերադաս կազմակերպություններին ենթակայությունը, գործունեության հիմնական տեսակը, կազմակերպաիրավական ձևը, ինչպես նաև սեփականության ձևը՝ միաժամանակ ցույց տալով նրա մասնակցության բաժինը պետական բյուջեի եկամուտների կազմավորման գործում: Բացի վերոնշյալներից, ընդհանուր բնութագրում նշվում են նաև նրա գրանցման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը, գրանցման վկայականի համարը, այն մարմնի անվանումը, որտեղ իրականացվել է գրանցումը, հարկային տեսչության հասցեն, գծապատկերի տեսքով տրվում է կազմակերպական կառուցվածքը և դրանում ներառված բոլոր ստորաբաժանումների ու դուստր ընկերությունների անվանումները:

Տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր բնութագրի վերջում տրվում են պաշտոնատար անձանց մասին տեղեկություններ՝ նշելով ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, կրթությունը, մասնագիտությունը և որակավորումը, տվյալ վայրում աշխատանքային ստաժը, նախկինում առնվազն երեք վայրերում նրա զբաղեցրած պաշտոնները:

Գործարարության պլանի 2-րդ բաժնում տրվում են ***ֆինանսական առողջացման ծրագրի մասին համառոտ տեղեկություններ***, որոնք պետք է հնարավորություն ստեղծեն վերականգնելու տնտեսավարող սուբյեկտների վճարունակությունը և դրանով իսկ ապահովեն նրա արդյունավետ գործունեությունը: Այս բաժնում ցույց են տրվում գործարարության պլանի իրականացման ժամկետներն ըստ ամիսների և պետության ու այլ ներդրողների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների ընդհանուր գումարն ու դրանց հետ վերադարձման ժամկետները: Բերվում են նաև տվյալներ, որոնք բնորոշում են գործարարության պլանի իրականացման գործընթացում ստացվող ֆինանսական արդյունքները: Դրանց հիման վրա որոշում են, թե ինչ չափով կարող են մարվել ժամկետանց կրեդիտորական պարտքերը, ավելացվել տնտեսավարող սուբյեկտի տնտեսական միջոցները (ակտիվները) և այլն: Եթե տնտեսավարող սուբյեկտը պետական է, ապա այս բաժնում նշվում են այն կազմակերպությունների անվանումները (համապատասխան ռեկվիզիտներով), որոնց միջոցով կարող է իրականացվել նպատակային ֆինանսավորում:

Գործարարության պլանի 3-րդ բաժինը վերաբերում է տնտեսավարող սուբյեկտի ***ֆինանսական դրության վերլուծությանը*** և միաժամանակ այն պատճառներին, որոնք նպաստել են նրա անվճարունակությանը: Այս բաժնի առաջին մասում արտացոլվում են տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվառման վարմանը վերաբերող հարցերը: Այսինքն՝ իրականացվող տնտեսական գործառնությունների էությունը համապա-

տասխանում է արդյոք իրականությանը, և, արդյոք, այդ սուբյեկտի ենթակայության տակ գտնվող գույքը (ունեցվածքը) սահմանված նորմերին համապատասխան է գնահատվում, թե ոչ՝ ելնելով հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարման գծով գործող հիմնադրույթների պահանջներից: Կարևոր է նաև ցույց տալ իրացումից հասույթի, հիմնական միջոցների ամորտիզացիայի, ոչ նյութական ակտիվների, փոքրարժեք ու արագամաշ առարկաների մաշվածության գումարների որոշման իրական լինելը:

Այս բաժնի երկրորդ մասում ամփոփ աղյուսակի տեսքով տրվում են տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ցուցանիշները՝ համապատասխան վերլուծություններով և դրանցից բխող հետևություններով: Աղյուսակում բերվում են 4 խումբ գործակիցներ (կայունության, գործարար ակտիվության, իրացվելիության և շահութաբերության), որոնք հաշվարկվում են հիմնականում 3 տարվա համար:

Գործարարության պլանի 4-րդ բաժնում առաջարկվում են ***վճարունակության վերականգնման գծով միջոցառումների անվանացանկ և տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության արդյունավետության ապահովման համար մեթոդական ցուցումներ***: Դրանք ներկայացվում են աղյուսակի տեսքով՝ որպես գործարարության պլանի հավելվածներից մեկը: Աղյուսակում տրվում են առաջարկվող միջոցառումների անվանացանկը, դրանց իրականացման ժամկետներն ու պահանջվող ֆինանսական միջոցների գումարի չափը: Այդ միջոցառումների թվին են դասվում՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավար անձնակազմի փոփոխությունը, տնտեսական միջոցների գույքագրումը, դեբիտորական պարտքերի կարգավորումը, արտադրության և իրացման ծախսերի իջեցումը, անավարտ շինարարության վաճառքը կամ դրանց վերսկսումը, ավելցուկ կամ չօգտագործվող նյութերի, սարքավորումների և պահեստում գտնվող պատրաստի արտադրանքի վաճառքը (իրացումը), արտադրության ավտոմատացումը, մեքենայացումը և առաջավոր տեխնոլոգիաների արմատավորումը, աշխատանքի կազմակերպման կատարելագործումը, հնացած հիմնական միջոցների փոխարինումը ավելի ժամանակակից ու կատարելագործված միջոցներով և այլն:

Գործարարության պլանի 5-րդ բաժինը վերաբերում է ***շուկայի ուսումնասիրությանն ու մրցակցությանը***, որտեղ շուկան բնութագրվում է տարբեր տեսանկյուններից, այդ թվում՝

- շուկայի մուտքի և ելքի արգելքները (օրենսդրական արգելքներ, մեծածավալ ներդրումներ, բարդ տեխնոլոգիաներ),
- շուկայի տարողությունը և իրավիճակային շահավետության աստիճանը,
- շուկայում արտադրանքի իրացման գծով գործող և ենթադրվող գները,
- շուկայի կարգավիճակը (մրցակցային, մենաշնորհային և այլն),
- շուկայում արտադրողների, մատակարարների, սպառողների ազդեցությունը,
- շուկան բնութագրող որակական և քանակական այլ ցուցանիշների ազդեցությունը:



Այս բաժնում, ինչպես ասվեց, նշվում են նաև շուկայի մրցակցությունը բնորոշող գործոնները, որոնք բաժանվում են երկու խմբի՝

1. շուկայում տվյալ արտադրանքը կամ ծառայությունն առաջարկող սուբյեկտների միջև մրցակցային գործոններ (մրցակիցների քանակը, խտությունը, նոր մրցակիցների մուտքը տվյալ շուկա և դրանից դուրս գալը),

2. շուկայում տվյալ արտադրանքի կամ ծառայության մրցակցային գործոններ:

Շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների մասին տեղեկությունները (տնտեսավարող սուբյեկտի անվանումը, թողարկած արտադրանքի ծավալը, ինչպես նաև շուկայում տնտեսավարող բոլոր սուբյեկտների արտադրանքների ծավալում ունեցած բաժինը) ամփոփ ներկայացվում են աղյուսակով՝ հավելվածի տեսքով: Վերլուծության արդյունքում կատարվում են հետևություններ շուկայում ներկայացված արտադրատեսակների իրացման համար:

Գործարարության պլանի 6-րդ բաժինը ներառում է ***տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը շուկայավարության ոլորտում***: Ժամանակակից շուկայավարությունը շուկայի ուսումնասիրման, պահանջարկի ձևավորման ու խթանման, արտադրական գործընթացների բոլոր փուլերի վրա շուկայական գործոնների հաշվառման, ապրանքները մինչև վերջին սպառողին հասցնելու, ապրանքների այդ շարժը կարգավորելու, արտադրության և շրջանառության ֆինանսական ապահովման, գնագոյացման, վերահսկողության, գովազդի և միջազգային գործունեության համալիր միջոցառումներ են: Այս բաժնում պետք է հատուկ նշվեն շուկայավարության երկու հիմնական ուղղությունները՝

1. տնտեսավարող սուբյեկտների ապրանքների շուկայի վերլուծական գործունեությունը (շուկայավարության հետազոտություն),

2. մրցակցային պայմաններում տնտեսավարող սուբյեկտների ապրանքների և ծառայությունների իրացման շուկայի հետ կապված գործունեությունը:

Կառավարման առաջատար տեսաբաններից մեկը՝ Պիտեր Դրակերը, այս առումով նշել է. «Շուկայավարության նպատակն է ստեղծել իրացման գծով նպաստավոր այնպիսի պայմաններ, այնքան լավ ուսումնասիրել ու հասկանալ հաճախորդներին, որ ապրանքը կամ իրականացվող ծառայությունը իր որակական հատկանիշներով համապատասխանի վերջինիս պահանջներին և շուտ կարողանա գտնել իր գնորդին[1]»:

Գործարարության պլանի այս բաժնում տրվում է նաև ապրանքի վաճառքի իրականացման ռազմավարության նկարագիրը: Այստեղ նշվում է, թե տվյալ ապրանքատեսակը ինչ ծավալով և ինչպիսի ուղղություններով է իրացվելու:

Գործարարության պլանի 7-րդ բաժինը վերաբերում է արտադրական ծրագրերի մշակման կարգին, որն անվանվում է ***«Արտադրության պլան»***: Վերջինիս մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության ապահովման և ռիսկայնության նվազեցման հետ: Այս բաժինը կազմելիս տրվում են հետևյալ հարցերի պատասխանները՝

- արտադրական ներքին հզորություններով ապահովվածության չափը,
- ապրանքատեսակների արտադրության պայմանները,
- հումքի, նյութերի, սարքավորումների և նյութական այլ ակտիվների ձեռքբերման աղբյուրը և անհրաժեշտ չափը,
- արտադրական և շրջանառության փուլերի ժամկետային ինչպիսի հաջորդականություն է սահմանվելու ապրանքների արտադրման ու իրացման համար,
- ինչպիսի տեխնոլոգիայով, որքան, ինչ որակի և քանակի են արտադրվելու ապրանքատեսակները,
- ինչպիսի դժվարություններ կարող են առաջանալ իրականացվող բոլոր տեսակի գործառնություններում:

Այս բաժնում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ինչպես արտադրական, այնպես էլ վերադիր ծախսերի հաշվառմանը, ակտիվների գնահատմանը և վերլուծությանը: Պետք է վերլուծության ենթարկվեն հետևյալ ցուցանիշները՝

1. ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների, աշխատուժի, հաստատուն, փոփոխական և վերադիր ծախսերի մակարդակները, դրանց փոփոխման օրինաչափությունները, ֆինանսատնտեսական գործունեության կարգավորման ընթացիկ և ռազմավարական (հեռանկարային) նպատակները,

[1] Գործարարության պլան (մեթոդական ձեռնարկ), էջ 27:



2. արտադրական հզորությունների օգտագործման, ծանրաբեռնվածության, տեխնոլոգիայի արդիականության և նորացման աստիճանները,
3. արտադրողականության մակարդակը և դրա բարձրացման ուղիները,
4. ապրանքանյութական պաշարների ձեռքբերման գծով հնարավոր մատակարարների գործունեությունը,
5. երկարատև ներդրումների ծավալը և դրա արդյունավետությունը:

Գործարարության պլանն ավարտվում է 8-րդ բաժնով, որտեղ ամփոփվում են նախորդ բաժիններում կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները. այն անվանվում է ***«Ֆինանսական պլան»***: Այս բաժինն ամբողջական տեսքով ներառում է ֆինանսական մի շարք փաստաթղթեր՝

- եկամուտների և ծախսերի ամփոփ հաշվեկշիռը (եկամուտները, ծախսերը, համախառն շահույթը, իրացումից շահույթը, հարկային վճարումները, զուտ շահույթը),
- դրամական մուտքերը և ծախսերը,
- ֆինանսական պլանը՝ ըստ աղբյուրների (սեփական ֆինանսավորման միջոցներ, վարկեր, ներդրումներ),
- դրամական միջոցների օգտագործումը:

## 5.1.4.1. Ֆինանսական պլանի կազմման համառոտ նկարագիրը

Ֆինանսական պլան կազմելիս անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ բաժինների[1] ամբողջական նկարագրմանը՝

- հաշվարկման սկզբունքների,
- ծախսերի,
- եկամուտների,
- ֆինանսական հաշվետվությունների,
- անվնաս գործունեության (զրոյական շահույթի) վերլուծության,
- պլանի արդյունավետության գործակցային վերլուծության:

Ֆինանսական պլանի ***հաշվարկման սկզբունքների բաժնում*** արտացոլվում են ֆինանսական հաշվարկների կատարման սկզբունքները, որոնք բխում են տվյալ գործարարության առանձնահատկություններից, գործող օրենսդրական, նորմատիվային դաշտերից և էական նշանակություն ունեցող այլ գործոններից: Այս **բաժնի** նպատակն է հնարավորին չափ իրական դարձնել գործարարության ֆինանսական նկարագիրը,

[1] Գործարարության պլան (մեթոդական ձեռնարկ), էջ 93:

որով էլ կարևորվում է բաժնի դերը: Բաժնում ներառվում են հետևյալ ենթաբաժինները՝

- Վճարումների կատարման արժույթները (ԱՄՆ դոլար, գերմանական մարկ, դրամ և այլն). ըստ որում ներքին շուկայում իրականացվող ֆինանսական գործառնությունները (արտադրանքի իրացում, նյութերի ձեռքբերում, սեփական կամ բաժնետիրական և փոխառու կապիտալի ներգրավում, ծառայությունների դիմաց վճարումներ և այլն) անհրաժեշտ է ներկայացնել ազգային արժույթով: Ներմուծման-արտահանման, սեփական և փոխառու միջոցների ներգրավման, արտաքին շուկայի հետ կապված այլ գործառնություններն անհրաժեշտ է ներկայացնել արտասահմանյան ազատ փոխարկելի արժույթով՝ մասնավորապես ԱՄՆ դոլարով կամ գերմանական մարկով:
- Գնաճը, որը տնտեսությունը բնութագրող մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշներից մեկն է. առանց դրա ազդեցությունը հաշվի առնելու՝ ֆինանսական ցանկացած պլան թերի կլինի: Ինչպես գիտենք, գնաճի հաշվարկման հիմք է վերցվում սպառողական գների ամփոփ ինդեքսը:
- Հարկերը, տուրքերը և այլ հատկացումները, որոնց դերը բավականաչափ մեծ է, քանի որ հնարավոր ներդրողներին ծանոթացնում է տվյալ երկրում գործող հարկային դաշտին, հարկատեսակներին, հարկման մեխանիզմներին, հարկային արտոնություններին և հարկերի հետ կապված այլ տեղեկություններին:
- Պլանի ֆինանսավորման պայմանները, ըստ որի մշակվում է որոշակի նպատակների (գործարարության հիմնադրում, դրա առողջացում, ընդլայնում և այլն) իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավում՝ սեփական և փոխառու կապիտալի հաշվին:
- Ֆինանսական միջոցների վերագնահատման (դիսկոնտի) գործակիցը, որի որոշումը և հաշվարկներում դրա օգտագործումը կարևոր նշանակություն ունի գործարարության իրական պատկերի ներկայացման համար, որը հիմնված է փողի ժամանակային արժեքի տեսության վրա: Կան վերագնահատման (դիսկոնտի) գործակցի ($Վ_գ$) որոշման բազմաթիվ մեթոդներ, որոնցից խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ բանաձևը՝

$$Վ_գ = \frac{X}{(1+i)^t}, \qquad (5.1.4.1.1)$$

որտեղ՝

X-ը ներդրվող սկզբնական գումարն է,



i-ն բանկային տոկոսադրույքն է,

t-ն ներդրման ժամկետն է:

Այս գործակցի օգտագործումը հատկապես կարևորվում է երկարաժամկետ ծրագրերի իրականացման ժամանակ, երբ ներդրումները կատարվում են տվյալ պահին կամ ժամանակային կտրվածքով ավելի վաղ, քան ստացվում են այդ ներդրումների արդյունքները և, որոնց անվանական արժեքները չեն համընկնում դրանց իրական արժեքների հետ:

- Հաշվարկման իրական այլ սկզբունքները, որոնք անհրաժեշտ է օգտագործել.

1. արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) իրացումից նախատեսվող վճարումների պայմանները (փաստացի վճարումների տեսակարար կշիռը տվյալ ժամանակահատվածում),
2. նյութերի և այլնի դիմաց վճարումների պայմանները (փաստացի վճարումների տեսակարար կշիռը տվյալ ժամանակահատվածում):

Ֆինանսական պլանում իր էությամբ կարևոր է ***ծախսերի բաժինը***: Այստեղ անհրաժեշտ է մանրամասն նկարագրել ծախսային բոլոր ուղղությունները, դրանց մակարդակը և որոշման մեխանիզմները: Ծախսերի հաշվարկման ժամանակ ցանկալի է օգտագործել մի քանի տարբերակներ՝ վատագույն (ծախսերի բարձր մակարդակ), լավագույն (ծախսերի ցածր մակարդակ) և միջին (ծախսերի առավել իրական կամ միջին ցուղային մակարդակ): Այնուհետև, վերլուծելով տվյալ գործարարության առանձնահատկությունները և արտադրանքի իրացման կազմակերպման հնարավորությունները, հարկ է ընտրել ծախսերի հաշվարկման իրական տարբերակը: Ֆինանսական պլանի ծախսային մասն ավելի արտահայտիչ դարձնելու համար անհրաժեշտ է այն բաժանել հետևյալ մասերի՝

- կապիտալ ծախսեր,
- ուղղակի (փոփոխուն) ծախսեր,
- անուղղակի (հաստատուն կամ վերադիր) ծախսեր:

Պլանի իրականացման կապիտալ ծախսերն ուղղվում են ոչ ընթացիկ ակտիվների գծով, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռքբերման, դրանց կապիտալ վերանորոգման, նաև՝ արտադրության վերակառուցման և վերազինման համար: Այս ծախսերի առանձնահատկությունն այն է, որ պահանջում է հետգնման երկար ժամկետ (ամորտիզացվում են տարիների ընթացքում):

Ուղղակի (փոփոխուն) ծախսերն այն ծախսերն են, որոնց մեծությունը միավոր արտադրանքի վրա մնում է նույնը՝ անկախ արտադրության ծավալների փոփոխությունից: Ուղղակի ծախսերը յուրաքանչյուր արտադրատեսակի միավորի համար կազմվում են առանձին: Այն հիմնականում

ընդգրկում է հետևյալ ծախսային հոդվածները.

- արտադրության անձնակազմի աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով,
- նյութերը (հումք և նյութեր, գնովի կիսապատրաստուքներ, համալրող շինվածքներ և դետալներ, վառելիք, տարա և տարանյութեր, պահեստամասեր, շինանյութեր, գյուղատնտեսական նշանակության նյութեր, վերամշակման հանձնված նյութեր և այլ նյութեր),
- ուղղակի այլ ծախսեր:

Անուղղակի (հաստատուն կամ վերադիր) ծախսերն այն ծախսերն են, որոնք արտադրության ծավալներից կախված միավորի վրա փոփոխվում են (արտադրության ծավալների մեծացումը բերում է միավոր արտադրատեսակի վրա անուղղակի ծախսի իջեցման): Անուղղակի ծախսերը հաշվարկվում են որոշակի ժամանակաշրջանի (մասնավորապես մեկ տարվա) համար: Անուղղակի ծախսերում հիմնականում ընդգրկվում են հետևյալ ծախսային հոդվածները՝

- կառավարման ծախսեր (աշխատավարձ սոցիալական ապահովագրության հատկացումներով, կապ, կոմունալ ծառայություններ, էլեկտրաէներգիա, փոստ, գործուղումներ և այլն),
- արտաարտադրական ծախսեր (տարածքի, սարքավորումների վարձակալության, հիմնական միջոցների վերանորոգման և այլն),
- շուկայավարության ծախսեր (գովազդ, շուկայում ապրանքների առաջխաղացմանն ուղղված միջոցառումներ, իրացման ծախսեր և այլն),
- անուղղակի այլ ծախսեր:

Ֆինանսական պլանի հաջորդ կարևոր բաժինը ***եկամուտների բաժինն է***, որտեղ նկարագրվում են եկամուտների կազմավորման բոլոր աղբյուրները (ուղղությունները), դրանց մակարդակը և որոշման մեխանիզմները: Եկամուտների հաշվարկման ժամանակ նույնպես ցանկալի է օգտագործել մի քանի տարբերակներ՝ վատագույն (եկամուտների ցածր մակարդակ), լավագույն (եկամուտների բարձր մակարդակ) և միջին (եկամուտների առավել իրական կամ միջին ճյուղային մակարդակ): Այնուհետև, վերլուծելով տվյալ գործարարության առանձնահատկությունները և արտադրանքի իրացման կազմակերպման հնարավորությունները, հարկ է ընտրել եկամուտների հաշվարկման իրական տարբերակը: Ֆինանսական պլանի եկամտային մասն ավելի արտահայտիչ դարձնելու համար անհրաժեշտ է այն բաժանել հետևյալ հոդվածների՝

- եկամուտներ գործառնական գործունեությունից,
- եկամուտներ ֆինանսական գործունեությունից,
- եկամուտներ ներդրումային գործունեությունից:



Ֆինանսական պլանի ***ֆինանսական հաշվետվությունների բաժինը*** բաղկացած է երեք հիմնական հաշվետվություններից՝

- հաշվեկշիռ,
- ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն,
- դրամական հոսքերի մասին հաշվետվություն:

Թվարկված հաշվետվություններն անհրաժեշտ է կազմել տվյալ երկրում ընդունված հաշվապահական հաշվառման հիմնական սկզբունքներից ելնելով, որոնք կարող են տարբերվել հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներից: Այժմ Հայաստանում գործող հաշվապահական հաշվառման սկզբունքները համապատասխանեցվել են միջազգային չափանիշներին, որոնք աստիճանաբար բարելավում են երկրի ներդրումային մթնոլորտը:

Տնտեսավարող սուբյեկտի ***անվնաս գործունեության (զրոյական շահույթի) վերլուծությունը*** ֆինանսական պլանի բաղկացուցիչ կարևոր մասերից մեկն է. այն ցույց է տալիս տվյալ արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) իրացման այն ծավալը, որն ապահովում է նրա անվնաս գործունեությունը: Վերջինս հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա՝

$$Գ \times Ծ = Ուծ \times Ծ + Ած + Շ, \qquad (5.1.4.1.2)$$

որտեղ՝

Գ-ն միավոր արտադրանքի (աշխատանքի, ծառայության) գինն է,

Ծ-ն միավոր արտադրանքի (աշխատանքի, ծառայության) զրոյական շահույթ ապահովող ծավալն է,

Ուծ-ն միավոր արտադրանքի (աշխատանքի, ծառայության) վրա կատարվող ուղղակի ծախսերն են,

Ած-ն որոշակի ժամանակաշրջանում կատարվող անուղղակի ծախսերն են,

Շ-ն շահույթն է (անվնաս գործունեության վերլուծության ժամանակ այն հավասարեցվում է 0-ի):

Զրոյական շահույթ (Շ = 0) ապահովող միավոր արտադրանքի (աշխատանքի, ծառայության) ծավալը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով, որը վերը բերված (5.1.4.1.2) բանաձևից ստացվող արտահայտությունն է՝

$$Ած = Գ \times Ծ - Ուծ \times Ծ = Ծ(Գ - Ուծ), \qquad (5.1.4.1.3)$$

որտեղից՝

$$Ծ = \frac{Ած}{Գ - Ուծ}: \qquad (5.1.4.1.4)$$

Տնտեսավարող սուբյեկտի անվնաս գործունեության վերլուծությունն ավելի պատկերավոր է գծապատկերային (5.1.4.1.1) արտացոլման դեպքում: Արտադրանքի (աշխատանքի, ծառայության) վրա կատարվող ուղղակի ծախսերի կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք, անկախ արտադրության ծավալների փոփոխությունից, միավորի հաշվով մնում են անփոփոխ:




Գծ. 5.1.4.1.1. Ուղղակի ծախսերի և արտադրության ծավալի կախվածության կապը

Գծապատկերում I, II, III ուղիներից յուրաքանչյուրն արտահայտում է միավոր արտադրանքի և ուղղակի ծախսերի մեծությունների միջև կախվածությունը[1]: Որքան մեծ լինի ուղիղ գծի և ուղղակի ծախսերի կազմած անկյունը, այնքան այն նպաստավոր կլինի տնտեսավարող սուբյեկտի համար, քանի որ միավոր արտադրանքի հաշվով ոչ մեծ չափով ուղղակի ծախսերը կապված են փոքրածավալ ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) օգտագործման հետ և պայմանավորված են ավելի շատ շահույթի ստացմամբ:

Անուղղակի ծախսերի կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք արտադրանքի (աշխատանքի, ծառայության) միավորի հաշվով փոփոխվում են՝ կախված արտադրության ծավալների փոփոխությունից, սակայն դրանց ընդհանուր գումարը, անկախ արտադրության ծավալների

[1] Практикум по финансовому менеджменту. Под ред. Е.С. Стояновой. М., 2000, с. 13.



փոփոխությունից, մնում է հաստատուն: Ուստի, անուղղակի ծախսերի գծապատկերը (5.1.4.1.2) կունենա հետևյալ տեսքը.




Գծ. 5.1.4.1.2. Անուղղակի ծախսերի և արտադրության ծավալի կախվածության կապը

Գծապատկերից երևում է, որ անուղղակի ծախսերը հավասար են 2400 հազ. դրամի և անփոփոխ (հաստատուն) են մնում արտադրության ծավալի աճման կամ նվազման դեպքում:

Ուղղակի (փոփոխուն) և անուղղակի (հաստատուն կամ վերադիր) ծախսերի փոխկապակցությունը արտադրության ծավալի փոփոխության դեպքում ավելի հստակ պատկերացնելու համար ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 5.1.4.1

**Արտադրության ծավալի փոփոխության դեպքում ուղղակի և անուղղակի ծախսերի բնույթը**

| Արտադրության ծավալը | Ուղղակի ծախսեր | | Անուղղակի ծախսեր | |
|---|---|---|---|---|
| | ընդհանուր (գումարային) | միավոր արտադրանքի հաշվով | ընդհանուր (գումարային) | միավոր արտադրանքի հաշվով |
| աճում է | մեծանում են | անփոփոխ | անփոփոխ | փոքրանում են |
| նվազում է | փոքրանում են | անփոփոխ | անփոփոխ | մեծանում են |

Ուղղակի և անուղղակի ծախսերի հիման վրա ստացվող ընդհանուր (գումարային) ծախսերի գծապատկերն (5.1.4.1.3) արտահայտվում է հետևյալ տեսքով.




Գծ. 5.1.4.1.3. Ընդհանուր (գումարային) ծախսերի և արտադրության ծավալի կախվածության կապը

Գծապատկերից պարզվում է, որ ուղղակի և անուղղակի ծախսերի գծով ընդհանուր ծախսերը կազմել են մոտ 7200 հազ. դրամ:

Այժմ անդրադառնանք միավոր արտադրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացվող եկամուտները (հասույթը) բնութագրող գծապատկերին (5.1.4.1.4): Այն արտադրանքի (աշխատանքի, ծառայության) իրացման ծավալների հետ ունի ուղիղ համեմատական կախվածություն: Արտադրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից ստացվող եկամուտների (հասույթի) գծապատկերը կարելի է ներկայացնել ուղիղ գծի տեսքով, ընդ որում այդ գծի կազմած անկյունն աբցիսների առանցքի հետ ավելի մեծ կլինի ընդհանուր ծախսերի գծապատկերի կազմած անկյան հետ համեմատած (շահավետ գործարարությունը ենթադրում է եկամուտների և ծախսերի դրական տարբերություն): Եկամուտների (հասույթի) և ընդհանուր ծախսերի գծապատկերների համադրումը կունենա հետևյալ տեսքը.

Ընդհանուր (գումարային) ծախսերի և եկամուտների ուղիղների հատման կետը (Ա) ցույց է տալիս իրացման այն ծավալը, որն ապահովում է տնտեսավարող սուբյեկտի անվնաս գործունեությունը: Այդ կետից ներքև ընկած հարթությունում տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը վնասաբեր է (ծախսերի գիծն եկամուտների գծից ավելի վեր է ընկած), իսկ վերև՝ շահութաբեր (եկամուտների գիծը ծախսերի գծից ավելի վեր է ընկած):






Գծ. 5.1.4.1.4. Ընդհանուր (գումարային) ծախսերի, արտադրության ծավալի և եկամուտների կախվածության կապը

## 5.2. Ռիսկի գնահատումը

### 5.2.1. Ռիսկի տեսակները և դրանց վերլուծության ընդհանուր սկզբունքները

Շուկայական տնտեսավարման պայմաններում մեծապես կարևորվում է ռիսկի գործոնը, առանց որի անհնարին է ճիշտ տնտեսական գործունեության իրականացումը: Ռիսկը տնտեսավարող սուբյեկտի հավանական կորուստների մեծությունն է՝ կապված եկամուտներ չապահովող լրացուցիչ ծախսերի և այլ տեսակի վնասների առաջացման հետ[1]:

Տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված՝ գոյություն ունեն ռիսկի մի քանի տեսակներ: Դրանցում իր կարևոր տեղն ունի ***ձեռնարկչատիրական ռիսկը***, որը պայմանավորված է գործարարության բնույթով: Գործարարության իրականացումն անհնար է առանց ռիսկի: Սակայն ռիսկերի նշանակալի մասը (գործարարների սխալները, գների փոփոխությունները, պահանջարկը, ոչ ճիշտ ընտրված նախագիծը և

[1] Грабовый П.Г. и др. Риски в современном бизнесе. М., 1994, с. 58.

այլն) ամբողջովին ընկնում է ձեռնարկատիրոջ վրա: Գործունեության ընդլայնումը նույնպես կապված է ռիսկի գործոնի հետ: Համաշխարհային փորձը վկայում է, որ ձեռնարկչատիրությունն անհնար է առանց ռիսկի: Ձեռնարկչատիրական ռիսկի հիմնական տեսակներին կարելի է վերագրել արտադրական, առևտրային, ֆինանսական (վարկային), ներդրումային, շուկայական, ապահովագրական և հարկային ռիսկերը: Դրանցից՝

- *արտադրական ռիսկը* կապված է արտադրական տարբեր գործունեություններում արտադրանքի ստացման, կատարվող աշխատանքների և ծառայությունների հետ: Արտադրական ռիսկի ծագման պատճառներն են՝ արտադրության ծավալի իջեցումը (ավելացումը), նյութական ծախսերի աճը, աշխատողների դժգոհությունը, հարկային վճարումների ավելացումը և այլն: Արտադրական ռիսկը կապված է նաև տնտեսավարող սուբյեկտի պարտավորությունների չկատարման հետ,
- *առևտրային ռիսկը* ծագում է ապրանքների իրացման և ծառայությունների մատուցման գործընթացում: Առևտրային ռիսկի պատճառներն են՝ արտադրանքի իրացման ծավալի իջեցումը, նյութական ռեսուրսների ձեռքբերման գների բարձրացումը, շրջանառության ծախսերի ավելացումը, մրցակցությունը և այլն,
- *ֆինանսական (վարկային) ռիսկը* դրսևորվում է տնտեսավարող սուբյեկտների, բանկերի ու ֆինանսական այլ բնույթի կազմակերպությունների միջև տեղի ունեցող փոխհարաբերությունների ոլորտում: Ֆինանսական ռիսկը կապված է բյուջեի մշակման, եկամուտների և ծախսերի կազմման, ֆինանսական միջոցների բաշխման ու օգտագործման, երկարատև ֆինանսական ներդրումների պլանավորման, ինչպես նաև չնախատեսված ծախսումների կատարման հետ: Ֆինանսական ռիսկի պատճառներն են՝ փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցության մեծացումը, կրեդիտորներից (վարկատուներից, փոխառուներից) կախվածությունը, կապիտալի պասիվ օգտագործումը և այլն,
- *ներդրումային ռիսկը* կապված է տնտեսավարող սուբյեկտի ներդրումային պորտֆելի արժեզրկման հնարավորության և սպասվելիք եկամտի ստացման հետ,
- *շուկայական ռիսկը* կապված է ապրանքների և ծառայությունների շուկայական գների տատանումների, ինչպես նաև սեփական և օտարերկրյա արժույթների փոխարժեքների ու փոխատվության շուկայական տոկոսադրույքների տատանումների հետ,
- *ապահովագրական ռիսկը* կապված է գույքի (տուն, կահույք, ավտոմեքենա, գյուղատնտեսական կենդանիներ, հող, այգիներ և այլն) շահագործման և տարբեր տեսակի փոխադրումների հետ,



- *հարկային ռիսկը*, որը կարելի է քննարկել երկու կտրվածքով՝

ա) ձեռնարկչատիրական հարկային ռիսկ, որը կապված է հարկային քաղաքականության հնարավոր փոփոխությունների (նոր հարկատեսակների առաջացում, հարկային արտոնությունների կրճատում կամ վերացում և այլն), ինչպես նաև հարկային դրույքաչափերի մեծության փոփոխության հետ,

բ) պետական հարկային ռիսկ, երբ հարկային քաղաքականության փոփոխության արդյունքում կարող են կրճատվել պետբյուջե մուտքագրվող գումարները:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պետությունն ավելի շատ շահագրգռված է սահմանել հարկատեսակների այնպիսի դրույքաչափեր, որոնք՝

- մի կողմից կարող են չնպաստել ձեռնարկչատիրական գործունեությանը,
- մյուս կողմից էլ կարող են ապահովել առավելագույն չափով ակնկալվող մուտքագրումներ պետբյուջե:

Թե ինչպիսի կախվածություն գոյություն ունի պետբյուջե կատարվող մուտքագրումների և հարկատեսակների դրույքաչափերի մեծության միջև, ներկայացնենք ամերիկյան նշանավոր տնտեսագետ Լաֆֆերի առաջարկած գծապատկերով (5.2.1.1)[1]:




Գծ. 5.2.1.1. Լաֆֆերի կորը

[1] Гранатуров В.М. Экономический риск: сущность, методы измерения, пути снижения (учебное пособие). М., 1999, с. 23.

Գծապատկերից պարզ երևում է, որ հարկային դրույքաչափերի (K) մեծացման հետ աճում են բյուջե կատարվող մուտքագրումները (R): Այդ իսկ պատճառով էլ $K_0$ դրույքաչափին համապատասխանում է Q առավելագույն չափով ֆինանսական միջոցների մուտքագրումներ ($R_0 = Q$): Բայց հարկային դրույքաչափերի հետագա էլ ավելի բարձրացումը արդեն չի նպաստում բյուջե կատարվող մուտքագրումների ավելացմանը, այլ նույնիսկ այն աստիճանաբար նվազում է, քանի որ տվյալ իրավիճակում տնտեսավարող սուբյեկտներն արդեն շահագրգռված չեն լինում մեծացնելու արտադրության ծավալները: Այստեղից հետևում է, որ պետությունը պետք է իրականացնի հարկային նուրբ քաղաքականություն տարբեր տեսակի գործունեություն իրականացնող սուբյեկտների հետ և տվյալ պահի դրությամբ սահմանի իրեն արդարացնող դրույքաչափեր:

Տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի հաշվառումը և վերլուծությունը կարելի է իրականացնել տրամաբանական հետևյալ հաջորդականությամբ.

1. ներքին և արտաքին գործոնների բացահայտում, որոնք մեծացնում կամ փոքրացնում են ռիսկի կոնկրետ որևէ տեսակի մեծությունը,
2. բացահայտված գործոնների վերլուծությունը,
3. ռիսկի յուրաքանչյուր տեսակի գնահատումը ֆինանսական տեսանկյունով, որը կատարվում է երկու եղանակով՝

ա) ֆինանսական վճարունակության որոշման (նախագծի իրացվելիություն),

բ) ֆինանսական միջոցների ներդրումների արդյունավետության որոշման (տնտեսական նպատակահարմարություն),

4. ռիսկի թույլատրելի մակարդակի որոշումը,
5. առանձին գործարքների վերլուծությունը՝ ելնելով ռիսկի ընտրված (սահմանված) մակարդակից,
6. ռիսկի նվազեցման միջոցառումների մշակումը:

Թվարկված փոխկապակցություններն ավելի հստակ պատկերացնելու համար դրանք ներկայացնենք գծապատկերի (5.2.1.2) տեսքով[1]:

Բոլոր գործոնների (ներքին և արտաքին) միաժամանակյա ազդեցության հաշվառման արդյունքում (նաև ռիսկերի նվազեցման միջոցառումների ազդեցությունը) կստացվի՝ նյութական, աշխատանքային, ֆինանսական, ժամանակային և այլ վնասների ու կորուստների հավանական մեծությունների գնահատականը: Դրանցից յուրաքանչյուրը բնորոշվում է յուրահատուկ առանձնահատկություններով:

[1] Артеменко В.Г., Белендир М.В. Финансовый анализ (учеб. пособие),с.111.






Գծ. 5.2.1.2. Ռիսկի վերլուծության հաջորդականությունը

*Նյութական վնասները և կորուստները* կապված են չնախատեսված, լրացուցիչ նյութական ծախսերի ու վնասների, նյութերի, ապրանքանյութական արժեքների, օբյեկտների, շենքերի և շինությունների կորուստների հետ և այլն:

*Աշխատանքային կորուստները* հիմնականում կապված են պատա-

հարներով և անկանխատեսելի իրավիճակներով պայմանավորված աշխատաժամանակի կորուստների հետ:

***Ֆինանսական վնասները և կորուստները*** կապված են փողի գերածախսի, տուգանքների և տույժերի վճարման, լրացուցիչ հարկերի և գումարների հավաքագրման ու վճարման, արժեթղթերի և դրամական կորստի, հայտնի աղբյուրներից նախատեսված գումարների չստացման, վճարումների չկատարման, գնի մեծության անկումով պայմանավորված եկամտի նվազման, ինչպես նաև ազգային արժույթի փոխարժեքի փոփոխման և արժեզրկման գծով կապված վնասների և կորուստների հետ:

***Ժամանակային կորուստները*** պատվերների կատարման, պատրաստի արտադրանքի տեղափոխման և իրացման հետ կապված ուշացումներ են:

***Այլ վնասները և կորուստները*** կապված են բնությանը և բնակչությանը, ինչպես նաև տնտեսության իմիջին հասցված վնասների հետ:

Տնտեսավարող սուբյեկտների համար կարևոր նշանակություն ունի նաև արտաքին ռիսկային իրավիճակների, երևույթների ազդեցության հաշվառումը և գնահատումը: Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունից չկախված արտաքին ռիսկային իրավիճակները և երևույթները դասակարգվում են՝

- տնտեսական օրենսդրության հետ կապված ռիսկ,
- տնտեսական ընթացիկ իրավիճակի հետ կապված ռիսկ,
- ներդրումային պայմանների հետ կապված ռիսկ,
- արտաքին առևտրի, մատակարարումների և առաքումների սահմանափակումների հետ կապված ռիսկ,
- քաղաքական իրավիճակների անորոշության հետ կապված ռիսկ,
- սոցիալ-տնտեսական լարվածության հետ կապված ռիսկ,
- բնակլիմայական պայմանների անորոշության հետ կապված ռիսկ և այլն:

Արտաքին ռիսկերի նմանատիպ դասակարգումը պայմանավորված է դրանց գնահատման մեթոդի պահանջներից: Գնահատման արդյունքները կարող են ընդհանրացվել աղյուսակի տեսքով, որտեղ նշվում են արտաքին ռիսկերի անվանումը՝ ըստ տողերի և գնահատման միջակայքերը՝ բալերով (ցածր, միջին, բարձր), գումարային գնահատականը՝ ըստ սյունակների:

Շուկայական տնտեսավարման պայմաններում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի գործունեության համար կարելի է առանձնացնել ռիսկի 5 հիմնական բնագավառ.

1. ***Ոչ ռիսկային***, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտն իր գործունեության ընթացքում ռիսկի չի դիմում, զերծ է մնում որոշակի կորուստներից և արդյունքում ստանում է միայն հաշվարկային շահույթ, որի մեծությունը սահմանափակ լինել չի կարող:

2. ***Նվազագույն ռիսկ***, որի ժամանակ տնտեսավարող սուբյեկտը ռիսկի է դիմում զուտ շահույթի մեծության հետ կապված:

3. ***Բարձր ռիսկային***, որի ժամանակ տնտեսավարող սուբյեկտը ռիսկի է դիմում, որպեսզի վատագույն դեպքում կարողանա ծածկել կատարված ծախսերը, ինչ լավագույն դեպքում՝ ստանա հաշվարկայինի մակարդակից ոչ պակաս շահույթ: Բարձր ռիսկայինի ժամանակ հնարավոր է արտադրական գործունեության կարգավորում՝ ի հաշիվ կարճաժամկետ վարկերի:

4. ***Ճգնաժամային ռիսկ***, որի ժամանակ տնտեսավարող սուբյեկտը ռիսկի դիմելով կարող է կորցնել ոչ միայն շահույթի ստացում, այլ նաև չապահովել իրացումից հասույթ, որի դեպքում ողջ ծախսերի փոխհատուցումը կկատարվի նրա հաշվին՝ դրանով իսկ ընկնելով ճգնաժամային վիճակի մեջ:

5. ***Անթույլատրելի ռիսկ***, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտն իր գործունեության ընթացքում ընկնում է սնանկացման մեջ՝ ֆինանսապես կախված լինելով կրեդիտորներից:



### 5.2.2. Ռիսկի կառավարման գործընթացի փուլերը

Որպես կառավարման համակարգի մի մասնիկ՝ ռիսկերի կառավարումը նույնպես ենթադրում է իրականացնել մի շարք գործընթացներ և գործողություններ, որոնք իրենց էությամբ ուղղված են ներազդել դրանց վրա: Ռիսկերի թվին կարող ենք դասել՝ կապիտալ ներդրումների ռիսկայնության որոշումը, ռիսկի գնահատման համար տվյալների հավաքագրումը և մշակումը, ռիսկային դեպքերի հանդես գալու հավանականության որոշումը, ռիսկի մեծության և ռիսկայնության աստիճանի բացահայտումը, ռիսկի կառավարման եղանակների ընտրությունը և դրանց նվազեցման ուղիները:

Ռիսկի կառավարման գործընթացի էությունն ավելի հստակ պատկերացնելու համար այն ներկայացնենք գծապատկերի տեսքով (5.2.2):

Գծապատկերում[1] ռիսկի կառավարման գործընթացի փուլերը կարելի է բաժանել երկու խմբի՝

[1] Гранатуров В.М. Экономический риск: сущность, методы измерения, пути снижения, с. 34.




1-տվյալների հավաքագրում և մշակում
2-ռիսկի որակական վերլուծություն
3-ռիսկի քանակական վերլուծություն
4-ընդունելի ռիսկի գնահատում
5, 11-ռիսկի իջեցման հնարավորության գնահատում
6, 12-ռիսկի իջեցման տարբերակների ձևավորման և մեթոդների գնահատում
7-ռիսկի ավելացման հնարավորության գնահատում
8-ռիսկի ավելացման տարբերակների ձևավորման և մեթոդների ընտրություն
9, 13-ռիսկի իջեցման նպատակահարմարության գնահատում
10-ռիսկի ավելացման նպատակահարմարության գնահատում
14-ռիսկի իջեցման տարբերակի ընտրություն
15-ընդունված ռիսկի իրականացում
16-չարդարացված ռիսկի իրականացումից հրաժարում

Գծ. 5.2.2. Ռիսկի կառավարման գործընթացի բլոկ-սխեմա



1. ռիսկի վերլուծություն,
2. ռիսկի նվազեցում և դրա իջեցման ուղիներ:

Առաջին խումբը ներառում է ռիսկի գնահատման համար *տվյալների հավաքագրումն ու մշակումը, ինչպես նաև ռիսկի որակական և քանակական վերլուծությունը:*

Երկրորդ խումբը ներառում է *ռիսկի թույլատրելի սահմանային մակարդակի հիմնավորումը և ընտրությունը, ռիսկի իջեցման մեթոդների ընտրությունը, ռիսկային կապիտալ ներդրումների տարբերակների ձևավորումը, սպասվելիք հատույցի (շահույթ, շահութաբերություն և այլն) համադրման հիման վրա ռիսկի մեծության գնահատումը:*

Ռիսկի կառավարման գործընթացում իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում համապատասխան տվյալների հավաքագրումն ու դրանց մշակումը, քանի որ կառավարման գործընթացն առաջին հերթին ենթադրում է ստանալ, վերամշակել, հաղորդել և գործնականում օգտագործել տարբեր տեսակի տեղեկատվություններ: Ստացված տեղեկատվությունը պետք է լինի արժանահավատ, որակապես լիարժեք և ժամանակակից: Այսպես, կապիտալ ներդրումների ռիսկայնությունից և դրա նպատակներից կախված անհրաժեշտ են հետևյալ տեղեկատվությունները՝ ռիսկային դեպքերի հավանականության, գործընկերների ֆինանսական կայունության և վճարունակության, արտաքին տնտեսական գործունեության գծով գործընկեր երկրում տնտեսական և քաղաքական իրավիճակի, շուկայում իրացվող ապրանքների և մատուցվող ծառայությունների վիճակի, ապահովագրության պայմանների մասին և այլն:

Տեղեկատվության այդպիսի աղբյուրներ կարող են լինել նախկինում եղած նմանատիպ նախագծերի տվյալները, փորձագետների կարծիքները, տարբեր տեսակի վերլուծական նյութերը, մասնագիտացված ընկերությունների տվյալները և այլն:

Տեղեկատվությանը միաժամանակ ներկայացվում են հատուկ պահանջներ: Դրանք պայմանավորված են այն կարևորությամբ, որ լիարժեք տեղեկատվության բացակայությունը ռիսկի վրա ազդող ամենաէական գործոններից մեկն է, և որ ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում որոշումների ընդունման համար կատարվում են ֆինանսական լրացուցիչ ծախսումներ, այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտները և ներդրողները արդյունքում ունենում են կորուստներ և միաժամանակ սպասվելիք շահույթի նվազեցում:

Լիարժեք տեղեկատվության պայմաններում կարևոր նշանակություն ունի նաև ռիսկի որակական ու քանակական վերլուծությունը:

Որակական վերլուծությունը ներառում է՝ ռիսկերի ծագման պատճառ-

ների, ռիսկերի իրականացման ժամանակ հնարավոր բացասական հետևանքների բացահայտումը, հնարավոր բոլոր ռիսկերի սահմանումը և այլն:

Ռիսկի որակական վերլուծության ժամանակ կարևոր է նաև բացահայտել ռեսուրսների հնարավոր կորուստները, որոնք այս դեպքում ևս արդյունք են ռիսկային դեպքերի հանդես գալուն: Որակական վերլուծության արդյունքները համարվում են ելակետային կարևոր տեղեկատվություն՝ քանակական վերլուծություն իրականացնելու համար:

Ռիսկի քանակական վերլուծություն կատարելիս որոշվում են ռիսկային դեպքերի հավանական թվային արժեքները և դրանց հետևանքները, իրականացվում է ռիսկի մակարդակի կամ աստիճանի քանակական գնահատումը, որոշվում է ռիսկի թույլատրելի մակարդակը կոնկրետ պայմաններում:

Ռիսկի քանակական վերլուծությունն իրականացվում է տարբեր մեթոդներով, որոնց միջոցով որոշվում են առանձին ռիսկերի և ռիսկերի համատեղ ազդեցության չափերը տնտեսավարող սուբյեկտի գործունեության վրա:

Ռիսկի որակական վերլուծությունը, ի տարբերություն քանակականի, համեմատաբար ավելի պարզունակ է, դրա հիմնական խնդիրը ռիսկի գործոնների և իրականացման փուլերի որոշումն է:

Ռիսկի մակարդակի վրա ազդող բոլոր գործոնները կարող են լինել՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ են համարվում այն գործոնները, որոնք անմիջականորեն կախված չեն տնտեսավարող սուբյեկտի գործունեությունից, այդ թվում՝ արժեզրկումը, մրցակցությունը, քաղաքական և տնտեսական ճգնաժամերը, ներմուծման և արտահանման քաղաքականությունը, բնապահպանությունը և այլն:

Սուբյեկտիվ գործոնները բնորոշում են տվյալ տնտեսավարող սուբյեկտն անմիջականորեն, այդ թվում՝ արտադրական կարողությունը, կադրերի կազմը, տնտեսական կապերը և ֆինանսական դրությունը:

## 5.2.3. Ռիսկի վերլուծության մեթոդները

Ռիսկի վերլուծության ամենատարածված մեթոդներից են[1]՝

- վիճակագրական մեթոդը,

[1] Финансовый менеджмент (теория и практика). Под ред. Е.С. Стояновой. М., 2000, с. 451.



- ծախսերի նպատակահարմարության վերլուծության մեթոդը,
- փորձագիտական գնահատման մեթոդը:

***Վիճակագրական մեթոդի*** էությունն այն է, որ մանրամասն ուսումնասիրության է ենթարկում արտադրատնտեսական տվյալ ոլորտի կորուստները, կատարվելիք ծախսերը, սպասվելիք եկամուտներն ու դրանց հիման վրա կազմվում է ամենահավանական կանխատեսումներն ապագայի համար:

Վիճակագրական մեթոդի դեպքում հաշվարկվում են վարիացիայի ցուցանիշներից՝ դիսպերսիան, միջին քառակուսային շեղումը և վարիացիայի գործակիցը:

Դիսպերսիան բնութագրում է ռիսկայնության վրա ազդող գործոններից յուրաքանչյուրի քանակական փոփոխությունը (տատանումը), երբ անցում է կատարվում մի վիճակից մի այլ վիճակի: Կամ այլ կերպ՝ այն իրենից ներկայացնում է ուսումնասիրվող տարբերակներից յուրաքանչյուր գործոնի ու դրանց միջին մեծության տարբերության քառակուսիների գումարների և ուսումնասիրվող տարբերակների քվաքանակի հարաբերությունը: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևերով՝

$$\text{ա)}\ \sigma^2_{պ.} = \frac{\sum (X_i - \overline{X_i})^2}{n}, \qquad (i=1,2,\ldots,n), \tag{5.2.3.1}$$

$$\text{բ)}\ \sigma^2_{կշռվ.} = \frac{\sum (X_i - \overline{X_i})^2 f_i}{\sum f_i}, \tag{5.2.3.2}$$

որտեղ՝

$\sigma^2_{պ}$ -ն դիսպերսիան է՝ պարզ տեսքով (առանց դիտարկվող դեպքերի կրկնության),

$X_i$ -ն դիտարկվող յուրաքանչյուր i-րդ դեպքի մեծությունն է,

$\overline{X_i}$ -ը դիտարկվող i-րդ դեպքի (պատահարի) միջին մեծությունն է, որն արտահայտվում է պարզ թվաբանականի բանաձևով՝

$$\overline{X_i} = \frac{\sum X_i}{n},$$

որտեղ՝

n-ը դիտարկվող դեպքերի (պատահարների) թիվն է,

$\sigma^2_{կշռվ.}$-ը դիսպերսիան է՝ կշռված տեսքով (հաշվի է առնված դիտարկվող դեպքերի կրկնությունները),

$f_i$ –ն դիտարկվող դեպքերի կրկնությունների (հաճախությունների,

կշիռների) թիվն է:

Միջին քառակուսային շեղումը նույն դիսպերսիայի արմատատակ արտահայտությունն է և ներկայացվում է հետևյալ բանաձևերով՝

$$\text{ա)}\ \sigma_{պ.} = \sqrt{\frac{\sum (x_i - \bar{x}_i)^2}{n}}, \qquad (5.2.3.3)$$

$$\text{բ)}\ \sigma_{կշռվ.} = \sqrt{\frac{\sum (x_i - \bar{x}_i)^2 f_i}{\sum f_i}}: \qquad (5.2.3.4)$$

Դիսպերսիան և միջին քառակուսային շեղումները համարվում են բացարձակ տատանումների (ցրվածության) գնահատման մեծություններ:

Դիտարկվող դեպքերից ստացված արժեքների տատանումների գնահատման կարևոր ցուցանիշ է վարիացիայի գործակիցը, որն իրենից ներկայացնում է միջին քառակուսային շեղման ($\sigma$) և միջին թվաբանականի ($\bar{X}$) հարաբերակցությունը՝

$$V = \frac{\pm\sigma}{\bar{X}} \times 100\%: \qquad (5.2.3.5)$$

Վարիացիայի գործակիցը, համարվելով հարաբերական մեծություն, կարող է տատանվել 0-ից 100%-ը: Որքան մեծ է վարիացիայի գործակիցը, այնքան բարձր է դիտարկվող դեպքերի և նրա միջին մեծության միջև եղած տատանումը, որը դրական երևույթ չէ:

Վարիացիայի գործակցի տարբեր արժեքների որակական գնահատման համար սահմանված են հետևյալ մեծությունները՝

մինչև 10% - թույլ տատանում,

10 – 25% - չափավոր (միջին) տատանում,

25% և ավելի - բարձր (ուժեղ) տատանում:

Ռիսկի գնահատման վիճակագրական մեթոդի էությունն ավելի հստակ պատկերացնելու համար բերենք երկու տարբերակով պայմանական օրինակ՝ ներդրվող կապիտալի հետևանքով ստացվող շահույթի գծով և ներկայացնենք աղյուսակի (5.2.3) տեսքով:

Աղյուսակից տեղադրելով համապատասխան տվյալները (5.2.3.4) բանաձևի մեջ, կստանանք միջին քառակուսային շեղումը ներդրվող կապիտալի ժամանակ 1-ին և 2-րդ տարբերակների համար՝



Աղյուսակ 5.2.3

Կապիտալի ներդրման ժամանակ դիսպերսիայի հաշվարկը երկու տարբերակի դեպքում

| Դեպքի (պատահարի) համարը | Ստացվող շահույթը, մլն դր. ($X_i$) | Դիտարկվող դեպքերի թիվը ($n$) | $(X_i - \bar{X}_i)$ | $(X_i - \bar{X}_i)^2$ | $(X_i - \bar{X}_i)^2 f_i$ |
|---|---|---|---|---|---|
| | | 1-ին տարբերակ | | | |
| 1 | 140 | 17 | - 30 | 900 | 15300 |
| 2 | 180 | 23 | 10 | 100 | 2300 |
| 3 | 190 | 20 | 20 | 400 | 8000 |
| ընդամենը | $\bar{X} = 170$ | 60 | - | | 25600 |
| | | 2-րդ տարբերակ | | | |
| 1 | 180 | 15 | 70 | 4900 | 73500 |
| 2 | 150 | 25 | - 60 | 3600 | 90000 |
| 3 | 200 | 10 | - 10 | 100 | 1000 |
| ընդամենը | $\bar{X} = 210$ | 50 | | | 164500 |

$$\text{ա)}\ \sigma_1 = \sqrt{\frac{25600}{60}} = \sqrt{426,7} = \pm 20,7,$$

$$\text{բ)}\ \sigma_2 = \sqrt{\frac{164500}{50}} = \sqrt{3290} = \pm 57,4:$$

Նման ձևով հաշվարկվում է նաև վարիացիայի գործակիցն ըստ (5.2.3.5) բանաձևի, որը հավասար կլինի՝

$$\text{ա)}\ V_1 = \frac{\pm 20,7}{170} \times 100\% = \pm 12,2\%,$$

$$\text{բ)}\ V_2 = \frac{\pm 57,4}{210} \times 100\% = \pm 27,3\%:$$

Հաշվարկներից պարզվում է, որ կապիտալի ներդրման ժամանակ վարիացիայի գործակիցը 1-ին տարբերակի դեպքում ավելի փոքր է, քան 2-րդի: Այստեղից հետևում է, որ ավելի նպատակային է ու ռիսկային 1-ին տարբերակի դեպքում կատարել կապիտալի ներդրումներ:

***Փորձագիտական գնահատման մեթոդի*** էությունն այն է, որ հիմնվում է մեծ փորձ ունեցող մասնագետների կամ ձեռներեցների մշակած ռիսկի քանակական գնահատման վրա: Այս մեթոդի կիրառումն առավել նպատակահարմար է բարդ և չձևավորված անորոշ իրավիճակների կողմնորոշման դեպքում: Մեթոդի թերություններին են վերագրվում՝

- ներդրումների ռիսկայնության օբյեկտիվ գնահատման համար երաշխիքների բացակայությունը,
- ստացված տվյալների մշակման դժվարությունը:

Եթե երկրորդ թերությունը վերաբերում է հաղթահարելի դժվարություններին, ապա առաջինն ունի բավականին սկզբունքային նշանակություն:

***Ծախսերի նպատակահարմարության վերլուծության մեթոդը*** հիմնվում է ռիսկային գոտու ընտրության վրա, որի դեպքում նախատեսված ծախսերի գերազանցումը կարող է լինել հետևյալ չորս հիմնական գործոններից որևէ մեկի կամ դրանց համատեղ ազդեցության հետևանք.

- չգնահատված սկզբնական արժեքի,
- նախագծման արժեքների փոփոխության,
- տարբեր արտադրողականության,
- սկզբնական արժեքի ավելացման:

Այս գործոնները կարող ենք էլ ավելի մանրամասն ներկայացնել, եթե հիմք ընդունենք ֆինանսական կայունությունը բնորոշող ցուցանիշները, որոնց միջոցով հնարավոր է որոշել տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական միջոցների օգտագործման ռիսկային աստիճանը:

Ռիսկի ենթակա ֆինանսական միջոցների վերլուծության համար տընտեսավարող սուբյեկտի ընդհանուր ֆինանսական կայունությունը կարելի է բաժանել հինգ ֆինանսական իրավիճակի՝

- ***բացարձակ կայուն իրավիճակ***, երբ պաշարների և ծախսերի (Պ+Ծ) նվազագույն մեծությունը համապատասխանում է ոչ ռիսկային իրավիճակին,
- ***նորմալ կայուն իրավիճակ***, երբ տնտեսավարող սուբյեկտն ունենում է բավարար չափով պաշարների ու ծախսերի մեծություն և այն համապատասխանում է նվազագույն ռիսկային աստիճանին,
- ***ֆինանսական անկայուն իրավիճակ***, երբ տնտեսավարող սուբյեկտն ունենում է պաշարների ու ծախսերի ավելցուկ և այն համապատասխանում է առավելագույն ռիսկին,
- ***ճգնաժամային իրավիճակ***, երբ տեղի է ունենում պատրաստի արտադրանքի կուտակում, արտադրանքի նկատմամբ լինում է ցածր պահանջարկ և այլն, ու այն համապատասխանում է վտանգավոր ռիսկին,
- ***ֆինանսական ճգնաժամային իրավիճակ***, երբ տնտեսավարող սուբյեկտն ունենում է սահմանված չափից դուրս պաշարներ ու պատրաստի արտադրանքի կուտակում, և այն համապատասխանում է անթույլատրելի ռիսկին, իսկ ինքը գտնվում է սնանկացման շեմին:



## 5.2.4. Ներդրումային ռիսկի արդյունավետության գնահատումը

Նախորդ ենթահարցում նշված ծախսերի նպատակահարմարության վերլուծության մեթոդից ելնելով՝ յուրաքանչյուր սուբյեկտ, հանդես գալով որպես ներդրող, կատարում է դրամական (արտարժութային) միջոցների ներդրում՝ վերջնական արդյունքում ակնկալելով առավելագույն չափով շահույթի ստացում: Այդ առումով հաշվարկներ կատարելիս տնտեսավարող սուբյեկտը հիմնվում է երկու ցուցանիշների վրա՝

- կատարվելիք ծախսերի,
- ստացվող արդյունքների (իրացումից զուտ հասույթ, համախառն շահույթ, իրացումից շահույթ, զուտ շահույթ և այլն):

Կատարվելիք ծախսերում հաշվարկվելու են, թե այդ ներդրումային նախագծով որքան հիմնական միջոցներ և նյութական ընթացիկ ակտիվներ են հարկավոր, որքան պետք է լինի դրանց հետ կապված ամորտիզացիոն հատկացումներն օգտագործման ժամկետում, աշխատանքի վարձատրությունը՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով և հարկային տարբեր տեսակի վճարումները: Այնուհետև՝ թե ինչ է արտադրվելու կամ աշխատանքներ ու ծառայություններ են մատուցվելու, ինչ որակի են լինելու, շուկայում արդյոք մրցունակ են լինելու, թե ոչ, ինչ գնով են իրացվելու դրանցից յուրաքանչյուրի միավորը, միաժամանակ՝ որքան կլինի վերջնական արդյունքում կատարված բոլոր տեսակի ծախսումների դիմաց իրացումից հասույթի գումարի չափը: Իրացումից ստացվող հասույթի և կատարված ծախսերի համադրման տարբերությունը պետք է գոնե նվազագույն չափով ապահովի հաշվետու ժամանակաշրջանի շահույթի ստացումը: Ներդրում կատարողին հետաքրքրում է նաև, թե վերջնական արդյունքում որքան կլինի զուտ շահույթի գումարի չափը հարկային վճարումներից հետո: Միաժամանակ ներդրողը կատարում է հաշվարկներ, թե արդյոք մեկ միավոր ներդրման հաշվով կապահովվի զուտ շահույթի բավարար չափով գումարի ստացում: Ըստ այդմ հաշվարկվում են 3 տեսակի համեմատական ցուցանիշներ[1] ներդրումներ կատարելու առումով՝

- բացարձակ գնահատում,
- բացարձակ-համեմատական գնահատում,
- համեմատական գնահատում:

[1] Богатин Ю.В., Швандар В.А. Оценка эффективности бизнеса и инвестиций. М., 1999, с.125 - 130.

Ցուցանիշների հաշվարկման համար, եթե որոշակի ժամանակաշրջանում (ամիս, եռամսյակ, տարի և այլն) ներդրվող կապիտալի գումարի չափը նշանակենք K-ով, ստացվող շահույթի գումարի չափը՝ P-ով, իսկ համեմատական նորմատիվը՝ $E_ն$-ով կամ $T_ն$-ով, ապա, ըստ ***բացարձակ գնահատման***, կօգտագործվեն հետևյալ բանաձևերը՝

$$\frac{P}{K} \text{ կամ } \frac{K}{P}: \qquad (5.2.4.1)$$

Նշված բանաձևերում 1-ին հարաբերակցությունը բնորոշում է մեկ միավոր ներդրված կապիտալի հաշվով ստացվող շահույթի գումարի չափը. որքան բարձր լինի այդ մեծությունը, այնքան լավ: 2-րդ հարաբերակցությունը բնութագրում է ստացվող մեկ միավոր շահույթին բաժին ընկած ներդրվող կապիտալի ծախսի չափը. որքան ցածր լինի այդ ցուցանիշը, այնքան լավ: Այս երկու հարաբերակցությունները գտնվում են հակադարձ կապի մեջ:

***Բացարձակ-համեմատական գնահատման*** դեպքում կատարվում է բացարձակ գնահատման ցուցանիշի համեմատում՝ $E_ն$ (կապիտալ ներդրումների արդյունավետությունը) կամ $T_ն$ (կապիտալ ներդրումների հետգրման ժամկետը) սահմանված նորմատիվների հետ: Վերջիններս կապիտալ ներդրումների գծով պաշտոնապես գործող արդյունավետության նորմատիվային գործակիցներն են կամ ներդրում կատարողի և տնտեսավարող սուբյեկտի կողմից փոխհամաձայնեցված սահմանվող նորմատիվները:

(5.2.4.1) հարաբերակցությունները համարվում են արդյունավետ, եթե պահպանվում են հետևյալ պայմանները՝

$$\frac{P}{K} \geq E_ն \text{ կամ } \frac{K}{P} \leq T_ն : \qquad (5.2.4.2)$$

***Համեմատական գնահատման*** դեպքում համեմատվում են միևնույն տեսակի գործունեություն իրականացնող տարբեր նախագծերը կամ գործարարության պլանով կազմված ցուցանիշները: Եթե այդ նախագծերը մի քանիսն են, ապա համեմատական գնահատումը կարտահայտվի հետևյալ տեսքով՝

$$\frac{P_1}{K_1}, \frac{P_2}{K_2}, \frac{P_3}{K_3}, \ldots, \frac{P_n}{K_n} \geq E_ն \quad \text{կամ} \quad \frac{K_1}{P_1}, \frac{K_2}{P_2}, \frac{K_3}{P_3}, \ldots, \frac{K_n}{P_n} \leq T_ն : \qquad (5.2.4.3)$$



Այսինքն՝ յուրաքանչյուր ներդրողի համար պետք է ապահովվի հետևյալ անհավասարությունը՝

$$\begin{array}{l} P_1 - K_1E_ն \geq 0 \\ P_2 - K_2E_ն \geq 0 \\ \text{----------} \\ P_n - K_nE_ն \geq 0 \end{array} \quad \text{կամ} \quad \begin{array}{l} K_1 - P_1T_ն \leq 0 \\ K_2 - P_2T_ն \leq 0 \\ \text{----------} \\ K_n - P_nT_ն \leq 0 \end{array} \qquad (5.2.4.4)$$

Այս արտահայտությունների իմաստն ավելի հստակ պատկերացնելու համար բերենք պայմանական օրինակ: Ենթադրենք՝ կապիտալ ներդրումների արդյունավետության նորմատիվը՝ $E_ն = 0,18$, այսինքն՝ յուրաքանչյուր մեկ միավոր կապիտալ ներդրումը պետք է ապահովի առնվազն 0,18 միավոր շահույթի ստացում: 1-ին ներդրողը ներդրում է կատարում 500 մլն դրամ՝ ակնկալելով 100 մլն դրամի շահույթի ստացում, իսկ 2-րդ ներդրողը միևնույն տեսակի գործունեության համար ներդրում է կատարում 600 մլն դրամ՝ ակնկալելով 150 մլն դրամի շահույթի ստացում:

Առաջին ներդրողի համար բացարձակ գնահատումը կկազմի՝ 100/500= 0,2 դրամ, իսկ 2-ինը՝ 150/600 = 0,25 դրամ:

Երկու ներդրողների համար բացարձակ-համեմատական գնահատումները համապատասխանաբար կկազմեն՝

$$0,2 > 0,18 \quad \text{և} \quad 0,25 > 0,18:$$

Ըստ համեմատական գնահատման՝ պարզվում է, որ 2-րդ ներդրողի ներդրումը ավելի նախընտրելի է՝ $0,25 > 0,18$: Կամ այլ կերպ, ըստ (5.2.4.4) բանաձևի 1-ին և 2-րդ ներդրողների համար այն հավասար կլինի՝

I. $100 - 500 \times 0,18 = 100 - 90 = 10$ մլն դրամ,

II. $150 - 600 \times 0,18 = 150 - 104 = 46$ մլն դրամ:

Այսինքն՝ 2-րդ ներդրողը ապահովում է 36 մլն դրամի (46–10) չափով ավելի շատ շահույթի ստացում: Իսկ եթե հաշվի առնենք կատարվող ծախսումները արտադրական գործունեության առումով, ապա արտադրության հետ կապված ինքնարժեքը (C)[1] կարտահայտվի հետևյալ բանաձևով՝

$$C = З + M + a \cdot K, \qquad (5.2.4.5)$$

որտեղ՝

З-ն հաշվետու ժամանակաշրջանի (տարվա) աշխատավարձն է սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության հատկացումներով,

[1] Богатин Ю.В., Швандар В.А. Оценка эффективности бизнеса и инвестиций, с. 133.

M-ը նյութական ծախսումներն են,

a-ն այդ միջոցների տարեկան ամորտիզացիայի նորման է,

K-ն կատարված կապիտալ ծախսերը՝ հիմնական արտադրական միջոցների տեսքով:

(5.2.4.5) բանաձևում (З + M) արտահայտությունը արտադրությունում օգտագործվող ընթացիկ ծախսերն են, որոնց կապը կապիտալ ծախսերի հետ արտահայտվում է հետևյալ գծապատկերի տեսքով.




Գծ. 5.2.4. Արտադրանքի ինքնարժեքի մեծության վրա կապիտալ ծախսերի ազդեցությունը

Գծապատկերից պարզվում է, որ ընթացիկ և կապիտալ ծախսերը գտնվում են հակադարձ կապի մեջ, որն ունի հիպերբոլայի տեսք, իսկ ամորտիզացիոն հատկացումների տարեկան գումարի (a · K) նկատմամբ ունեն ուղղագծային կապ:

Ըստ գծապատկերի, 1-ին կետն արտահայտում է թողարկվող արտադրանքի ինքնարժեքի նվազագույն արժեքը, իսկ 2-րդ և 3-րդ կետերում



արտադրանքի ինքնարժեքն ավելի բարձր է, քան 1-ին կետում: Թեև 2-րդ կետում ներդրողի արտադրանքի ինքնարժեքն ավելի բարձր է, քան 1-ին կետում, այնուհանդերձ նա շահում է կապիտալ ծախսումներում: Իսկ ահա 3-րդ կետում միաժամանակ բարձրանում են և՛ արտադրանքի ինքնարժեքը, և՛ կապիտալ ծախսերը:

Համադրենք ներդրումային երկու տարբերակ (նախագծեր): Այսպես, ըստ 1-ին և 2-րդ կետերի, եթե ներդրում կատարվի 1-ին տարբերակով, ապա տարվա կտրվածքով արտադրանքի ինքնարժեքի տնտեսումը կլինի՝ $C_2 - C_1$, իսկ դրան համապատասխան կապիտալ ծախսերի տնտեսումը կկազմի՝ $K_1 - K_2$, հօգուտ 2-րդ տարբերակի: Իսկ թե այդ տարբերակներից որն է ավելի նախընտրելի, ցույց է տալիս հետևյալ հարաբերակցությունը՝

$$\frac{C_2 - C_1}{K_1 - K_2} = E : \qquad (5.2.4.6)$$

Այս հարաբերակցությունը համարվում է ***լրացուցիչ կապիտալ ներդրումների համեմատական տնտեսական արդյունավետության գործակից***, որտեղ՝

E - ն արդյունավետության գործակիցն է,

$C_1$ և $C_2$ - ը, ըստ 1-ին և 2-րդ տարբերակների, արտադրանքի արտադրության տարեկան ծավալի ինքնարժեքն է,

$K_1$ և $K_2$ - ը, ըստ 1-ին և 2-րդ տարբերակների, կապիտալ ներդրումներն են:

Երբեմն արդյունավետության գործակցի (E) փոխարեն հաշվարկվում է նրա հակադարձ մեծությունը, որը լրացուցիչ կապիտալ ծախսերի հետգնման ժամկետի ցուցանիշն է (T) և արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$T = \frac{K_1 - K_2}{C_2 - C_1} : \qquad (5.2.4.7)$$

Իսկ որպեսզի համոզվենք, թե հաշվարկվող E և T մեծություններն արդյունավետ են, թե ոչ, անհրաժեշտ է դրանք համադրել $E_ն$ և $T_ն$ նորմատիվների հետ: Այսինքն՝ հաշվարկային մեծություններն արդյունավետ կհամարվեն այն դեպքում, եթե պահպանվի հետևյալ անհավասարությունը՝

$$E = \frac{C_2 - C_1}{K_1 - K_2} > E_ն \quad \text{կամ} \quad T = \frac{K_1 - K_2}{C_2 - C_1} < T_ն : \qquad (5.2.4.8)$$

Նշված բանաձևերը կարող ենք ներկայացնել նաև հետևյալ տեսքով՝

$$C_2 - C_1 > E_0 (K_1 - K_2)$$

կամ (5.2.4.9)

$$K_1 - K_2 < T_0 (C_2 - C_1):$$

Որոշ ձևափոխություններից հետո կստանանք՝

$$C_2 + E_0 K_2 > C_1 + E_0 K_1$$

կամ (5.2.4.10)

$$K_1 + T_0 C_1 < K_2 + T_0 C_2:$$

Անհավասարությունից պարզվում է, որ ավելի արդյունավետ տարբերակը 1-ինն է, որն ապահովում է նվազագույն ծախսեր:

Եթե ուսումնասիրվող ներդրումային տարբերակները բավականին շատ են, ապա օգտագործվում է ընդհանրացված տեսքով բանաձևեր.

$$C_i + E_0 K_i \to \min$$

կամ $(i = 1,2,\ldots,n)$ (5.2.4.11)

$$K_i + T_0 C_i \to \min:$$

Նշված հավասարումներն անվանվում են ***բերված տեսքի ծախսեր.*** դրանց միջոցով հնարավոր է գնահատել տարբեր ներդրողների ներդրումային ռիսկի աստիճանը և ընտրել ամենաարդյունավետը:

Բերված տեսքի ծախսերի իմաստն ավելի հստակ պատկերացնելու համար կազմենք պայմանական օրինակ: Այսպես, ենթադրենք, տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բարելավելու նպատակով առաջարկվում է նոր տեխնիկայի ներդրման 3 տարբերակ, որոնց ելակետային տվյալները տարվա կտրվածքով հետևյալներն են՝

| Տարբերակ 1 | Տարբերակ 2 | Տարբերակ 3 |
|---|---|---|
| $C_1 = 82,0$ մլն դր. | $C_2 = 90,0$ մլն դր. | $C_3 = 98,0$ մլն դր. |
| $K_1 = 520,0$ մլն դր. | $K_2 = 470,0$ մլն դր. | $K_3 = 380,0$ մլն դր. |

Բոլոր տարբերակների համար էլ $E_0 = 0,2$ (արդյունավետության նորմատիվային գործակիցը): Տեղադրելով համապատասխան տվյալները (5.2.4.11) բանաձևերից 1-ինի մեջ՝ կստանանք.

1-ին տարբերակ՝ $82,0 + 0,2 \cdot 520,0 = 186,0$ մլն դրամ,

2-րդ տարբերակ՝ $90,0 + 0,2 \cdot 470,0 = 184,0$ մլն դրամ,

3-րդ տարբերակ՝ $98,0 + 0,2 \cdot 380,0 = 174,0$ մլն դրամ:



Պարզվում է, որ ամենաարդյունավետ տարբերակը 3-րդն է, քանի որ ապահովում է նվազագույն բերված տեսքի ծախսեր՝ 174,0 մլն դրամ, և որ միայն այդ տարբերակով կարելի է դիմել ներդրումային ռիսկի:

## 5.2.5. Ռիսկի նվազեցման եղանակները և ուղիները

Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պարտավոր է իմանալ, թե ինչ ուղիներով կարող է նվազեցնել ռիսկի ազդեցության չափը: Ելնելով ռիսկի գնահատման կարևորությունից, օտարերկրյա տնտեսավարող խոշոր սուբյեկտներում է պահվում «Ռիսկի ղեկավար (մենեջեր)» հաստիքը. տվյալ մասնագետը պատասխանատվություն է կրում ռիսկի կարգավորման համար: Նա համապատասխան մասնագետների հետ պետք է կանխատեսի ռիսկի բացասական հետևանքների հնարավոր նվազեցումը նույնիսկ տնտեսավարող սուբյեկտի համար ամենաանբարենպաստ իրավիճակի դեպքում:

Ռիսկը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական վիճակի որոշման անբաժանելի տարրն է: Տնտեսավարող սուբյեկտը ձգտում է հասնել ռիսկի նվազեցմանը կամ դրական ելքի հավանականության բարձրացմանը: Գործում են կազմակերպական-պաշտպանիչ մի շարք մեխանիզմներ, որոնցից ամենահիմնականները համարվում են՝ տեղեկատվական ապահովումը, ռիսկի ապահովագրումը և որոշումների լավագույն տարբերակի ընդունումը:

Ռիսկի նվազեցման[1] եղանակներն են՝

1. ***Ինքնաապահովագրման մեթոդը***, ըստ որի կազմավորվում են պահուստային ֆինանսական միջոցներ, որոնց հաշվին փոխհատուցվում են չնախատեսված ծախսերը և պատճառված վնասները: Ֆինանսական այդ միջոցները որպես «Պահուստային կապիտալ» ցույց են տրվում նաև առանձին հոդվածով հաշվապահական հաշվեկշռի սեփական կապիտալում: Այստեղից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտը կարող է իջեցնել և նվազագույնի հասցնել պատճառված կորուստները (վնասները)՝ օգտագործելով ինքնաապահովագրման մեթոդը՝ պահուստային կապիտալի կազմավորման և վնասների հատուցման սեփական ընթացիկ ֆինանսական միջոցների հաշվին: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ինքնաապահովագրումը նպատակահարմար է կիրառել այն դեպքերում, երբ վնասների հավանականությունը բավականաչափ փոքր է, և երբ

[1] Сио К.К. Управленческая экономика (текст, задачи и краткие примеры). М., 2000, с. 120.

տնտեսավարող սուբյեկտը տնօրինում է մեծ քանակությամբ միատեսակ գույքի:

Ելնելով ինքնաապահովագրման մեթոդի կարևորությունից՝ շուկայական տնտեսության անցման փուլում Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեցին հիմնականում ոչ պետական ապահովագրական ընկերություններ՝ փակ և բաց կարգավիճակով (պետական ապահովագրական նախկին մարմինները կորցրին իրենց դերը): Այդ հարցը պետական մակարդակով կարգավորելու համար 1996թ. նոյեմբերի 19-ին Ազգային ժողովն ընդունեց «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, որով պարտավոր են ղեկավարվել նաև ֆիզիկական և իրավաբանական անձինք:

2. Արտերկրներում ռիսկի նվազեցման ամենատարածված եղանակներից է *խեղժերացումը* [նշանակում է կորստից (վնասից) պարսպվել կամ պաշտպանվել]: Խեղժերացումը ապահովագրման տարատեսակներից է, որը Հայաստանում դեռևս տարածում չի գտել: Պետք է նշել, որ խեղժերացումը ռիսկի ապահովագրումն է պայմանագրերով առևտրային գործառնությունների իրականացման ժամանակ, երբ տեղի են ունենում ապրանքի գնի փոփոխություններ:

Բոլոր տեսակի ռիսկերից իր կարևորությամբ առաջիններից մեկը ֆինանսական ռիսկն է, որի նվազեցման ուղիները բազմազան են՝ կապված հատկապես ներդրումների հետ: Այսպես, ֆինանսական ռիսկի աստիճանը նվազեցնելու համար ներդրողը պետք է ելնի հետևյալ սկզբունքներից՝

- չի կարելի ռիսկի գնալ փոքրածավալ գործի համար,
- ռիսկի դիմելիս պետք է հաշվի առնել սեփական (բաժնետիրական) կապիտալի և դրանից հատկացվող գումարի չափը,
- մինչև ներդրում կատարելը անհրաժեշտ է նախօրոք մտածել ֆինանսական ռիսկի հետևանքների մասին,
- պետք է ներդրումներ կատարել նախօրոք կազմված ծրագրերի, իսկ ծախսեր չկատարել առանց հիմնավորված գործարարության պլանի,
- անհրաժեշտ է իրականացնել ամենօրյա հաշվառում և հսկողություն՝ ներդրված միջոցների շարժի նկատմամբ,
- հետևել հարկային և հաստատագրված վճարումների ժամկետների պահպանմանը,
- ժամանակին կազմել և վերադաս համապատասխան մարմիններին ներկայացնել ֆինանսական հաշվետվությունները:

Թվարկվածներից երկրորդ սկզբունքը (կապված սեփական կապիտալի օգտագործման ռիսկի հետ) նշանակում է, որ նախքան կապիտալի ներդրումը ներդրողը պետք է որոշի, թե տվյալ ռիսկի գծով որքան կկազմի հնարավոր կամ սպասվելիք առավելագույն վնասի գումարը, այնուհետև այն համեմատի ներդրվող կապիտալի հետ, նաև հաշվարկի, թե արդյո՞ք ֆինանսական սնանկացման հետևանքով իր կապիտալը չի կորցնում: Դրա համար անհրաժեշտ է հաշվարկել ֆինանսական ռիսկի գործակիցը ($Գ_{ֆ.ռ.}$), որը ներկայացնում է ներդրվող կապիտալից վնասի հնարավոր առավելագույն գումարի ($Վ_{հ.ա.}$) և սեփական ֆինանսական միջոցների (ՍՖՄ) հարաբերակցությունը[1], և որն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ_{ֆ.ռ.} = \frac{Վ_{հ.ա.}}{ՍՖՄ} : \qquad (5.2.5)$$

Հաշվարկային փորձը ցույց է տալիս, որ եթե ֆինանսական ռիսկի գործակիցը կազմում է 0,7 և դրանից բարձր, ապա ներդրողը կարող է հայտնվել սնանկացման վիճակում: Իսկ եթե այդ գործակիցը ընկնում է 0,3 - 0,4 -ի սահմաններում, կնշանակի այն լավագույն տարբերակն է ներդրողի համար:

Ռիսկի գործակցի էությունն ավելի հստակ պատկերացնելու համար բերենք օրինակ՝ կապված կապիտալի ներդրման լավագույն (օպտիմալ) տարբերակի ընտրության հետ, և այն ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 5.2.5

**Ռիսկի գործակցի գծով կապիտալի ներդրման լավագույն տարբերակի ընտրությունը**

| Ցուցանիշների անվանումը | Կապիտալի ներդրման տարբերակ | |
|---|---|---|
| | առաջին | երկրորդ |
| 1. սեփական ֆինանսական միջոցները (հազ. դրամ) | 250.000 | 560.000 |
| 2. վնասի հնարավոր առավելագույն գումարը (հազ. դրամ) | 132.000 | 180.350 |
| 3. ռիսկի գործակիցը (տ 2 : տ 1) | 0,53 | 0,32 |

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ 2-րդ տարբերակի ժամանակ կապիտալի ներդրման ռիսկի մեծությունը 1,65 անգամ (0,53 : 0,32) ավելի փոքր է, քան 1-ին տարբերակի գծով է կամ 2-րդ տարբերակով կապիտալի ներդրման ռիսկի գործակիցն ընկած է 0,3 - 0,4 -ի սահմաններում:

3. Ռիսկի նվազեցման կարևոր ուղիներ են համարվում նաև *դիվերսիֆիկացիան* ՝ ֆինանսական շուկայի մասին լրիվ և ճիշտ տեղեկատվու-

[1] Финансовый менеджмент (теория и практика), с. 465.

թյունը, աշխատանքային և նյութական ծախսերի լիմիտի (առավելագույն չափի) սահմանումը, անշարժ ու շարժական գույքի ապահովագրությունը և այլն:

Ռիսկի նվազեցման ուղիներից դիվերսիֆիկացիան ունի մի քանի իմաստ, այդ թվում՝ արտադրության բարելավման առումով արտադրանքի տեսականու ընդլայնում, նոր տեխնոլոգիաների ներդրում արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով: Ներդրումային առումով դիվերսիֆիկացիան ներդրվող միջոցների բաշխումն է տարբեր սուբյեկտների միջև, որոնք անմիջականորեն կապված չեն միմյանց հետ: Դիվերսիֆիկացիան հնարավորություն է տալիս խուսափել ֆինանսական ռիսկից, երբ կապիտալը բաշխվում է գործունեության տարբեր ոլորտների միջև: Այսպես, օրինակ, հինգ տարբեր բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերումը մեկ ընկերության բաժնետոմսերի փոխարեն ավելացնում է կայուն և միջին եկամուտ ստանալու ներդրողի հավանականությունը հինգ անգամ և համապատասխանաբար նույնքան անգամ իջնում է ռիսկի աստիճանը:

Դիվերսիֆիկացիան միաժամանակ ներդրումային ռիսկի ցրում է, բայց դա դեռևս չի նշանակում, որ այդ ռիսկը կարելի է հասցնել զրոյական մակարդակի: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկչատիրական և ներդրումային գործունեության վրա ազդեցություն են գործում մի շարք արտաքին գործոններ, որոնք կապված չեն կապիտալի ներդրման կոնկրետ օբյեկտի հետ: Ասվածից հետևում է, որ դիվերսիֆիկացիան դրանց վրա չի ազդում:

Արտաքին գործոններին են վերաբերում այն գործընթացները, որոնք տեղի են ունենում տվյալ երկրի ողջ տնտեսության մեջ, այդ թվում՝ ռազմական գործողությունները, ժողովրդական զանգվածների հուզումները, արժեզրկումը և դեֆլյացիան (դրամանիշների քանակության կրճատումը), վարկերի և դեպոզիտների գծով տոկոսադրույքների փոփոխությունը և այլն:

Ռիսկի նվազեցման կարևոր ուղիներից է նաև ներդրում կատարողի համար ճիշտ տեղեկատվության ապահովումը: Երբեմն ներդրողն ընդունում է ֆինանսական այնպիսի որոշումներ, երբ չունի լիարժեք տեղեկատվություն այս կամ այն սուբյեկտի վերաբերյալ: Հետևաբար, եթե ներդրողն ունենա լրիվ և ճշգրիտ տեղեկատվություն, ապա նա կարող է կատարել լիարժեք կանխատեսում և իջեցնել ռիսկի աստիճանը: Իսկ այդ տեղեկատվության ապահովումը պետք է իրականացվի զովազդային ծառայության միջոցով: Այսինքն՝ կապիտալի ներդրումը տեղեկատվության մեջ դառնում է ձեռնարկչատիրական գործունեության կարևոր բնագա-



վառ, և ճիշտ, լրիվ ու ժամանակակից տեղեկատվություն ունենալը նվազեցնում է ներդրողի ֆինանսական ռիսկը: 1992-96թթ. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումային ռիսկը բավականին բարձր էր, քանի որ չկար բավարար տեղեկատվություն: 1997թ. սեպտեմբերի 30-ին Ազգային ժողովի ընդունած «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը խթանեց օտարերկրյա ներդրումները մեր հանրապետությունում, և արդեն 1998 թ. ապահովեց լիարժեք տեղեկատվություն Հայաստանի տնտեսության մասին: Դրանով իսկ ֆինանսական ռիսկի աստիճանը նվազեց, և աստիճանաբար ավելացավ ներդրողների թվաքանակը:

Ամփոփելով վերոշարադրյալը, ասենք, որ աշխատանքում կատարված ուսումնասիրությունները, վերլուծություններում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի հնարավորություն կտա կողմնորոշվել, թե ինքն երբ կհայտնվի սնանկացման վիճակում, դրանից խուսափելու ինչ միջոցներ կան և թե ռիսկային ինչպիսի աստիճանի վրա կարող է իրականացնել իր ներդրումային քաղաքականությունը:

# Հավելվածներ

Հավելված 1

## Հաշվապահական հաշվեկշիռ

Հազ. դրամ

| Ակտիվ | Տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 91649 | 116146 |
| Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ | 020 | 10752 | 15508 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 030 | 2923 | 1668 |
| Ոչ նյութական ակտիվներ (ներառյալ գուդվիլը) | 040 | 76 | 94 |
| Բացասական գուդվիլ | 050 | ( - ) | ( - ) |
| Ոչ ընթացիկ ներդրումներ՝ հաշվառված «բաժնեմասնակցության մեթոդով» | 060 | 1000 | 2000 |
| Ոչ ընթացիկ ներդրումներ կանոնադրական կապիտալում հաշվառված այլ մեթոդներով | 070 | - | - |
| Այլ ոչ ընթացիկ ներդրումներ | 080 | - | - |
| Ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումներ | 090 | - | - |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 100 | - | - |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 110 | - | - |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 120 | 106400 | 135416 |
| | | | |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 130 | 2873 | 238443 |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 140 | 3739 | 3247 |
| Արագամաշ առարկաներ | 150 | 1191 | 204 |
| Անավարտ արտադրություն | 160 | 16570 | 77065 |
| Արտադրանք | 170 | 2292 | 10799 |
| Ապրանքներ | 180 | - | - |
| Առևտրական դեբիտորական պարտքեր | 190 | 202299 | 20553 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 200 | 447 | 488 |
| Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով | 210 | 1149 | 113 |
| Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով | 220 | - | - |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 230 | - | - |
| Դրամական միջոցներ | 240 | 4838 | 3047 |
| Դրամական միջոցների համարժեքներ | 250 | - | - |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 260 | 163 | 2123 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 270 | 235561 | 356082 |
| | | | |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 280 | 341961 | 491498 |



Հավելված 1-ի շարունակությունը

| Պասիվ | Տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 290 | 155000 | 155000 |
| Լրացուցիչ կապիտալ | 300 | - | - |
| Վերագնահատումից տարբերություններ | 310 | - | - |
| Կուտակված շահույթ | 320 | 20130 | 86248 |
| Պահուստներ | 330 | 2648 | 13178 |
| Կանխավճարներ շահաբաժինների գծով | 340 | - | - |
| Ընդամենը սեփական կապիտալ | 350 | 177778 | 254426 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 360 | 34376 | 70551 |
| Երկարաժամկետ պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով | 370 | 10753 | 15498 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 380 | - | - |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 390 | - | - |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 400 | 45129 | 86049 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 410 | 16848 | 12276 |
| Երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս | 420 | 6468 | 12445 |
| Վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ | 430 | - | - |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 440 | 10115 | 10839 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 450 | - | 26000 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին | 460 | 64928 | 59935 |
| Հետաձգված ընթացիկ պարտավորություններ հարկերի գծով | 470 | - | - |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 480 | 901 | 1121 |
| Պարտավորություններ անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով | 490 | 3218 | 3282 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտք հիմնադիրներին (մասնակիցներին) | 500 | - | - |
| Նպատակային ֆինանսավորում և մուտքեր | 510 | - | - |
| Գալիք ժամանակաշրջանի ծախսերի և վճարումների պահուստ | 520 | - | - |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 530 | 16576 | 25125 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 540 | 119054 | 151023 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 550 | 341961 | 491498 |

Հավելված 2

## Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազ. դրամ

| Ցուցանիշների անվանումը | Տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան | Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան |
|---|---|---|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթ | 10 | 517481 | 794709 | | |
| Իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեք | 20 | (480486) | (642828) | ( ) | ( ) |
| Համախառն շահույթ (վնաս) | 30 | 36995 | 151881 | | |
| Իրացման (առևտրային)ծախսեր | 40 | ( - ) | (1911) | ( ) | ( ) |
| Վարչական և ընդհանուր այլ ծախսեր | 50 | (2489) | (13384) | ( ) | ( ) |
| Արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթ (վնաս) | 60 | 34506 | 136586 | | |
| Գործառնական այլ եկամուտներ | 70 | 1612 | 12840 | | |
| Գործառնական այլ ծախսեր | 80 | (9340) | (47536) | ( ) | ( ) |
| Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս) | 90 | 26778 | 101890 | | |
| Ֆինանսական ծախսեր | 100 | ( - ) | ( - ) | ( ) | ( ) |
| Կապակցված կազմակերպությունների շահույթը (վնասը)՝ ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս | 110 | - | - | | |
| Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս) | 120 | 12 | 17777 | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 130 | 26790 | 119667 | | |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 140 | - | - | | |
| Զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 150 | 26790 | 119667 | | |
| Շահութահարկի գծով ծախս | 160 | 7306 | 33272 | | |
| Զուտ շահույթ (վնաս) հարկումից հետո | 170 | 19484 | 86395 | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 180 | - | - | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 190 | - | - | | |



Հավելված 3

## Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն

### I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)

Հազ. դրամ

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը<br>Հոդվածները | Տող | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ | Չվճարված կապիտալ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի ....թ. | 10 | 75000 | - |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | 20 | X | X |
| Վերահաշվարկված մնացորդը | 30 | - | - |
| Կանոնադրական կապիտալի ձևավորում | 40 | - | X |
| Բաժնետոմսերի (բաժնեմասերի) թողարկում և թողարկված բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց վճարում | 50 | - | - |
| Բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետգնում | 60 | X | X |
| Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) վաճառք, մարում | 70 | ( - ) | X |
| Թողարկված, բայց չվճարված բաժնետոմսերի (բաժնեմասերի) մարում | 80 | ( - ) | ( - ) |
| Կանոնադրական կապիտալի ավելացում՝ սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին | 90 | - | X |
| Կանոնադրական կապիտալի նվազեցում՝ չծածկված վնասի ծածկման նպատակով | 100 | ( - ) | X |
| Վերագնահատումից աճ (նվազում) | 110 | X | X |
| Վերագնահատումից աճի վերագրումը չբաշխված շահույթին | 120 | X | X |
| Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների փոփոխություն | 130 | X | X |
| Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | 140 | X | X |
| Չբաշխված շահույթից հատկացումներ պահուստներին կամ չծածկված վնասի ծածկում պահուստների հաշվին | 150 | X | X |
| Շահաբաժինների գծով տրված կանխավճարներ | 160 | X | X |
| Շահաբաժինների հայտարարում և կանխավճարների մարում | 170 | X | X |
| Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում) | 180 | 80000 | - |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի ....թ. | 190 | 155000 | - |

Հավելված 3-ի շարունակությունը

I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)

Հազ. դրամ

| Տող | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հետ գնված կապիտալ | Զուտ գումարը | Լրացուցիչ կապիտալ (էմիսիոն եկամուտ) | Ակտիվների վերագնահատումից տարբերություններ | Չիրացված վնասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից | Կուտակված շահույթ (վնաս) | Պահուստներ | Կանխավճարներ շահաբաժինների գծով | Ընդամենը |
| | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 10 | - | - | - | - | - | 3405 | - | - | 78405 |
| 20 | X | X | X | X | X | - | X | X | - |
| 30 | - | - | - | - | - | - | - | - | - |
| 40 | X | - | - | X | X | X | X | X | - |
| 50 | X | - | - | X | X | X | X | X | - |
| 60 | - | ( - ) | X | X | X | X | X | X | ( - ) |
| 70 | ( - ) | - | - | X | X | X | X | X | - |
| 80 | X | X | X | X | X | X | X | X | X |
| 90 | X | - | ( - ) | X | X | ( - ) | ( - ) | X | X |
| 100 | X | ( - ) | X | X | X | - | X | X | X |
| 110 | X | X | X | - | X | X | X | X | - |
| 120 | X | X | X | ( - ) | X | - | X | X | X |
| 130 | X | X | X | X | - | X | X | X | - |
| 140 | X | X | X | X | X | 16836 | X | X | 16836 |
| 150 | X | X | X | X | X | - | - | X | X |
| 160 | X | X | X | X | X | X | X | - | - |
| 170 | X | X | X | X | X | ( - ) | ( - ) | ( - ) | - |
| 180 | - | - | - | X | X | 111 | 2648 | - | 82537 |
| 190 | - | - | - | - | - | 20130 | 2648 | - | 177778 |



Հավելված 3-ի շարունակությունը

II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան)

Հազ. դրամ

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը<br>Հոդվածները | Տող | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ | Չվճարված կապիտալ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի ....թ. | 10 | 155000 | - |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | 20 | X | X |
| Վերահաշվարկված մնացորդը | 30 | - | - |
| Կանոնադրական կապիտալի ձևավորում | 40 | - | X |
| Բաժնետոմսերի (բաժնեմասերի) թողարկում և թողարկված բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց վճարում | 50 | - | - |
| Բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետգնում | 60 | X | X |
| Հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) վաճառք, մարում | 70 | ( - ) | X |
| Թողարկված, բայց չվճարված բաժնետոմսերի (բաժնեմասերի) մարում | 80 | ( - ) | ( - ) |
| Կանոնադրական կապիտալի ավելացում՝ սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին | 90 | - | X |
| Կանոնադրական կապիտալի նվազեցում՝ չծածկված վնասի ծածկման նպատակով | 100 | ( - ) | X |
| Վերագնահատումից աճ (նվազում) | 110 | X | X |
| Վերագնահատումից աճի վերագրումը չբաշխված շահույթին | 120 | X | X |
| Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների փոփոխություն | 130 | X | X |
| Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | 140 | X | X |
| Չբաշխված շահույթից հատկացումներ պահուստներին կամ չծածկված վնասի ծածկում պահուստների հաշվին | 150 | X | X |
| Շահաբաժինների գծով տրված կանխավճարներ | 160 | X | X |
| Շահաբաժինների հայտարարում և կանխավճարների մարում | 170 | X | X |
| Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում) | 180 | - | - |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի ....թ. | 190 | - | - |

II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան)

Հազ. դրամ

| Տող | Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հետգնված կապիտալ | Ջուտ գումարը | Լրացուցիչ կապիտալ (էմիսիոն եկամուտ) | Ակտիվների վերագնահատումից տարբերություններ | Չիրացված վճասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից | Կուտակված շահույթ (վնաս) | Պահուստներ | Կանխավճարներ շահաբաժինների գծով | Ընդամենը |
| | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 10 | - | - | - | - | - | 20130 | 2648 | - | 177778 |
| 20 | X | X | X | X | X | - | X | X | - |
| 30 | - | - | - | - | - | - | - | - | - |
| 40 | X | - | - | X | X | X | X | X | - |
| 50 | X | - | - | X | X | X | X | X | - |
| 60 | - | ( - ) | X | X | X | X | X | X | ( - ) |
| 70 | ( - ) | - | - | X | X | X | X | X | - |
| 80 | X | X | X | X | X | X | X | X | X |
| 90 | X | - | ( - ) | X | X | ( - ) | ( - ) | X | X |
| 100 | X | ( - ) | X | X | X | - | X | X | X |
| 110 | X | X | X | - | X | X | X | X | - |
| 120 | X | X | X | ( - ) | X | | X | X | X |
| 130 | X | X | X | X | - | X | X | X | - |
| 140 | X | X | X | X | X | 75865 | X | X | 75865 |
| 150 | X | X | X | X | ✓ X | - | - | X | X |
| 160 | X | X | X | X | X | X | X | - | - |
| 170 | X | X | X | X | X | ( - ) | ( - ) | ( - ) | - |
| 180 | - | - | - | X | X | 9747 | 10530 | - | 783 |
| 190 | - | - | - | - | - | 86248 | 13178 | - | 254426 |





## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Գումար |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը (....թ.) | 10 | 166 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների դիմաց | 20 | 1022976 |
| Ընթացիկ այլ ակտիվների վաճառքի դիմաց | 30 | |
| Վարձավճարներից, ռոյալթիներից | 40 | - |
| Գործառնական այլ գործունեությունից | 50 | - |
| Արտասովոր դեպքերից | 60 | - |
| Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր | 70 | 1022976 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | |
| Նյութերի ձեռք բերման դիմաց | 80 | 441456 |
| Ապրանքների ձեռք բերման դիմաց | 90 | 98640 |
| Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց | 100 | - |
| Աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումներ | 110 | 6760 |
| Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով | 120 | 2970 |
| Վճարումներ բյուջե | 130 | 455954 |
| Գործառնական այլ գործունեության նպատակով | 140 | - |
| Արտասովոր դեպքերից | 150 | - |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր | 160 | 1005780 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 170 | 17196 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից | 180 | - |
| Այլ կազմակերպության սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների վաճառքից | 190 | - |
| Այլ կազմակերպության պարտքային արժեթղթերի վաճառքից | 200 | - |
| Այլ կազմակերպության պարտքային արժեթղթերի մարումից | 210 | - |
| Տրամադրված փոխատվությունների վերադարձումից | 220 | - |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | 230 | - |
| Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր | 240 | - |
| Արտասովոր դեպքերից | 250 | - |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր | 260 | - |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | |
| Հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ ոչ ընթացիկ ակտիվների համար | 270 | 11675 |
| Այլ կազմակերպության սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների ձեռք բերումից | 280 | - |
| Պարտքային արժեթղթերի ձեռք բերման համար | 290 | - |
| Փոխատվությունների տրամադրումից | 300 | - |
| Ներդրումային այլ գործունեության նպատակով | 310 | - |

Հավելված 4-ի շարունակությունը

| Տող | Նախորդ ժամանակաշրջան | | | | | Հաշվետու ժամանակաշրջան | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Այդ թվում | | | | | Գումար | Այդ թվում | | | | |
| | դրամարկղ | | բանկ. հաշիվը | | Դրամ. միջոց. համարժեք | | դրամարկղ | | բանկ. հաշիվը | | Դրամ. միջոց. համարժեք |
| | դրամ | արտարժույթ | դրամ | արտարժույթ | | | դրամ | արտարժույթ | դրամ | արտարժույթ | |
| 2 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 10 | 162 | · | 4 | – | – | 4838 | 29 | – | 4809 | – | – |
| 20 | 1022899 | – | 77 | – | – | 2693766 | 2588965 | – | 55483 | 49318 | – |
| 30 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 40 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 50 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 60 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 70 | 1022899 | – | 77 | – | – | 2693766 | 2588965 | – | 55483 | 49318 | – |
| 80 | 424456 | – | 17000 | – | – | 1665614 | 1550708 | – | 114906 | – | – |
| 90 | 98640 | – | – | – | – | 77200 | 77200 | – | – | – | – |
| 100 | – | – | – | – | – | 1072 | – | – | – | 1072 | – |
| 110 | 6760 | – | – | – | – | 21135 | 17756 | – | 3379 | – | – |
| 120 | 1959 | – | 1011 | – | – | 5775 | 256 | – | 5519 | – | – |
| 130 | 81574 | – | 374380 | – | – | 955064 | 270065 | – | 684999 | – | – |
| 140 | – | – | – | – | – | 894 | – | – | 894 | – | – |
| 150 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 160 | 613389 | – | 392391 | – | – | 2726754 | 1215985 | – | 809697 | 1072 | – |
| 170 | 409510 | – | 392314 | – | – | 32988 | 672980 | – | 754214 | 48246 | – |
| 180 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 190 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 200 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 210 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 220 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 230 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 240 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 250 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 260 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 270 | 11675 | – | – | – | | 33580 | 33580 | – | – | – | |
| 280 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 290 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 300 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 310 | – | – | – | – | – | – | – | – | – | – | – |



Հավելված 4-ի շարունակությունը

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Գումար |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Արտասովոր դեպքերից | 320 | · |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր | 330 | 12536 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 340 | 12536 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | |
| Սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների թողարկումից և վերավաճառքից | 350 | – |
| Ստացված վարկերից և փոխառություններից | 360 | – |
| Պարտքային արժեթղթերի թողարկումից | 370 | – |
| Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր | 380 | 75 |
| Արտասովոր դեպքերից | 390 | – |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր | 400 | 75 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | |
| Սեփական կապիտալի միջոցների հետ գնումից | 410 | – |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից | 420 | – |
| Պարտքային արժեթղթերի մարումից | 430 | – |
| Վճարված շահաբաժիններ | 440 | – |
| Վճարված տոկոսներ | 450 | – |
| Ֆինանսական այլ գործունեության նպատակով | 460 | 63 |
| Արտասովոր դեպքերից | 470 | – |
| Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր | 480 | 63 |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 490 | 12 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեություններից | 500 | 4672 |
| Արտարժույթի փոխարժեքային դրական տարբերություն* | 510 | – |
| Արտարժույթի փոխարժեքային բացասական տարբերություն* | 520 | – |
| Արտարժույթի փոխարժեքային զուտ տարբերություն | 530 | – |
| Դրամական միջոցների համարժեքների ձեռք բերումը դրամական միջոցներով* | 540 | X |
| Դրամական միջոցների համարժեքների մարումը դրամական միջոցներով* | 550 | X |
| Մուտքագրվել է դրամարկղ բանկից* | 560 | X |
| Հանձնվել է բանկ դրամարկղից* | 570 | X |
| Մուտքագրվել է ոչ կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից* | 580 | X |
| Մուտքագրվել է կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից* | 590 | X |
| Ելքագրվել է ոչ կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից* | 600 | X |
| Ելքագրվել է կանխիկ դրամ արտարժույթի փոխանակումից* | 610 | X |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ | 620 | 4838 |

*Սույն տողերում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր:

Հավելված 4-ի շարունակությունը

| Տող | Նախորդ ժամանակաշրջան | | | | | Գումար | Հաշվետու ժամանակաշրջան | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Այդ թվում | | | | | | Այդ թվում | | | | | |
| | դրամարկղ | | բանկ. հաշիվը | | Դրամ. միջոց. համարժեք | | դրամարկղ | | բանկ. հաշիվը | | Դրամ. միջոց. համարժեք | |
| | դրամ | արտարժույթ | դրամ | արտարժույթ | | | դրամ | արտարժույթ | դրամ | արտարժույթ | | |
| 2 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | |
| 320 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 330 | 12536 | - | - | - | - | 33580 | 33580 | - | - | - | - | |
| 340 | 12536 | - | - | - | - | 33580 | 33580 | - | - | - | - | |
| 350 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 360 | - | - | - | - | - | 188350 | - | - | 188350 | - | - | |
| 370 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 380 | - | - | 75 | - | - | 255 | - | - | 61 | 194 | - | |
| 390 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 400 | - | - | 75 | - | - | 188605 | - | - | 188411 | 194 | - | |
| 410 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 420 | - | - | - | - | - | 109895 | - | - | - | 109895 | - | |
| 430 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 440 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 450 | - | - | - | - | - | 13547 | - | - | - | 13547 | - | |
| 460 | - | - | 63 | - | - | 457 | 12 | - | 360 | 85 | - | |
| 470 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | |
| 480 | - | - | 63 | - | - | 123899 | 12 | - | 360 | 123527 | - | |
| 490 | - | - | 12 | - | - | 64706 | 12 | - | 188051 | 123333 | - | |
| 500 | 396974 | - | 392302 | - | - | 1862 | 639388 | - | 566163 | 75087 | - | |
| 510 | X | - | X | - | - | 72 | X | - | X | 72 | - | |
| 520 | X | - | X | - | - | 1 | X | - | X | 1 | - | |
| 530 | X | - | X | - | - | - | X | - | X | - | - | |
| 540 | ( - ) | ( - ) | ( - ) | ( - ) | - | X | ( - ) | ( - ) | ( - ) | ( - ) | - | |
| 550 | - | - | - | - | ( - ) | X | - | - | - | - | ( - ) | |
| 560 | - | - | ( - ) | ( - ) | X | X | 82950 | - | -82950 | ( - ) | X | |
| 570 | -397107 | ( - ) | 397107 | - | X | X | -678769 | ( - ) | 678769 | 43401 | X | |
| 580 | X | ( - ) | - | ( - ) | X | X | X | ( - ) | 14173 | -14173 | X | |
| 590 | - | ( - ) | X | ( - ) | X | X | - | ( - ) | X | ( - ) | X | |
| 600 | X | - | ( - ) | - | X | X | X | - | -48581 | 48581 | X | |
| 610 | ( - ) | - | X | - | X | X | -43401 | - | X | - | X | |
| 620 | 29 | - | 4809 | - | - | 3047 | 197 | - | - | - | - | |



Հավելված 5

Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ

Հազ. դրամ

| Հիմնական միջոցներ<br>Դասի անվանումը | Տող | Տարեսկզբի դրությամբ մնացորդը | Ներդրումներ | Նվիրատվությամբ ստացված | Վերագնահատման հետևանքով աճ | Վերագնահատման հետևանքով նվազում | Օտարված | Ամortիզացիոն հաշվեգրումներ | Ամortիզացիայի հետևանքով նվազում | Տարեվերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | | | | | | | |
| Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ | | | | | | | | | | |
| *Շենքեր* | | | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 010 | X | 31604 | 16477 | - | 1719 | - | - | - | 46362 |
| - արժեք | 011 | - | 32731 | 16477 | - | - | - | - | - | 49208 |
| - կուտակված ճշտվածություն | 012 | X | 1127 | 1719 | - | - | - | - | - | 2846 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 013 | X | - | - | X | - | X | - | - | - |
| *Կառուցվածքներ* | | | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 020 | X | - | - | - | - | - | - | - | - |
| - արժեք | 021 | - | - | - | - | - | - | - | - | - |
| - կուտակված ճշտվածություն | 022 | X | - | - | - | - | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 023 | X | - | - | X | - | X | - | X | - |
| *Փոխանցող հարմարանքներ* | | | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 030 | X | 400 | 3305 | - | 713 | - | - | - | 2992 |
| - արժեք | 031 | - | 1000 | 3305 | - | - | - | - | - | 4305 |
| - կուտակված ճշտվածություն | 032 | X | 600 | 713 | - | - | - | - | - | 1313 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 033 | X | - | - | X | - | X | - | X | - |
| *Մեքենաներ և սարքավորումներ* | | | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 040 | X | 48218 | 10676 | - | 6010 | - | - | - | 52884 |
| - արժեք | 041 | - | 60257 | 10676 | - | - | - | - | - | 70933 |
| - կուտակված ճշտվածություն | 042 | X | 12039 | 6010 | - | - | - | - | - | 18049 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 043 | X | - | - | X | - | X | - | X | - |

Հավելված 5-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Տրանսպորտային միջոցներ* | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 050 | X | 3993 | 3633 | - | 905 | - | 6721 |
| - արժեք | 051 | - | 4213 | 3633 | - | - | - | 7846 |
| - կուտակված մաշվածություն | 052 | X | 220 | 905 | - | - | - | 1125 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 053 | X | - | - | X | - | X | - |
| *Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ* | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 060 | X | 430 | 744 | - | 110 | - | 1064 |
| - արժեք | 061 | - | 458 | 744 | - | - | - | 1202 |
| - կուտակված մաշվածություն | 062 | X | 28 | 110 | - | - | - | 138 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 063 | X | - | - | X | - | X | - |
| *Բազմամյա տնկարկներ* | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 070 | X | - | - | - | - | - | - |
| - արժեք | 071 | - | - | - | - | - | - | - |
| - կուտակված մաշվածություն | 072 | X | - | - | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 073 | X | - | - | X | - | X | - |
| *Բանող և մթերատու անասուններ* | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 080 | X | - | - | - | - | - | - |
| - արժեք | 081 | - | - | - | - | - | - | - |
| - կուտակված մաշվածություն | 082 | X | - | - | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 083 | X | - | - | X | - | X | - |
| *Այլ հիմնական միջոցներ* | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 090 | X | - | - | - | - | - | - |
| - արժեք | 091 | - | - | - | - | - | - | - |
| - կուտակված մաշվածություն | 092 | X | - | - | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 093 | X | - | - | X | - | X | - |
| Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 100 | X | 84645 | 34835 | - | 9457 | - | 110023 |
| - արժեք | 101 | - | 98659 | 34835 | - | - | - | 133494 |



Հավելված 5-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| - կուտակված մաշվածություն | 102 | X | 14014 | 9457 | - | - | - | 23471 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 103 | X | - | - | X | - | X | - |
| Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ | | | | | | | | |
| *Շահագործման չհանձնված հիմնական միջոցներ* | 110 | X | - | - | - | - | - | - |
| *Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ* | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 120 | X | 7004 | - | - | 881 | - | 6123 |
| - արժեք | 121 | - | 8000 | - | - | - | - | 8000 |
| - կուտակված մաշվածություն | 122 | X | 996 | 881 | - | - | - | 1877 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 123 | X | - | - | X | - | X | - |
| *Շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներ* | 130 | X | - | - | - | - | - | - |
| Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 140 | X | 7004 | - | - | 881 | - | 6123 |
| - արժեք | 141 | - | 8000 | - | - | - | - | 8000 |
| - կուտակված մաշվածություն | 142 | X | 996 | 881 | - | - | - | 1877 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 143 | X | - | - | X | - | X | - |
| Հողամասեր | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 150 | X | - | - | - | - | - | - |
| - արժեք | 151 | - | - | - | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 152 | X | - | - | X | - | X | - |
| Ընդամենը հիմնական միջոցներ | | | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 160 | X | 91649 | 34835 | - | 10338 | - | 116146 |
| - արժեք | 161 | - | 106659 | 34835 | - | - | - | 141494 |
| - կուտակված մաշվածություն | 162 | X | 15010 | 10338 | - | - | - | 25348 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 163 | X | - | - | X | - | X | - |

Հավելված 6

## Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

Հազ. դրամ

| Դասի անվանումը | Տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| *Շենքեր* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 170 | - | - |
| - արժեք | 171 | - | - |
| - կուտակված մաշվածություն | 172 | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 173 | - | - |
| *Սեքենաներ և սարքավորումներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 180 | 8558 | 11677 |
| - արժեք | 181 | 12066 | 19772 |
| - կուտակված մաշվածություն | 182 | 3508 | 8095 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 183 | - | - |
| *Տրանսպորտային միջոցներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 190 | 2194 | 3831 |
| - արժեք | 191 | 5818 | 10246 |
| - կուտակված մաշվածություն | 192 | 3624 | 6415 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 193 | - | - |
| *Այլ հիմնական միջոցներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 200 | - | - |
| - արժեք | 201 | - | - |
| - կուտակված մաշվածություն | 202 | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 203 | - | - |
| *Ընդամենը ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ* | | | |
| - հաշվեկշռային արժեք | 210 | 10752 | 15508 |
| - արժեք | 211 | 17884 | 30018 |
| - կուտակված մաշվածություն | 212 | 7132 | 14510 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 213 | - | - |



Հավելված 7

## Անշարժ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

Հազ. դրամ

| Դասի անվանումը | Տող | Նախորդ տարվա մնացորդը | Ավելացում | Նվազեցում | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ | 220 | 80 | 19782 | 19782 | 80 |
| Տեղակայման ենթակա սարքավորումներ | 230 | 2843 | – | 1255 | 1588 |
| Ձեռնարկատիրական ճախարմներ | 240 | – | – | – | – |
| Ընդամենը անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 250 | 2923 | 19782 | 21037 | 1668 |

Հավելված 8

## Գույքիվ

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Անորոշ-ժամանակ կաշրջանը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | | Նվազեցում | | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում | | ընդամենը | այդ թվում | | |
| | | | | | ձեռքբերված լրացուցիչ գույքիվ | արտոնագրերի և թույլտվությունների ձեռքբերումից | | ապրանքային գույքիվ | արտոնագրերի և թույլտվությունների արժեքի ծգտումից | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Հաշվեկշռային արժեք | 260 | X | – | – | – | – | – | – | – | – |
| Արժեք | 261 | . | – | – | – | – | – | – | – | – |
| Կուտակված ամորտիզացիա | 262 | X | – | – | – | – | – | – | – | – |
| Արժեզրկումից կուտակված կորուստներ | 263 | X | – | – | – | – | – | – | – | – |

Հավելված 9

## Բացասական գուդվիլ

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Ամորտիզացիայի (եկամուտ ճանաչելու) ժամանակաշրջանը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | | Նվազեցում | | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը | այդ թվում | | ընդամենը | այդ թվում | | |
| | | | | | ճանաչված լրացուցիչ բացասական գուդվիլ | ակտիվների և պարտավորությունների արժեքի ճշգրտումից աճ | | ապաճանաչված բացասական գուդվիլ | ակտիվների և պարտավորությունների արժեքի ճշգրտումից նվազում | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Հաշվեկշռային արժեք | 270 | X | – | – | – | – | – | – | – | – |
| Արժեք | 271 | X | – | – | – | – | – | – | – | – |
| Ամորտիզացված (եկամուտ ճանաչված) բացասական գուդվիլ | 272 | X | – | – | – | – | – | – | – | – |



Հավելված 10

## Ակտիվ ճանաչված զարգացման ծախսումներ

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Ամորտիզացիայի դրույքը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | | Նվազեցում | | | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ակտիվ ճանաչված | վերականգնված | որպես ծախս ճանաչված | ներառված այլ ակտիվների հաշվեկշռային արժեքում | օտարված և դուրս գրված | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| Հաշվեկշռային արժեք | 280 | X | – | – | – | – | – | – | – |
| Արժեք | 281 | X | – | – | – | X | X | – | – |
| Կուտակված ամորտիզացիա | 282 | X | – | X | – | – | – | – | – |
| Արժեզրկումից կուտակված կորուստներ | 283 | X | – | X | – | – | X | – | – |

Հավելված 11

## Այլ ոչ նյութական ակտիվներ

Հազ. դրամ

| Դասի անվանումը | Տող | Ամորտիզացիայի դրույքը | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Ավելացում | Նվազեցում | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| *Կազմակերպչական ծախսեր* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 290 | X | - | - | - | - |
| - արժեք | 291 | - | - | - | - | - |
| - կուտակված ամորտիզացիա | 292 | X | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 293 | X | - | - | - | - |
| *Լիցենզիաներ* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 300 | X | 76 | 18 | - | 94 |
| - արժեք | 301 | - | 91 | 49 | - | 140 |
| - կուտակված ամորտիզացիա | 302 | X | 15 | 31 | - | 46 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 303 | X | - | - | - | - |
| *Արտոնագրեր* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 310 | X | - | - | - | - |
| - արժեք | 311 | - | - | - | - | - |
| - կուտակված ամորտիզացիա | 312 | X | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 313 | X | - | - | - | - |
| *Ապրանքային նշաններ* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 320 | X | - | - | - | - |
| - արժեք | 321 | - | - | - | - | - |
| - կուտակված ամորտիզացիա | 322 | X | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 323 | X | - | - | - | - |



Հավելված 11-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| *Ծրագրային ապահովում* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 330 | X | - | - | - | - |
| - արժեք | 331 | - | | - | - | - |
| - կուտակված ամորտիզացիա | 332 | X | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 333 | X | - | - | - | - |
| *Հողի և բնական ռեսուրսների օգտագործման իրավունք* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 340 | X | - | - | - | - |
| - արժեք | 341 | - | - | - | - | - |
| - կուտակված ամորտիզացիա | 342 | X | - | - | - | - |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 343 | X | - | - | - | - |
| *Այլ ոչ նյութական ակտիվներ* | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 350 | X | 76 | 18 | - | 94 |
| - արժեք | 351 | - | 91 | 49 | - | 140 |
| - կուտակված ամորտիզացիա | 352 | X | 15 | 31 | - | 46 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 353 | X | - | - | - | - |
| Ընդամենը | | | | | | |
| - հաշվեկշռային արժեք | 360 | X | 76 | 18 | - | 94 |
| - արժեք | 361 | - | 91 | 49 | - | 140 |
| - կուտակված ամորտիզացիա | 362 | X | 15 | 31 | - | 46 |
| - արժեզրկումից կուտակված կորուստներ | 363 | X | - | - | - | - |

Հավելված 12

## Ոչ ընթացիկ ներդրումներ՝ հաշվառված «բաժնեմասնակցության մեթոդով»

Հազ. դրամ

| Ներդրման տեսակը | Տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Ոչ ընթացիկ ներդրումներ դուստր ընկերություններում | 370 | 1000 | 1000 |
| Ոչ ընթացիկ ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 380 | - | - |
| Ոչ ընթացիկ ներդրումներ համատեղ ձեռնարկումներում | 390 | - | 1000 |
| Ընդամենը | 400 | 1000 | 2000 |

Հավելված 13

## Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | 410 | 25198 | 48322 |
| Երկարաժամկետ փոխառություններ | 420 | 9178 | 12229 |
| Երկարաժամկետ պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով - հաշվեկշռային արժեք | 430 | 10753 | 15498 |
| - համախառն գումար | 431 | - | - |
| - չկրած տոկոսային ծախսեր | 432 | - | - |



Հավելված 14

## Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 440 | 16848 | 12276 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 450 | - | - |
| Երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մաս | 460 | 6468 | 12445 |
| Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մաս | 470 | - | - |
| Ընդամենը | 480 | 23316 | 24721 |

Հավելված 15

## Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին

Հազ. դրամ

| Հարկատեսակի անվանումը | Տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Շահութահարկ | 490 | 5767 | 25452 |
| Եկամտահարկ | 500 | 34 | 145 |
| Ավելացված արժեքի հարկ | 510 | 19053 | 31868 |
| Ակցիզային հարկ | 520 | 40005 | 2470 |
| Գույքահարկ | 530 | 61 | - |
| Հողի հարկ | 540 | 1 | - |
| Մաքսատուրք | 550 | - | - |
| Հաստատագրված վճարներ | 560 | - | - |
| Այլ պարտադիր վճարներ | 570 | - | - |
| Տույժեր | 580 | 7 | - |
| Տուգանքներ | 590 | - | - |
| Ընդամենը | 600 | 64928 | 59995 |

Հավելված 16

## Գործառնական այլ գործունեությունից եկամուտ և ծախս

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Ընթացիկ այլ ակտիվների (շարունակվող գործունեության) վաճառքից (օտարումից) | 760 | – | – | – | – | – | – |
| Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից | 770 | 33 | – | 33 | 1680 | – | 1680 |
| Տույժերից, տուգանքներից | 780 | – | (4967) | (4967) | – | (46160) | (46160) |
| Դուրս գրված դեբիտորական պարտքերից և դրանց մարումից | 790 | – | (4373) | (4373) | 1325 | (1125) | 170 |
| Դուրս գրված կրեդիտորական պարտքերից և դրանց մարումից | 800 | 1579 | – | 1579 | 67 | (221) | (154) |
| Արժեքների պակասորդներից, փչացումից, կորուստներից և դրանց փոխհատուցումից | 810 | – | – | – | – | – | – |
| Պաշարների արժեքի փոփոխությունից | 820 | – | – | – | – | – | – |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումների վերագնահատումից | 830 | – | – | – | – | – | – |
| Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումից և արժեզրկման վերականգնումից | 840 | – | – | – | – | – | – |
| Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից | 850 | – | – | – | – | – | – |
| Հետազոտության և զարգացման ծախսերից | 860 | X | – | – | X | – | – |
| Արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսերից | 870 | X | – | – | X | – | – |
| Խոտանված արտադրանքի հետ կապված ծախսերից | 880 | X | – | – | X | – | – |



Հավելված 16-ի շարունակությունը

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դատական ծախսերից | 890 | X | – | – | X | – | – |
| Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսերից | 900 | X | – | – | X | – | – |
| Հիմնական միջոցների լուծարման ծախսերից | 910 | – | – | – | – | – | – |
| Այլ եկամուտներից և ծախսերից | 920 | – | – | – | 9768 | – | 9768 |
| Ընդամենը | 930 | 1612 | (9340) | (7728) | 12840 | (47536) | (34696) |

Հավելված 17

## Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ և ծախս

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Հիմնական միջոցների վաճառքից (օտարումից) | 940 | – | – | – | – | – | – |
| Ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումների վաճառքից (օտարումից) | 950 | – | – | – | – | – | – |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումների վաճառքից (օտարումից) | 960 | – | – | – | 13547 | 57 | 13490 |
| Ոչ ընթացիկ այլ ակտիվների վաճառքից (օտարումից) | 970 | – | – | – | – | – | – |
| Գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից (օտարումից) | 980 | – | – | – | – | – | – |
| Փոխարժեքային տարբերություններից | 990 | 12 | – | 12 | 7148 | 2861 | 4287 |
| Շնորհի և անհատույց ստացված ակտիվներից | 1000 | – | X | – | – | X | – |
| Ֆինանսական ներդրումներից | 1010 | – | X | – | – | X | – |
| Ֆինանսական վարձակալությունից | 1020 | – | X | – | – | X | – |
| Ոչ գործառնական այլ գործունեությունից | 1030 | – | – | – | – | – | – |
| Ընդամենը | 1040 | 12 | – | 12 | 20695 | 2918 | 17777 |

Հավելված 18

## Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | 1050 | | | | | | |
| | 1060 | | | | | | |
| | 1070 | | | | | | |
| Ընդամենը | 1080 | | | | | | |

Հավելված 19

## Էական սխալից արդյունք

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Չև N2-ի տողի համարը | Նախորդ տարի | | | Հաշվետու տարի (ժամանակաշրջան) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | եկամուտ | ծախս | արդյունք | եկամուտ | ծախս | արդյունք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 1090 | | | | | | | |
| | 1100 | | | | | | | |
| | 1110 | | | | | | | |
| | 1120 | | | | | | | |
| Ընդամենը | 1130 | | | | | | | |



Հավելված 20

## Կուսակցությունների հաշվեկշռային համակարգ

Հազ. դրամ

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարվա վերջի մնացորդը | Հաշվետու տարվա վերջի մնացորդը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Գործառնական վարձակալության ընդունված հիմնական միջոցներ | 610 | - | - |
| Պատասխանատու պահպանության ընդունված տրանսպորտային միջոցներ | 620 | - | - |
| Վերլուծության ընդունված նյութեր | 630 | - | - |
| Տեղեկատվության ընդունված ապրանքներ | 640 | - | - |
| Հաշվեգրվող (կոմիսիոնի) և հաշվեգրված (կոմիսիոնի) ընդունված ապրանքներ | 650 | - | - |
| Հաշվեգրվող կոմիսիոնի ընդունված միջոցներ | 660 | - | - |
| Հաշվեգրվող կոմիսիոնի (կոմիսիոնի) և հաշվեգրված կոմիսիոնի ընդունված միջոցներ | 670 | - | - |
| Դուրս գրված դեբիտորական պարտքեր | 680 | 5248 | 4083 |
| Պարտավորություններ և ստացվելիք վճարում-ների ակտիվներ | 690 | 1895 | 1741 |
| Ստացված վարձավճարներ և վճարում-ների ակտիվներ | 700 | - | - |
| Չիամորգված հաղորդիչ գումար | 710 | - | - |
| Ինքնուրույն ստորաբաժանումներ | 720 | - | - |
| Պահեստամասեր և ընթացիկ վերանորոգում | 730 | - | - |
| Շահութահարկի ընթացիկ հաշվեգրում | 740 | - | - |
| Հաշվեգրված ծախսեր - ապագա ժամանակաշրջանների համար | 750 | - | - |

**ԱԿՏԻՎԱՅԻՆ ՀԱՇԻՎ** - հաշվապահական հաշվի մի տեսակ է, որի դեբետում գրանցվում են տնտեսական միջոցների հաշվետու ժամանակաշրջանի սկզբի մնացորդը, դրանց ավելացումները և այդ ժամանակաշրջանի վերջի մնացորդը, իսկ կրեդիտում՝ տնտեսական միջոցների նվազումները: Այս հաշվի դեպքում վերջնական մնացորդը հավասար է սկզբնական մնացորդին գումարած ավելացումները՝ հանած կրեդիտում գրանցված նվազումները:

**ԱԿՏԻՎ ՃԱՆԱՉՎԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ** - որոշակի չափանիշների (արտադրանքի տեսակը կամ տեխնոլոգիան հստակորեն որոշված է, դրանց տեխնիկական իրագործելիությունը հիմնավորված է, այդ արտադրանքը կամ տեխնոլոգիան արտադրվելու, վաճառվելու և օգտագործվելու է և այլ չափանիշներ) բավարարող ծախսումներն են, որոնք ցույց են տալիս ապագայում կատարվող այդ ծախսումների արդյունքում տնտեսական օգուտների բերման հավանական լինելը:

**ԱԿՏԻՎԱ-ՊԱՍԻՎԱՅԻՆ ՀԱՇԻՎ** - հաշվապահական հաշվի մի տեսակ է, որում գրանցումները միաժամանակ կատարվում են և դեբետում, և կրեդիտում:

**ԱԿՏԻՎՆԵՐ** - տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող տնտեսական միջոցներ են, որոնք հանդես են գալիս իրենց բովանդակությամբ ոչ ընթացիկ ակտիվների և ընթացիկ ակտիվների տեսքով: Ակտիվներն իրենց արժեքային առումով արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի ձախ կողմում (ակտիվային մաս):

**ԱԿՐԵԴԻՏԻՎ** - անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման ձև է: Այն բացվում է գնորդի կամ պատվիրատուի հանձնարարությամբ այն բանկում, որն սպասարկում է ապրանք վաճառողին (մատակարարին), ծառայություն մատուցողին և այլն: Ակրեդիտիվի բացումը հնարավորություն է տալիս ակրեդիտիվային հանձնարարականում նշված պայմաններով ստանալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար վճար՝ պարտավորությունն անմիջապես կատարելուց հետո:

**ԱԿՑԵՊՏ (ՀՈԺԱՐԱԳԻՐ)** - անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման ձև է, երբ պայմանագիր կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս որևիցե գործարք կամ ծառայությունների մատուցում կատարելու առումով:

**ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ** - պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է, որը վճարում են (ծկան խավիար, գարեջուր, սպիրտ և սպիրտային խմիչքներ, բնական կաշվից հագուստ, բնական մորթի և դրանից պատրաստված իրեր, բյուրեղապակյա և ճենապակյա արտադրանք և այլն, ակցիզային հարկով հարկվող արտադրատեսակներից) Հայաստանի Հանրապետություն ներմուծող ֆիզիկական, իրավաբանական անձինք ու իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ինչպես նաև Հայաստանի տարածքում դրանց արտադրության ու շրջանառության բոլոր փուլերում: Ակցիզային հարկը վճարվում է հարկման ենթակա ապրանքների իրացման հասույթից համապատասխան տոկոսադրույքաչափերով կամ հաստատագրված վճարներով, որոնք սահմանվում են ապրանքի գնի նկատմամբ:

**ԱՆԱԼԻՏԻԿ ՀԱՇԻՎ** - այն հաշիվն է, որում տնտեսական միջոցները (ակտիվ), դրանց կազմավորման աղբյուրները (պասիվ) և տնտեսական գործառնությունները գրանցվում են ավելի մանրամասն, ըստ առանձին տարատեսակների՝ գումարային արտահայտությամբ:

**ԱՆԿԱԽ ԲՐՈՔԵՐ** - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված անհատ ձեռներեց, որն իրականացնում է բրոքերային կամ դիլերային գործունեություն:

**ԱՆԿԱԽ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲՐՈՔԵՐ** - անհատ ձեռներեց, որն իր անունից այլ անձանց հաշվին, այլ անձանց անունից իր հաշվին, կամ այլ անձանց անունից և վերջիններիս հաշվին իրականացնում է արժեթղթերի առուծախ:

**ԱՆԿԱԽ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԴԻԼԵՐ** - անհատ ձեռներեց, որն իր անունից և իր հաշվին իրականացնում է արժեթղթերի առուծախ:

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ** - ֆիզիկական անձը, որն իր անունից, որպես զբաղմունք, կանոնավոր իրականացնում է տնտեսական գործունեություն, մատուցում է ծառայություններ և կատարում աշխատանքներ: Նա պետական լիազորված մարմիններից ստանում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վկայական, որն էլ նրա գրանցման փաստաթուղթն է:

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ** - հողի, ամրակայված գույքի և հողի ու ամրակայված գույքի նկատմամբ իրավազորությունների ամբողջությունն է:

**ԱՆՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐ** - դրանք իրենց բնույթով կապված են ամբողջ արտադրության գործընթացի հետ և անմիջականորեն չեն կարող վերագրվել արտադրվող արդյունքի այս կամ այն տեսակին: Այդ ծախսերից են՝ վարչական աշխատողների, արտադրամասի պետի, բրիգադավարի աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, լուսավորության, ջեռուցման հետ կապված ծախսերը և այլն:

**ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ** - դա օրենսդրության ակտերով սահմանված դեպքերում և կարգով պետական տնտեսավարող սուբյեկտների ու անա-

վարտ շինարարության օբյեկտների տրամադրումն է քաղաքացիներին, նրանց խմբերին, օտարերկյա անձանց՝ լիազորային կառավարման, վարձակալության, ոչ պետական տնտեսավարող սուբյեկտներ կամ պետական մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտներ ստեղծելու համար, առանց պետական սեփականության իրավունքի օտարման:

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ** - իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկություն է, որն առևտուրն իրականացնում է իր սահմանած կանոններով, որոշակի տեղում և ժամանակահատվածում՝ հրապարակային սակարկությունների ձևով:

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՎԱՐԿ** - ըստ դրա պայմանավորվող կողմերը կարող են կնքել պայմանագիր, որը նախատեսում է մի կողմի պարտականությունը մյուս կողմին տրամադրելու տեսականուն համապատասխան որոշվող գույքը՝ ըստ սահմանված քանակի և որակի:

**ԱՊՐԱՆՔՆԵՐ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ** - տվյալ կազմակերպության կողմից վաճառքի համար թողարկված արտադրանք է, վերավաճառքի համար գնված ապրանքներ, ինչպես նաև չօգտագործված և վաճառքի համար պահվող հիմնական միջոցներ և այլ ակտիվներ:

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿ** - պայմանագրային հիմունքներով իրականացվող գործառնություն, որի կատարումը կապված է դրամական (արտարժութային) գումարը կամ տեսականուն համապատասխան որոշվող գույքը մյուս կողմին հանձնելու հետ, և որի դիմաց կարող է նախատեսվել վարկի տրամադրում՝ ներառյալ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների դիմաց կանխավճարի կամ ժամկետանց վճարելու ձևերով:

**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ** - անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Այն ակցիզային հարկով չհարկվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման գնի նկատմամբ սահմանված տոկոսադրույքաչափերով հարկատեսակ է, որի վճարողներն են համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) ինքնուրույն գործունեություն վարող ու տարբեր գործարքներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Ավելացված արժեքի հարկը վճարվում է հարկման ենթակա ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման հաստույթից:

**ԱՐԺԵԹՂԹԵՐ** - դրանք վկայություն են որոշակի չափով ներդրած կապիտալի կամ տրամադրած փոխառության մասին, որը տալիս է կանոնավոր եկամուտ (շահաբաժին կամ տոկոս) ստանալու իրավունք:



**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՐԱՆԱՎՈՒԹՅՈՒՆ** - հասկանում ենք դրանց առքը, վաճառքը և այլ գործառնություններ, որոնք հանգեցնում են արժեթղթերի տիրոջ փոփոխմանը: Արժեթղթեր թողարկելու իրավունք ունեն բաժնետիրական ընկերությունները և վարկային հիմնարկությունները: Արժեթղթեր են համարվում բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, պարտատոմսերը, դեպոզիտային սերտիֆիկատները, մուրհակները և այլն, որոնց թողարկումը և շրջանառությունը կարգավորվում է գործող օրենսդրությամբ:

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ** - արժեթղթերի թողարկման, տեղափոխման և շրջանառության առնչությամբ առաջացող փոխհարաբերությունների համակարգ է:

**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՐԺԵՔ** - այն ընդգրկում է տնտեսավարող սուբյեկտի կողմից արտադրանքի արտադրության վրա կատարված ծախսերի ամբողջությունը:

**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ** - դրանք իրենց բնույթով կապված են արտադրության գործընթացի հետ և ուղղակիորեն չեն կարող վերագրվել արտադրվող արդյունքի այս կամ այն տեսակին: Այդ ծախսերին են վերաբերվում՝ ոչ արտադրական բանվորների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, նորոգման նպատակով օգտագործվող օժանդակ նյութերը և անուղղակի արտադրական ծախսերը:

**ԱՐՏԱՀՐԱՑՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ** - տվյալ արտադրության գործընթացից դուրս իրականացվող գործառնություններն են, որոնք բերում են եկամուտներ և պատճառում ծախսումներ (վնասներ), այդ թվում՝ ստացված և վճարված տուժերը, տուգանքները և տնտեսական այլ տուժանքները, հիմնական միջոցների վարձակալության դիմաց ստացված և տրված վարձավճարները, վարկերի դիմաց ստացված և տրված տոկոսավճարները, տարերային աղետներից առաջացած վնասները, նախորդ տարիների շահույթը կամ վնասը և այլն:

**ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ** - դրանց միջոցով հնարավորություն է տրվում հաշվառելու որևիցե կազմակերպության հաշվապահական հաշվեկշռում չներառվող, բայց ժամանակավոր օգտագործման կամ պահպանման նպատակով իր մոտ գտնվող նյութական և դրամական ակտիվները (միջոցները): Արտահաշվեկշռային հաշիվներով հաշվառվում են կազմակերպությանը չպատկանող ոչ ընթացիկ ակտիվները, ապրանքանյութական արժեքները, դրամական միջոցները, արժեթղթերը և այլն: Չնայած նշված ակտիվներն արդեն հաշվառվում և արտացոլվում են այն

կազմակերպությունների հաշվեկշիռներում, որոնց դրանք պատկանում են, բայց մյուս կողմից էլ, վարձակալների մոտ դրանք չեն կարող դուրս թողնվել հաշվառումից, քանի որ դրանց պահպանման ու ճիշտ օգտագործման համար պատասխանատվություն են կրում վարձակալները:

**ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԲԸ)** - իրավաբանական անձ, որի կանոնադրական հիմնադրամը (կապիտալը) բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետիրական ընկերության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է: Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել ՀՀ և այլ պետությունների բանկերում: Բաժնետիրական ընկերությունները կարող են լինել բաց կամ փակ, որը պետք է արտահայտվի նրա կանոնադրությամբ և ֆիրմային անվանման մեջ: Ընկերությունը չի կարող ունենալ երկուսից պակաս բաժնետեր:

**ԲԱԺՆԵՏՈՄՍ** - արժեթուղթ է, որը վկայում է դրա տիրոջ կողմից բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալ (հիմնադրամ) ներդնելու փաստը և իրավունք է տալիս նրան մասնակցելու ընկերության կառավարմանը, ստացված շահույթին և ընկերության լուծարման ժամանակ մնացած ունեցվածքի բաժանմանը: Բաժնետոմսը չունի գործողության ժամկետ և գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ կա տվյալ բաժնետիրական ընկերությունը: Բաժնետոմսը, որպես փաստաթուղթ, պետք է պարունակի հետևյալ ռեկվիզիտները՝ բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը, արժեթղթի անվանումը, դրա տեսակը, ներքական համարը, թողարկման ամսաթիվը, անվանական արժեքը, քանակը, շահաբաժնի (դիվիդենտի) վճարման ժամկետը, բաժնետիրական ընկերության վարչության նախագահի ստորագրությունը: Բաժնետոմսերը լինում են անվանական և ըստ ներկայացնողի: Անվանական բաժնետոմսերի մեջ նշվում է սեփականատիրոջ անունը, այն գրանցվում է բաժնետիրական ընկերության հատուկ գրքում, ուր նշվում է, թե ով, ինչպիսի և ինչքան բաժնետոմս է տնօրինում: Ըստ ներկայացնողի տիպի բաժնետոմսում սեփականատիրոջ անունը չի նշվում, դրա համար էլ ընկերությունը բաժնետիրոջ հետ չի կարող ունենալ սերտ կապեր, քանի որ չունի տեղեկատվություն իր փայատերերի մասին:

**ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿ** - վարկային պայմանագրով նյութական արժեքների գրավադրմամբ բանկի կողմից տրամադրվող դրամական կամ արտարժութային միջոցներ:

**ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԲԲԸ)** - իրավաբանական անձ, որի բաժնետոմսերի տարածումն իրականացվում է ազատ բաժանորդագրության ճնով, և միաժամանակ բաժնետոմսերի հետագա շրջանառությունը իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դրանց ազատ առուծախի միջոցով: Բաց բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների (բաժնետերերի) թիվը չի սահմանափակվում:

**ԲԻԶՆԵՍ** - շահույթ բերող արտադրատնտեսական ծառայության, սպասարկման և այլ գործունեության ցանկացած ճև:

**ԲԻԶՆԵՍՄԵՆ** - առևտրական ձեռնարկատեր, որը զբաղվում է շահույթ կամ այլ շահ բերող տնտեսական գործունեությամբ:

**ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏ** - արդյունք է, երբ նախատեսվող ծախսերը գերազանցում են սպասվելիք եկամուտներին: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները լինում են երկու տեսակի՝ արտաքին (միջազգային կազմակերպություններից և այլ պետություններից ստացվող վարկեր) և ներքին (պետական արժեթղթեր, պետական տնտեսավարող սուբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից, ինչպես նաև ներքին շահող փոխառության տոմսերի և մուրհակների մարումից մուտքագրումներ):

**ԲՈՐՍԱ** - մեծածախ շուկա, ուր առևտուրը կազմակերպվում է ապրանքի նմուշով (ապրանքային բորսա), արժեթղթերով (ֆոնդային բորսա), օտարերկյա արտարժույթով (արժութային բորսա): Դա այն վայրն է, ուր գործարք կնքելու համար վաճառողներն ու գնորդները հանդիպում են իրար: Բորսան ունի անդամների հաստատագրված կազմ և առևտրի իրականացման կանոններ: Բորսաները լինում են պետական և մասնավոր: Պետական բորսաներում գործարքներ կարող են կնքել ինչպես բորսայի անդամներ, այնպես էլ անդամ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտները: Մասնավոր բորսաները կազմակերպվում են բաժնետիրական հիմունքներով, ուր գործարքներ կարող են կնքել միայն դրանց անդամ բաժնետերերը: Բորսային անդամները հանդես են գալիս որպես բրոքերներ, մեծածախ առևտրի միջնորդներ, որոնց բորսան ապահովում է տեղով, կապի միջոցներով, կատարում է գործառնությունների հաշվառում, մշակում օրինակելի պայմանագրեր, քննարկում է արբիտրաժային վեճերը:

**ԲՈՐՍԱՅԻՆ ՇԱՀՈՒՅԹ** - ֆոնդային բորսաներում՝ վաճառվող արժեթղթերի, ապրանքային բորսաներում՝ ապրանքների վաճառքից գոյացած եկամուտն է: Բորսային շահույթը՝ բորսային գների և կատարած ծախսերի (ներառյալ մաքսերը, ապահովագրությունը) տարբերությունն է:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿ** - նախատեսված է գյուղատնտեսության զարգացման համար և փոխատվական կապիտալի ներդրման ձև է: Այն տրամադրվում է գրավադրմամբ:

**ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ** - իրավաբանական անձ

հանդիսացող կոլեկտիվ և խառը սեփականության վրա հիմնված, գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրություն ապահովող տնտեսավարող սուբյեկտ, որի գործունեությունը կարգավորվում է նույն օրենքներով, ինչպես գյուղացիական տնտեսությունների դեպքում է:

**ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ** - գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային արտադրություն իրականացնող ընտանեկան կամ անհատական տնտեսավարող սուբյեկտ, որի գործունեությունը կարգավորվում է «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» և «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքներով:

**ԳՆԱՀԱՏՈՒՄ** - տնտեսական միջոցներն ու գործընթացները դրամական չափիչով արտահայտելու եղանակ: Գնահատումը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է և այն բացառիկ կարևոր նշանակություն ունի տնտեսավարող սուբյեկտների տնտեսական դրությունը ճանաչելու ու նրա հետագա աշխատանքներին ճիշտ ուղղություն տալու գործում:

**ԳՐԱՆՑ** - դրամական միջոցներ են, որոնք տրամադրվում են բարեգործական նպատակներով՝ որպես ֆինանսական աջակցություն գիտահետազոտական աշխատանքների կատարման համար, գրքեր հրապարակող հեղինակներին, արվեստի աշխատողներին: Այն տրամադրվում է միջազգային տարբեր կազմակերպություններից և տվյալ պետության համախմբված բյուջեից:

**ԳՐԱՎ** - պարտավորությունների կատարումը ապահովող միջոց է, որի համաձայն գրավով ապահովված հարաբերությունները կարգավորվում են «Գրավի մասին» օրենքով և օրենսդրական այլ ակտերով: Գրավի անհրաժեշտությունն առաջանում է գրավի մասին պայմանագիր կնքելու պահից: Գրավի առարկա կարող է լինել շրջանառության մեջ գտնվող ցանկացած գույք, որի վրա օրենսդրությամբ թույլատրվում է բռնագանձում տարածել:

**ԳՈՒԴԻԼ** - ոչ նյութական ակտիվների տեսակ է, որի բնորոշման հիմքում ընկած է ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման մոտեցումները: Այն նախատեսված է կազմակերպությունների (ընկերություններ, ֆիրմաներ և այլն) խմբի համար, երբ ձեռք բերողը մայր կազմակերպությունն է, իսկ ձեռք բերվողը՝ դուստր կազմակերպությունը (այսինքն, երբ ձեռք բերվողը դադարում է որպես առանձին իրավաբանական անձ գոյություն ունենալուց): Հետևաբար, երբ մայր կազմակերպությունը ձեռք է բերում դուստր կազմակերպությանը կամ նրա ակտիվները անվանական գնից ավելի բարձր կամ ցածր արժեքներով,



ապա առաջացած տարբերությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Ցածր արժեքով ձեռք բերվածը դա բացասական գուդվիլն է, որը մայր կազմակերպության համար համդիսանում է եկամուտ, իսկ հակառակ դեպքում՝ վնաս (ակտիվ):

**ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ** - ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլն), ապրանքանյութական արժեքների (նյութական ընթացիկ ակտիվների), դրամական միջոցների, հաշվարկային գործառնությունների և տնտեսավարող սուբյեկտի այլ միջոցների առկա մնացորդների ստացում ու ցուցակագրում քանակական և դրամային արտահայտությամբ: Այն հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է: Տնտեսական միջոցների ստուգման ծավալից ելնելով, գույքագրումները լինում են լրիվ և մասնակի, իսկ դրանց ստուգման նպատակից և անցկացման եղանակից ելնելով՝ պլանային և հանկարծակի:

**ԳՈՒՅՔԱՀԱՐԿ** - հարկատուներին (ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարող սուբյեկտներ, բացառությամբ՝ ՀՀ բյուջետային հիմնարկների, Կենտրոնական բանկի և տեղական ինքնակառավարման մարմինների) սեփականության կամ լրիվ (մասնակի) տնտեսավարման իրավունքով սահմանված գույքի գծով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

**ԴԵԲԵՏ** - դա հաշվապահական հաշիվների (հաշվեկշռային և անալիտիկ) գծով կազմված աղյուսակի ձախ կողմի անվանումն է, որը հանդես է գալիս երկու իմաստով: Ակտիվային հաշիվներում դեբետը նշանակում է հաշվառվող տնտեսական միջոցների (ակտիվի) գումարների մուտքագրում կամ ավելացում, իսկ պասիվային հաշիվների դեպքում՝ ակտիվի կազմավորման աղբյուրների (պասիվի) գումարների ելքագրում կամ նվազեցում:

**ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ** - տնտեսական փոխհարաբերությունների հետևանքով իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից (կրեդիտորից) տնտեսավարող սուբյեկտին, կազմակերպությանը և տարբեր հաճախորդներին (դեբիտորին) հասանելիք (կամ չվճարված) պարտքերի գումարն է: Օրինակ, գնորդ (դեբիտոր) կազմակերպությունը մատակարարից (կրեդիտորից) մինչև ապրանք-նյութական արժեքների ստացումը, կատարել է գումարի կանխիկ վճարում կամ փոխանցում: Քանի դեռ ապրանքանյութական արժեքները չեն ստացվել դեբիտոր կազմակերպության կողմից, այդ գումարը նրա համար համարվում է դեբիտորական պարտք:

**ԴԵՊՈԶԻՏ** - 1) բանկերում դրամական ներդրումներն են. 2) բանկային հիմնարկություններում պահպանման տրվող դրամական միջոցներն ու արժեթղթերն են:

**ԴԵՖԼՅԱՑԻԱ** - ինֆլյացիայի հակառակ գործընթացն է, երբ տեղի է ունենում ապրանքների և ծառայությունների գնի իջեցում կամ այլ կերպ այն շրջանառությունից ավելորդ թղթադրամը հանելու միջոցով դրամական զանգվածի պակասեցումն է:

**ԴԻՍԿՈՆՏ** - հասկացությունն ավելի շատ կիրառական է արժեթղթերի բնագավառում, որը նշանակում է արժեթղթի իրացման գնի զեղչում նրա անվանական արժեքի նկատմամբ:

**ԴՈՏԱՑԻԱ** - տնտեսավարող սուբյեկտների եկամուտների և ծախսերի կենտրոնացված կարգավորման ձև է, երբ այդ սուբյեկտների մոտ պլանային ծախսերը գերազանցում են ստացվող եկամուտներին: Այն տրամադրվում է պետական բյուջեից տրանսֆերտների տեսքով, որպես օգնություն պլանավորված ծախսերը կատարելու համար:

**ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - դա իրավաբանական անձ հանդիսացող այն ձեռնարկությունն է, որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մեկ այլ ձեռնարկության, ինչպես նաև՝ հասարակական կամ կրոնական կազմակերպության: Դուստր ձեռնարկություն հիմնադրելու իրավունք ունեն կոլեկտիվ սեփականության վրա հիմնված ձեռնարկությունները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները և տվյալ երկրի ու այլ պետությունների պետական ձեռնարկությունները: Դուստր ձեռնարկության հիմնադիր փաստաթուղթը հիմնադրի կողմից հաստատված կանոնադրությունն է, որում պարտադիր պետք է նշվի այդ հիմնադրի անվանումը:

**ԵԿԱՄՏԱՀԱՐԿ** - հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Եկամտահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում առնվազն 183 օր և ավելի, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայությունում գտնվող, ժամանակավորապես նրա տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք: Եկամտահարկը հարկվում է սահմանված տոկոսադրույքաչափերով՝ ստացված համախառն եկամտից, այդ թվում՝ աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից, խաղատներում՝ շահումներով խաղերից ստացած եկամուտներից, շահաբաժիններից և այլն:

**ԵԿԱՄՈՒՏ** - հաշվետու ժամանակաշրջանում ստացված բոլոր տեսակի տնտեսական օգուտների աճն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի



ավելացմանը (բացառությամբ բաժնետերերի կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների գումարի չափի): Կամ այլ կերպ՝ եկամուտը իրացումից հասույթի և այլ եկամուտների հանրագումարն է:

**ԵՐԱՇԽԻՔ** - պետության, բանկերի, հիմնարկությունների, բաժնետիրական ընկերությունների և ֆինանսական այլ կազմակերպությունների պարտավորություն՝ կատարված գործառնության համար վճարել այն դեպքում, երբ պայմանագիր երրորդ կողմը հրաժարվում է որոշակի պարտավորությունների կատարումից:

**ԶՈՒՏ ՀԱՍՈՒՅԹ** - առանց անուղղակի հարկերի (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ և այլ հաստատագրված վճարներ) ապրանքների, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), ոչ նյութական ակտիվների (արտոնագրեր, ապրանքանիշեր, հեղինակային իրավունքներ, համակարգչային ծրագրեր և այլն) և այլ ակտիվների (կարճաժամկետ և երկարաժամկետ արժեթղթեր) իրացման դիմաց ստացված դրամական միջոցների ընդհանուր գումարն է:

**ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ)** - մինչև հարկումը շահույթի և պետական բյուջե վճարվող շահութահարկի գումարների տարբերությունն է:

**ԷԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ** - ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված այն սխալներն են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) ֆինանսական հաշվետվություններն իրենց ներկայացման ամսաթվի դրությամբ այլևս արժանահավատ չեն կարող համարվել: Այդ սխալները կարող են առաջանալ թվաբանական անճշտությունների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության հետևանքով:

**ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ** - տնտեսական միջոցների (ակտիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի 2-րդ բաժնում, և որում ներառվում են՝ նյութերը, աճեցվող և բտվող կենդանիները, արագամաշ առարկաները, ապրանքները, դրամական միջոցները, տրված ընթացիկ կանխավճարները, առևտրային դեբիտորական պարտքերը և ընթացիկ այլ ակտիվները:

**ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** - տնտեսական միջոցների (ակտիվի) կազմավորման աղբյուրների (պասիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի պասիվի 5-րդ բաժնում և որում ներառվում են՝ կարճաժամկետ բանկային վարկերը և փոխառությունները, վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները, առևտրային կրեդիտորական պարտքերը, ստացված ընթացիկ կանխավճարները, կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին և այլ ընթացիկ պարտավորությունները:

**ԻՄԻՋ** - ապրանքի, տնտեսավարող սուբյեկտի, երկրի պատկերը, նրա նկարագիրը, հեղինակությունը և վարկանիշը բնորոշող հասկացություն է:

**ԻՆԴԵՔՍ** - տնտեսական և վիճակագրական հարաբերական ցուցանիշ է, որն արտահայտվում է ժամանակային (դինամիկ ինդեքսներ) և տարածական առումով: Ինդեքսի տարրերն են՝ ա/ ինդեքսավորվող մեծությունը (գնի, ինքնարժեքի, արտադրանքի ֆիզիկական ծավալի, աշխատանքի արտադրողականության և այլն), բ/ ձևը (ագրեգատային և միջին՝ թվաբանական, հարմոնիկ, երկրաչափական միջին ինդեքսներ և այլն), գ/ կշիռները (պարզ և կշռված՝ կայուն և փոփոխական), դ/ հաշվարկման ժամկետները (բազիսային և շղթայական):

**ԻՆԿԱՍՈ** - բանկային գործառնության տեսակ է, ըստ որի բանկը մատակարարի հանձնարարությամբ իր վրա է վերցնում գնորդից վճարման ենթակա դրամական միջոցների գանձումը հաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

**ԻՆՎԵՍՏԻՑԻԱ** - շահույթ ստանալու նպատակով երկրի ներսում և արտերկրում կապիտալի երկարաժամկետ ներդրումն է տարբեր ճյուղերի տնտեսավարող սուբյեկտներում, ձեռնարկչատիրական ու նորամուծությունների նախագծերում և սոցիալ-տնտեսական ծրագրերում:

**ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** - արժեթղթերի թողարկմամբ, տեղաբաշխմամբ, վերավաճառքով զբաղվող և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ է, որը հիմնադրվում է սահմանափակ պատախանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության կարգավիճակով:

**ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ** - իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտ է՝ հիմնադրված սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության ձևով, որն իրականացնում է ներդրողի դրամական միջոցների հավաքագրում և արժեթղթերում՝ այդ միջոցների ներդրում:

**ԻՆՔՆԱՐԺԵՔ** - տնտեսական կատեգորիա է, որը դրամական ձևով արտահայտում է ապրանքի արտադրության և իրացման վրա տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված բոլոր ծախսերի ամբողջությունը:

**ԻՆՖԼՅԱՑԻԱ** - դրամի արժեզրկումն է, որը դրսևորվում է ապրանքների և ծառայությունների գնի աճման հետևանքով ու պայմանավորված չէ դրանց որակի բարձրացման հետ: Կամ այլ կերպ, դա շրջանառության ոլորտի գերլցումն է թղթադրամով, որն առաջացնում է դրա արժեզրկում: Այդ թղթադրամի ավելցուկի հայտնվելը սովորաբար կապված է բյուջեի դեֆիցիտի հետ, երբ պետությունն իր կտրուկ աճող ծախսերը (կապված պատերազմների, սպառազինությունների մրցավազքի, տնտեսական ճգնաժամերի հետ) ի վիճակի չէ ծածկելու եկամտի սովորական աղբյուրներից և ստիպված լրացուցիչ դրամ է թողարկում: Ինֆլյացիայի հետևանքով թղթադրամը ոսկու նկատմամբ արժեզրկվում է այն չափով, որքանով շրջանառող թղթադրամի քանակը գերազանցում է ապրանքային շրջանառության սպասարկմանն անհրաժեշտ ոսկե դրամի քանակը: Ինֆլյացիայից ավելի շատ տուժում են աշխատավորությունը, որի իրական աշխատավարձն իջնում է մեծ չափերով՝ կապված սպառման ապրանքների գների բարձրացման հետ:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՉՈՒՆԵՑՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - այն չի համարվում իր սեփականատիրոջից առանձին իրավունքի սուբյեկտ: Այդպիսի ձեռնարկության սեփականատերը պարտավորությունների համար պատասխանատու է իր ունեցած այն գույքով, որի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով կարելի է բռնագանձում կատարել:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - իրավունքի ինքնուրույն սուբյեկտ (ձեռնարկություն) է, որի գույքը, իրավունքներն ու պարտականությունները առանձնացված են դրա սեփականատիրոջ (սեփականատերերի) այլ գույքից, իրավունքներից և պարտականություններից: Ձեռնարկության պարտավորությունների համար պատասխանատու է իրավաբանական այդ անձը, իսկ սեփականատերը պատասխանատու չէ իր այլ գույքով:

**ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹ** - եկամտի կազմում ներառվող այն դրամական միջոցներն են, որոնք ստացվում են արտադրանքի իրացումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց վճարներից:

**ԻՐԱՑՈՒՄԻՑ ԾԱԽՈՒՅԹ (ՎՆԱՍ)** - արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթի (առանց անուղղակի հարկերի և այլ հաստատագրված վճարների) և լրիվ ինքնարժեքի գումարների տարբերությունն է:

**ԼԻԶԻՆԳ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ)** - շենքերի, փոխադրամիջոցների, մեքենաների, սարքավորումների երկարատև վարձակալումն է: Այն սեփականատիրոջը հնարավորություն է տալիս եկամուտ ստանալ ժամանակավորապես ազատ միջոցներից, իսկ վարձակալին՝ նվազագույն կապիտալի ներդրումով սկսել կամ ընդլայնել արտադրությունը:

**ԼԻՑԵՆԶԻԱ (ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)** - ա/ ապրանքներ արտահանելու և ներմուծելու թույլտվություն, բ/ պետության կողմից տրված թույլտվություն՝ տնտեսական գործունեության որոշ տեսակներով (արհեստ, առևտուր և այլն) զբաղվելու համար, գ/ անձանց կամ կազմակերպություններին տրվող իրավունք՝ գաղտնիքների, գյուտերի, ապրանքանիշերի և

այլևի օգտագործման համար: Սեփականատերը կոչվում է լիցենզոր, իսկ ձեռք բերողը՝ լիցենզիատ:

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ** - կազմակերպության կողմից պայմանագրային աշխատանքների կատարում՝ համաձայնեցված ժամկետներում:

**ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻԱ** - արտադրության գործընթացում պատրաստվող արտադրանքի մեկ միավորի կամ շինարարության, նորոգումների և այլ աշխատանքների ու ծառայությունների միավորի վրա կատարած ծախսումների հաշվարկման և ինքնարժեքի որոշման աշխատանքն է՝ դրամական արտահայտությամբ: Ավելի համառոտակի, կալկուլյացիան արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) միավորի ինքնարժեքի հաշվարկն է՝ դրամական արտահայտությամբ: Կալկուլյացիան հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է:

**ԿԱՆԽԱՍՏԱԾՎԱԾ ՍՆԱՆԿԱՑՈՒՄ** - պարտատերերի օրինական պահանջների լրիվ կամ մասնակի կատարումից խուսափելու նպատակով պարտապանի կողմից կազմակերպված, այդ թվում՝ օրինական ճանապարհով սնանկացումն է:

**ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ (ՀԻՄՆԱԴՐԱՄ)** - նախօրոք որոշված դրամաչափ, որն օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է բաժնետերերի կողմից մուծվի ընկերությանը մասնակից դառնալու համար՝ որպես ներդրում իրենց հասանելիք բաժնետոմսերի գումարի չափով: Կանոնադրական հիմնադրամը հավասար է ընկերության կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի անվանական արժեքների գումարին: Ընկերության կանոնադրական հիմնադրամը գրանցվում է նրա կանոնադրության մեջ: Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, հիմնադրամի նվազագույն չափը բաց ընկերությունների համար չպետք է պակաս լինի նրա պետական գրանցման պահին գործող նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափից, իսկ փակ ընկերությունների համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափից: Կանոնադրական կապիտալն արտահայտվում է ՀՀ դրամով:

**ԿՈՄՈՒՆԱԼ ՎԱՐԿ** - կոմունալ տնտեսության և բնակարանային շինարարության կարիքների համար սահմանված տոկոսադրույքաչափերով տրամադրվող վարկ:

**ԿՐԵԴԻՏ** - դա հաշվապահական հաշիվների (հաշվեկշռային և անալիտիկ) գծով կազմված աղյուսակի աջ կողմի անվանումն է, որը հանդես է գալիս երկու իմաստով: Ակտիվային հաշիվներում կրեդիտը նշանակում է հաշվառվող տնտեսական միջոցների (ակտիվի) գումարների նվազեցում, իսկ պասիվային հաշիվների դեպքում՝ ակտիվի կազմավորման աղբյուրների (պասիվի) գումարների ավելացում:



**ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ** - դրանք լայն առումով տնտեսավարող սուբյեկտի, կազմակերպության և տարբեր հաճախորդների (դեբիտոր) պարտքերն են իրավաբանական կամ ֆիզիկական անձանց՝ նրանց մատակարարած ապրանքանյութական արժեքների, կատարած աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց, ինչպես նաև բանկային վարկերն ու տարբեր տեսակի պարտավորություններն են: Նեղ առումով՝ դեբիտոր կազմակերպության պարտքերն են մատակարարներին, ֆինանսական մարմիններին և այլ կազմակերպություններին, ընթացիկ ու ոչ ընթացիկ տարբեր տեսակի պարտավորությունների դիմաց: Օրինակ, գնորդ (դեբիտոր) կազմակերպությունը մատակարարից (կրեդիտորից) ստացել է ապրանքանյութական արժեքներ, բայց գումարը դեռևս չի վճարել: Քանի դեռ գումարը չի վճարվել դեբիտոր կազմակերպության կողմից, այդ նրա համար դառնում է կրեդիտորական պարտք:

**ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ** - ապրանքների, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) իրացումից դրամական զուտ հասույթի և նյութական ծախսումների տարբերությունն է: Համախառն եկամուտը հավասար է աշխատավարձի և զուտ եկամտի (շահույթի) գումարին:

**ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ** - մակրոէկոնոմիկայի կարևորագույն ցուցանիշներից մեկն է, որը տվյալ երկրում տարվա ընթացքում ստեղծված վերջնական արդյունքի (արտադրանքի, ապրանքների և ծառայությունների) ընդհանուր արժեքն է:

**ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - դա կոլեկտիվ կամ խառը սեփականության վրա հիմնված, իրավաբանական անձ հանդիսացող, օտարերկրյա քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների կամ կազմակերպությունների պարտադիր գույքային և արտարժութային ներդրման ձեռնարկություն է: Համատեղ ձեռնարկությունները ստեղծվում ու գործում են ընկերությունների ձևով և իրենց կարգավիճակը պահպանելու համար պետք է ունենան առնվազն մեկ օտարերկրյա մասնակից: Նրանց հիմնադիր փաստաթղթերն են՝ կանոնադրությունը և հիմնադիր պայմանագիրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԺՈՒՅԹ** - դրանք են. ա/ շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ հանվող, փոխանակման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության դրամները, ՀՀ կենտրոնական բանկի բանկային տոմսերի (թղթադրամների) տեսքով, ինչպես նաև մետաղադրամները և գանձատան տոմսերը, բ/ ՀՀ բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով, գ/ Հայաստանի Հանրապետության արժույթը որպես վճարման օրինական միջոց օգտա-

գործելու մասին ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա պետության համապատասխան մարմինների հետ կնքված համաձայնագրերի հիման վրա, տվյալ պետության տարածքում գտնվող բանկերի և ֆինանսավարկային այլ կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով:

**ՀԱՇՎԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐ** - պատշաճ ձևով կազմված, ստուգված, հաստատված և մշակված փաստաթղթերի հիման վրա հստակ ձևի աղյուսակներ, որոնցում արտացոլվում են կատարվող տնտեսական գործառնությունները: Ըստ ձևի՝ դրանք ստորաբաժանվում են հաշվապահական մատյանների, քարտերի և ազատ թերթերի, որոնք իրենց ձևով և արտաքին տեսքով տարբերվում են:

**ՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ** - դրանց միջոցով ձևակերպվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործընթացներում տեղի ունեցող բազմաթիվ ու բազմաբնույթ գործառնություններ: Այդ փաստաթղթերում նշվում են դրանց կատարման տեղն ու ժամանակը, բովանդակությունը՝ քանակական ու արժեքային ցուցանիշներով, ինչպես նաև կատարող այն անձինք, որոնց միջոցով իրականացվում են այդ գործառնությունները: Փաստաթղթում նշվում են նաև նրանց ստորագրությունները:

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇԻՎ** - տնտեսավարող սուբյեկտի միատեսակ բովանդակությամբ տնտեսական միջոցների, դրանց կազմավորման աղբյուրների, տնտեսական գործընթացների ու դրանց ֆինանսական հետևանքների ընթացիկ հաշվառման միջոց է, որը հաշվապահական հաշվառման մեթոդի կարևորագույն տարրերից մեկն է: Ըստ հաշվառման օբյեկտի տնտեսագիտական բովանդակության, հաշվապահական հաշիվները լինում են՝ ակտիվային, պասիվային և ակտիվա-պասիվային, իսկ ըստ ձևի՝ հաշվապահական հաշիվը երկկողմ աղյուսակ է, որի ձախ կողմը կոչվում է դեբետ, իսկ աջ կողմը՝ կրեդիտ: Հաշվապահական հաշիվներն ըստ նշանակման և կառուցվածքի դասակարգվում են՝ հիմնական, կարգավորող, գործառնական, ֆինանսահետևանքային և արտահաշվեկշռային հաշիվների:

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ** - նույն համակարգի բոլոր կազմակերպություններում տնտեսական գործառնությունների միանման ձևակերպումն ապահովելու նպատակով, տարբեր տեսակի հաշվապահական հաշիվների (ակտիվային, պասիվային, ակտիվա-պասիվային) հիման վրա կազմված մի սխեմա է, որտեղ ծածկագրերի հերթականությամբ լուսաբանվում են յուրաքանչյուր հաշվի բովանդակությունը: Հաշվային պլանն ըստ տնտեսական բովանդակության կազմված



է՝ հաշիվների դասերից, հաշիվների խմբերից, առաջին կարգի հաշիվներից (սինթետիկ հաշիվներ) և երկրորդ կարգի հաշիվներից (ենթահաշիվներ):

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ** - տնտեսավարող սուբյեկտների (ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկությունների, ընկերությունների և այլ տնտեսությունների) տնտեսական միջոցների (ակտիվ), դրանց կազմավորման աղբյուրների (պասիվ) ու դրանցով կատարվող տնտեսական գործընթացների փաստաթղթային հիմնավորված հաշվառումն է:

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ** - հաշվեկշռային հաշվետվություն (ձև $N_o1$), որն ըստ կառուցվածքի երկկողմանի աղյուսակ է՝ արժեքային արտահայտությամբ, որի ձախ մասը (ակտիվ) որևիցե ժամանակաշրջանի պահի դրությամբ արտահայտում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական միջոցների կազմն ու տեղաբաշխումը, իսկ աջ մասը (պասիվ)՝ այդ տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրները: Հաշվեկշռի ակտիվի և պասիվի հանրագումարներն իրար հավասար են լինելու, քանի որ տվյալ տնտեսավարող սուբյեկտը պետք է կազմավորման աղբյուրների գումարին համապատասխան իր տրամադրության տակ ունենա տնտեսական միջոցներ: Հաշվեկշռի ցուցանիշները կազմվում են հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա: Ըստ հաշվապահական հաշվառման գործող ստանդարտների, հաշվեկշիռը բաղկացած է հինգ բաժիններից, ընդ որում, ըստ ակտիվի երկուսը՝ ոչ ընթացիկ ակտիվներ և ընթացիկ ակտիվներ, իսկ ըստ պասիվի երեքը՝ սեփական կապիտալ, ոչ ընթացիկ պարտավորություններ և ընթացիկ պարտավորություններ:

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ** - հաշվային ռեգիստրների ձևերից են, որոնցում կատարվում են տնտեսական գործառնությունների գրանցումներ թե՛ սինթետիկ, և թե՛ անալիտիկ հաշիվների վերաբերյալ: Մատյանները բացվում են յուրաքանչյուր տարվա սկզբում, դրանց կազմի վրա նշելով տնտեսավարող սուբյեկտի անվանումը, մատյանի անվանումը և տարեթիվը: Այն էջակալվում է և վերջին էջի վրա ցույց է տրվում մատյանի օգտագործման նպատակը, որը հաստատվում է գլխավոր հաշվապահի ստորագրությամբ ու կազմակերպության կլոր կնիքով:

**ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** - տնտեսավարող սուբյեկտների կառուցվածքային ինքնուրույն ստորաբաժանում է, որն իրականացնում է հաշվապահական հաշվառում, կազմում է հաշվեկշռային ու ֆինանսական հաշվետվություններ և հսկողություն է սահմանում հաշվաֆինանսական աշխատանքային կարգապահության պահպանման գծով:

**ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ** - այս հաշիվներն օգտագործվում են, երբ

տարբեր կազմակերպություններ կամ ձեռնարկություններ փոխհարաբերությունների մեջ են մտնում միմյանց միջև ապրանքանյութական արժեքների տեղափոխման, դրամի կանխիկ վճարման, անկանխիկ փոխանցումների և այլ տեսակի գործառնությունների ժամանակ: Հաշվարկային հաշիվները լինում են՝ ակտիվային, պասիվային և ակտիվա-պասիվային:

**ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ** - նախատեսված են կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում են այս հաշիվների (դեբետային և կրեդիտային) մնացորդները:

**ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ)** - իրացումից շահույթի (վնասի) և արտահիրացումային գործառնություններից եկամուտների ու ծախսումների տարբերության (շահույթ կամ վնաս) գումարների բացարձակ շեղումն է: Հաշվեկշռային շահույթը կամ վնասը՝ դա նույն հաշվետու ժամանակաշրջանի շահույթն է կամ վնասը:

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** - աղյուսակների համակարգ է, որոնցից յուրաքանչյուրում ամփոփվում է ընթացիկ հաշվառման մեջ արտացոլված տնտեսական գործունեության որևէ ցուցանիշ և այն ներկայացվում է կառավարման որոշակի մարմիններին (համապատասխան նախարարություններին, հարկային տեսչություններին և այլն), որոնց օգնությամբ կառավարվում, կարգավորվում և վերահսկվում է տնտեսավարող սուբյեկտների ու առանձին օղակների գործունեությունը:

**ՀԱՍՏԱՏՈՒՆ ԾԱԽՍԵՐ** - կատարվող այն ծախսերն են, որոնք կախված չեն արտադրության ծավալների մեծությունից: Այդ ծախսերին են վերաբերվում՝ ժամանակավարձով աշխատողների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, շենքերի ամորտիզացիոն հատկացումները, լուսավորության, ջեռուցման, շենքերի նորոգման և այլ ծախսերը:

**ՀԱՐԿ** - հաստատուն չափերով ու սահմանված ժամկետներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ու այլ վճարողներից պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով գանձվող պարտադիր ու անհատույց վճար:

**ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ** - արտադրանքի արտադրության վրա կատարված ուղղակի ծախսեր, որոնք ներառում են՝ հիմնական բանվորների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, հումքի և նյութերի, տեխնոլոգիական վառելանյութի ծախսերը և այլն:

**ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ՎԱՐԿ** - փոխատվություն է անշարժ գույքի գրավադրմամբ: Ազատ մրցակցության ժամանակաշրջանում հիպոթեկային բան-



կերը 10, 15, 25 և ավելի տարով վարկեր են տրամադրում հողամասերի, բնակելի շենքերի և այլ կառույցների գրավի դիմաց:

**ՀՆԱՐԱՎՈՐ ՍՆԱՆԿԱՑՈՒՄ** - տնտեսավարող սուբյեկտների կամ անհատ ձեռներեցների այնպիսի վիճակն է, որի շարունակումը կարող է հանգեցնել սնանկացման, եթե ժամանակին չսկսվի սնանկացման գործի դատական քննությունը:

**ՀՈՂԻ ՀԱՐԿ** - հողի սեփականատերերից, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողներից պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է: Այն ուղղակի հարկ է և գանձվում է հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտից ու ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ կադաստրային գնահատման արժեքից:

**ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ** - առանձին դուստր կազմակերպությունների (ձեռնարկություն, ընկերություն, ֆիրմա) միավորումն է մեկ տնտեսական միավորի մեջ: Տարբերվում են ձեռնարկատիրական գործունեության միավորման 2 ձևեր՝

ա) <u>ձեռք բերում</u>՝ ձեռնարկատիրական գործունեության միավորում է, որի համաձայն կազմակերպություններից մեկը՝ ձեռք բերողը (մայր կազմակերպությունը), վերահսկման իրավունք է ստանում այլ կազմակերպության՝ ձեռք բերվողի (դուստր կազմակերպության) զուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ՝ ակտիվների փոխանցման, պարտավորությունների ստանձնման կամ բաժնետոմսերի (բաժնեմասերի) թողարկման դիմաց,

բ) <u>բաժնեմասերի (շահերի) միացում</u>՝ ձեռնարկատիրական գործունեության միավորում է, որտեղ միավորվող կազմակերպությունների բաժնետերերը միավորում են իրենց բոլոր զուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ վերահսկողությունը՝ միավորված կազմակերպությանը հատուկ ռիսկերը և օգուտները համատեղ ու շարունակաբար կրելու նպատակով: Դա արվում է այնպես, որ ոչ մի կողմը չի կարող համարվել որպես ձեռք բերող:

**ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** - տնտեսավարող սուբյեկտների (ձեռներեցների) կողմից իրականացվող, օրենսդրությամբ չարգելված տնտեսական ցանկացած գործունեություն: Վերջինս կարող են իրականացնել տվյալ երկրի և այլ պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և իրավաբանական անձինք ու իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարող սուբյեկտները (ձեռնարկությունները):

**ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ (ՀԻՄՆԱԴԻՐ)** - կարող են լինել

տվյալ երկիրը և այլ պետությունները, այդ պետությունների իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** - դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկային և այլ հաշիվներ բացելն է ցանկացած բանկային հիմնարկում՝ իր դրամական միջոցները պահելու, հաշվարկային, վարկային և դրամարկղային բոլոր տեսակի գործառնություններ իրականացնելու համար: Ձեռնարկության ֆինանսական գործառնությունները, այդ թվում նաև աշխատավարձի վճարումները, կատարվում են բանկային հիմնարկների միջոցով՝ սահմանված ժամկետներին համապատասխան:

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - կազմակերպական միավոր է, որն իրեն պատկանող կամ սեփականատիրոջ (հիմնադրի) կողմից հատկացված գույքով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն և պատասխանատվություն է կրում ստանձնած պարտավորությունների կատարման համար:

**ՄԱՐԿԵԹԻՆԳ** - բառացի նշանակում է շուկայավարություն, որի նպատակն է առավելագույն շահույթի ստացումը՝ կապված նոր արտադրատեսակների մշակման, դրանց թողարկման, իրացման ու ծառայությունների մատուցման հետ: Հիմնական ֆունկցիաներն են՝ պահանջարկի, գնագոյացման, գովազդի, իրացումը խթանելու, ապրանքատեսակների պլանավորման հարցերի մշակումը և այլն:

**ՄԱՔՍԱՏՈՒՆ** - տվյալ երկրի սահմաններով առաքվող ապրանքների, փոստային առաքումների և բեռների մուտքը վերահսկող պետական հաստատություն է: Այն իրագործում է բեռների ստուգում, գանձում է մաքսատուրք, իրականացնում է հավելյալ մաքսային վճարումներ և այլ գործառնություններ: Մաքսատուրք գանձվում է մաքսային հայտարագրերի հիման վրա: Այն միջոց է ազգային շուկայի մրցակցության ապահովման, ներմուծվող ապրանքների մրցունակության փոքրացման, ներմուծման ու արտահանման ծավալի ու կառուցվածքի կարգավորման, բյուջեի համար միջոցների հայթաթման և այլ գործառնություններ ապահովելու համար:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿ** - միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում ֆինանսական ռեսուրսների և արտարժույթի տրամադրումն է՝ վերադարձման, ժամկետայնության և տոկոսի վճարման պայմաններով: Նման վարկեր տրամադրում են մասնավոր ֆիրմաները, բանկերը, օտարերկրա պետությունները, միջազգային ֆինանսական կազմակերպությունները:



**ՄՈՒՐՀԱԿ** - արժեթուղթ է, որը հավաստում է մուրհակատուի պարտավորությունը՝ սահմանված ժամկետում մուրհակատիրոջը վճարելու որոշակի գումար: Մուրհակը ոչ միայն հարմար հաշվարկային ձև է, այլ նաև առևտրային վարկի տեսակ, քանի որ վճարումը ըստ մուրհակի կատարվում է ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց, որի ընթացքում մուրհակի գումարը գտնվում է մուրհակատուի տրամադրության տակ: Մուրհակը պարտքի միակողմանի դրամական պարտավորություն է, ըստ որի մուրհակատերը ոչ մի պարտավորություն չունի, այլ մուրհակատուն է պարտավորվում վճարել նրանում նշված գումարը: Գոյություն ունեն հասարակ և փոխանցվող մուրհակներ: Հասարակ մուրհակում մասնակցում են 2 կողմեր՝ մուրհակատուն և մուրհակատերը: Այստեղ սահմանված է մուրհակատուի բացարձակ պարտավորությունը՝ մուրհակում նշված անձին (մուրհակատուին) գումարը որոշակի ժամկետում վճարելու մասին:

Փոխանցվող մուրհակը տրվում է վարկատուի կողմից: Այն պարունակում է մուրհակատուի հրամանը վճարողին՝ սահմանված ժամկետում վճարել որոշակի գումար մուրհակ ներկայացնողին կամ մուրհակում նշված անձին, կամ նրան, ում նա կնշի մինչև մուրհակի ժամկետի լրանալը:

**ՄՈՒՐՀԱԿԱՅԻՆ ՎԱՐԿ** - վարկատեսակը առաջացել է առևտրային վարկի զարգացման հիման վրա, երբ ձեռք բերված ապրանքների դիմաց դրամի կամ արտարժույթի փոխարեն օգտագործվել է մուրհակը, որի տերը այն վաճառում է բանկին կամ գրավ դնում բանկում: Այսինքն՝ մուրհակի գրավադրմամբ փոխատվությունը միաժամանակ վարկային գործառնություն է: Բանկի կողմից տրամադրված փոխատվությունները պետք է վերադարձվեն գրավադրված մուրհակի վճարման ժամկետի լրանալուն պես:

**ՆԵՐԴՐՈՂ (ԻՆՎԵՍՏՈՐ)** - ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտ, որը արժեթղթերի սեփականատեր կամ նրա կողմից լիազորված անձ է:

**ՇԱՀԱԲԱԺԻՆ (ԴԻՎԻԴԵՆՏ)** - զուտ շահույթի մի մասն է, որը բաժին է ընկնում յուրաքանչյուր բաժնետոմսին և ենթակա է բաժնետերերի միջև բաժանման:

**ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ** - հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որը գանձվում է հաշվետու ժամանակաշրջանում ստացված շահույթից: Շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները) և ոչ ռեզի-

դենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները ու դրանց կողմից ՀՀ–ից դուրս ստեղծված իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները), բացառությամբ ՀՀ բյուջետային հիմնարկների և ՀՀ կենտրոնական բանկի:

**ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ** - գույք, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան սահմանված չէ որպես անշարժ գույք:

**ՇՈՒԿԱ** - ապրանքների ու ծառայությունների առկա և հնարավոր գնորդների ու վաճառողների ամբողջություն: Այլ կերպ ասած՝ շուկան գնողունակ պահանջարկով տարբերակված սպառողական առանձին խմբերի ամբողջություն է և ձևավորվում է տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և հոգեբանական ամբողջական գործոնների փոխազդեցության հետևանքով:

**ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ** - տնտեսական միջոցների (ակտիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի 1-ին բաժնում, և նրանում ներառվում են հիմնական միջոցները, ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումները և այլ ոչ ընթացիկ ակտիվները:

**ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** - տնտեսական միջոցների (ակտիվի) կազմավորման աղբյուրների (պասիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի պասիվի 2-րդ բաժնում, և նրանում ներառվում են երկարաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները, հետաձգված հարկային պարտավորությունները և ոչ ընթացիկ այլ պարտավորությունները:

**ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** - դրանք ոչ ընթացիկ ակտիվների այն մասն են, որոնցում ներառվում են՝ կազմակերպչական ծախսերը, լիցենզիաները, ֆիրմայի գինը (գուդվիլ), արտոնագրերը, ապրանքային նշանները, ծրագրային ապահովումը, հողի ու բնական ռեսուրսների օգտագործման իրավունքը և այլ ոչ նյութական ակտիվները:

**ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐ** - դրանք են. ա/ արտասահմանում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գտնվող ֆիզիկական անձինք, բ/ իրավաբանական անձի կարգավիճակ



ունեցող կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան և գտնվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս, ինչպես նաև դրանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, գ/ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա դիվանագիտական և պաշտոնական այլ ներկայացուցչությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ֆիրմաների ներկայացուցչությունները:

**ՉԵԿ** - անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման փաստաթուղթ է, ըստ որի չեկի տերը գրավոր համաձայնություն է տալիս, իր հաշվից վճարելու դրամական միջոցներ մատակարարի հաշվին, չեկում ցույց տրված գումարի չափով: Չեկերն օգտագործվում են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և չունեցող ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկությունների միջև փոխադարձ հաշվարկների իրականացման ժամանակ:

**ՊԱՍԻՎԱՅԻՆ ՀԱՇԻՎ** - հաշվապահական հաշվի մի տեսակ է, որի կրեդիտում գրանցվում են հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրների սկզբնական մնացորդը, դրանց ավելացումները և այդ ժամանակաշրջանի վերջնական մնացորդը, իսկ դեբետում՝ կազմավորման աղբյուրների նվազումները: Այս հաշվի դեպքում վերջնական մնացորդը հավասար է սկզբնական մնացորդին գումարած ավելացումները և հանած դեբետում գրանցված նվազումները:

**ՊԱՍԻՎՆԵՐ** - տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրներ են, որոնք իրենց բովանդակությամբ հանդես են գալիս սեփական կապիտալի, ոչ ընթացիկ պարտավորությունների և ընթացիկ պարտավորությունների տեսքով: Պասիվներն իրենց արժեքային առումով արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի աջ կողմում (պասիվային մաս):

**ՊԱՐՏԱՊԱՆ (ԴԵԲԻՏՈՐ)** - իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկություններ, անհատ ձեռներեցներ և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության սեփականատերեր (մասնակիցներ), որոնք ի վիճակի չեն կամ հրաժարվում են ժամանակին կատարել պարտատիրոջ (կրեդիտորի) հանդեպ ունեցած պարտավորությունները:

**ՊԱՐՏԱՏԵՐ (ԿՐԵԴԻՏՈՐ)** - ֆիզիկական անձինք, անհատ ձեռներեցներ, իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների սեփականատերեր (մասնակիցներ), ՀՀ

պետական մարմինները, ինչպես նաև միջազգային կազմակերպություններ, որոնք պարտապանի (դեբիտորի) հանդեպ օրինական պահանջներ ունեն:

**ՊԱՐՏԱՏՈՄՍ** - արժեթուղթ է, որը հաստատում է դրա տիրոջը արժեթղթի անվանական արժեքը սահմանված տոկոսի հետ միասին վերադարձնելու պարտավորությունը: Պարտատոմս ունեցողն այն թողարկող բաժնետիրական ընկերության վարկատուն է: Պարտատոմսերը կարող են թողարկվել՝ անվանական և ըստ ներկայացնողի, տոկոսային և անտոկոս, ազատ շրջանառող կամ սահմանափակ շրջանառելիությամբ: Բաժնետիրական ընկերությունը պարտատոմսեր է թողարկում միայն թողարկված բոլոր բաժնետոմսերի լրիվ վճարումից հետո՝ կանոնադրական կապիտալի 25 % -ից ոչ ավելի գումարով:

Սեփականության ցանկացած ձևի տնտեսավարող սուբյեկտներ կարող են թողարկել պարտատոմսեր, որի իրացումից ստացված գումարները օգտագործվում են միայն այդ սուբյեկտի զարգացման նպատակներով: Պարտատոմսերով տոկոսները վճարվում են կամ պարբերաբար՝ դրանց թողարկման ժամանակի ընթացքում, կամ էլ միանվագ՝ պարտատոմսի ժամկետը լրանալուց հետո:

**ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿ** - բանկ, որի սեփականատերը պետությունն է:

**ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** - մեկ տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) առումով տվյալ պետության եկամուտների և ծախսերի նախահաշիվն է, որում ներառվում են եկամուտների կազմավորման ու նախատեսվող ծախսերի ուղղությունները: Պետական բյուջեն կազմվում է տվյալ երկրի կառավարության կողմից և վերջնական տեսքով ընդունվում ու հաստատվում է բարձրագույն օրենսդիր մարմնի (ազգային ժողովի) կողմից:

**ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ** - իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ է, որի միակ հիմնադիրը պետությունն է (կառավարությունը) կամ վերջինիս կողմից լիազորված պետական կառավարման (իշխանության տեղական) մարմինը: Այն ստեղծվում է պետական միջոցների հաշվին և գործունեության հիմնական փաստաթուղթը համարվում է նրա կանոնադրությունը:

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ** - պետության ընդհանուր պարտքն է արտաքին և ներքին վարկատուներին (կրեդիտորներին):

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ ԱՐՏԱՔԻՆ** - պետության պարտքն է միջազգային բանկերին, այլ երկրների կառավարություններին, օտարերկրյա մասնավոր բանկերին:

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ ՆԵՐՔԻՆ** - պետության պարտքն է տնտեսավարող



սուբյեկտներին և բնակչությանը, որոնցից ներգրավվել են դրամական միջոցներ պետական ծրագրերի և պատվերների կատարման, շրջանառությունում արժեթղթերի բացթողնման ու այլ նպատակների համար:

**ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿ** - վարկային հարաբերությունների համակարգ է, որում կողմերից մեկը պետությունն է: Պետական վարկի հիմնական ձևերն են՝ պետական փոխառությունները, խնայդրամարկղերում բնակչության ավանդները, որոնց միջոցով վերջիններս ձեռք են բերում պետական արժեթղթեր: Պետական վարկերը հանդես են գալիս երկու առումով՝ ներքին և միջազգային: Ներքին վարկի դեպքում, երբ վարկատուները բանկերն են, ապա պետությունը կատարում է վարկառուի (փոխառուի) դեր, իսկ երբ վարկառուները տեղական մարմիններն են (մարզ, համայնք և այլն), ապա պետությունն իրականացնում է վարկատուի դեր: Միջազգային վարկի դեպքում պետությունը, որպես վարկատու և վարկառու, փոխհարաբերությունների մեջ է մտնում այլ երկրների հետ:

**ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐ** - դրանք են. ա/ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող, բայց ժամանակավորապես արտասահմանում գտնվող ֆիզիկական անձինք, բ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, գ/ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և այլ պաշտոնական այն ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ սահմաններից դուրս:

**ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ** – որոնց օգնությամբ փաստաթղթերում որոշվում են տնտեսական գործառնությունների կատարման տեղը, ժամանակը, կատարողներն ու այդ գործառնությունների բովանդակությունը և դրանով իսկ փաստաթղթին հաղորդում են ապացուցողական ուժ: Փաստաթղթերի հիմնական և կարևորագույն ռեկվիզիտներն են՝ այն կազմակերպության կամ տնտեսավարող սուբյեկտի անվանումը, որտեղ կազմվում է տվյալ փաստաթուղթը, այդ փաստաթղթի անվանումն ու հերթական համարը, գործառնության կատարման թվականը (օր, ամիս, տարի), գործառնությանը մասնակցող կողմերը, գործառնության բովանդակությունը և այլն:

**ՌՈՅԱԼԹԻՆԵՐ** - տվյալ կազմակերպության ոչ նյութական ակտիվների օգտագործման դիմաց վճարներն են՝ տոկոսի և շահաբաժնի տեսքով:

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՍՊԸ)** -

կոլեկտիվ կամ խառը սեփականության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սեփականատերերի պարտադիր գույքային մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտ է: Այն պետք է ունենա առնվազն երկու հիմնադիր, և եթե ընկերության գործելու ընթացքում մնում է միայն մեկ հիմնադիր, ապա այն կարող է իր գործունեությունը շարունակել որպես այդպիսին: Ընկերության կանոնադրական կապիտալ (հիմնադրամ) է համարվում նախօրոք որոշված այն դրամագլուխը, որը օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է մուծվի նրա անդամների կողմից՝ ընկերությանը մասնակից դառնալու համար: Ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը որոշվում է ընկերության հիմնադիրների կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընկերության համար հիմնադիր փաստաթղթեր են համարվում կանոնադրությունը և հիմնադիր պայմանագիրը:

**ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ** - ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով պետական տնտեսավարող սուբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների օտարումն է ՀՀ քաղաքացիներին, ոչ պետական տնտեսավարող սուբյեկտներին ու պետական մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտներին և օտարերկրյա անձանց:

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** - տնտեսական միջոցների (ակտիվի) կազմավորման աղբյուրների (պասիվի) մի մասն է, որն արտացոլված է հաշվապահական հաշվեկշռի պասիվի 1-ին բաժնում: Նրանում ներառվում են՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը, լրացուցիչ կապիտալը, պահուստները, կուտակված (չբաշխված) շահույթը, շահաբաժինների գծով կանխավճարները: Սեփական կապիտալը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության գնահատման ամենահիմնական ցուցանիշն է:

**ՍԵԿՎԵՍՏՐ** - պետական բյուջեի ծախսային մասի գծով նախատեսված գումարների կրճատումն է, որը պայմանավորված է եկամտային հոդվածների գծով պլանների չկատարմամբ: Դա հարկադրված քայլ է՝ երկրի տնտեսապես վատ վիճակի հետ կապված:

**ՍԻՆԹԵՏԻԿ ՀԱՇԻՎ** - որում տնտեսական միջոցները (ակտիվ), դրանց կազմավորման աղբյուրները (պասիվ) և տնտեսական գործառնությունները գրանցվում են ընդհանրացված տեսքով՝ արժեքային արտահայտությամբ:

**ՍՆԱՆԿԱՑՈՒՄ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)** - պարտատիրոջ (պարտատերերի) հանդեպ պարտապանի (պարտք վերադարձնողի) ստանձնած գույքային պարտավորությունների կատարման կասեցումն է դատարանի որոշմամբ:



**ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ** - բանկի կողմից տրամադրվում է բնակչությանը սպառման ապրանքներ գնելու կամ կենցաղային ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար: Որպես կանոն տրամադրվում է մինչև 3 տարի ժամկետով՝ սահմանված տոկոսադրույքաչափերով (տարեկան միջին հաշվով 14-16 և ավել տոկոսադրույքով): Տրամադրված վարկի դիմաց վճարումներ չկատարելիս՝ գրավ դրած իրի սեփականության իրավունքն անցնում է բանկին և վաճառվում աճուրդով կամ այլ ձևով:

**ՍՈՒԲՍԻԴԻԱ** - օգնություն, աջակցություն է դրամական կամ բնեղեն տեսքով, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց, տեղական ինքնակառավարման մարմիններին ու այլ պետություններին՝ պետական, համայնքային բյուջեների միջոցներից կամ հատուկ նշանակության հիմնադրամներից է տրամադրվում:

**ՎԱՐԿ** - վերադարձնելու և սովորաբար տոկոս վճարելու պայմանով տրամադրվող դրամական (արտարժութային) կամ ապրանքային փոխատվություն է, որի գործընթացում վարկատուի և վարկառուի (փոխառուի) միջև առաջանում են տնտեսական որոշակի հարաբերություններ: Վարկը տրամադրվում է կարճաժամկետ՝ մինչև 1 տարի, միջնաժամկետ՝ 1-5 տարի և երկարաժամկետ՝ 5-ից ավելի տարիների առումով: Վարկը դրսևորվում է տարբեր ձևերով՝ առևտրային, բանկային, ապրանքային, մուրհակային, հիպոթեկային, միջազգային, պետական, կոմունալ, սպառողական, գյուղատնտեսական:

**ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ** - հիմնականում ունի երկու իմաստ. լայն առումով՝ սոցիալ-տնտեսական այս կամ այն ֆորմացիայի (կազմավորման) շրջանակներում գոյություն ունեցող վարկային հարաբերությունների, վարկի ձևերի ու մեթոդների ամբողջություն է, իսկ նեղ առումով՝ պատմական որոշակի ժամանակաշրջանում այս կամ այն երկրի վարկային հիմնարկությունների ամբողջություն:

**ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ** - դրանով բանկը կամ վարկային այլ կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական կամ արտարժութային վարկ տրամադրել վարկառուին (փոխառուին), իսկ վերջինս պարտավորվում է սահմանված ժամկետում վերադարձնել ստացված գումարը և դրանից տոկոսներ վճարել:

**ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** - վարկադրամային միջոցառումների իրականացման համակարգ է, որը պետությունն օգտագործում է տնտեսական և քաղաքական որոշակի նպատակների հասնելու համար: Այն տնտեսական ընդհանուր քաղաքականության տարրերից է:

**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** - վարձատուն որոշակի վճարի կամ վճարների դիմաց վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը պայմանագրային ժամանակաշրջանի ընթացքում:

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ** - դիտարկում, ուսումնասիրում, գրանցում, խմբավորում և ընդհանրացնում է ոչ միայն տնտեսական, այլև հասարակական կյանքում տեղի ունեցող մասսայական, որակապես միանման երևույթներն ու գործընթացները, տալիս է դրանց քանակական, որակական արտացոլումը ոչ թե մեկը մյուսից առանձնացված և անջատված, այլ նաև դրանց միասնության մեջ՝ որակապես նույնանման հատկանիշներով:

**ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ** - անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման փաստաթուղթ է, ըստ որի գնորդը (վճարողը) հանձնարարություն է տալիս իրեն սպասարկող բանկին՝ իր հաշվից որոշակի գումար փոխանցել մատակարարի (ստացողի) հաշվին՝ արդեն ստացված ապրանքանյութական արժեքների դիմաց: Այս փաստաթղթով վճարումները կարող են կատարվել ժամկետային, վաղաժամկետ և հետաձգված՝ ըստ կողմերի պայմանավորվածության:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ** - թվային ցուցանիշների ստացման և հաշվարկման մի ամբողջական համակարգ է, որով իրականացվում է տնտեսական գործընթացների քանակական արտացոլումն ու որակական բնութագրումը և միաժամանակ այդ գործընթացները վերահաշվելու և ղեկավարելու նպատակով: Տնտեսական հաշվառման տեսակներն են՝ վիճակագրական հաշվառումը, օպերատիվ հաշվառումը և հաշվապահական հաշվառումը:

**ՏՈԿՈՍ** - կազմակերպության կողմից դրամական միջոցների կամ հասանելիք գումարների օգտագործման դիմաց վճար է:

**ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ** - դրամական միջոցներ, որոնք տրվում են պետական բյուջեից անվերադարձ՝ նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների, սոցիալական ապահովագրության, դոտացիաների և օգնության այլ վճարների տեսքով:

**ՏՐԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** - բանկերի կամ ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնություններ են, որոնք ուղղված են հաճախորդների (կլիենտների) կամ օրենքի սահմաններում նրանց վստահված անձանց (ֆիզիկական, իրավաբանական անձինք և առևտրային բանկը) գույքի կամ տարբեր ծառայությունների կառավարմանը:

**ՏՈՒՐՔ** - պետական մարմինների (դատարան, նոտարական գրասենյակ և այլն) կողմից իրականացվող որոշակի ծառայությունների համար



իրավաբանական և ֆիզիկական անձանցից ու այլ վճարողներից կանխիկ դրամով, տուրքային դրոշմանիշով կամ վճարողի ունեցած հաշվից գանձվող գումար է, որը սահմանվում է բազային տուրքի նկատմամբ տոկոսավճարով կամ հաստատագրված վճարով:

**ՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐ** - իրենց բնույթով անմիջականորեն կապված են արտադրված արդյունքի տվյալ տեսակի հետ և վերագրվում են դրան: Այդ ծախսերից են՝ արտադրական ինքնարժեքում ներառվող հիմնական բանվորների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, հումքի և նյութերի, տեխնոլոգիական վառելանյութի ծախսերը և այլն:

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՓԲԸ)** - իրավաբանական անձ, որի բաժնետոմսերը բաշխված են միայն նրա հիմնադիրների միջև, առանց ազատ բաժանորդագրության: Այն պետք է ունենա երկու կամ ավելի բաժնետեր, բայց ոչ ավելի քսանհինգից: Նման ընկերության բաժնետոմսերը ազատ առուծախի ենթակա չեն:

**ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ** - հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից է, որի միջոցով բնորոշվում են տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության բոլոր կողմերը: Նրանով է պայմանավորված տնտեսական գործառնությունների տվյալների գրանցումը փաստաթղթերի ձևաթղթերի (բլանկների) մեջ, իսկ տնտեսական վեճերի լուծման ժամանակ այն ապացուցման միջոց է համարվում:

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՄՓՈՓ** - դրանցում խմբավորվում և ամփոփվում են տնտեսական գործունեության որևէ բնագավառին վերաբերող գործառնությունների ձևակերպման սկզբնական փաստաթղթերը: Դրանցից են՝ գանձապահի ամենօրյա հաշվետվությունը, նյութերի պահեստի վարիչի հաշվետվությունը և այլն:

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ** - հաշվային ռեգիստրներում կամ փաստաթղթերում ներառվող տարբեր բովանդակությամբ տվյալներ ու ցուցանիշներ են, որոնց օգնությամբ որոշվում են տնտեսական գործառնությունների կատարման տեղը, պայմանները, ժամանակը, մասնակցող կողմերը, այդ գործառնությունների բովանդակությունը և դրանով իսկ փաստաթղթին տրվում է ապացուցողական բնույթ:

**ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ** - տոկոսների դիմաց վճարումներն ու այլ ծախսումներն են, որոնք տնտեսավարող սուբյեկտը (կազմակերպությունը) կատարում է՝ կապված փոխառու կապիտալի ստացման հետ (օրինակ՝ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները, փոխառությունների ստացման հետ կապված օժանդակ ծախսումները, ֆինանսական վարձակալությանը վերաբերող վճարները):

**ՓՈԽԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼ** - դրամական կապիտալ է, որը կազմավորվում է որոշակի ժամկետում՝ ի հաշիվ վարկերի, փոխառությունների ստացման, ինչպես նաև վարկային տոկոսների դիմաց վճարման, փոխառության տոմսերի թողարկման ու վաճառքի և դրամական այլ պարտավորությունների միջոցների ստացման գծով: Այլ կերպ, այն ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունների հանրագումարն է:

**ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ** - օտարերկրյա փոխառություն է, որը տրամադրվում է միջազգային վարկի ձևով արտերկրների վարկատուների կողմից:

**ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ** - պետական պարտքային պարտավորություն է, որը փոխառության տոմսի տեսքով շրջանառվում է տվյալ երկրի ներքին շուկայում:

**ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ** - որոշակի ժամկետում, որպես պարտք, դրամական միջոցների կամ նյութական արժեքների տրամադրումն է մեկ անձից (փոխատուից) մյուսին (փոխառուին)՝ հետ վերադարձնելու պայմանով, փոխատուին օգտագործված միջոցների դիմաց վճարելով փոխատվական տոկոս: Փոխատվությունը տրվում է փոխհամաձայնեցված պայմանագրի հիման վրա:

**ՓՈՓՈԽՈՒՆ ԾԱԽՍԵՐ** - ծախսեր են, որոնք փոփոխվում են արտադրության ծավալներին համամասնորեն: Այսինքն, եթե արտադրության ծավալները աճում են երկու անգամ, ապա այս ծախսերը նույնպես ավելանում են նույնքան անգամ: Այստեղից հետևություն, որ ընդհանուր փոփոխական ծախսերը գծային կախվածություն ունեն արտադրության ծավալներից: Այս ծախսերը միավոր արտադրանքի հաշվով համարվում են հաստատուն մեծություն: Փոփոխական ծախսերից են՝ հիմնական բանվորների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, հումքի, նյութերի, տեխնոլոգիական վառելանյութի ծախսերը և այլն:

**ՕՊԵՐԱՏԻՎ ԼԻԶԻՆԳ** - ի տարբերություն ֆինանսական լիզինգի, օպերատիվ լիզինգի ժամանակ լիզինգատուն սարքավորումը ձեռք է բերում նախօրոք, նախքան լիզինգառուի հետ պայմանագիր կնքելը: Օպերատիվ լիզինգի պայմաններում վարձակալության ժամկետն ավելի փոքր է, քան սարքավորման բարոյական մաշվածության ժամկետը: Օպերատիվ լիզինգի ժամանակ լիզինգավճարների չափը սովորաբար ավելի բարձր է, քան ֆինանսական լիզինգի ժամանակ:

**ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ** - դիտարկում, խմբավորում և արտացոլում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության առանձին գործառնություններն ու գործընթացները հենց դրանց կատարման պահին՝



բավականաչափ սեղմ ժամանակում: Օպերատիվ հաշվառման տվյալները կարևոր նշանակություն ունեն տնտեսավարող սուբյեկտների կառավարման գործում:

**ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ** - արժեթուղթ, որով մի կողմը (որոշակի գրավի դիմաց) մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետով և իր անունից ձեռք բերել կամ վաճառել որոշակի քանակի ապրանք, արժույթ և արժեթուղթ, այդ թվում՝ ֆյուչերսային կամ ֆորվարդային պայմանագիր:

**ՕՎԵՐԴՐԱՖՏ** - բանկի կողմից հաճախորդին կարճաժամկետ վարկի տրամադրման հատուկ ձև է, երբ այդ գումարի մեծությունը գերազանցում է հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցների մնացորդին: Բանկը տվյալ դեպքում հաճախորդի հաշվից նախատեսվող վարկի գումարը դուրս է գրում ամբողջությամբ, իսկ մնացորդին գերազանցող գումարը (օվերդրաֆտը) բանկի համար ձևակերպվում է դեբետային մնացորդ: Այսինքն հաճախորդը այդ գումարի չափով պարտք է մնում բանկին, որը հետագայում պայմանավորված ժամկետում (ժամկետներում) մարվում է:

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՂ** - օտարերկրյա պետություն, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ՀՀ տարածքից դուրս մշտական բնակվող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն է, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում:

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄ** - գույքի ցանկացած տեսակ է, այդ թվում՝ նաև ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ օգտակար այլ արդյունքի հասնելու նպատակով:

**ՖԱԿՏՈՐԻՆԳ** - տնտեսավարող սուբյեկտների միջև ապրանքների և ծառայությունների իրացման ժամանակ առևտրային վարկի պայմաններով առաջացած պարտավորությունների (վճարային փաստաթղթերի) պահանջատիրոջ իրավունքների ստանձնումն է բանկի (ֆակտորի) կողմից, որը զուգակցվում է նաև հաշվապահական, տեղեկատվական, ապահովագրական և այլ ծառայությունների մատուցմամբ:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԻԶԻՆԳ** - համածայնագիր է, որը նախատեսում է իր գործողության ընթացքում լիզինգավճարների հատուցում, որով ծածկվում են սարքավորման լրիվ ամորտիզացիայի արժեքը, լրացուցիչ ծախսերը և լիզինգատուի շահույթը: Այս լիզինգը բնութագրվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով՝ երրորդ կողմի (սարքավորում

արտադրողի կամ մատակարարի) մասնակցությամբ, լիզինգի պայմանագրի համեմատաբար երկար տևողությամբ (այն մոտավորապես հավասար է սարքավորման ծառայության ժամկետին), լիզինգի առարկաները հիմնականում բանկարժեք սարքավորումներ են:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** - ֆինանսական հարաբերությունների տարբեր ոլորտների ամբողջություն, որոնց միջոցով իրականացվում են դրամական միջոցների գոյացումը և օգտագործումը կամ այլ առումով՝ տվյալ երկրի ֆինանսական հիմնարկների համակարգ, որը ֆինանսավորման և վարկավորման գործընթացում իրականացնում է դրամական միջոցների համախմբումն ու բաշխումը, ինչպես նաև ֆինանսական հսկողությունը:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ** - հաշվապահական հաշվառման բաղկացուցիչ մաս, ըստ որի հաշվառվում են ֆինանսական ռեսուրսների և դրամական միջոցների առկան ու շարժը:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ** - վերահսկողության ձև է, որն իրականացվում է դրամական միջոցների կազմավորման, բաշխման ու օգտագործման գործընթացում՝ կապված ֆինանսական փաստաթղթերի ճիշտ ձևակերպումների հետ, օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ** - դրամական միջոցների կենտրոնացված (պետական բյուջեն, արտաբյուջետային, կենսաթոշակային ու զբաղվածության հիմնադրամները և այլն) և ապակենտրոնացված (զուտ շահույթը, ամորտիզացիոն հիմնադրամը և այլն) հիմնադրամներ են, որոնց ձևավորման և օգտագործման գումարները նախօրոք քանակապես հաշվարկվում են:

**ՖԻՆԱՆՍՆԵՐ** - առաջանում են ապրանքադրամային փոխանակության պայմաններում և իրենցից ներկայացնում են արտադրատնտեսական հարաբերությունների ամբողջություն՝ դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված համապատասխան հիմնադրամների ձևավորման և օգտագործման գործընթացում:

**ՖՅՈՒՉԵՐՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ** - արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (որոշակի գրավի դիմաց) սահմանված քանակով, հաստատագրված գներով և ժամկետներում մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ:

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ** - իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտ (ձեռնարկություն) է, հիմնադրված սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության ձևով, որը որոշակի տեղում և սահմանված ժամկետներում իր կողմից հաստատված կանոններով կազմակերպում է արժեթղթերով հրապարակային սակարկություն-



ներ և կատարում արժեթղթերի գնահատում:

**ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ** - արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (որոշակի գրավի դիմաց) սահմանված ժամկետներում մյուս կողմից գործարքի կնքման պահին շուկայում ձևավորված գնով ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ:

**ՖՈՐՖԵՏԱՎՈՐՈՒՄ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴ)** - վճարային պարտավորությունների ձեռք բերում, սովորաբար մուրհակի տեսքով, առանց վճարողի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի, այսինքն՝ գործարքի կատարման ժամանակ ֆինանսական կազմակերպությունը (ֆորֆետողը), գնելով վերոհիշյալ վճարային պարտավորությունները, անվերապահորեն հրաժարվում է պահանջներ ներկայացնել վճարային պարտավորությունների նախորդ սեփականատերերի նկատմամբ, որը ձևակերպվում է՝ «առանց հետադարձ պահանջի իրավունքի» գրառումով: Ֆորֆետավորումը միջազգային վարկավորման տեսակներից մեկն է:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Արշակյան Ա.Հ. Արտադրության գործոնների օգտագործման կազմակերպումը և պլանավորումը շուկայական էկոնոմիկայում, Երևան, 1997.- 230 էջ:

2. Բադանյան Լ. Կարճաժամկետ ֆինանսական կանխատեսումը արտադրական կազմակերպություններում, Երևան, 2000.- 215 էջ:

3. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 34(166), 6 նոյեմբեր, 2001.- 66 էջ:

4. Բայադյան Ա.Հ. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը, Երևան, 1999.- 60 էջ:

5. Բայադյան Ա.Հ. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը, Երևան, 2000.- 62 էջ:

6. Բայադյան Ա.Հ. Տնտեսական աճի կայունության վերլուծությունը և իրացվելիության գնահատումը (Գույքի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում, գիտաժողովի նյութեր), Երևան, 2001.- 316 - 328 էջ:

7. Բայադյան Ա.Հ. Ֆինանսական համառոտ բացատրական բառարան, Երևան, 2001.- 118 էջ:

8. Բայադյան Ա.Հ. Ֆինանսական կայունության, գործարար ակտիվության և իրացվելիության գնահատման ցուցանիշներն ու դրանց հաշվարկման մեթոդիկան, Երևան, 2001.- 67 էջ:

9. Բայադյան Ա.Հ. Տնտեսավարող սուբյեկտների սնանկացման և ռիսկերի գնահատման մեթոդիկան, Երևան, 2001.- 72 էջ:

10. Բայադյան Ա.Հ. Ֆինանսական հաշվառումը և վերլուծությունը ֆերմերային տնտեսություններում, էջ 91 - 99 (Խորհուրդներ ֆերմերներին, Երևան 2001.- 154 էջ):

11. Բանկային գործունեություն կանոնակարգում (ՀՀ օրենքները), Երևան, 1999.- 358 էջ:

12. Բոստանջյան Վ.Բ. Տնտեսական բարեփոխումները ՀՀ-ում և դրանց օրենսդրա-իրավական ապահովվածության հիմնախնդիրները, «Էկոնոմիկա» հանդես, № 4, Երևան, 1999:

13. Բոստանջյան Վ.Բ. Տնտեսական քաղաքականության ռազմավարության ուղղությունները անցումային փուլում, Երևան, ՏՀԻ, 1997:

14. Գյուղատնտեսական գործունեության տնտեսագիտական ուղեցույց (Ավետիսյան Ս., Հարրիս Ռ., Բայադյան Ա. և ուրիշներ), Երևան, 1998.- 96 էջ:

15. Գործարարության պլան (մեթոդական ձեռնարկ), Երևան, 1999.- 176 էջ:





16. Դարբինյան Ա.Վ. Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում, Երևան, 2000.- 302 էջ:

17. Եղիազարյան Բ.Հ. և ուրիշներ. Հայաստանի Հանրապետությունում սերտիֆիկատային սեփականաշնորհման հիմնախնդիրների փորձագիտական հետազոտություն, Երևան, 1997.- 144 էջ:

18. Կառավարչական հաշվառում, մաս 1 (Սարգսյան Ա.Զ., Համբարձումյան Ռ.Պ. և ուրիշներ), Երևան, 2000.- 144 էջ:

19. Կիրակոսյան Գ., Պուշչյան Հ., Տիգրանյան Ի. Տնտեսագիտական բացատրական բառարան, Երևան, 1999.- 464 էջ:

20. Կոզլովա Ե.Պ. և ուրիշներ, Հաշվապահական հաշվառում (թարգմ. Համբարձումյան Ռ.Պ. և ուրիշներ), Երևան, 1997.- 524 էջ:

21. Համբարձումյան Ռ.Պ., Սարգսյան Ա.Զ. և ուրիշներ. Ֆինանսական հաշվառում, Երևան, 2000.- 294 էջ:

22. Հայաստանի հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 2, 20 փետրվարի, 1997.- 100 էջ:

23. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ, Երևան, 1999.- 592 էջ:

24. Հաշվապահական հաշվառման ստանդարտների ուղեցույց, Երևան, 2001.- 136 էջ:

25. ՀՀ կառավարության 26.11.1998թ., թիվ 740 որոշումը «Հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների մասին», ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 22, 1998:

26. ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին, Երևան, 09.01.1997:

27. ՀՀ ֆինանսների նախարարության 19.07.1999թ., թիվ 213 հրամանը «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը հաստատելու մասին», ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 13(35), Երևան, 27 օգոստոս, 1999:

28. ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.1999թ., թիվ 433 հրամանը «Տարեկան (միջանկյալ) հաշվետվությունների ձևերը հաստատելու մասին», ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 14(36), Երևան, 1999:

29. ՀՀ ֆինանսների նախարարության հրաման «Կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու մասին», ՀՀ գերատեսչական նոր-

մատիվ ակտերի տեղեկագիր, N 20(42), 30.12.1999.- 152 էջ:

30. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 18.01.1999թ., թիվ 17 հրամանը «Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները հաստատելու մասին», ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 2(24), Երևան, 29 հունվար, 1999:

31. Ձեռնարկության արդյունավետ կառավարում (գործարար խաղի մեթոդիկա), պրոֆ. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2001.- 224 էջ:

32. Ձեռներեցի սեղանի գիրք (պրոֆ. Հ. Ղուշչյանի խմբագրությամբ), Երևան, 1997.- 440 էջ:

33. Ղազարյան Է.Ս. Գիտատեխնիկական քաղաքականությունը և գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Երևան, 1998.- 128 էջ:

34. Ղուշչյան Հ.Բ. Մակրոէկոնոմիկա, Երևան, 1992.- 365 էջ:

35. Ճուղուրյան Ա.Գ., Բայադյան Ա.Հ. Ֆինանսական հաշվառումը ագրոբիզնեսում, Երևան, 2000.- 96 էջ:

36. Մարկոսյան Ա.Խ. Բաժնետիրացման մեխանիզմը և նրա բաղկացուցիչ մասերը, Երևան, 1995.- 80 էջ:

37. Մենեջմենթ (Պրոֆ. Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ), Երևան, 1999.- 360 էջ:

38. Ջեյմս Դ. Գոռքնի, Ռիչարդ Լ. Ստոուպ. Տնտեսագիտություն (գլխավոր խմբագիր՝ պրոֆ. Գ. Կիրակոսյան), Երևան, 1999.- 1152 էջ:

39. Սարգսյան Ա.Զ. և ուրիշներ. Ֆինանսական հաշվառման հիմունքներ, Երևան, 1999.- 164 էջ:

40. Սուվարյան Յու. Ռազմավարական կառավարում, Երևան, «Տնտեսագետ», 1996.- 150 էջ:

41. Абрютина М.С., ГрачевА.В. Анализ финансово-экономической деятельности предприятия (учебно-практическое пособие), Изд. М., 1998.- 255 с.

42. Аньшин В.М. Инвестиционный анализ (учебно-практическое пособие), М., 2000.- 280 с.

43. Аренс А., Лоббен Дж. Аудит (пер. с англ.), М.,1995.- 560 с.

44. Артеменко В.Г., Беллендир М.В. Финансовый анализ (учебное пособие), М., 1997.- 126 с.

45. Балабанов И.Т. Основы финансого менеджмента (учебное пособие), М, 1997.- 478 с.

46. Балабанов И.Т. Риск - менеджмент, М., 1996.- 188 с.

47. Банкротство. Стратегия и тактика выживания. Часть 1. Как избежать банкротства, М., 1993.- 239 с.

48. Басовский Л.Е. Прогнозирование и планирование в условиях рынка, М., 2001.- 260 с.

49. Белолипецкий В.Г. Финансы фирмы (учебное пособие), Инфра - М, М., 1998.- 296 с.

50. Белых А.П. Основы финансового рынка. М., 1999.- 230 с.

51. Берлин С.И. Теория финансов (учебное пособие), М., 1999.- 256 с.

52. Бернстайн А.А. Анализ финансовой отчетности, М., 1996.- 623 с.

53. Бланк И.А. Стратегия и тактика управления финансами. Киев, 1996.- 534 с.

54. Богатин Ю.В., Швандар В.А. Оценка эффективности бизнеса и инвестиций, М., 1999.- 254 с.

55. Брейли Р., Майере С. Принципы корпоративных финансов (пер. с. англ.), М., 1997.- 1020 с.

56. Бухвалов А.В., Идельсон А.В. Самоучитель по финансовым расчетам, М., 1997.- 175 с.

57. Быкадоров В.Л., Алексеев П.Д. Финансово-экономическом состояние предприятия (практическое пособие), М., 1999.- 95 с.

58. Горохов М.Ю., Малев В.В. Бизнес-планирвание и инвестиционный анализ (как привлечь деньги), М., 1998.- 208 с.

59. Грабовый П.Г. и др. Риски в современном бизнесе, М., 1994.- 200 с.

60. Гранатуров В.М. Экономический риск, сущность, методы измерения, пути снижения (учебное пособие), М., 1999.- 112 с.

61. Гусаков Б.И. Экономическая эффективность инвестиций собственника (учебное пособие), М.—Минск, 1998.- 215 с.

62. Дж. К. Ван. Хорн Основы управления финансами, М., 2000.- 799 с.

63. Дробозина Л.А. Финансы. Денежное обращение. Кредит (учебник), М., 1997.- 477 с.

64. Дэвид С. Кидуэлл и др. Финансовые институты, рынки и деньги, Санкт — Петербург, 2000.- 749 с.

65. Заяц Н.Е., Фисенко М.К. Теория финансов, Минск, 1997.- 367 с.

66.Зимин Н.Е.Оценка финансового состояния сельскохозяйственных предприятий, М., 1999.- 67 с.

67. Игошин Н.В. Инвестиций (учебник), М., 2000.- 412 с.
68. Качалин В.В. Финансовый учет и отчетность в соотбетствии со стандартами. GAAP, М., 2000.- 432 с.
69. Ковалев А.И., Войленко В.В. Маркентиговый анализ, М., 2000.- 256 с.
70. Ковалев А.М., Привалов В.П. Анализ финансового состояния предприятия, М., 1997.- 188 с.
71.Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс, М., 1998.- 448с.
72. Ковалев В.В. Управление финансами (учебное пособие), М., 1998.- 656 с.
73. Ковалев В.В. Финансовый анализ. Управление капиталом. Выбор инвестиций. Анализ отчетности, М., 1996.- 432 с.
74. Крутик А.Б., Хайкин М.М. Основы финансовой деятельности предприятия, Ростов на Дону., 1999.- 445 с.
75. Крушвиц Л. Финансирование и инвестиции, М., 2000.-400с.
76. Лаврушина О.И. Деньги, кредит, банки, М., 1998.- 446 с.
77. Лишанский М.Л., Маслова И.Б. Финансы в сельском хозяйстве (учебное пособие), М., 1999.- 430 с.
78. Любушин Н.П. и др. Анализ финансово-экономической деятельности предприятия, М., 2001.- 471 с.
79. Маркарьян Э.А., Герасименко Г.П. Финансовый анализ, М., 1997.- 158 с.
80. Маркова В.Д., Кузнецова С.А. Стратегический менеджмент (Курс лекции), М., 2000.- 288 с.
81. Мельник Д.Ю. Налоговый менеджмент (учебное пособие), М., 1999.- 348 с.
82. Моляков Д.С. Финансы предприятий отраслей народного хшзяйства (учебное пособие), М., 1999.- 200 с.
83. Общая теория финансов (под ред. Дробозиной Л.А.), М., 1995.- 251 с.
84. Практикум по финансовому менеджменту (под ред. Стояновой Е.С.), М., 2000.- 139 с.
85. Проблемы развития рынка капитала в Армении, Ереван, 1999.- 172 с.
86. Ричард Томас. Количественные методы анализа хозяйственной деятельности (пер. с англ.), М., 1999.- 432 с.
87. Роберт Н. Холм. Основы финансового менеджмента, М., 1993.- 126 с.



88. Савицкая Г.В. Анализ хозяйственной деятельности предприятия, М., 1998.- 498 с.
89. Самуэльсон П.А., Нордхаус В.Д. Экономика (пер. с англ.), М., 2000.- 800 с.
90. Сергеев И.В., Веретенникова И.И. Организация и финансирование инвестиции (учебное пособие), М., 2000.- 272с.
91. Сио К.К. Управленческая экономика (текст, задачи и краткие примеры). Пер. с англ. (учеб. для вузов), М., 2000.- 671 с.
92. Статистика финансов (учебное пособие), под ред. проф. Салино В.Н., М., 2000.- 816 с.
93. Стоянова Е.С. и другие. Управление оборотным капиталом. М., 1998.- 127 с.
94. Теория и практика антикризисного управления (под ред. Беляева С.Г. и Кошнина В.И.), М., 1996.- 469 с.
95. Томсон А.А., Стринленд А.Дж. Стратегический менеджмент (пер. с англ. под ред. Зайцева Л.Г., Соколовой М.И.), М., 1998.- 576с.
96. Управленческий учет (под ред. Шеремета А.Д.), М., 1999.- 512 с.
97. Уткин Э.П. Бизнес-План, М., 1998.- 95 с.
98. Уткин Э.П. Финансовое управлении. М., 1997.- 207 с.
99. Фальцман В.К. Оценка инвестиционных проектов и предприятий, М., 1999.- 55 с.
100. Финансовый менеджмент (теория и практика), под ред. Стояновой Е.С., М., 2000.- 576 с.
101. Финансы сельского хозяйства (учебник), под ред. проф. Пизенгольца М. З., М., 1992.- 397 с.
102. Финансы (учебное пособие), под ред. проф. Ковалевой А.М., М., 1999.- 384 с.
103. Френк Дж. Фабоции и др. Управление инвестициями (пер. с англ.), М., 2000.- 932 с.
104. Харченко Л.П. и др. Статистика, М., 1999.- 310 с.
105. Черкасов В.Е. Международные инвестиции (учебно-практич. пособие). М., 1999.- 160 с.
106. Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа (учебное пособие), М., 1999.- 207с.
107. Шеремет А.Д., Сайфулин Р.С. Финансы предприятий, М., 1999.- 287 с.

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱՂՅԱՆ

# ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տպագրվում է ՀՃԱ-ի գիտական խորհրդի որոշմամբ

Մասնագիտական խմբագիր՝
տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բ. Բոստանջյան

Գրախոս՝
տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Արշակյան

Խմբագիր՝
բ.գ.թ. Ա.Հ. Ջաքարյան

Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա
Ֆորմատ 60x84/16, Թուղթ՝ օֆսեթ
Տպաքանակ՝ 200